Հայրիկիս՝
պատմաբան ՀԱՄԼԵՏ ԹՈՐՈՍՅԱՆԻ
լուսավոր հիշատակին


The Institute of Ancient Manuscipts after Mesrop Mashtots "MATENADARAN" and "Friends of the Matenadaran" Benevolent Fund express their gratitude to "JTI ARMENIA" CJSC for sponsoring the publication of this book

**Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար**


ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF HISTORY

“MATENADARAN”
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**VAHE TOROSYAN**

# THE AUTHORITY OF THE ARMENIAN CATHOLICOSATE
## (MID-11TH CENTURY – EARLY 12TH CENTURY)

“Nairi”

YEREVAN – 2018

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛНЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ ИСТОРИИ

“МАТЕНАДАРАН”
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА

**ВАГЕ ТОРОСЯН**

# ВЛАСТЬ АРМЯНСКОГО КАТОЛИКОСАТА
## (СЕРЕДИНА XI ВЕКА – НАЧАЛО XII ВЕКА)

“Наири”
ЕРЕВАН – 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ**

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## (ԺԱ. ԴԱՐԻ ԿԵՍԵՐ – ԺԲ. ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

ԵՐԵՎԱՆ
«Նաիրի» 2018

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Թ 822

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության
Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության
ինստիտուտի և Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհուրդների որոշումներով

խմբագիր՝ **Արտաշես Շահնազարյան**

**Թորոսյան Վահե**

Թ 822 Հայոց կաթողիկոսական իշխանությունը (ԺԱ. դարի կեսեր – ԺԲ. դարի սկիզբ) / Վահե Թորոսյան. - Եր., Նաիրի, 2018. - 272 էջ:

*Մենագրությունը նվիրված է ԺԱ. դարի կեսերից մինչև ԺԲ. դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում Հայոց կաթողիկոսական իշխանության հիմնախնդրին: Ուսումնասիրվել են Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսի աթոռակալման շրջանում մի քանի կաթողիկոսությունների առաջացման պատճառները, նրանց կարգավիճակի, ինչպես նաև Մայր Աթոռի հետ հարաբերությունների հարցերը:*

*Հավելվածում սկզբնաղբյուրային լայն հենքի վրա քննվել են Գրիգոր Բ. Վկայասերի նշանավոր ուղեգնացության հանգամանքները, մասնավորապես նրա՝ Հռոմ այցելելու վերաբերյալ մատենագրական տեղեկությունները և այդ մասին մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները:*

*Գիրքը նախատեսված է հայագետների ու Հայոց պատմությամբ հետաքրքրվողների համար:*

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-550-01830-9
© Վահե Թորոսյան, 2018

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Զարգացած ավատատիրությանը բնորոշ իշխանական ներհակությունների ու դրանք ամեն կերպ խորացնող Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականությունն արդեն ԺԱ. դարի կեսերին հանգեցրին Շիրակի Բագրատունյաց թագավորության կործանմանը: Նվաճված երկրամասերում բյուզանդական վարչակարգի հաստատումն ուղեկցվում էր տեղի հայ ազատանու և բնակչության մի մասի՝ Կապադովկիայում և Հյուսիսային Ասորիքում բռնի կամ «կամավոր» վերաբնակեցմամբ: Գաղթի սպառնալիքից որոշ դեպքերում խուսափում էին միայն հայ բյուզանդամետ ուժերը: Սակայն կայսերական իշխանությունների դիրքորոշումը նրանց նկատմամբ միշտ չէ, որ բարեհաճ էր: Դա հատկապես վերաբերում է Հայոց կաթողիկոսությանը, որի բյուզանդամետ աթոռակալ Պետրոս Ա. Գետադարձին* **(1019-1054)** *ևս չհաջողվեց խուսափել «պատվավոր աքսորից»: Կաթողիկոսական իշխանության նկատմամբ բյուզանդական արքունիքի զգուշավոր և միևնույն ժամանակ չափազանց կոշտ դիրքորոշումը միանգամայն համահունչ էր կայսրության կրոնական քաղաքականությանը:*

*Եկեղեցու և հատկապես հոգևոր առաջնորդի դերը միջազգային հարաբերություններում առավել աճեց, երբ քրիստոնեության զուտ կրոնական բնույթի խնդիրները ներառվեցին այդ գաղափարախոսությունը դավանող պետությունների արտաքին հարաբերությունների օրակարգ՝ այդպիսով նկատելիորեն ընդլայնելով եկեղեցական իշխանության քաղաքական ազդեցությունը: Ուստի ամենևին պատահական չէր, որ հայ-բյուզանդական հարաբերություններում, այդ թվում՝ քաղաքական, զգալի էին դավանաբանական հարցերը: Թերևս դրանով պետք է պատճառաբանել եկեղեցու և հատկապես կաթողիկոսության ծանրակշիռ ներգրավածությունը հայ-բյուզանդա-*

*կան քաղաքական բնույթի բանակցություններում, որոնք այնքան հաճախադեպ էին ԺԱ.-ԺԲ. դարերում:*

*Թեմայի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են ԺԱ. դարի կեսերից մինչև ԺԲ. դարի երկրորդ տասնամյակի կեսերը: Այս պարբերացումը հիմնավորվում է Հայոց կաթողիկոսական իշխանությունում տեղի ունեցած շրջադարձային իրադարձություններով: Դրանցից՝ որպես ժամանակագրական պարբերացման սկիզբ, նշելի է բյուզանդական իշխանությունների պարտադրանքով Հայոց կաթողիկոսական աթոռի հեռացումը Մեծ Հայքից, ինչպես նաև նոր հայրապետի ընտրության՝ Բյուզանդիայի կայսեր հարուցած արգելքի հաղթահարումը, իսկ իբրև ավարտ՝ Աղթամարի կաթողիկոսության ստեղծման ժողովական դատապարտումը, որով վերջ տրվեց ԺԲ. դարի սկզբին Հայոց հայրապետի ընդհանրական իշխանությանը սպառնացող լրջագույն վտանգին:*

*Պատնեշելով բյուզանդական արքունիքի՝ Հայոց կաթողիկոսությունը վերացնելու քաղաքականությանը՝ կայսրության տիրապետության տակ գտնվող հայ իշխանական ազատանուն Խաչիկ Բ. Անեցի (1054-1065) և հատկապես Գրիգոր Բ. Վկայասեր[1] (1066-1105) կաթողիկոսների աթոռակալմամբ հաջողվեց ոչ միայն վերականգնել հայրապետական խաթարված իշխանությունը, այլև դրա անընդհատության կայուն հիմքեր ստեղծել: Եթե ԺԱ. դարի կեսերին կաթողիկոսական իշխանության իրացմանը խոչընդոտում էին բյուզանդական իշխանությունները, ապա հաջորդ դարասկզբին հայրապետի ընդհանրական իշխանությունը լրջագույն փորձության ենթարկվեց*

[1] Իր ծավալած գրական բեղմնավոր գործունեության, մասնավորապես, սրբոց վարքերի թարգմանության ու հատկապես ազգային տոնական ժողովածուի՝ Հայսմավուրքի հարստացման համար Գրիգոր Բ.-ը ստացավ նաև Վկայասեր մականունը (տե՛ս **Ավդալբեգյան**, *«Յայսմաւուրք» ժողովածուները*, էջ 29-32. **Ալիշան**, *Հայապատում*, էջ 348:

*Աղթամարի կաթողիկոսության ստեղծմամբ, որով այն կանգնեց երկփեղկման իրական վտանգի առջև: Ինչպես հայտնի է, Աղթամարում կաթողիկոսական աթոռի հիմնումը կարճ ժամանակ անց արժանացավ ժողովական դատապարտման, որի ազդեցությամբ էլ, ի թիվս այլ գործոնների, առավել ամրապնդվեց Հայոց կաթողիկոսի նոր՝ էթնիկական հատկանիշի վրա հիմնված «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը*[2]*:*

*ԺԱ. դարի երկրորդ կեսը հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների առջև դրեց չափազանց բարդ՝ էթնոկրոնական նոր՝ տարբեր ազգություններով բնակեցված միջավայրում հիմնավորվելու խնդիր: Զարգացած ավատատիրության այս հերթական շրջանը թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունների ոլորտներում ասպարեզ հանեց նոր ուժեր: Դա իշխանական համակարգի վերաձևավորման հերթական շրջափուլն էր. եթե Թ. դարի վերջերին Բագրատունիները քաղաքական ասպարեզում գերակա դիրք գրավեցին նաև այնտեղից հեռացող երբեմնի հզոր Մամիկոնյանների ու Կամսարականների տիրույթները սեփականելով, ապա ԺԱ. դարի երկրորդ կեսին հրապարակ իջան բոլորովին նոր՝ իշխանական համակարգում մինչ այդ անհայտ և քաղաքական գործունեության կենսափորձ չունեցող ուժեր (Փիլարտոս Վարաժնունի, Գող Վասիլ, Ռուբինյաններ): Վերջիններս, համաձայն ժամանակի աշխարհընկալման և հատկապես իշխանական տոհմերին ներկայացվող պահանջի, ամեն կերպ պետք է հիմնավորեին նախորդ իշխանությունների իրավահաջորդի իրենց իրավունքները: Աշխարհիկ իշխանության դեպքում խնդիրը փոքր-ինչ այլ էր. անհրաժեշտ էր ազգակցական կապ ապահովել երբեմնի հզոր իշխանական տների, տվյալ պարագայում՝ Բագրատունյաց և Արծրունյաց թագավորական տոհմերի ու այլ իշխանական*

---

[2] **Բոզոյան,** *«Կաթողիկոս Հայոց»*, էջ 80-85:

*տների հետ*[3]*։ Վերջիններիս շառավիղները դեռ ռազմաքաղաքական ասպարեզում էին, սակայն ոչ միայն զուրկ անցյալի արքայական փառքից ու իշխանությունից, այլև բռնել էին հեռացման ճանապարհը։*

*Կաթողիկոսական իշխանության փոխանցման խնդրում մինչ այդ գործում էր բոլորովին այլ սկզբունք, որն արգելում էր հայրապետական աթոռի ժառանգումը։ Ավելին, չէր պահանջվում որևէ ազգակցական-արյունակցական կապ ընտրվող և նախորդ կաթողիկոսների միջև։ Բացառությամբ Գրիգոր Լուսավորչի և Աղբիանոսների տոհմերի՝ հայրապետական իշխանությունը հաջորդաբար՝ նույն տոհմի երեք և ավելի ներկայացուցիչների, մինչ այդ չէր փոխանցվել ժառանգման սկզբունքի գործադրմամբ։ Գրիգոր Բ․ Վկայասերի աթոռակալմամբ, սակայն, առժամանակ փոխվեց հայրապետական աթոռի փոխանցման ավանդական՝ ժառանգումն արգելող կարգը։ Դա Պահլավունիներին «ստիպեց» կաթողիկոսական իշխանության ժառանգորդի իրավունքը ոչ ավել, ոչ պակաս բխեցնել Գրիգոր Լուսավորչի տոհմի հետ իրենց «ունեցած» ազգակցությունից*[4]*։*

*Պահլավունիների կողմից կաթողիկոսական ժառանգական իշխանության վերականգնումը, հաշվի առնելով եկեղեցական իրավունքում դրա արգելված լինելը, իշխանական քմահաճույքի հետևանք չէր և, ի շարս այլ գործոնների, էապես պայմանավորված էր․*

***ա․*** *Էթնոկրոնական նոր միջավայրում հայտնված հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների առջև Բյուզանդական կայսրութ-*

---

[3] Այդ տրամաբանությամբ պետք է բացատրել ժամանակի մատենագրական հուշարձաններում շրջանառվող՝ Ռուբինյաններ-Բագրատունիններ, Զաքարյաններ-Բագրատունիններ, Զաքարյաններ-Արծրունիններ «ազգակցական» կապը հավաստող հաճախադեպ վկայությունները (տե՛ս **Մարգարյան**, *Զաքարյանների ծագումը*, էջ 156-175. **Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները եւ հայերը*, հ. Բ, էջ 63-75):

[4] Պահլավունիների ծագման մասին տե՛ս **Վարդանյան**, *Պահլավունիները*, էջ 12-18. **Խաչերեան**, *Գրիգոր Պահլաւունի*, էջ 19-42. **Dédéyan**, *Les Arméniens entre Grecs*…, vol. 2, էջ 1181-1191:

*յան հարուցած խոչընդոտներին ու հալածանքներին դիմակայելու անհրաժեշտությամբ: Վերջիններիս թվում եկեղեցական իշխանության համար հատկապես ծանր էր կայսեր՝ Հայոց կաթողիկոսությունը վերացնելու և այդպիսով հայերին Քաղկեդոնի դավանանքն առավել դյուրին պարտադրելու որոշումը,*

*բ. Հյուսիսային Ասորիքում, Կապադովկիայում ու Կիլիկիայում հաստատված հայկական իշխանությունների մասնատվածությամբ և դրանց շրջանում գերագահ կենտրոնի բացակայությամբ, որի հետևանքով կաթողիկոսությունը, ի տարբերություն Բագրատունյաց թագավորության շրջանի, դուրս էր եկել աշխարհիկ իշխանությունների վերահսկողությունից:*

*Ստեղծված ծանրագույն իրապայմաններում կաթողիկոսական իշխանության իրացումն ապահովելու նպատակով Գրիգոր Վկայասերը դիմեց աննախադեպ քայլերի, որպիսիք կաթողիկոսական աթոռից հրաժարումն ու միաժամանակ իշխանության փաստացի պահպանումն էին: Այս իրողությունները Գրիգոր Բ.-ի հայրապետական ընթացքը վերհանելու և հատկանշելու խնդրում դժվարություններ են հարուցել նրա ձեռնարկումների իրական շարժառիթներին անտեղյակ ժամանակի ու հետագա մատենագիրների առջև:*

*Գրիգոր Բ. Վկայասերի գործունեության վերաբերյալ հայագիտության մեջ կատարվել են պատկառելի ուսումնասիրություններ*[5]*: Այս թեմայի մանրամասն ու ծավալուն քննությամբ հատկապես առանձնանում է Ժերար Դեդեյանի աշխատությունը*[6]*:*

---

[5] Տե՛ս **Չամչեանց,** *Պատմութիւն*, հ. Բ, էջ 988-1001, հ. Գ, էջ 11-27. **Օրմանեան,** *Ազգապատում*, սյուն. 1489-1560, **Վարդանյան**, *Պահլավունիները*, էջ 94-108, **Մաթևոսյան**, *Անի*. **Նույնի՝** *Անին մայրաքաղաք*. **Նույնի՝** *Անիի ազնվականության պատմությունից*, էջ 36-83. **Մութաֆյան**, *Կիլիկիան*. **Բոզոյան,** *«Կաթողիկոս Հայոց»*, և այլն:

[6] Տե՛ս **Dédéyan**, *Les Arméniens entre Grecs…*, vol. 1.

Չնայած առկա ձեռքբերումներին՝ կաթողիկոսական գերագահ իշխանության խնդիրը դեռևս ունի առավել խորը քննության կարիք, ինչը հնարավոր է առնվազն երկու հարցի՝

ա. ընտրությունից կարճ ժամանակ անց կաթողիկոսական աթոռից Գրիգոր Բ. Վկայասերի հրապարակավ հրաժարվելու իրական դրդապատճառների վերհանման, բ. խնդրո առարկա ժամանակաշրջանում կաթողիկոսական մի քանի աթոռների համաժամանակյա գոյության փաստի պարզաբանման պարագայում:

Թեմայի աղբյուրագիտական հենքը, չնայած նրա ոչ ընդարձակ բնույթին, բավական լայն է: Այն ներառում է պատմագրական տարաբնույթ երկասիրություններ՝ մատենագրական ծավալուն աշխատություններից մինչև հիշատակարանային սեղմ վկայություններ:

Ընտրելով աղբյուրների առանձին և համադիր քննությունը հիմնական շարադրանքին զուգահեռ կատարելու սկզբունքը՝ աշխատության սույն բաժնում կբավարարվենք դրանց ընդհանրական արժևորմամբ և թեմայի քննության տեսանկյունից ունեցած առանձնահատկությունների վերհանմամբ:

Սկզբնաղբյուրների շարքում առատ տեղեկություններով շահեկանորեն առանձնանում են Մատթեոս Ուռհայեցու, Սամվել Անեցու (ներառյալ նրա Շարունակողները), Ներսես Շնորհալու, Վարդան վարդապետի, Կիրակոս Գանձակեցու, Սմբատ Սպարապետի աշխատությունները և այլ երկասիրություններ[7]:

Եզակի և մանրամասն վկայություններով հատկապես աչքի է ընկնում Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ը: Այս հեղինակը, բացառյալ Ներսես Շնորհալուն, թվարկվածներից միակն է,

[7] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*. **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*. **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*. **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն*. **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*. **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք* և ուրիշներ:

*որ ժամանակամերձ է խնդրո առարկա անցքերին ու անձերին և հաճախ դեպքերը շարադրում է ժամանակակցի լավատեղյակությամբ։ Բացի այդ՝ ներկայացվող թեմայի տեսանկյունից նրա «Ժամանակագրութիւն»-ը հիմնական աղբյուր է ծառայել հետագա որոշ մատենագիրների համար, որպիսիք են Սմբատ Սպարապետը, Սամվել Անեցին և իր Շարունակողները, Կիրակոս Գանձակեցին և այլք։*

*Այդուհանդերձ, Ուռհայեցու երկը կաթողիկոսական գերագահ իշխանության, ինչպես նաև հայրապետական մի քանի աթոռների համաժամանակյա գոյությանը հիմնավոր բացատրություն չի տալիս։ Ավելին՝ դրանք առաջնորդողներին արժանացնում է իրարամերժ ու, թերևս, երբեմն իրականությանը չհամապատասխանող գնահատականների, իսկ որոշ իրողությունների վերաբերյալ կարծես պահպանում է «դիտավոր լռություն»։*

*Մյուս մատենագիրները ներկայացվող պատմական անցքերից տասնամյակներ և ավելի ուշ ապրած լինելու հանգամանքով՝ հաճախ տեղյակ չեն կարևոր շատ իրողությունների կամ էլ ստիպված բավարարվում են Ուռհայեցու հաղորդումներն այս կամ այն կերպ կրկնելով։ Սակայն պատմագրական այդ երկերում (հատկապես՝ Սմբատ Սպարապետի Տարեգրքում) հանդիպում ենք Ուռհայեցու հաղորդածից տարբեր ու եզրահանգումների համար չափազանց արժեքավոր վկայությունների։*

*ԺԳ. դարի սկզբնաղբյուրների շարքում առատ տեղեկություններով առանձնանում է Ներսես Շնորհալու «Վարք»-ը, ինչպես նաև Պահլավունի կաթողիկոսներ Գրիգոր Բ. Վկայասերին, Գրիգոր Գ.-ին (1113-1166) և Ներսես Դ. Շնորհալուն (1116-1173) Վարդան վարդապետի նվիրած ներբողը*[8]*։*

---

[8] Տե՛ս *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*. **Վարդան Արեւելցի**, *Ճառք*, էջ 363-375։

*Ի տարբերություն վերոբերյալ սկզբնաղբյուրների՝ հիշատակա-րանային վկայությունները, գրված լինելով ներկայացվող իրադար-ձություններին ժամանակակից հեղինակների, ինչպես նաև մեզ հե-տաքրքրող պատմական անձանց կողմից, որոշ հարցերում առավել արժանահավատ են*[9]*։*

*Մասնագիտական գրականության մեջ ԺԱ. դարի երկրորդ կեսի և ԺԲ. դարասկզբի Հայոց կաթողիկոսական իշխանության խնդիրը, բացառությամբ Մաղաքիա Օրմանյանի և Ժերար Դեդեյանի աշխա-տությունների, ներառված լինելով առավել ընդգրկուն թեմաների շրջանակներում, առանձին՝ համակողմանի ու ընդարձակ քննության չի ենթարկվել։*

*Ներկայացվող ուսումնասիրությունը փորձ է թեմային առնչվող սկզբնաղբյուրների և հայագիտության ձեռքբերումների համալիր օգտագործմամբ իրականացնել Հայոց կաթողիկոսական աթոռի շուրջ խնդրո առարկա ժամանակափուլում ստեղծված իրադրութ-յան ամբողջական և ընդգրկուն քննություն։*

[9] Տե՛ս **Տաշեան**, *Ցուցակ*. **Յովսէփեան**, *Յիշատակարանք*. **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ* և այլն:

# ԳԼՈՒԽ Ա.

## ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ (1045-1066 ԹԹ.)

*Բյուզանդական կայսրությունը, արդեն Թ. դարի վերջին քառորդին ճնշելով Հայաստանի նվաճմանը խոչընդոտող պավլիկյան շարժումը, Թեոդուպոլիս-Կարինի նվաճմամբ նոր մեկնարկ հաղորդեց իր զավթողական քաղաքականությանը դեպի արևելք ու հարավ-արևելք: Գործադրելով նվաճողական քաղաքականության՝ Հռոմեական կայսրությունից ժառանգած «զինված հարձակում», «բաժանիր, որ տիրես» և «պետական ահաբեկչություն» միջոցները՝ Բյուզանդիան Ժ. դարի կեսերից մինչև ԺԱ. դարի 60-ական թվականների կեսերը գրեթե ամբողջությամբ (բացառությամբ Սյունիքի և Տաշիր-Ձորագետի թագավորությունների) նվաճեց Բագրատունյաց թագավորության տարածքը[10]: Բյուզանդական նվաճումներն ուղեկցվում էին հայոց ազատանու զանգվածային գաղթով դեպի կայսրության տիրապետության տակ գտնվող երկրամասեր, հատկապես՝ Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք[11]: Արտագաղթն առավել սաստկացավ թյուրք-սելջուկյան նվաճումների հետևանքով[12]:*

---

[10] Տե՛ս **Բարթիկյան**, *Հայաստանի նվաճումը*, էջ 233-244. **Юзбашян**, *Армянские государства*, էջ 117-174: Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության մասին տե՛ս նաև **Chalandon**, *Essai*, էջ 9-11. **Bréhier**, *Le monde byzantin*,էջ 238, 246-247:

[11] Այդ մասին մանրամասն տե՛ս **Dédéyan**, *L'immigration*, էջ 41-116. **Bréhier**, *Le monde byzantin*, էջ 278:

[12] Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 151: Սելջուկների՝ Հայաստան կատարած արշավանքների մասին մանրամասն տե՛ս **Բոռնազյան**, *Հայաստանը և սելջուկները*, էջ 23-165. Юзбашян, *Армянские государства*, էջ 216-235:

*Շիրակի Բագրատունյաց թագավորության նվաճումից (1045 թ.) և Գագիկ Բ. Անեցուն (1042-1045) Կապադովկիայում արգելափակելուց կարճ ժամանակ անց բյուզանդական իշխանությունները հարձակման թիրախ դարձրին Անիում գտնվող Հայոց կաթողիկոսական աթոռը, որը թագավորության անկման հետևանքով խիստ տկարացել էր. «... յորժամ թագաւորութիւնն ի Հայոց բարձաւ, աղքատացաւ և կաթողիկոսն»*[13]*, - Անիի գրավումը մատնանշելով՝ գրում է Սմբատ Սպարապետը։ Թագավորության անկման հետևանքով կաթողիկոսական աթոռը, ինչպես պատկերավոր ներկայացնում է Արիստակես Լաստիվերցին, վերածվեց «այրիացած նորահարսի»՝ «ամայացեալ ի բնակողէն»*[14]*։ Ստեղծված իրավիճակում, սակայն, պակաս չէր հենց կաթողիկոս Պետրոս Ա. Գետադարձի մեղքի բաժինը։ Հայաստանյան բյուզանդամետ տարրին նրա միջամտությամբ հաջողվեց Գագիկ Բ. Անեցուն համոզել՝ ընդունելու Կոստանդնուպոլիս մեկնելու կայսեր հրավերը*[15]*։ Պետրոս Գետադարձի կայսերամետ դիրքորո-*

---

[13] **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 61։ Թեև ըստ ժամանակի աղբյուրների՝ Գետադարձը նպաստել էր Գագիկ Բ.-ի՝ Կոստանդնուպոլիս գնալուն և հայոց մայրաքաղաքը բյուզանդացիներին հանձնելուն, այդուհանդերձ, դժվար է ենթադրել, թե այդ ամենը նա արել է Հայոց պետականությանը վերջ տալու հաստատ մտադրությամբ կամ գերադասել է կայսերական ազդեցության տակ հովվապետել։ Չենք կարծում, թե նրան անծանոթ էին Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության բիրտ միջոցները (հատկապես Տարոնի, Տայքի ու Վասպուրականի նվաճման, Դավիթ Կուրապաղատի սպանության, Հովհաննես-Սմբատի ու նրա եղբայր Աշոտի «բնական» մահվան հանգամանքները) կամ էլ Քաղկեդոնի դավանանքը հայերին պարտադրելու կայսերական արքունիքի որոշումը, որի դեմ պայքարում էր։

[14] **Արիստակէս Լաստիվերցի**, *Պատմութիւն*, էջ 559։

[15] *«Եւ կացուցին միջնորդս զՏէր Պետրոս և արարին երդմունս սաստիկս յաւուր յայնմիկ. և բերին զսուրբ խորհուրդն մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ և թանային զգրիչս յարիւն Կենարարին, և արարին երդման գիր հայրապետն և ամենայն իշխանքն Հայոց. և յայնժամ գնաց Գագիկ արքայն Հայոց ի Կոստանդնուպօլիս»*, - գրում է Մատթեոս Ուռհայեցին (**Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 94)։

*շումն ուներ նյութական*[16] *շարժառիթ և ոչ երբեք՝ դավանական: Բյուզանդական իշխանությունների հետ նրա գործակցությունը չէր կատարվում Հայոց եկեղեցու ինքնուրույնության սահմանափակման հաշվին*[17]*: Այդ է վկայում Անանիա Սանահնեցու՝ Գետադարձի պատվերով հակաքաղկեդոնական բնույթի երկասիրություն գրելու փաստը*[18]*:*

*Հայաստանի նվաճումը վերջնական դարձնելու նպատակով կայսերական իշխանությունն Անին գրավելուց հետո հայրենիքից հեռացրեց հայոց ռազմաքաղաքական ներուժի վրա նկատելի ազդեցություն ունեցող հայրապետին: Կաթողիկոսությանը սպառնացող վերահաս վտանգն ու իր վերադարձի անհնարինությունը կանխազգալով՝ Պետրոս Գետադարձը բավականաչափ (ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ 400 լիտր) մեռոն օրհնեց և, երկաթե տարաների մեջ լցնելով, թաքցրեց Ախուրյան գետում*[19]*:*

*Հայոց կաթողիկոսը կայսեր հրամանով*[20] *նախ տեղափոխվեց Կարնո գավառի Արծն ավան, որտեղից էլ կարճ ժամանակ անց փո-*

---

[16] Արիստակես Լաստիվերցու վկայությամբ՝ Պետրոս Գետադարձն Անիի բանալիները բյուզանդացիներին հանձնել էր որոշակի նյութական փոխհատուցման դիմաց, քանզի ինչպես նշում է պատմիչը, կաթողիկոսը *«յոյժ գանձուց սիրաւղ էր ..., որ եւ բազումք վասն այնր եպերէին զնա»* (**Արիստակէս Լաստիվերցի**, *Պատմութիւն*, էջ 562, 579):

[17] Տե՛ս **Մաթևոսյան**, *Անին մայրաքաղաք*, էջ 44:

[18] Մանրամասն տե՛ս **Քյոսեյան**, *Անանիա Սանահնեցի*, էջ 192. **Յովսէփեան**, *Խոսրովիկ թարգմանիչ*, էջ 24:

[19] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 104:

[20] Թեև ըստ Արիստակես Լաստիվերցու՝ Պետրոս Գետադարձն Անիից հեռացվեց տեղի բյուզանդացի կառավարիչ Կամենասի ամբաստանությունների հետևանքով. *«Եւ սկսանի (Կամենաս – Վ. Թ.) գրով ամբաստան լինել զնմանէ առ թագաւորն, եւ խաբանաւք հանէ զնա ի քաղաքէն՝ ասելով, եթէ «Հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան ի Կարին գաւառի, յԱրծին աւանի»* (**Արիստակէս Լաստիվերցի**, Պատմութիւն, էջ 562), սակայն նկատի առնելով կաթողիկոսի՝ Հայաստան վերադառնալու կայսեր սահմանած խիստ արգելքը, Անիից նրա հեռացումն իրականում կատարվել էր Կոստանդին Թ. Մոնոմախի (1042-1055) նախաձեռնությամբ:

*խադրվեց Կոստանդնուպոլիս: Կայսրության մայրաքաղաքում հայոց վտարանդի հայրապետին ցույց տրված ճոխ ընդունելությունը[21] որևէ աղերս չուներ բյուզանդական արքունիքի հետամտած իրական նպատակների հետ, որոնց վերջնակետը Հայոց եկեղեցին Կոստանդնուպոլսի պատրիարքությանը ենթարկելն էր: Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունն ուղեկցվում էր կայսրության տիրապետության տակ հայտնված ոչ քաղկեդոնիկ ժողովուրդների կողմից հունադավան եկեղեցու վարդապետությունն ու գերագահությունն ընդունելու պարտադրանքով[22]:*

*Իրենց իշխանությունը կայսրությանը «կամավոր» զիջած հայոց թագավորները, ինչպես նաև Անիի անկման գործում բյուզանդական կողմին աջակցած կաթողիկոսը պատվավոր աքսորի միայն սկզբնափուլում վայելեցին կայսեր բարեհաճությունը: Պետրոս Գետադարձի և Բագրատունի արքաներ Գագիկ Բ. Անեցու և Գագիկ Բ. Կարսեցու (1049-1065) նկատմամբ Բյուզանդիայի կայսեր սկզբնապես բարեհաճ, ապա թշնամական դիրքորոշումը միանգամայն համահունչ էր Տարոնի իշխանության, Տայքի կյուրապաղատության, Վասպուրականի ու Շիրակի թագավորությունների նվաճմանը տեղյակ ԺԱ. դարի բյուզանդական նշանավոր հայազգի գործիչ Կեկավմենոսի հետևյալ պարզաբանմանը. «Եթե պատահի սեփական երկրում բերդեր ունենաս կամ գյուղեր, … քեզ չմոլորեցնեն գանձերը կամ պաշտոնները, կայսրերի մեծ խոստումները և հանկարծ երկիրդ տաս կայսեր, փոխարենն ստանալու համար դրամ ու կալվածքներ: … Եթե զրկվես քո երկրից, տապալվես իշխանությունիցդ, ճիշտ է, սկզբնական շրջանում պիտի վայելես կայսեր սերը, բայց քիչ անց նա քեզ պիտի արհամարհի, նա քեզ բանի տեղ չի դնելու և [այն ժամանակ] պիտի համոզվես, որ ստրուկ ես և ոչ բարեկամ»[23]:*

---

[21] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 104-105:

[22] Տե՛ս **Բոզոյան**, *Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը*, էջ 15:

[23] **Հովհաննես Սկիլիցես**, էջ XXIII:

*Հայոց կաթողիկոսությունը վերացնելու առաջին քայլը հայրապետական աթոռը նյութական միջոցներից զրկելու կայսեր որոշումն էր: Դատելով Մատթեոս Ուռհայեցու հաղորդումից՝ կաթողիկոսությունը հատկապես Պետրոս Գետադարձի աթոռակալման ժամանակ ուներ նյութական պատկառելի հարստություն, որը, պատմիչի պատկերավոր խոսքով, ոչնչով չէր զիջում թագավորի ունեցվածքին. «... յորժամ էր Տէր Պետրոս յաթոռ հայրապետութեանն և ի Հայաստան աշխարհին, ... չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց»*[24]*: Բյուզանդիայի կայսրը, Հրաչ Բարթիկյանի իրավացի դիտարկմամբ, մեծապես շահագրգռված էր կաթողիկոսության նյութական ունեցվածքով, որն էլ նրա հզորության կարևորագույն գրավականներից էր*[25]*: Ուստի Պետրոս Գետադարձի մահվանից անմիջապես հետո բյուզանդացիները Կոստանդնուպոլիս տեղափոխեցին կաթողիկոսության անբավ հարստությունը: Դա հետամտում էր հայրապետանոցի գործունեությունը հիմնովին խաթարելու նպատակ:*

*Պետրոս Գետադարձին միայն Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմ Արծրունու որդի Ատոմի միջնորդությամբ ու երաշխավորությամբ թույլատրվեց հաստատվել Սեբաստիայում՝ կայսրության կողմից վերահսկելի իշխանությունում. «Իսկ Ատոմ՝ որդին Սենեքերիմայ առեալ զնա յերաշխիս, ած ի քաղաքն իւր՝ ի Սեբաստուպաւլիս»*[26]*: Պետրոս Գետադարձը, այդպես էլ Անի չվերադառնալով և 1054 թ.*[27] *«գերության» մեջ կնքելով իր մահկանացուն, թաղ-*

---

[24] **Մատթէոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն*, էջ 153-154:

[25] Տե՛ս **Հովհաննես Սկիլիցես,** էջ LXXI:

[26] **Արիստակէս Լաստիվերցի,** *Պատմութիւն*, էջ 578:

[27] Պետրոս Գետադարձի աթոռակալումը Կարեն Մաթևոսյանը հաշվում է 1019-1054 թթ. (տե՛ս **Մաթևոսյան,** *Անին մայրաքաղաք*, էջ 43-44): Ռաֆիկ Վարդանյանը, տոմարական հաշվումների վրա հիմնված ճշգրտությամբ, առաջարկում է Ժ. դարավերջից մինչև ԺԲ. դարի սկիզբն իշխած հայոց կաթողիկոս-

*վեց Սեբաստիայի Սուրբ Նշան վանքում*[28]*: Նրան, հարկավ, բյուզանդական իշխանությունների հետ գործակցելու և կայսրությանը մատուցած ծառայությունների ազդեցությամբ հաջողվեց զերծ մնալ այն անլուր տառապանքներից, որոնք բաժին հասան հաջորդ կաթողիկոս խաչիկ Բ. Անեցուն:*

*Կայսերական իշխանությունը, հետամտելով Հայոց կաթողիկոսությունը վերացնելու և այդպիսով հայերին Քաղկեդոնի դավանանքն առավել դյուրին պարտադրելու նպատակ, հալածանքներ սկսեց խաչիկ Անեցու նկատմամբ*[29]*: Նա կաթողիկոսական փոխանորդ էր կարգվել դեռևս Գետադարձի կենդանության ժամանակ. «Եւ կացուցանեն ի տեղի նորա (Պետրոս Գետադարձի – Վ. Թ.) զխաչիկ՝ զնորին քեռորդի,* ***որ զձեռնադրութիւն հայրապետութեանն վաղնջուց ընկալեալ էր»***[30]*: Կայսեր հրամանով Սեբաստիայում գտնվող խաչիկ Բ.-ին ու հայրապետանոցի եպիսկոպոսներին փոխադրեցին Կոստանդնուպոլիս ու երեք տարի բանտարկյալ-աքսորյալի կարգավիճակով պահեցին այնտեղ: Սա այլ բան չէր, քան կաթողիկոսական իշխանության գործունեության բռնի խաթարում: Բյուզանդական իշխանությունները Հայոց կաթողիկոսությունը հարկատու դարձնելու փորձ ձեռնարկեցին, որն Անեցու հաստատակամության շնորհիվ ձախողվեց. «Իսկ ժամանակ յամելոյ նորա (խաչիկ Բ. Անեցու – Վ. Թ.)*

---

ների աթոռակալման հետևյալ ժամանակագրությունը. Սարգիս Ա. Սևանցի (992-1020), Պետրոս Ա. Գետադարձ (1020-1053), խաչիկ Բ. Անեցի (1053-1066) և Գրիգոր Բ. Վկայասեր (1066-1106) (տե՛ս **Վարդանյան**, Հայոց տոնացույցը, էջ 561-563): Փաստորեն Պետրոս Գետադարձի աթոռակալման սկզբնատարվա և մահվան՝ Կարեն Մաթևոսյանի և Ռաֆիկ Վարդանյանի թվագրումներն ունեն ընդամենը մեկ տարվա տարբերություն: Այս հաշվումները ցույց են տալիս, որ միջնադարյան մատենագրության մեջ հատկապես Պետրոս Գետադարձի ու խաչիկ Անեցու աթոռակալմանը վերաբերող թվագրումների (մասնավորապես՝ Մատթեոս Ուռհայեցու) մեծ մասը վերանայելի է:

[28] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 127-128:

[29] Տե՛ս **նույն տեղում**, էջ 137-138:

[30] **Արիստակէս Լաստիվերցի**, *Պատմութիւն*, էջ 579:

*ի Կոստանդնուպաւլիս՝ այս է պատճառն. ընդ հարկիւ կամէին արկանել զնա, իսկ նա ոչ առնու յանձն, թէ՝ «Զոր մինչեւ յիմ ժամանակն չէ լեալ, եւ ոչ ես հաւանիմ»*[31]։ Անեցին, ինչպես նշում է Մատթեոս Ուռհայեցին, անգամ բացահայտ սպառնալիքի պայմաններում անդրդվելի մնաց նաև Քաղկեդոնի դավանանքը մերժելու հարցում. *«... և բազում վիշտս կրեաց ի յանիրաւ և ի մոլի ազգէն Հոռոմոց ի մէջ Կոստանդինուպօլսի, որ և ի պէսպէս փորձութիւնս ածէին զնա վասն հաւատոց. զի այսպէս լսելով մեր՝ եթէ հրով փորձեցին զնա, և նա անվնաս անցանէր ընդ մէջ հրոյն»*[32]։ Խնդիրը հանգուցալուծվեց Հայոց վտարանդի թագավոր Գագիկ Բ. Անեցու և Ատոմ ու Աբուսահլ Արծրունիների ջանքերով, որոնց շնորհիվ կաթողիկոսն ազատվեց գերությունից ու հաստատվեց Փոքր Հայքի Ջահան գավառի Թավբլուրի վանքում[33]։ Խաչիկ Անեցու ազատումն արձանագրելով՝ Ուռհայեցին գրում է, որ Հայոց թագավորները նրան *«նստուցին յաթոռ*

---

[31] **Նույն տեղում**։

[32] **Մատթէոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն* էջ 153։ Անանիա Սանահնեցին «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատությունը գրելու պատվեր, ինչպես վերը նշվեց, ստացել էր Պետրոս Գետադարձից, սակայն դատելով երկի վերջաբանից՝ այն ավարտել արդեն Խաչիկ Բ. Անեցու օրոք. *«Բայց արդ, առեալ զաղքատ իմոց մտաց՝ ընկալցիս զպտուղ, ո՜վ գերազարդ եւ ամէնիմաստ հանճարով առլցեալ տէր Խաչիկ Վերադիտող Հայոց Մեծաց, փոխանորդ մեծի Լուսաւորչին պետ, թէեւ ոչ զյաւէտ կատարեալն, սակայն, ըստ կարի մերում, զյաւժարութիւն լիապէս ցուցեալ։ Յաղագս որոյ աղաչեմ ըստ աղքատատուր տրոյ տառապելապետ այրոյն այնորիկ համարեսցին զվարձս շնորհին ո՛չ ըստ տրոցն, այլ միայն հարուստ յաւժարութեան ընդ քաջահաւատն գովեցաւ ամենեցունց Տեառնէն»* (**Քյոսեյան,** *Անանիա Սանահնեցի*, էջ 331)։ Խաչիկ Անեցին, ըստ երկի նույն հատվածի, տեղյակ էր այդ մասին և բացառելի չէ, որ ուներ «Հակաճառութեան» ավարտուն օրինակը։ Դա, անշուշտ, առավել հաստատուն պետք է դարձներ նրա քաղկեդոնամերժ դիրքորոշումը։ Անանիա Սանահնեցու կազմած «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի մեջ ընդգրկված «Հաւատարմատ» երկի հեղինակի հարցի մանրամասն քննությունը տե՛ս **Թամրազյան,** *Անանիա Նարեկացի*, էջ 117-177։

[33] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն*, էջ 138. Յովսէփեան, *Յիշատակարանք*, սյուն. 419. *Հայսմաւուրք*, էջ ՋՃՀԵ (675)։

*հայրապետութեան ի Թաւբլուր»*[34]*: Ուռհայեցին տեղյակ էր Գետադարձի մահվանից հետո խաչիկ Անեցու կաթողիկոսանալուն, սակայն «**նստուցին յաթոռ հայրապետութեան**» արտահայտությամբ փաստում էր նրա խաթարված իշխանության վերականգնումը: 1057 թվակիր մի հիշատակարանում խաչիկ Բ. Անեցին հիշվում է որպես Թավբլուրում նստող միանձնյա աթոռակալ. «... ի թուականութեանս Հայոց ի հինգ հարիւր ու վեցն (1057), ի կաթողիկոսութեանն տեառն խաչկա, յորժամ ի Թաւբլուրի վանսն էր»*[35]*:*

*Պետրոս Գետադարձը ու խաչիկ Անեցին, գտնվելով աքսորի ու շարունակական վերահսկողության տակ, հնարավորություն չունեցան լիարժեքորեն իրացնելու իրենց հայրապետական գործառույթները, քանզի, ինչպես նշում է ԺԷ. դարի հեղինակ Դավիթ Բաղիշեցին, «ոչ տային թոյլ Յոյնքն համարձակութեամբ կատարել զհայրապետութիւն մինչև ցայս, որ թվին ՇԺԴ (1065)»*[36]*:*

*Շիրակի ու Կարսի Բագրատունյաց թագավորությունների կործանումն ու Մեծ Հայքից կաթողիկոսական աթոռի հեռացումը ժամանակի աղբյուրները դիտել են որպես հայ ժողովրդի «գլխատում»: Հայաստանում, «որ երբեմն ժամանակաւ իբրեւ զդրախտ տնկախիտ», - գրում է Արիստակես Լաստիվերցին, - «ոչ լսի ձայն ուրախութեան», քանզի «այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրև զգերի կալանաւոր նստի ի հեռաբնակ տեղիս. այսպէս և հայրապետական աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմաւք իբրև զկին նորահարսն՝ մնացեալ յայրիութեան»*[37]*: Կարսի թագավորության փոխանակումն արձանագրելով՝ Ուռհայեցին գրում է. «... քակտեալ ապականեցաւ հայրենատունն մեր խլեալ, խախտեցաւ հիմն*

---

[34] **Մատթէոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն,* էջ 138:

[35] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ,* էջ 100. **Մաթեւոսյան,** *Անիի մայրաքաղաք,* էջ 43:

[36] **Հակոբյան,** *Մանր ժամանակագրություններ,* հ. II, էջ 339:

[37] **Արիստակէս Լաստիվերցի,** *Պատմութիւն,* էջ 558, 559, 560:

*բնակութեան Հայաստան ազգացս, ոչ մնաց տեղի յուսոյ ապաւինի, եղաք մատնեալք ի ծառայութիւն ազգաց անօրինաց և օտար գազանաց: ... Այս էր կատարած տանս Հայոց»*[38]*: Սկևռայում 1190 թ. գրված «Վարք Սրբոց»-ի հիշատակագիրը, արձանագրելով Բագրատունյաց թագավորության կործանման հետևանքով աստանդական դարձած կաթողիկոսական աթոռի վատթար վիճակը, գրում է. «Եւ ընդ նուազել թագաւորութեանն յազգէ Բագրատունեաց և ցան և ցիր լինել ազգի մերոյ ընդ ստրկութեամբ ծառայութեան այլասեռ ազգաց, բարձաւ և հայրապետութիւն ի բնիկ աշխարհէն և քաղաքացն Հայոց, և ոչ ուրեք գոյր հաստատութիւն դիտապետացն Թորգոմեան տանն լինել ժառանգաւոր հայրենի աթոռոյն, այլ որք մնալով յիւրեանց ժառանգութենէն և ի տեղիս տեղիս շրջէին հայրապետքն՝ կալով ընդ իշխանութեամբ անաւրէն ազգին Իսմայէլացւոց»*[39]*:*

*Ավանդույթի ուժով ու անվտանգության նկատառումներից ելնելով՝ Հայոց կաթողիկոսը ձգտում էր մերձ լինել աշխարհիկ բարձրագույն իշխանությանը: Հայրապետական աթոռի ներկայությունը քաղաքական որևէ իշխանությունում խորհրդանշում էր վերջինի գերագահությունն իշխանական համակարգում: Քննվող ժամանակահատվածն այս տեսանկյունից յուրահատուկ է. Հյուսիսային Ասորիքում, Կապադովկիայում ու Կիլիկիայում հաստատված հայկական իշխանությունների շրջանում գերագահ կենտրոն՝ որպես այդպիսին, չկար, ինչը որոշ դեպքերում կաթողիկոսին ստիպում էր աստանդական կյանք վարել: Դա մեծ մասամբ բյուզանդական իշխանությունների հետևողականորեն գործադրվող պառակտիչ քաղաքականության հետևանք էր, որի նպատակն իշխանական մեկ կենտրոնի շուրջ կայսրության տարածքում գտնվող հայկական կամ այլ էթնիկ տարրի համախմբումն ամեն կերպ բացառելն էր, ինչը հայերի պա-*

---

38 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 151:

39 **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 551:

*րագայում առավել քան հնարավոր էր՝ հաշվի առնելով Գագիկ Բ. Անեցու ներկայությունը Կապադովկիայում: Ավելին՝ նա տեղի հայության (այդ թվում՝ իշխանությունների) շրջանում դեռևս խորհրդանշում էր Բագրատունյաց թագավորության գոյությունը: Պատահական չէ, որ նրա սպանության փաստն արձանագրելով՝ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Եւ սատանօր դադարեալ եղև թագաւորութիւնն ի տանէն Հայոց և յազգէն Բագրատունեաց»[40]:*

*Ճշմարտության առաջ չմեղանչելու համար նշենք, որ հայկական տարրի ռազմաքաղաքական համախմբմանը միայն բյուզանդական իշխանությունները չէ, որ խոչընդոտում էին. կայսրության ազդեցության տակ գտնվող հայոց ազատանու շրջանում ևս չկար միասնություն: Նրանցից ռազմապես առավել հզոր Փիլարտոս Վարաժնունին տարբեր պատճառներով այդպես էլ չհաջողվեց իրագործել հայկական ռազմաքաղաքական ներուժի համախմբումը մեկ առանցքի շուրջ[41]:*

---

[40] **Մատթէոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն,* էջ 220:

[41] **Բոզոյան,** *Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը,* էջ 12-13:

# ԳԼՈՒԽ Բ.

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ Բ. ՎԿԱՅԱՍԵՐԻ ԱԹՈՌԱԿԱԼՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

## Ա. Կաթողիկոսական իշխանության վերականգնումը

*Գրիգոր Բ. Վկայասերի աթոռակալման շրջանի հայրապետական իշխանության, հատկապես նրա աթոռակալման ժամանակ մի քանի կաթողիկոսությունների գոյության խնդրի պարզաբանումն առանձնակի բարդ է: Դա նախ և առաջ պատճառաբանվում է քննության առարկա մի քանի կարևոր իրադարձությունների վերաբերյալ աղբյուրների ոչ հավաստի, հաճախ իրականությունը չարտացոլող տեղեկություններով, որոշ դեպքերում էլ՝ դրանց իրարամերժությամբ: Այդ ամենի պարտադրանքով սույն ենթագլխում կաթողիկոսական աթոռի շուրջ մինչև 1072 թ. ծավալված որոշ իրադարձությունների շարադրանքը չենք ծանրաբեռնել մանրամասն քննությամբ՝ դրանց խոր ու համապարփակ ուսումնասիրությունը կատարելով հաջորդ ենթաբաժիններում: Թեև այդպիսով հնարավոր չի եղել խուսափել մի շարք անցքերի արծարծման կրկնությունից, սակայն յուրաքանչյուր անգամ փորձել ենք դրանք մեկնաբանել ու գնահատել տարբեր տեսանկյուններից:*

*Ներսես Դ. Շնորհալու 1121 թ. հեղինակած Վիպասանության ազդեցությամբ միջնադարի հայ մատենագրական որոշ հուշարձաններում շրջանառվել են տեղեկություններ, համաձայն որոնց՝* **ա.** *Խաչիկ Անեցու մահվանից հետո՝ մինչ Գրիգոր Վկայասերի ընտրությունը, կաթողիկոսական աթոռը մի քանի տարի մնացել է թափուր, և որ* **բ.** *Գագիկ Բ. Աբասյանը կաթողիկոսական իշխանությունը վերականգնելու նպատակով է Կարսի թագավորությունը հանձնել Բյուզանդական կայսրությանը:*

*ա. Որոշ աղբյուրների հաղորդմամբ՝ մինչ Գրիգոր Վկայասերի ընտրությունը կաթողիկոսական աթոռը բյուզանդական իշխանությունների հարուցած խոչընդոտների հետևանքով առնվազն մի քանի տարի (յոթ, հինգ, չորս և երեք) մնացել է թափուր: Կարծիքները տարամիտվում են նաև խնդրին ինչ-որ կերպ անդրադարձած հետազոտություններում, որոնց հեղինակները, տուրք տալով այս կամ այն սկզբնաղբյուրի տեղեկություններին, որոշ դեպքերում առանց մանրամասն քննության, համերաշխել են դրանց հետ:*

*Սկզբնաղբյուրային վկայությունների ժամանակագրական հաջորդականությունից հետևում է, որ կաթողիկոսական աթոռի՝ յոթ տարի թափուր մնալու մասին հայտնող տեղեկությունն առաջին անգամ (1240 թ.) շրջանառել է Ներսես Շնորհալու վարքագիրը. «... ընդ այն ժամանակս բարձեալ լինէին հովուապետքն Հայոց յաշխարհէ, և պակասեալ տունն տեառն Պետրոսի (Պետրոս Գետադարձի – Վ. Թ.) յարժանաւոր ժառանգաւորէ... և մնայր տունս Թորգոմեան **զեւթն ամ առանց հայրապետի**»[1]: «Վարք»-ի այս հատվածը քաղված է Ներսես Շնորհալու «Վիպասանութիւն»-ից, որտեղ, սակայն, կաթողիկոսական աթոռի յոթ տարի առանց առաջնորդի մնալու մասին որևէ տե-*

[1] *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 16: Ներսես Շնորհալու «Վարք»-ի հեղինակի ու գրչության ժամանակի մասին տե՛ս **Տեր-Դավթյան,** *Ներսես Շնորհալու Վարքը*, էջ 190-191: Պողոս Անանյանը Ներսես Շնորհալու վարքագրի այս տեղեկությանը հավատ չի ընծայում՝ կարծելով, որ նրա հաղորդած «զեւթն ամ» պետք է հասկանալ ոչ թե յոթ տարի, այլ նույնքան ամիս: Հետազոտողը նաև չի բացառում, որ վարքագիրը նկատի չի առել *«խաչիկի պաշտօնավարութեան տարիները, որովհետեւ խափանուած էր Յունաց կայսեր հալածանքով»* (**Անանեան,** *Ս. Ներսէս Շնորհալի*, թիւ 3-4, էջ 328): Հայրապետական աթոռի թափուր մնալը փաստող աղբյուրներն այդ ժամանակահատվածը հաշվում են ոչ թե ամիսներով, այլ տարիներով: Դա, ինչպես կհամոզվենք ստորև, առավել ընդունելի է դարձնում Պողոս Անանյանի եզրահանգման երկրորդ հատվածը, այն է՝ Շնորհալու վարքագիրը, իրոք, չի արձանագրել Խաչիկ Անեցու աթոռակալումը:

*ղեկություն չկա*[2]*։ Մնում է կարծել, որ վարքագրի այս վկայության աղբյուրն ըստ բովանդակության՝ 1173 թվակիր «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանցն եւ Պետրոսեանցն» վարքի հաղորդումն է առ այն, որ Խաչիկ Բ.-ի մահվանից հետո բյուզանդական իշխանությունները «բռնացան... ի վերայ Հայոց եւ Է. (7) ամ ի կրօնս իւրեանց պահեցին զՀայք, մինչ որ արքայն Գագիկ մեծաւ ջանիւ գուն գործեալ ... էառ ի նոցանէ հրաման հաստատել հայրապետ Հայոց»*[3]*։ Հայերի կողմից երկաբնակության պարտադրաբար ընդունումը, ինչն արձանագրված է սույն քաղվածքում, Հայկ Պերպերյանի կարծիքով միանգամայն հնարավոր էր*[4]*։ Նման վկայություններին հավատ ընծայելն առաջ է բերում հետևյալ հռետորական, ասել է թե՝ պատասխան չպահանջող հարցը. եթե ստույգ է, որ հայերը յոթ տարի հարկադրաբար դավանել են քաղկեդոնականություն, ապա*

---

[2] **Ներսէս Շնորհալի,** *Վիպասանութիւն*, էջ 114: Կաթողիկոսական աթոռի յոթ տարի թափուր մնալու մասին տեղեկություն կա ԺԳ.-ԺԴ. դարերով թվագրվող հայրապետական մի գավազանացանկում, որի աղբյուրը ևս Շնորհալու Վարքն է. *«...եւ յետ մահուան սորա (Խաչիկ Անեցու – Վ. Թ.) զամս է. (7 – Վ. Թ.) մնաց առանց հայրապետի, զի ոչ տային թոյլ յոյնք ձեռնադրել կաթողիկոս Հայոց»* (Պողարեան, *Յուցակ*, հ. Եօթներորդ, էջ 449):

[3] Յովսէփեան, *Յիշատակարանք*, սյուն. 419. *Հայսմավուրք*, էջ ՉՃՀԵ (675): «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանցն եւ Պետրոսեանցն» վարքի հեղինակը, Խաչիկ Անեցու աթոռակալումը յոթ տարի հաշվելով, հավելում է, որ այդքան էլ *«բռնացան Յոյնք ի վերայ Հայոց եւ Է. (7) ամ ի կրօնս իւեանց պահեցին զՀայք»*: Կարծում ենք՝ հեղինակը նկատի ունի ոչ թե հայերի՝ Քաղկեդոնի դավանանքն ընդունելը, ինչը չի փաստվում ուրիշ աղբյուրներով, այլ արձանագրում է Խաչիկ Անեցու աթոռակալման ընթացքում նրա նկատմամբ կիրառված հալածական քաղաքականությունը, բանտարկությունը, խիստ վերահսկելի կեցությունը Թավբլուրում, որպիսի պայմաններում գրեթե անհնարին էր հայրապետական գործառույթների իրականացումը: Ժերար Դեդեյանը ևս կարծում է, որ հայրապետական աթոռը յոթ տարի է թափուր մնացել, (տե՛ս **Dédéyan**, *Les Arméniens entre Grecs...*, vol. 2, էջ 251, նույնի՝ *La vie politique...*, էջ 30):

[4] Տե՛ս **Պէրպէրեան,** *Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը*, սյուն 344:

*ե՞րբ են վերադարձել նախկին դավանանքին, քանզի այն ընդունելու և դրանից հրաժարվելու համար պարտադիր համարվող եկեղեցական ժողովներ չեն գումարվել: Բացի այդ՝ ստույգ փաստարկված է, որ ինչպես Խաչիկ Անեցին, այնպես էլ նրա հաջորդ Գրիգոր Վկայասերը երբևէ դավանական միության գիր չեն ստորագրել: Պարզից էլ պարզ է, որ «Է. (7) ամ ի կրօնս յիւրեանց» բառակապակցությամբ նկատի է առնվել այն ժամանակահատվածը, որի ընթացքում բյուզանդական արքունիքի ճշմամբ Հայոց կաթողիկոսական աթոռը մնացել է թափուր: Կայսերական իշխանությունները համոզված էին, որ անառաջնորդ մնացած Հայոց եկեղեցին ի վերջո տեղի կտա իրենց ճնշմանն ու կընդունի Քաղկեդոնի դավանանքը. «Այլում լինել թոյլ ոչ տուեալ, // Զի անտերունչք, ասեն, եղեալ՝ // Լիցին ի կրօնս մեր դարձեալ»[5], - բյուզանդական արքունիքի հետամտած նպատակը բացահայտելով՝ գրում է Ներսես Շնորհալին:*

*Ինչ վերաբերում է հայրապետական գահաթոռի՝ չորս տարի առանց առաջնորդի մնալուն, ապա Սամվել Անեցու Շարունակողներից մեկին (ԺԴ. դար) պատկանող այդ տեղեկության («Տէր Խաչիկ քուեր որդի տէր Պետրոսի՝ ամս Բ (2) եւ յետ այնորիկ զամս չորս առանց կաթողիկոսի մնաց աշխարհս Հայոց, զի վտարեցաւ աթոռ հայրապետութեան ի Սեբաստիայ եւ խափանեցին Յոյնք ձեռնադրել կաթողիկոս Հայոց, մինչեւ Մարիամ՝ դուստր թագաւորին Գագկա մեծաւ աղաչանաւք խնդրեաց յարքայէն Հոռոմոց եւ նայ լուաւ աղաչանացն Մարիամու»)[6] աղբյուրը, ամենայն հավանականությամբ, Ներսես Լամբրոնացու 1177 թ. գրված «Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին» աշխատությունն է, որտեղ այդ մասին կարդում ենք. «... յետ չորից ամաց անառաջ-*

[5] **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 114. **Հակոբյան**, *Մանր ժամանակագրություններ*, հ. II, էջ 339:
[6] **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 189-190:

*նորդութեանն, բարեպաշտ Մարեմ թագուհին նստոյց զտէր Վահրամ, որ և Գրիգորիս»*[7]*։ Ի դեպ, միայն այս երկու աղբյուրներն են փաստում Գագիկ Կարսեցու դուստր Մարիամի միջամտությունը Գրիգոր Բ.-ի ընտրությանը։ Ներսես Լամբրոնացու շարադրանքից երևում է, որ նա ըստ պատշաճի չի արձանագրել խաչիկ Անեցու աթոռակալումը՝ նշելով, որ Բագրատունյաց թագավորության անկումից հետո բյուզանդական իշխանություններն արգելեցին նոր կաթողիկոսի ընտրությունը. «Նա (Պետրոս Գետադարձը – Վ. Թ.)* ***խրամատեաց զօրէնսն. ոչ գիտեմ որպէս*** *և զքուերորդին իւր զտէր խաչիկ ձեռնադրեաց. բայց կարծեմ թէ վասն զի թագաւորութիւնն առ նովաւ տապալեցաւ՝ այս եղև։ Յետ որոյ Հոռոմոց տիրեալ աշխարհացն, ի ներքոյ հրամանաց իւրեանց փակեցին զառաջնորդութիւն աթոռոյն»*[8]*։ Դա ունի իր բացատրությունը. կաթողիկոսական իշխանության ժառանգաբար փոխանցմանը հակադրվող Լամբրոնացին անօրինական էր համարում խաչիկ Անեցու փոխանորդական ձեռնադրությունը՝ բացորոշ նշելով, որ Գետադարձն այդպիսով «****խրամատեաց զօրէնսն****», այսինքն՝ խախտեց կաթողիկոսի ընտրության կանոնական կարգը։ Ամենայն հավանականությամբ, Լամբրոնացու երկի ազդեցությամբ է հայրապետական աթոռի չորս տարի թափուր մնալը նշում նաև Կղեմես Գալանոսը*[9]*։*

*Ինչ վերաբերում է Անեցու Շարունակողներից մեկի այն պնդմանը, թե խաչիկն աթոռակալել է երկու տարի, ապա խիստ հավանական է, որ նա այդ տեղեկությունը քաղել է Մխիթար Անեցու աշխատությունից, որտեղ առկա կաթողիկոսական գավազանացանկում խաչիկ*

---

[7] **Ներսէս Լամբրոնացի**, *Խորհրդածութիւնք…*, էջ 535: Ներսես Լամբրոնացու այդ երկի գրչության ճիշտակարանը տե՛ս **Հակոբյան**, *Ներսես Լամբրոնացի*, էջ 348-350:

[8] **Ներսէս Լամբրոնացի**, *Խորհրդածութիւնք…*, էջ 535:

[9] Տե՛ս **Կղեմէս Գալանոս**, *Միաբանութիւն*, էջ 227:

*Անեցու աթոռակալումը հաշվված է 2 տարի. «ծը. Պետրոս (Գետադարձ – Վ. Թ.)՝ ԼԹ (39), ծժ. Խաչիկ (Անեցի – Վ. Թ.)՝ Բ (2)»*[10]*: Միքայել Ասորու «Յաղագս քահանայութեան» երկի հայերեն թարգմանության կաթողիկոսական գավազանացանկում ևս Խաչիկ Անեցու աթոռակալման տարիների քանակը երկու է. «Տէր Խաչիկ քուր որդի Նորին (Պետրոս Գետադարձի – Վ. Թ.) ամս Բ. (2) և կատարեցաւ ի Սևաստ (Սեբաստիա) նոյնպէս»*[11]*: Նույն տեղում նաև արձանագրված է, որ Վկայասերը կաթողիկոս է ընտրվել հայրապետական աթոռի՝ չորս տարի թափուր մնալուց հետո. «Տէր Վահրամ որդի Գրիգոր Մաժիստրի, առեալ զաթոռն զկնի չորից ամաց խափանուածոյն»*[12]*:*

*Կաթողիկոսական աթոռի թափուր մնացած տարիների վերաբերյալ Վարդան վարդապետն իր երկու տարբեր երկերում իրարամերժ տեղեկություններ է հաղորդում: Այսպես՝ «Հաւաքումն պատմութեան» ժամանակագրական բնույթի աշխատության մեջ պատմիչը որոշակի փաստում է, որ Խաչիկ Անեցին Պետրոս Գետադարձի մահվանից հետո աթոռակալել է ընդամենը երկու տարի, որից հետո կաթողիկոսական աթոռը հինգ տարի մնացել է առանց առաջնորդի. «Եւ առնու զքողն Խաչիկ քորորդին իւր (Գրիգոր Վկայասերի – Վ. Թ.), զոր ձեռնադրեալ էր ի կեանս իւր ի յԱնի, և կեցեալ ամս երկու վճարի, և մնաց աթոռն թափուր զամս հինգ»*[13]*: Մինչդեռ Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա.-ի (1226-1270) պատվերով Գրիգոր*

[10] **Մխիթար Անեցի,** *Մատեան*, էջ 69. **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 189:

[11] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. հմր 1865, էջ 65բ:

[12] Նույն տեղում:

[13] **Վարդան վարդապետ,** *Հաւաքումն պատմութեան*, էջ 99: Խաչիկ Անեցու մահը 1060-ով թվագրելով՝ Ռընե Գրուսեն կարծում է, որ կաթողիկոսական աթոռը մինչև Վկայասերի ընտրությունը, ըստ նրա՝ 1065 թ., մնացել է առանց առաջնորդի (տե՛ս **Grousset,** *Histoire*, էջ 617-618):

Վկայասերին, Գրիգոր Գ.-ին ու Ներսես Դ. Շնորհալուն նվիրված ներբողում Վարդան վարդապետը խաչիկ Անեցուն վերագրում է երեք տարվա աթոռակալում՝ նույնքան էլ հաշվելով աթոռի թափուր մնացած տարիները. «Եւ զկին նորա տեառն Խաչկայ քուերորդւոյն տէր Պետրոսի զամս երեք պաշտելոյն զպատիւ կաթողիկոսութեան մնայր սուրբ Աթոռն անայցու զամս երեք»[14]: Բացի այդ՝ «Հաւաքումն պատմութեան» երկից պարզվում է, որ հեղինակը տեղյակ է Հոնիի աթոռակալ Սարգսի՝ Գետադարձի քրոջ որդին լինելուն. «Այս Փիլարտոս ձեռնադրել ետ զՍարգիս քորորդի տեառն Պետրոսի կաթողիկոսի ի Միջագետս»[15], մինչդեռ ներբողում նրան հիշում է «ոմն» մակդիրով. «... որք էին փորձութիւնք ուղխից եւ պատճառք բաժանման Աթոռոյ սրբոյն Գրիգորի ի Միջագէտս ի Հէնի եւ ի Մարաշ, **Սարգիս ոմն** եւ Թէոդորոս եւ Պաւղոս Վարագեցին»[16]: Թեև առկա տարբերությունները հիմք են տալիս կասկածի տակ դնելու այս երկերի հեղինակների նույնական լինելը, սակայն ստույգ է, որ թե՛ «Հաւաքումն պատմութեան» և թե՛ ներբողի հեղինակը Վարդան վարդապետն է: Ուստի կհետևենք հայագիտության մեջ ընդունված տեսակետին[17]: Այս պարագայում մնում է կարծել, որ «Հաւաքումն պատմութեան» երկի՝ խաչիկ Անեցուն երկու տարվա աթոռակալում վերագրելու և հայրապետական աթոռի՝ հինգ տարի թափուր մնալու մասին տեղեկության հիմքում, ամենայն հավանականությամբ, Ներսես Շնորհալու վարքագրի հաղորդումն է կաթողիկոսության՝ յոթ տարի անառաջնորդ լինելու, ինչպես նաև Մխիթար Անեցու վկայությունը խաչիկ Անեցու երկամյա աթոռակալման վերաբերյալ[18]:

---

[14] **Վարդան Արեւելցի**, *Ճառք*, էջ 365:
[15] **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 104:
[16] **Վարդան Արեւելցի**, *Ճառք*, էջ 370:
[17] Տե՛ս **Անթապյան**, *Վարդան Արևելցի*, էջ 159-160:
[18] Տե՛ս **Մխիթար Անեցի**, *Մատեան*, էջ 69: Հայտնի է, որ Վարդան վարդապետը «Հաւաքումն պատմութեան» երկը շարադրելիս օգտվել է Մխիթար Անեցու

*Շնորհալու վարքագիրը համոզված է, որ բյուզանդական իշխանությունները կաթողիկոսի ընտրությունն արգելել են Պետրոս Գետադարձի մահվանից հետո, և որ Վկայասերը հաջորդել է նրան: Ինչպես ստորև կտեսնենք, նրա կողմից Խաչիկի կաթողիկոսության տարիները չարձանագրելն ունի կանխամիտ բնույթ: Վարդան վարդապետը նման նպատակ չի ունեցել և, հարկավ, Մխիթար Անեցու երկից տեղեկանալով Խաչիկի երկամյա աթոռակալման, իսկ Ներսես Շնորհալու վարքից՝ կաթողիկոսության յոթ տարի թափուր մնալու մասին՝ յոթից երկու տարին հատկացրել է Անեցու գահակալմանը, հինգը՝ աթոռի թափուր մնալուն: Ինչ վերաբերում է Խաչիկի՝ երեքամյա աթոռակալմանն ու հայրապետական աթոռի նույնքան թափուր մնալուն, ապա Վարդան վարդապետը ներբողը շարադրելիս այդ տեղեկությունը քաղել է Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ից, որը Խաչիկ Անեցուն հատկացնում է վեց տարվա գահակալում, որից երեքն աքսորի պայմաններում: Մնում է կարծել, որ Վարդան վարդապետը Խաչիկ Անեցու բանտարկության ժամանակահատվածը չի ներառել աթոռակալման տարիների մեջ, իսկ «մնայր սուրբ Աթոռն անայցու զամս երեք» ասելով նկատի է ունեցել ոչ թե Խաչիկի մահվանից հետո, այլ նրա աքսորի ընթացքում աթոռի թափուր մնալը:*

*Մեկ կարևոր դիտարկում. կաթողիկոսական աթոռի մի քանի տարի թափուր մնալն արձանագրած աղբյուրները շարադրվել են խնդրո առարկա իրադարձություններից առնվազն մեկ դար անց ու ավելի ուշ, ինչը նվազեցնում է դրանց՝ մեզ հետաքրքրող տեղեկությունների ստույգ լինելու հավանականությունը: Ուստի այդ հաղորդումները պետք է օգտագործել վերապահումով, առավել ևս, որ դրանք չեն հաստատվում քննվող իրադարձություններին ժամանակամերձ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու տեղեկություններով: Սա-*

---

«Պատմութիւն»-ից (տե՛ս **Անթապեան**, *«Հաւաքումն պատմութեան» կորած աղբիւրները*, էջ 24-28):

*կայն որքան էլ այդ սկզբնաղբյուրներն իրարամերժ են, բայց և այնպես մեկ բան փաստում են աներկբա. կաթողիկոսական աթոռը բյուզանդական իշխանությունների պարտադրանքով ինչ-որ ժամանակահատված մնացել է առանց հովվապետի: Անտարակույս է, որ Բյուզանդիան հետամտում էր Հայոց կաթողիկոսությունը վերացնելու նպատակ, սակայն աթոռապահի (տվյալ դեպքում՝ Խաչիկ Անեցու) գոյությունը որոշակի խոչընդոտ էր այն իրագործելու հարցում: Ի տարբերություն իր նախորդի՝ Խաչիկ Անեցին այդպես էլ փոխանորդ չկարգեց, ինչը չէր կարող առանց բյուզանդական իշխանությունների միջամտության լինել, քանզի նրա գոյությունը կաթողիկոսության գործունեության շարունակման տեսանկյունից առանցքային նշանակություն ուներ: Սակայն ստույգ է նաև, որ բյուզանդական իշխանությունները, այդուհանդերձ, թույլ են տվել Վկայասերի ընտրությունը: Եթե հավատալու լինենք Մատթեոս Ուռհայեցուն, բյուզանդական կողմը չի խոչընդոտել Խաչիկ Անեցուց հետո նոր կաթողիկոսի՝ տվյալ դեպքում Գրիգոր Բ.-ի ընտրությանը. «Իսկ յորժամ հրաժարեաց ի յաշխարհէս սուրբ հայրապետն Տէր Խաչիկ, որք մնացեալ էին ի թագաւորացն և յիշխանացն Հայոց, յայնժամ խնդիր արարին գտանել զմի ոք արժանաւոր՝ զի նստցի յաթոռ հայրապետութեան սուրբ Լուսաւորչին Գրիգորի. և գտին մանուկ մի յազգէ Պահլաւունեաց Վահրամ անուն, զորդի Գրիգորին Մագիստրոսի մեծի իշխանին Հայոց»[19], - գրում է պատմիչը: Հազիվ թե կաթողիկոսության վերացմանն ամեն գնով ձգտող կայսրը չօգտագործեր Խաչիկի մահվամբ ու աթոռապահի չգոյությամբ առաջացած պատեհությունը, քանզի առանց տեղապահի մնացած հայրապետական աթոռն առավել դյուրին կլիներ վերացնել: Այդ իսկ պատճառով սխալ կլինի անվերապահ հավատ ընծայել Ուռհայեցու տեղեկությա-*

[19] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 154:

*նը՝ կարծելով, թե բյուզանդական իշխանությունները ձեռնպահ են մնացել նոր կաթողիկոսի ընտրությանը խոչընդոտելուց կամ որևէ կերպ միջամտելուց: Կաթողիկոսության վերացումը հետամտող կայսրը դժվար թե անմիջապես համաձայներ նոր հայրապետի ընտրությանը, ինչը ենթադրում է, որ Գագիկ Բ. Կարսեցուց պետք է որոշ ժամանակ պահանջվեր կայսերական իշխանություններից թույլտվություն ստանալու համար*[20]*: Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ Խաչիկ Անեցու մահվան ու Վկայասերի ընտրության տարում՝ Հայոց ՇԺԴ. (5 մարտ 1065 – 4 մարտ 1066) թվականին, Կոստանդին Ժ. Դուկաս (1059-1067) կայսրը, Կոստանդնուպոլսի պատրիարքի (Հովհաննես Ը. 1064-1075) հետ համախորհուրդ, հայերին Քաղկեդոնի դավանանքը պարտադրելու որոշում կայացրեց և այդ նպատակով կայսրության մայրաքաղաք հրավիրեց Ատոմ ու Աբուսահլ Արծրունիներին: Վերջիններս, կռահելով Դուկասի իրական նպատակը, իրենց հետ կայսրության մայրաքաղաք տարան նշանավոր վարդապետ Հակոբ Սանահնեցուն, որը, սակայն, կայսեր ճնշմամբ համաձայնեց եկեղեցիների միությանը: Տեղի ունեցածից ահաբեկված Արծրունի իշխաններն այդ մասին տեղեկացրին Գագիկ Բ. Անեցուն, որի միջամտությամբ խնդիրը հանգուցալուծվեց. նա*

---

[20] Ի դեպ, Կարմիր վանքի ձեռագրերի հավաքածուում առկա՝ Գրիգոր Լուսավորչից մինչև 1441 թ. (հայրապետական աթոռն էջմիածին փոխադրելը) աթոռակալած Հայոց կաթողիկոսներին վերաբերող մի չափազանց սեղմ բնագրի (շուրջ 1700 թ.) հաղորդմամբ՝ Գագիկ Բ. Կարսեցին բյուզանդական իշխանություններին կաշառելու միջոցով է նոր կաթողիկոս ընտրելու թույլատվություն ստացել. *«... յետ նորա (Խաչիկ Անեցուց – Վ. Թ.) ազգն Յունաց հակառակութեամբ խաբանեցին զկաթողիկոսութիւնն Հայոց ամս Ժ. մինչեւ ցԳագիկ, որ էր տեղեաւ Ղարսեցի. և նա ելեալ բազում կաշառօք հաւանեցոյց զազգն Յունաց, և ձեռնադրեցին զՎահրամ, որ է Վկայասէրն Գրիգոր ի Թաւաբլուրն»* (**Կիւլէսէրեան,** *Յուցակ*, սյուն. 720): Ակնհայտ է, որ կաթողիկոսական աթոռի 10 տարով թափուր մնալու մասին մեջբերված քաղվածում առկա տեղեկությունը հավաստի չէ:

կայսեր առջև պատռեց Հակոբ Սանահնեցու ստորագրած միության գիրը[21]: Հայոց թագավորը Բյուզանդիայի ինքնակալի պահանջին հակադարձեց պատճառաբանված ու հիմնավոր պատասխանով, որի պատճենն առակա է Մատթեոս Ուռհայեցու երկում[22]: Գիտնական-վարդապետների մասնակցությունը միջեկեղեցական ու հատկապես դավանաբանական բանակցություններին տարածված երևույթ էր, սակայն այնպիսի հարց, որպիսին եկեղեցիների միությունն է, չէր կարող առանց հայրապետի համաձայնության լուծվել: Ի դեպ, դա պետք է առավել մտահոգեր պաշտպանվող կողմին, տվյալ դեպքում՝ հայոց իշխաններին: Ուստի, եթե կայսեր կողմից Հայոց հայրապետին Կոստանդնուպոլիս չհրավիրելը կարող էր դիտավորության հետևանք լինել, ապա «միության» մասին միայն Գագիկ Բ. Անեցուն ահազանգելը հնարավոր է պատճառաբանել կաթողիկոսի չգոյությամբ: Այսինքն՝ դավանաբանական վեճի ժամանակ խաչիկ Անեցին այլևս ողջ չէր, իսկ Գրիգոր Վկայասերը դեռ չէր ընտրվել[23]: Ինչպես հայտնի է, կայսրը Քաղկեդոնի դավանանքը խաչիկ Անեցուն պարտադրելու մեկ անհաջող փորձ արդեն կատարել էր, ուստի տրամաբանական է կարծել, որ հաջորդը կրկնելու էր նրա մահվանից հետո: Հետևաբար, միության գործը հաջողելու նպատակով բյուզանդական իշխանություններն ամեն կերպ խոչընդոտել են նոր կաթողիկոսի ընտրությանն ու այն թույլատրել եկեղեցիների միության հարցում այս անգամ ևս հաջողության չհասնելուց հետո:

Չնայած ժամանակագրական որոշ սխալներին՝ աղբյուրները գրեթե համերաշխ են այն հարցում, որ խաչիկ Բ.-ն աթոռակալել է

[21] Տե՛ս **Գագիկ Բագրատունի**, *Գիր հաւատոյ*, էջ 663-672. **Gouillard J**., *Gagik II défenseur de la foi arménienne*, “Traveaux et Memoires”, t. VII, 1979, էջ 399-418:
[22] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 159-178:
[23] Հմմտ. **Օրմանեան**, *Ազգապատում*, սյուն. 1481-1482:

*մինչև 1063-1065 թթ.*[24]*։ Մեկնաբանելով Մատթեոս Ուռհայեցու հետևյալ տողերը. «Եւ այսպիսի օրինակաւ սուգ ունէր Տէր Խաչիկ ի սրտի իւրում. և յիշեալ զաւերումն հայրապետական աթոռոյն տանն Հայոց, նաև զխափանել աթոռոյ թագաւորութեանն յազգէն Բագրատունեաց»*[25]*՝ Կարեն Մաթևոսյանն իրավացիորեն եզրակացրել է, որ պատմիչը նկատի է ունեցել սելջուկ-թյուրքերի կողմից Անիի 1064 թ. գրավումը, ինչն էլ նման ծանր տպավորություն է գործել վտարանդի կաթողիկոսի վրա*[26]*։ Այսինքն՝ սա Խաչիկ Անեցու աթոռակալումը մինչև 1064 թ. հասցնելու լրացուցիչ կռվան է։ «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորեսեանց եւ Պետրոսեանց» վարքում Խաչիկ Անեցու աթոռակալումը հաշվվում է 12 տարի*[27]*։ Թեև աղբյուրների գերակշիռ մասը նրան որպես միանձնյա կաթողիկոս հիշում է 1057/1058 թթ., սակայն, ինչպես վերը նշվեց, ստույգ է նրա աթոռակալումը 1053/1054 թթ. հաշվելը։ Այս դեպքում արդեն Անեցուն 12-ամյա աթոռակալում վերագրելը կարծես դառնում է առավել ճշմարտանման։ Նրա մահն ու Վկայասերի ընտրությունը պատմիչ Մատթեոս Ուռհայեցին թվագրում է նույն՝ Հայոց ՇԺԴ. (5 մարտ 1065 — 4 մարտ 1066) տարով, ուստի մնում է ենթադրել, որ Խաչիկը մահացել*

---

[24] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 153. **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 189-191. **Հակոբյան**, *Մանր ժամանակագրություններ*, հ. II, էջ 339. **Տաշեան**, *Ցուցակ*, էջ 92: Բացառություն են Սամվել Անեցու Շարունակողներից երկուսի տեղեկությունները, որոնց համաձայն՝ Խաչիկ Անեցին աթոռակալել է 2 տարի: Նրանցից մեկը, կաթողիկոսի գահակալումը 8 տարի հաշվելով, հավելում է, թե տեղյակ է, որ որոշ աղբյուրներ Խաչիկին վերագրում են 2 տարվա հայրապետական իշխանություն (տե՛ս Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ, *Ժամանակագրութիւն*, էջ 189-190):

[25] Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 153:

[26] Տե՛ս Մաթևոսյան Կ., *Անին մայրաքաղաք*, էջ 46. Mahé, *L'eglise Arménienne*, էջ 530.

[27] Տե՛ս **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 419. *Հայսմավուրք*, էջ ՁՃՀԵ (675). **Տաշեան**, *Ցուցակ*, էջ 92:

է 1065 թ., իսկ Վկայասերի ընտրությունը կայացել է հաջորդ տարվա սկզբին, սակայն հայոց թվագրությամբ՝ նույն տարում: Այսինքն՝ կաթողիկոսական գահաթոռը թափուր է մնացել կարճ ժամանակահատված, հավանաբար՝ ընդամենը մի քանի ամիս[28]: Հետաքրքրական է, որ Սամվել Անեցու երկի ժամանակագրական աղյուսակում Խաչիկ Բ. Անեցու մահվան ու Վկայասերի կաթողիկոսական ընտրության միջև տարիների ընդհատում արձանագրված չէ, իսկ այդ իրադարձությունները հաջորդաբար նշված են Հայոց ՇԺԴ. (1065) և ՇԺԵ. (1066) թվականներին[29]:

բ. Այժմ անդրադառնանք Կարսի փոխանակման՝ Ներսես Շնորհալու առաջադրած դրդապատճառին: Այդ մասին նրա Վիպասանության մեջ կարդում ենք. «Զի մինչ յաւուրսն յայն հասեալ, || Հայոց հովուացն վախճանեալ, || Տուն Պետրոսեան ի բաց բարձեալ ||... Որով Յունացն ընդ մեզ չարեալ, || Այլում լինել թոյլ ոչ տուեալ, || Զի անտերունչք, ասեն, եղեալ՝ || Լիցին ի կրօնս մեր դարձեալ: || Յայնժամ արքայն մեր կոչեցեալ || Գագիկ անուն վերաձայնեալ || Այն, որ զԿարս ի Յոյնս տուեալ, || ԶԾամնդաւն դղեակն առեալ, || **Զանիւ մեծաւ գուն գործեցեալ, || Ինչս բազումս անթիւ ծախեալ, || Նաև զԿարս նախասացեալ, || Այսր խնդրոյ փոխանակեալ, || Զի հովուապետ Հայոց դարձեալ || Նստցի յաթոռն ունայնացեալ»**[30]: Հայագիտության մեջ Կարսի փոխանակման՝ Շնորհալու նշած դրդապատճառն անվերապահորեն ընդունել է Հայկ Պերպերյանը[31]: Նա իր տե-

---

28 Միքայել Չամչյանցը կարծում է, որ հայրապետական աթոռը թափուր է մնացել մեկ տարի (տե՛ս **Չամչեանց**, *Պատմութիւն*, հ. Գ, էջ 988-989):

29 **Սամուէլ Անեցի**, *Հաւաքմունք*, էջ 125-126:

30 **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 114-115:

31 Տե՛ս **Պէրպէրեան**, *Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը*, սյուն. 335-342: Ժերար Դեդեյանը ևս կարծում է, որ Կարսի թագավորության փոխանակման դրդապատճառը կաթողիկոսի ընտրությունն էր (տե՛ս **Dédéyan**, *Les Ar-*

սակետը հիմնավորել է ոչ միայն Ներսես Շնորհալու սույն վկայությամբ, այլև հավելյալ ներկայացրել Կարսի թագավորության փոխանակումը Վկայասերի ընտրությանն այս կամ այն կերպ շաղկապող այլ սկզբնաղբյուրներ ևս, որոնց կանդրադառնանք ստորև:

Ներսես Շնորհալու ավանդած այս հաղորդումը փոքր-ինչ հավելումներով մուծվել է նաև նրա՝ 1240 թ. գրված «Վարք», ըստ որի՝ «... թագաւորք Յունաց ոչ տային թոյլ դնել զոք կաթողիկոս, սակս անառաջնորդ մնալոյ ազգիս մերոյ և այնր աղագաւ յինքեանս դառնալոյ: Յայնժամ արքայն **Հայոց Գագիկ (**Գագիկ Բ. Կարսեցին – Վ. Թ.**) մեծաւ ջանիւ և բազում աշխատութեամբ գուն գործեալ առաքէր առ թագաւորն Յունաց մեծաւ ծախիւք. և զամուրն զԿարս այսմ խնդրելոյ փոխանակեալ տայր ի ձեռս Հոռոմոց, և առնոյր հրաման ի թագաւորէն ոսկի մատանեաւ կնքեալ՝ նստուցանել զո և կամեսցին յաթոռ հայրապետութեանն Հայոց»**[32]: Ի դեպ, Հայկ Պերպերյանը կարծել է, որ Շնորհալին ու նրա վարքագիրը ժամանակակից են քննվող իրադարձություններին, ուստի չէին կարող Կարսի թագավորության փոխանակման վերաբերյալ ոչ ստույգ տեղեկություններ հաղորդել. «Անհեթեթ պիտի ըլլար ենթադրել թէ Ներսէս Շնորհալի եւ անոր կենսագիրը, որոնք դէպքերուն գրեթէ ժամանակակից են, եւ ամէն պարագայի մէջ աւելի լաւատեղեակ կրնային ըլլալ քան ուրիշները, յերիւրած են Կարսի փոխանակութեան պատճառը»[33], - գրում է նա: Շնորհալու պարագայում Պերպերյանի պնդումը, թե նա Կարսի փոխանակմանը գրեթե ժամանակակից է, ստույգ է, մինչդեռ հայտնի է, որ կաթողիկոսի «Վարք»-ը գրվել է 1240 թ., ուստի դրա հեղինակը չէր կարող Կարսի թագավորությունը Բյուզանդիային հանձնելուն ու

---

*méniens entre Grecs…*, vol. 2 էջ 251): Տե՛ս նաև **Mahé,** *L'eglise Arménienne,* էջ 531:

[32] *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 17:

[33] **Պէրպէրեան,** *Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը*, սյուն. 342:

Վկայասերի ընտրությանը ժամանակակից լինել: Հայկ Պերպերյանը նշել է նաև Ներսես Շնորհալու Վիպասանությանն ու «Վարք»-ին տեղյակ հետևյալ սկզբնաղբյուրները, որոնք, սակայն, Կարսի փոխանակումն անպայմանորեն չեն պատճառաբանում կաթողիկոսի ընտրությամբ, թեև դատելով շարադրանքից՝ անուղղակի հաստատում են այդ տեսակետը[34]: Այսպես՝ «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորեսեանց եւ Պետրոսեանց» վարքում, որի՝ Վկայասերի ընտրությունն ավանդող դրվագի աղբյուրը, հաշվի առնելով տեքստային հարազատությունը, ևս Ներսես Շնորհալու «Վիպասանութիւն»-ն է, կարդում ենք. «Եւ այնպէս բռնացան Յոյնք ի վերայ Հայոց եւ է. (7 – Վ. Թ.) ամ ի կրօնս իւրեանց պահեցին զՀայք, **մինչ որ արքայն Գագիկ մեծաւ ջանիւ գուն գործեալ և բազում ինչս ծախեաց և զԿարս քաղաք իւր գաւառաւն Յունաց տուեալ** և զբերդն Ծամընդոյ և ապա կարաց խափանել զկամս նոցա և էառ ի նոցանէ հրաման հաստատել հայրապետ Հայոց»[35]: Հաջորդը ԺԷ. դ. հեղինակ Դավիթ Բաղիշեցու «Ժամանակագրութիւն»-ն է. «Եւ նստաւ հայրապետ տէր Խաչիկ, քւեր որդի տեառն Պետրոսի ամս Զ. (6): Եւ յետ սորա, - գրում է ժամանակագիրը, - խափան եղև հայրապետութիւն զամս ԻԴ (24)[36] ....: **Յայն ժամ Գագիկ արքայն Կարուց, գուն գործեալ** վասն նորոգման հայրապետութեան, **տայ զԿարս քաղաք իւր վիճակովն ի Թագաւորն Յունաց** և փոխանակ առեալ զդղեակն Ծամընդոյ և հրաման ընկալեալ ի կայսերէն...՝ ձեռնադրել հայրապետ Հայոց»[37]:

---

[34] Կարծես նույն մտայնությամբ է շարադրված նաև Մխիթար Այրիվանեցու հետևյալ հաղորդումը. *«Այս Գագիկ զԿարս ի Հոռոմս ետ և էառ զԾամնդաւ և անդ կաթողիկոս ձեռնադրեաց զՎկայասէրն»* (**Մխիթար Այրիվանեցի,** *Պատմութիւն*, էջ 59):

[35] **Յովսէփեան,** *Յիշատակարանք*, սյուն. 419. *Հայսմավուրք*, էջ ՈՀԵ (675):

[36] Հիմնավորապես սխալ ու անհավանական թվական տվյալ է:

[37] **Հակոբյան,** *Մանր ժամանակագրություններ*, հ. II, էջ 339:

*Սկզբնաղբյուրային վերոբերյալ մեջբերումների և հատկապես ընդգծված հատվածների գեթ թռուցիկ համեմատությունն աներկբա փաստում է, որը դրանց բոլորի հիմքում Շնորհալու «Վիպասանութիւն»-ն է: Այլ խոսքով՝ մենք գործ ունենք Կարսի թագավորության փոխանակումը կաթողիկոսի ընտրությամբ պայմանավորող ոչ թե մի քանի՝ իրարից տարբեր, այլ ըստ էության՝ մեկ աղբյուրի հետ: Այս հանգամանքը նկատելիորեն նվազեցնում է մյուս սկզբնաղբյուրների առաջնային կարևորությունը խնդրի քննության տեսանկյունից:*

*Հայկ Պերպերյանը հաջորդիվ տարակուսանք է հայտնում այն առթիվ, որ ԺԲ. և ԺԳ. դարերի հեղինակներ Մատթեոս Ուռհայեցին ու Սմբատ Սպարապետը Կարսի փոխանակումը կաթողիկոսի ընտրության վերականգնմամբ չեն պայմանավորում, թեև համոզված է, որ Սմբատ Սպարապետն այդ առնչությամբ ինչ-որ ակնարկ, այդուհանդերձ, կատարել է*[38]*: Հետևելով Սմբատ Սպարապետի շարադրանքին՝ հատվածաբար հղենք Տարեգրքի՝ Կարսի փոխանակումն ու Վկայասերի ընտրությունն ավանդող հատվածները. «... և յարուցեալ ամենայն բանակաւն եկն (Ալփ Արսլանը (1063-1072) – Վ. Թ.) ի Կարս առ տեսութիւն Գագկայ, և արար ընդ նմա սէր, և զգեցոյց նմա զգեստ թագաւորական: Եւ արար Գագիկ մեծ ճաշ սուլտանին և զօրացն: Զայս այսպէս արարեալ Գագիկ զերծաւ խաղաղութեամբ. և զկնի սակաւ աւուրց դարձոյց զԿարս ի Յոյնս, և նոքա ետուն նմա զԾամնդաւ, զԿեսարիա և զԽաւատանէքն. և այսպէս տապալեցաւ տունս Հայոց», «Եւ կամեցան (Բյուզանդական իշխանությունները – Վ. Թ.) ի սպառ բառնալ զհայրապետութիւնն յազգէն Հայոց. զոր և է (7 – Վ. Թ.) ամ ի կրօնս նոցա կացին Հայք, մինչև արքայն Գագիկ* ***մեծաւ ջանիւ գուն գործեալ մեծաւ ծախիւք ապա կարաց խափանել, և առ հրաման հաստատել վերստին հայրապետ Հայոց»***[39]*: Հայտնի*

[38] Տե՛ս **Պէրպէրեան**, *Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը*, սյուն. 340-341:
[39] **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 60-61:

է, որ Սմբատ Սպարապետի երկի այդ հատվածը գրեթե նույնությամբ քաղված է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրություն»-ից, որտեղ, սակայն, մեջբերված երկրորդ քաղվածքը բացակայում է: Ի դեպ, այս հավելումը եզակի չէ: Հիմնականում հետևելով Ուռհայեցու շարադրանքին՝ Սմբատ Սպարապետը որոշ իրադարձություններ շարադրել է այլ աղբյուրներից: Ուռհայեցու և Սմբատ Սպարապետի երկերի համեմատությունը ցույց է տալիս, որ Կարսի փոխանակումն ու կաթողիկոսի ընտրությունն ավանդող վերոբերյալ երկու մեջբերումներից միայն առաջինն է քաղվել Ուռհայեցու «Ժամանակագրություն»-ից[40], իսկ երկրորդի աղբյուրը, ամենայն հավանականությամբ, կա՛մ Ներսես Շնորհալու «Վիպասանություն»-ն է, կա՛մ «Վարք»-ը՝ հաշվի առնելով, որ Սմբատը ևս կրկնել է այս երկերից հայտնի «**մեծաւ ջանիւ գուն գործեալ, մեծաւ ծախիւք ապա կարաց խափանել, և առ հրաման հաստատել վերստին հայրապետ Հայոց**» նախադասությունը: Առավել հետաքրքրական է այն, որ Կարսի փոխանակման մասին շարադրելիս Սմբատ Սպարապետը նախապատվությունը տվել է Ուռհայեցու երկին, իսկ կաթողիկոսի ընտրությանն անդրադառնալիս՝ Ներսես Շնորհալու Վիպասանությանը կամ «Վարք»-ին՝ չկրկնելով Կարսի հանձնման՝ այդ երկերի շրջանառած դրդապատճառը: ԺԳ.-ԺԴ. դարերով թվագրվող վերոնշյալ կաթողիկոսական գավազանացանկում, որի աղբյուրը ևս Շնորհալու Վարքն է, Գագիկ Կարսեցու միջնորդության դրվագում արձանագրված չէ Կարսի փոխանակման դրդապատճառը. «... մինչեւ թագաւորն Հայոց Գագիկ գուն գործեալ մեծաւ ծախիւք եւ բազում աղաչանաւք խնդրեաց յարքայէն հոռոմոց, մինչեւ ետ հրաման ոսկի վլով»[41]:

Խնդրո առարկա իրադարձություններին ժամանակամերձ պատմիչ Մատթեոս Ուռհայեցին որոշակի փաստում է, որ կաթողիկոսա-

[40] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 150-151. **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 60:
[41] **Պօղարեան**, *Ցուցակ*, հ. Եօթներորդ, էջ 449:

*կան իշխանության վերացման փորձ Բյուզանդիան ձեռնարկեց Գետադարձի մահվանից անմիջապես հետո. «Մանաւանդ յորժամ մեռաւ Տէր Պետրոսն, յայնժամ յարեան Հոռոմք ի վերայ սուրբ Աթոռոյն և կամեցան եղծանել զնա և կամեցան առ հասարակ դարձուցանել զՀայք ի հաւատն անօրէն Քաղկեդոնի»[42]: Ավելին՝ Խաչիկ Անեցու մահվանից հետո նոր կաթողիկոսի՝ տվյալ դեպքում Գրիգոր Վկայասերի ընտրությանն անդրադառնալիս Ուռհայեցին չի հիշատակում Գագիկ Աբասյանի՝ կայսրությանն այդ նպատակով արած որևէ տարածքային զիջման կամ նյութական հատուցման մասին: Ուռհայեցին ծանոթ է Կարսի թագավորության փոխանակմանը, սակայն այն որևէ կերպ չի առնչում կաթողիկոսի ընտրության հետ[43]: Այս հարցում առավել ընդունելի ու իրատեսական է Վարդան վարդապետի հաղորդումը, ըստ որի՝ «Թագաւորն Կարուց Գագիկ որդի Աբասայ* ***նեղեալ յերկիւղէ Թուրքացն*** *(թյուրք-սելջուկների — Վ. Թ.)՝ տայ զհայրենիս իւր ի Յոյնս, և առնու զԾամընդաւ, և զԼառիա և զԱմասիա և զԿոմանա...»[44]: Այսինքն՝ Կարսի թագավորության փոխանակումը, ինչպես օրինակ՝ Վասպուրականի, պայմանավորված չէր այլ բանով, քան սելջուկյան հնարավոր նվաճման սպառնալիքով: Ավելին՝ Գագիկ Բ. Աբասյանը Կարսի թագավորությունը հանձնելու դիմաց ստացել էր տարածքային զգալի փոխհատուցում:*

*Միևնույն ժամանակ թե՛ Ուռհայեցին, թե՛ Վարդան վարդապետը և թե՛ Մխիթար Այրիվանեցին համոզված են, որ Գրիգոր Վկայասերի ընտրությունը կայացել է Գագիկ Բ. Աբասյանի նախաձեռնությամբ ու հրամանով, սակայն նրանցից առաջին երկուսն անգամ չեն*

---

[42] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 137:

[43] Տե՛ս նույն տեղում, էջ 150-151:

[44] **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 102: Կարեն Յուզբաշյանը որոշակի նշում է, որ Գագիկ Կարսեցին իր թագավորությունը փոխանակել է սելջուկներից սպառնացող վտանգը հաշվի առնելով (տե՛ս **Юзбашян**, *Армянские государства*, էջ 172-173):

ակնարկում, որ կաթողիկոսի ընտրության թույլտվությունը ձեռք է բերվել Կարսի թագավորությունը Բյուզանդիային հանձնելու գնով[45]։

Վերոգրյալի հաշվառմամբ՝ սխալված չենք լինի պնդելու, որ Ներսես Շնորհալին, օգտվելով Կարսի թագավորության փոխանակման ու Գրիգոր Վկայասերի ընտրության ժամանակամերձ լինելու պատեհությունից, շրջանառության մեջ է դրել Կարսի հանձնման՝ իր նախընտրած դրդապատճառը։

Կաթողիկոսի իշխանության վերականգնումը Գրիգոր Վկայասերի ընտրությամբ պայմանավորելով՝ Ներսես Շնորհալին փորձել է հայոց համար առանցքային կարևորություն ունեցող այդ իրողությունը շաղկապել Պահլավունիների տոհմի հետ՝ առավել բարձրացնելով նրանց վարկն ու առանձնահատուկ տեղը ժամանակի հայ հասարակական—քաղաքական շրջանակներում։ Կոստանդնուպոլսում խաչիկ Անեցու կրած անլուր տառապանքները և Քաղկեդոնի դավանանքն ընդունելու կայսեր պարտադրանքին ամեն գնով դիմադրելն արժանի էին ոչ միայն հիշատակության, այլև դրվատանքի, մինչդեռ այդ մասին, ինչպես Ներսես Շնորհալու Վիպասանության մեջ, այնպես էլ «Վարք»-ում խոսք անգամ չկա։ Հարկավ, այս բոլորի արձանագրման դեպքում խաչիկ Անեցու հեղինակությունը կարող էր որևէ կերպ նվազեցնել կամ ստվերել նրա հաջորդի՝ առավել դյուրին կայացած ընտրության կարևորությունը։ Այս եզրահանգմամբ ամենևին չենք թերագնահատում Վկայասերի ընտրության, առավել ևս գործունեության ահռելի նշանակությունը հայ ժողովրդի ու եկեղեցու կյանքում, այլ փորձում ենք վերհանել Շնորհալու և նրա վարքագրի՝ խաչիկ Անեցու հայրապետական ընթացքը լռության մատնելու և նոր

---

45 *«Տէր Գրիգորիս նստաւ յաթոռ հայրապետութեանն հրամանաւ Գագկայ շահնշահի՝ որդւոյ Աբասայ Կարնեցւոյ»* (**Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 155): Տե՛ս նաև **Մխիթար Այրիվանեցի**, *Պատմութիւն*, էջ 59. **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 102. Նույնի՝ *Ճառք*, էջ 365:

*կաթողիկոսի ընտրության՝ բյուզանդական իշխանությունների թույլտվությունը Կարսի թագավորության փոխանակմամբ պայմանավորելու շարժառիթը։*

*Այսպիսով՝ բյուզանդական իշխանությունները, Խաչիկ Անեցու և Գրիգոր Վկայասերի աթոռակալումը համապատասխանաբար՝ Գագիկ Անեցու, Ատոմ ու Աբուսահլ Արծրունիների և Գագիկ Կարսեցու միջնորդությամբ թույլատրելով, ստեղծում էին Հայոց կաթողիկոսի ընտրությունն այլևս իրենց կամքով կատարելու նախադեպ։*

*Գրիգոր Վկայասերի ընտրությունը թույլատրելու կայսեր որոշումն ուներ առնվազն հետևյալ դրդապատճառները.*

***ա.** 1060-ական թթ. կեսերին՝ բյուզանդա-սելջուկյան հակամարտության լարված շրջանում, նաև հաշվի առնելով Բյուզանդիայի մեկը մյուսին հաջորդող պարտությունները, ռազմաքաղաքական առումով շահավետ չէր, եթե ոչ՝ անհեռատես, կայսրության դեմ գրգռել Կապադովկիայում, Հյուսիսային Միջագետքում ու Կիլիկիայում կենտրոնացած հայկական ռազմական տարրը՝ վերացնելով նրա վրա նկատելի ազդեցություն ունեցող կաթողիկոսական իշխանությունը։ Հակասելջուկյան պայքարի փորձը պարտադրում էր չթերագնահատել հայկական ներուժի նշանակությունն ու այն հնարավորինս ներգրավել այդ հակամարտության մեջ։*

***բ.** Գրիգոր Մագիստրոսի որդու թեկնածությունը պատահական չէր ընտրված։ Սխալ կլինի կարծել, թե Հայոց հայրապետի ընտրությունը թույլատրելով՝ բյուզանդական իշխանությունները դադարեցնելու էին վերահսկողությունը կաթողիկոսական իշխանության վրա ու հանդուրժելու կայսրության համար ոչ նախընտրելի թեկնածուի աթոռակալումը, առավել ևս, որ այդ խնդրում այլևս վճռորոշ էր իրենց դիրքորոշումը։ Բյուզանդական նախկին պաշտոնյա և վեստի տիտղոս կրող զինվորական Վահրամ Պահլավունին կարծես համապատասխանում էր կայսերական իշխանությունների առաջադրած պահանջներին, որոնց վերաբերյալ թեև աղբյուրներում*

ուղղակի վկայություններ չկան, սակայն Հայոց կաթողիկոսության նկատմամբ բյուզանդացիների սահմանած զգուշավոր ու հեռևողական վերահսկողությունն անտարակույս էին դարձնում դրանց առկայությունն ու բացահայտում հնարավոր բովանդակությունը[46]։ Վահրամ Պահլավունու թեկնածությունը ոչ միայն համաձայնեցված էր բյուզանդական իշխանությունների հետ, այլև նախ և առաջ՝ առաջադրված հենց նրանց կողմից։ Այդ իրողությունը բացորոշ մատնանշում է Ներսես Լամբրոնացին՝ գրելով. «Յետ որոյ Հոռոմոց տիրեալ աշխարհացն, ի ներքոյ հրամանաց իւրեանց փակեցին զառաջնորդութիւն աթոռոյն (կաթողիկոսական աթոռը — Վ. Թ.), և **առ ի նոցանէ հրամանաւ և խորհրդեամբ**՝ յետ չորից ամաց անառաջնորդութեանն, բարեպաշտ Մարեմ թագուհին նստոյց զտէր Վահրամ, որ և Գրիգորիս»[47]։

Ստանալով Կոստանդին Դուկաս կայսեր համաձայնությունը՝ վտարանդիության մեջ գտնվող հայոց ազատանին Գագիկ Բ. Կարսեցու որոշմամբ կաթողիկոսի գահաթոռին է նստեցնում հայտնի պետական գործիչ, Միջագետքի, Տարոնի և շրջակա գավառների բյուզանդական կուսակալ Գրիգոր Մագիստրոսի որդուն՝ Վահրամ Պահլավունուն։ Ներսես Շնորհալու հաղորդմամբ՝ Վահրամը նախապես եղել է զինվորական պաշտոնյա ու, ամենայն հավանականու-

---

[46] Հմմտ. **Անանեան,** *Գրիգորիս Վկայասէր*, էջ 8. **Kapoian-Kouyumjian,** *Le catholicos Gregoire II*, էջ 312: Մաղաքիա Օրմանյանն իրեն հատուկ հմտությամբ է պատճառաբանում ընտրության հարցում Վահրամ Պահլավունու զբաղեցրած պաշտոնի ազդեցությունն ու բյուզանդական կողմին վստահելի լինելու հանգամանքը. *«Գործը այդ տեսակէտէն (բյուզանդամետության — Վ. Թ.) նայուած ատեն, ընտրութիւնը շատ վարանմանց տեղի չէր կրնար տալ, որովհետեւ ոչ ոք կրնար հաւասարիլ այս մասին այն վստահութեան՝ զոր կրնար ազդել Գրիգոր Մագիստրոսի երկրորդ որդին, ինքն ալ դուքս մը, եւ կայսերական ծառայութեանց մէջ փորձուած Վահրամը»* (**Օրմանեան,** *Ազգապատում*, սյուն. 1490):
[47] **Ներսէս Լամբրոնացի,** *Խորհրդածութիւնք…*, էջ 535:

*թյամբ, հոր մահվանից հետո զբաղեցրել նրա պաշտոնը. «Մինչ դեռ զօրաց իշխող եղեալ, || Ի հայրենին աթոռ նստեալ»*[48]*:*

*Աղբյուրների հաղորդմամբ՝ մինչ կաթողիկոս ընտրվելը հորեղբոր՝ նշանավոր սպարապետի անունը կրող Վահրամ Պահլավունին հրաժարվել է աշխարհական կյանքից, անգամ կնոջից, ինչպես նաև իշխանական պաշտոնից*[49] *ու վանք մտել՝ զբաղվելով հոգևոր–եկեղեցական ու գրական գործունեությամբ. «... ըստ օրինի աշխարհիս կին արարեալ էր և սրբութեամբ և անարատութեամբ պահեալ էր զինքն և յայսմ ժամանակիս հրաժարեալ էր ի կնոջէն իւրմէ և մտեալ ի կարգ կրօնաւորութեան»*[50]*, - գրում է Մատթեոս Ուռհայեցին: Բացառելի չէ, որ սա մատենագիրների կողմից Վկայասերի գործունեության սկզբնափուլը հետին թվով սրբագրելու փորձ է, և նա մինչ կաթողիկոսական ընտրությունը չի եղել կրոնավոր:*

*Այսպես՝ Գրիգոր Մագիստրոսի՝ ավագանի Վահրամ անունով որդին հայ ժողովրդի համար ստեղծված չափազանց ծանր պայմաններում 1066 թ. ընտրվում է Հայոց կաթողիկոս՝ կոչվելով Գրիգոր Բ.:*

## Բ. Գրիգոր Վկայասէրն ու նրա օրոք հիմնված «կաթողիկոսությունները»

*Անտարակույս, կսխալվենք՝ կարծելով, թե բյուզանդական իշխանությունները նորընծա կաթողիկոսին ընձեռելու էին ազատ գոր-*

---

[48] **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 111: Գրիգոր Մագիստրոսի որդուն՝ ապագա կաթողիկոսին նվիրված բանաստեղծության խորագիրն է. «Առ վեստն Վահրամ, որդին իւր»: «Վեստ» տիտղոսն արձանագրել է նրա՝ բյուզանդական պաշտոնյա լինելը (տե՛ս **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք*, էջ 312, 119):

[49] *«Զաշխարհական ձև մերկացեալ, || Զիշխանական կամար լուծեալ, || Զհեզութեանն կերպ առեալ, || Զխոնարհութեան լուծն ստանձնեալ: || Ի յիւրայնոցն հրաժարեալ. || Եւ յանապատս հետևեալ»*,- գրում է Ներսես Շնորհալին (**Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 112-113):

[50] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 154-155:

*ծելու հնարավորություն: Գրիգոր Բ.-ն աթոռակալման ընթացքում նկատելիորեն կաշկանդված էր իր հայրապետական գործառույթներն իրականացնելիս, որոնց շարքում հատկապես էթնոկրոնական նոր միջավայրում, որտեղ ազդու էր Բյուզանդիայի քաղկեդոնիկ եկեղեցին, առավել կարևորվում էին Հայոց եկեղեցու դավանական ինքնուրույնության պահպանումն ու ամրապնդումը: Պատահական չէ, որ Բյուզանդիայի կրոնական հալածանքներին, այդ թվում՝ Քաղկեդոնի դավանանքն ընդունելու պարտադրանքին հակադարձում էին ոչ միայն հայոց հոգևոր, այլև առավել հաճախ հենց աշխարհիկ այրերը: Վերջիններիս թվում կրոնական հարուստ գիտելիքներով հայտնի էին Գագիկ Բ. Անեցի*[51] *և Գագիկ Բ. Կարսեցի թագավորները:*

*Կայսրության եկեղեցական քաղաքականության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը չէր սահմանափակվում դավանաբանական տարատեսակ բանակցություններով ու վեճերով: Քաղկեդոնականության պարտադրանքը, որն ուղեկցվում էր հայության շրջանում հունարենի տարածմամբ, լրջագույն վտանգ էր հայագիր դպրության համար: Հարկավ, դա կանխազգալով էր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին Գագիկ Բ. Կարսեցու արքունիք ուղարկում Գրիգոր Հնձացի գիտնական-կրոնավորին՝ այնտեղ ճեմարան հիմնելու և հայոց դպրությունը տարաբնույթ վտանգներից պատնեշելու համար. «Եւ կամիմ, զի եւ դա արքունիս քոյոյ քարգոնոսական ապարանի առկայացեալ արասցէ քեզ ճեմարան, զի մի՛ բնաւին Ասքանազեան եւ Արամեան դպրութիւնս ի բազմաց սատարեալ ի մոռացումն անկցի եւ այնու ի բաց բարձեալ շնորհս Հոգւոյն եղիցի»*[52]*: Գագիկ Բ. Կար-*

[51] Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ Գագիկ Բ. Անեցին համարվել է վարդապետներին հավասարազոր ու դավանաբանական խնդիրների շուրջ բազմիցս բանավիճել բյուզանդացի հոգևորականների հետ (տե՛ս նույն տեղում, էջ 161-163):

[52] **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք*, էջ 315:

*սեցին ևս հայտնի էր դրվատանքի արժանի աստվածաբանական ու իմաստասիրական գիտելիքներով*[53]*:*

*Հայոց կենտրոնաձիգ պետության բացակայությունն առավել վատթարացրել էր առանց այն էլ ծանրագույն վիճակում գտնվող հայրապետական աստանդական աթոռի վիճակը: Մնալով հայության մեկ առանցքի շուրջ համախմբող ժամանակի, թերևս, միակ կառույցը՝ Հայոց կաթողիկոսությանը ԺԱ. դարի երկրորդ կեսին հասկանալի պատճառներով չհաջողվեց իրագործել հայոց տարագիր քաղաքական ուժերի համախմբումը: Ավելին՝ մասնատման վտանգի առջև կանգնեց հենց կաթողիկոսական իշխանությունը: Հարց է առաջանում՝ արդյո՞ք բյուզանդական իշխանությունները կհանդուրժեին, որ հայրապետական աթոռը դառնար հայության ռազմաքաղաքական ցաքուցրիվ ուժերը համախմբող կենտրոն, իհարկե՝ ոչ:*

*Ընտրվելուց որոշ ժամանակ անց Գրիգոր Վկայասերը որոշում է հրաժարվել հայրապետական իշխանությունից՝ իր այդ քայլը պատճառաբանելով ճգնակեցությանը տրվելու և քրիստոնեական սրբատեղիներ այցելելու անդրդվելի ցանկությամբ. «Յայսմ ժամանակիս սուրբ հայրապետն Հայոց Տէր Վահրամ, որ կոչեցաւ Տէր Գրիգորիս... եկեալ ի սիրտս նորա սէր միայնակեցութեան և լինել առանձնական յաղօթսն Աստուծոյ... ցանկայր փափագանօք ի գլուխ լերանց բնակիլ. **խորհեցաւ թողուլ զգահրնկալ և զմեծ պատիւ աթոռոյ հայրապետութեանն***»[54]*, - գրում է Մատթեոս Ուռհայեցին: Պատմիչը նշում*

---

[53] Գագիկ Բ. Կարսեցուն՝ որպես իմաստասիրական, աստվածաբանական և հռետորական արվեստին քաջագիտակ անձ, հիշում է Մատթեոս Ուռհայեցին (տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 183):

[54] Նույն տեղում, էջ 190: Պատմիչի՝ Վկայասերի գործունեությանը վերաբերող տեղեկությունները տեղ են գտել ԺԳ.-ԺԴ. դարերով թվագրվող հայրապետական մի գավազանացանկում, որտեղ հրաժարականի վերաբերյալ կարդում

է, որ Վկայասերը կաթողիկոսական աթոռից հրաժարվել է Ռոմանոս Դ. Դիոգենեսի՝ կայսր դառնալու տարում՝ Հայոց ՇԺԸ. թ. (4 մարտ 1069 – 3 մարտ 1070)։ Սակայն հայտնի է, որ կայսրուհի Եվդոկիան Կոստանդին Դուկասի մահվանից (1067 թ. մայիսի 21) հետո իշխել է մինչև 1067 թ. դեկտեմբերի 31, իսկ Ռոմանոս Դիոգենեսն իշխանությունն ստանձնել է հաջորդ տարվա հունվարի 1-ից[55]։ Միքայել Ասորու «Յաղագս քահանայութեան» երկի հայերեն թարգմանության կաթողիկոսական գավազանացանկում Գեորգ Լոռեցու աթոռակալման տարիների քանակը երեք է[56]։ Հայտնի է, որ նա իշխել է մինչև 1072 թ., այսինքն՝ Վկայասերի հրաժարումը պետք է թվագրել 1069-1070 թթ. միջակայքով։ Գեորգի աթոռակալումը 1069-1072-ով է թվագրել Ներսես Ակինյանը[57]։ Հետևաբար՝ 1066-ից աթոռակալող Վկայասերը հայրապետական աթոռից հրաժարվել է այն շուրջ երեք տարի զբաղեցնելուց հետո։

Կաթողիկոսի հրաժարականից անակնկալի եկած հայոց ազատանին փորձում է նրան համոզել՝ հրաժարվելու այդ մտադրությունից, սակայն ապարդյուն։ Հաստատ մնալով իր որոշման մեջ՝ կաթողիկոսը Հայոց թագավորին ու իշխաններին առաջարկում է հայրապետական իշխանությունը հանձնել իրենց նախընտրած թեկնածուին. «Դիք ձեզ կաթողիկոս՝ զոր կամիք, և զիս մի՛ արգելուք յարդարութեան ճանապարհէն»[58]։ Չկարողանալով տարհամոզել Վկայասերին՝ թագավորն ու իշխանները կաթողիկոսի պաշտոնին առաջադրում են նրա մտերիմ գործակից ու ձեռնարկվելիք ուխտագնա-

---

եմք. *«Եւ կացեալ ժամանակս ինչ, կամեցաւ ի բաց կալ ի հայրապետութենէն, եւ ողջունել զվարս միանձնութեան»* (**Պողարեան**, *Ցուցակ*, հ. եօթներորդ, էջ 449)։

[55] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն*, 1973, էջ 327-328։

[56] ՄՄ, ձեռ. Հ[մր] 1865, էջ 65բ։

[57] Տե՛ս Ակինեան, *Մատենագրական հետազօտութիւններ*, էջ 235, տե՛ս նաև **Grousset,** *Histoire*, էջ 635։

[58] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 190։

ցության ուղեկից Գեորգ Լոռեցու թեկնածությունը: Դա, Ուռհայեցու հաղորդմամբ, անսպասելի էր Վկայասերի համար, սակայն տեղի տալով ազատանու պահանջին՝ նա, ի վերջո, Լոռեցուն ձեռնադրում է կաթողիկոս[59]:

Ստեղծված ծանրագույն իրապայմաններում, երբ կաթողիկոսի ընտրությունը դյուրին գործ չէր այլևս, Վկայասերի հապճեպ հրաժարումն առաջին հայացքից ոչ միայն անակնկալ էր ու անսպասելի, այլև մեղմ ասած՝ չպատճառաբանված ու անտրամաբանական: Այդ իսկ պատճառով խնդրի գիտական քննության տեսանկյունից սխալ է կաթողիկոսական իշխանությունից Գրիգոր Բ.-ի հեռանալու՝ Ուռհայեցու արձանագրած պատճառաբանության հետ համերաշխելը, ինչը կանխում է հրաժարականի իրական դրդապատճառների վերհանման հնարավորությունը: Վերջիններիս պարզաբանումը պահանջում է թեմային առնչվող սկզբնաղբյուրային տեղեկությունների ու հայագիտության մեջ դրանց տրված մեկնաբանությունների համակողմանի ու համադիր քննություն, ինչին էլ ձեռնամուխ կլինենք ստորև՝ այն սկսելով Գեորգ Լոռեցու առաջադրման դրվագից:

Գեորգ Լոռեցին մտերիմ էր Վկայասերին ու համաձայնել էր նրան ուղեկցել ձեռնարկվելիք ուխտագնացության ժամանակ[60]: Պատմիչը չի նշում Լոռեցու թեկնածությունն առաջադրած Հայոց

---

[59] Տե՛ս նույն տեղում, էջ 190-191:

[60] Հետագայի պատմիչ Կիրակոս Գանձակեցին համոզված է, որ Գեորգ Լոռեցին ինքն է դիմել հայոց իշխանական ազատանուն՝ իրեն կաթողիկոս ընտրելու առաջարկով. *«Ընդէ՞ր այդչափ աղաչէք զնա, զի նա ուխտ եդեալ է երթալ, և ես տեղեակ եմ խորհրդոյ նորա, զի ոչ փոխի յայնմ: Ես աւասիկ, թող ձեռնադրեսցէ զիս փոխանորդ իւր»* (**Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն*, էջ 96): Մինչդեռ Ուռհայեցին որոշակի փաստում է, որ իշխաններն են համոզել Լոռեցուն. *«... և ի ծածուկ ի նմանէ (Վկայասերից - Վ. Թ.) հաւանեցուցին զԳէորգ զի առցէ զաթոռ հայրապետութեան տանն Հայոց»* (**Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 190:) Կարծում ենք, որ առավել ընդունելի է դեպքերին ժամանակամերձ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունը:

*թագավորի անունը, ինչն էլ, հաշվի առնելով նույն ժամանակ Գագիկ Բ. Անեցի և Գագիկ Բ. Կարսեցի թագավորների ակտիվ դերակատարությունը հատկապես եկեղեցուն վերաբերող գործերում, մասնագիտական գրականության մեջ տարակարծության պատճառ է դարձել: Խնդրին անդրադարձած Նիկողայոս Ադոնցը համոզված է, որ Գեորգ Լոռեցին կաթողիկոս է ընտրվել Գագիկ Բ. Անեցու նախաձեռնությամբ: Ըստ նրա՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հետ թշնամական հարաբերություններ ունեցած Գագիկ Անեցին փորձել է Գեորգ Լոռեցու միջոցով հակակշռել Վկայասերի իշխանությանը: Ադոնցը, շրջանցելով կաթողիկոսական իշխանությունից Վկայասերի հրաժարման փաստը, գրում է. «Գագիկ Անեցին համակրանք չուներ նորընծա կաթողիկոսի հանդեպ, նրա հոր՝ Գրիգոր Մագիստրոսի նկատմամբ պահպանած իր քենի պատճառով: Թագավորը, իրավամբ թե հանիրավի, Գրիգորին համարում էր իր թագավորության անկման պատասխանատու: Քիչ անց՝ 1068 թ. նա ընտրել է տալիս մի երկրորդ կաթողիկոս՝ Գէորգին»[61]: Դատելով մեջբերումից՝ Լոռեցուն Գագիկ Անեցու պահանջով կաթողիկոս են ընտրել ոչ թե Վկայասերի հրաժարականից հետո, այլ աթոռակալման ժամանակ: Ուռհայեցու շարադրանքն անգամ փաստում է, որ թագավորը (ըստ Նիկողայոս Ադոնցի՝ Գագիկ Բ. Անեցին – Վ. Թ.) ու իշխանները ջանացել են ամեն գնով կանխել կաթողիկոսական իշխանությունից Վկայասերի հրաժարումն ու հաջողության չհասնելուց հետո միայն առաջադրել Գեորգի թեկնածությունը: Նիկողայոս Ադոնցի պնդումը, թե Մատթեոս Ուռհայեցին Գեորգ Լոռեցու թեկնածությունն առաջադրողին թագավոր կոչելով նկատի է ունեցել Գագիկ Բ. Անեցուն, քննություն չի բռնում հենց նույն պատմիչի այլ տեղեկությունների հիմքով: «Մեր բացատրությունը, - գրում է Ադոնցը, - հենվում*

---

[61] **Ադոնց**, *Ռուբինյանների նախահայրը*, էջ 512:

*է այն փաստի վրա, որ Գրիգորը ընտրվել է «հրամանաւ Գագկայ շահի՝ որդւոյ Աբասայ Կարսացւոյ», իսկ Գեորգը թագավորի, այսինքն՝ Գագիկ Անեցու կամքով»[62]: Նկատենք, որ պատմիչը թե՛ Գագիկ Բ. Անեցուն, թե՛ Գագիկ Բ. Կարսեցուն հիշում է և՛ «արքա», և՛ «շահնշահ» տիտղոսներով[63], ինչը Նիկողայոս Ադոնցի այս պնդումը հերքելու ծանրակշիռ հիմնավորում է: Գագիկ Կարսեցին Ներսես Շնորհալու «Վարք»-ում ևս հիշվում է «արքայն Հայոց» ու «թագաւորն Հայոց» հորջորջումներով[64]: Ուռհայեցու երկից օգտված Սմբատ Սպարապետը նշում է, որ Վկայասերին փորձել է տարհամոզել Գագիկ թագավորը, սակայն ինչպես իր աղբյուրի հեղինակը, նա ևս չի հստակեցնում, թե խոսքը ո՞ր Գագիկին է վերաբերում. «Եւ լու եղեւ բանս այս (Վկայասերի հրաժարականի որոշումը — Վ. Թ.) առ ամենեսեան, և թագաւորն Գագիկ և իշխանքն Հայոց արգելուին զնա. և նա ոչ կամեցաւ լսել նոցա»[65]:*

*Խնդրին անդրադարձած Ժերար Դեդեյանը, Գագիկ Բ. Աբասյանի մահը 1069-ով թվագրելով (պետք է լինի 1067)[66], համոզված է, որ Վկայասերի հրաժարականը պայմանավորված էր իր հովանավորի՝ Կարսի նախկին թագավորի մահվամբ, քանզի այդպիսով տարածաշրջանի հայկական իշխանությունների շրջանում Գագիկ Անեցին դառնում էր գերագահ[67]: Նկատենք, որ վերջինս Գագիկ Կարսեցու*

---

[62] Նույն տեղում:

[63] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 155, 183, 184:

[64] *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 17:

[65] **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 70:

[66] Հայագիտության մեջ, հիմք ընդունելով Սամվել Անեցու «Ժամանակագրութեան» 1893 թ. հրատարակության *«ՌԿԹ. Մեռավ Գագիկ շահնշահ թագաւորն Վանանդայ»* տեղեկությունը (**Սամուէլ Անեցի**, *Հաւաքմունք*, **1893**, էջ 113)՝ Գագիկ Բ. Աբասյանի մահը թվագրել են 1069-ով, մինչդեռ դա ոչ թե Հայոց, այլ Փրկչական թվականն է, ուստի պետք է լինի 1067 թ. (տե՛ս **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 192):

[67] Տե՛ս **Dédéyan**, *L'immigration*, էջ 92:

կենդանության ժամանակ ևս գերագահ էր։ Նա Վկայասերի կողմից թագավորի (ըստ նրա ևս՝ Գագիկ Բ. Անեցու – Վ. Թ.)՝ կաթողիկոսական իշխանությունից չհրաժարվելու առաջարկի մերժումը պատճառաբանում է Գագիկ Բ. Անեցու հետ Պահլավունիների թշնամական հարաբերություններով՝ նշելով, որ Վկայասերը, հաշվի առնելով Անիի անկման խնդրում իր հոր խաղացած դերը, երկյուղում էր մնալ Գագիկ Անեցու իշխանական տիրույթներում[68]։ Փաստորեն թե՛ Նիկողայոս Ադոնցը և թե՛ Ժերար Դեդեյանը համոզված են, որ Գագիկ Բ.-ը Գրիգոր Մագիստրոսին մեղադրել է իրեն խաբեությամբ Կոստանդնուպոլիս ուղարկելու և Անիի անկման համար։ Մասնագիտական գրականության մեջ այս տեսակետը շրջանառվել է Սամվել Անեցուն վերագրվող հետևյալ վկայության ազդեցությամբ. «Տէր Պետրոս եւ ազատ Սարգիս եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի ետուն ի կայսրն Յունաց, վասն որոյ ելին ի բընիկ աշխարհէն իւրեանց՝ տէր Պետրոս եւ Գրիգոր՝ Վասակայ որդին, Գագիկ եւ այլք իշխանք Հայոց եւ եկին ի Հոռոմս»[69]։ Սամվել Անեցու երկին քաջագիտակ Կարեն Մաթևոսյանը, հենվելով այն փաստի վրա, որ այս տեղեկությունը չկա հնագույն ձեռագրերից և ոչ մեկում, իրավացիորեն եզրակացնում է, որ այն չի պատկանում Անեցու գրչին, սակայն հավելում, որ դա ամենևին չի նշանակում, թե այն ստույգ չէ[70]։ Արդյոք Գրիգոր Մագիստրոսը գործակցել է արքային խաբեությամբ Կոստանդնուպոլիս ուղարկողների հետ կամ եղել է նրանցից մեկը, որոշ չափով պարզել օգնում են Արիստակես Լաստիվերցու և Մատթեոս Ուռհայեցու փոխլրացնող տեղեկությունները։ Դատելով Լաստիվերցու շարադրանքից՝ նրան հայտնի էին ինչպես այն անձինք, որոնք Գագիկ Բ.-ին դրդեցին գնալ Կոստանդնուպոլիս,

---

[68] Տե՛ս **Dédéyan**, *Les Arméniens entre Grecs*…, vol. 1, էջ 226:

[69] **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 187:

[70] Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

*այնպես էլ՝ դա վտանգավոր ու սխալ համարողները. «Հաւատաց վասն երդմանցն եւ խաչին, եթէ վասն խակութեան մտացն, եթէ վասն երկիւղածութեան բարուցն՝ ո՛չ գիտեմ. տուեալ զբանալի քաղաքին ի Պետրոս, որ յայնժամ ունէր զաթոռ հայրապետութեան Լուսաւորչին մերոյ, եւ յանձնեաց ի նա զամենայն հոգս աշխարհին մեծաւ դաշամբ եւ ուխտիւ:* ***Եւ ո՛չ եկաց ի պատուէր Վահրամայ եւ այլ ազատացն, որ թագաւորեցուցին զնա,*** *այլ նենգաւորին Սարգսի սադրելոյն լուեալ՝ էլ ի քաղաքէն եւ չոգաւ ի Յոյնս զանդարձ ուղեւորութիւն»*[71]*: Խնդրի պարզաբանման տեսանկյունից կարևոր է մեջբերման ընդգծված հատվածը, ըստ որի՝ սպարապետ Վահրամ Պահլավունին և Գագիկին թագավորեցնողները դեմ էին նրա՝ Կոստանդնուպոլիս գնալուն: Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրություն»-ից տեղեկանում ենք, որ Գրիգոր Մագիստրոսն առանցքային դեր է ունեցել Գագիկ Բ.-ին թագավորեցնելու գործում. «…ժողովեցան ամենայն նախարարքն Հայոց առ հայրապետն Տէր Պետրոս և օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց շնորհօք Հոգւոյն Սրբոյ և հրամանաւ մեծի իշխանին, որով և օծեաց զնա սրբակեացն մեծն Մարցէն, որ էր ազգաւ հայկազնեան և հայրենեօք Պալհաւունի, որոյ անուն ըստ նախնոյն իւրոյ Գրիգոր ճանաչի, և էր յազգէն սրբոյն Գրիգորի: Սա երկրորդ Սամուէլ երեւեալ, որ էօծ զԴաւիթ արքայ ի վերայ տանն Իսրայէլի.* ***սա թագաւորեցոյց զԳագիկ ի վերայ տանս Հայաստանեայց…*** *սա ջանայր իմաստութեամբն իւրով հաստատել զաթոռ թագաւորութեանն Հայաստան ազգիս և հայցէր յԱստուծոյ օժանդակ լինել նմա և ազգին Պալհաւունեաց»*[72]*: Դժվար թե հորեղբոր անառարկելի հեղինակությունն ընդունող Գրիգոր Մագիստրոսը հարեր Վահրամ Պահլավունու հակառակորդներին: Իհարկե, անհերքելի է Գագիկ Անեցու և Գրիգոր Մագիստրոսի միջև եղած*

---

[71] **Արիստակէս Լաստիվերցի**, *Պատմութիւն*, էջ 561:

[72] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 86-87:

*թշնամանքը, որի մասին մանրամասն տեղեկություններ կան վերջինիս հեղինակած թղթերում: Խնդրո առարկա թեմայի շրջանակներից դուրս համարելով նրանց փոխհարաբերությունների վատթարացման պատճառների քննությունը՝ նշենք, որ, հիմնվելով Անիի Սարգիս վարդապետի ու Գրիգոր Մագիստրոսի նամակագրության վրա, պնդելի է, որ վերջինիս և Գագիկ Բ.-ի գժտության պատճառն արքայի խաբեությամբ Կոստանդնուպոլիս ուղարկելը չէ: Առավել հետաքրքրական է այն, որ Բագրատունի թագավորը մինչև 1045 թ. Սարգիս վարդապետի միջոցով փորձել է հաշտության եզրեր գտնել Պահլավունի իշխանի հետ: Եվ իրոք, Մագիստրոսի մոտ Գագիկ Անեցու կողմից որպես միջնորդ ուղարկված Սարգիս վարդապետին հասցեագրած Պահլավունի իշխանի նամակը նման եզրահանգման բավարար հիմքեր է տալիս. նամակում կարդում ենք. «Ընկալայ զգիր քո, սրբազանդ վարդապետ, որ ունէր զայս ինչ պատճէն բանից,* ***եթէ կարաւտէի տեսանել զքեզ եւ եկի յԱմբերդ, առաքեալ ի մանկամիտ արքայէ*** *(նկատի ունի Գագիկ Անեցուն – Վ. Թ.)...: Գրեալ ես, թէ* ***արքայն մեր զառաջինն վերջին առնէ եւ ապաշաւանաւք գայ ի լաւն: Զայսպիսի գործելով, ոչ մանկանդ է տիոց խակութեան կամ անիմաստութեան, քանզի հռետորական կրթութեամբ զարգացեալ է: Բայց պատճառ աւերածոյ աշխարհիս մեր ըստ մեղաց մերոց պատահեաց մեզ»*** [73]*: Փաստորեն հաշտեցման փորձերն սկսվել են դեռևս Գագիկ Բ.-ի թագավորության շրջանում և, ամենայն հավանականությամբ, տվել որոշ պտուղներ: Ի վերջո, հերքելի չէ Արիստակես Լաստիվերցու վկայությունն այն մասին, որ Գագիկ Բ.-ին կայսեր*

[73] **Գրիգոր Մագիստրոս,** *Թուղթք*, էջ 299: Նամակի ընդգծված հատվածները Մագիստրոսը վերաշարադրել է Սարգսի՝ իրեն ուղղված նամակից, ուստի դրանք վերջինիս խոսքերն են (Անիի Սարգիս վարդապետի և Գրիգոր Մագիստրոսի նամակագրության մանրամասն քննությունը տե՛ս **Մարգսոյան,** *Անի*, էջ 330-334):

հրամանով Կապադովկիայում արգելափակելուց հետո Գրիգոր Մագիստրոսը փորձել է ազատել նրան և այդ նպատակով գնացել Բյուզանդիա: Ճիշտ է, հաջողության չհասնելով՝ Գրիգորը կայսրությանն է հանձնում իր տիրույթները և փոխարենը ստանում մագիստրոսի կոչում ու նշանակվում Միջագետքի, Տարոնի և շրջակա գավառների բյուզանդական կուսակալ, սակայն այդպիսով չի փաստվում, որ նա մեկն էր այն հայ իշխաններից, որոնք արքային ամեն կերպ դրդեցին բռնել Կոստանդնուպոլիս տանող անվերադարձ ճանապարհը[74]: Հետևաբար, դյուրին չէ պնդել, թե Գագիկ Անեցին Գրիգոր Մագիստրոսի հետ ունեցած երբեմնի հակադրության ազդեցությամբ թշնամաբար էր տրամադրված նրա որդու նկատմամբ, առավել ևս այն դեպքում, երբ Պահլավունի իշխանի հետ հաշտվելու առաջարկ արել էր հենց ինքը: Հրաչ Բարթիկյանը, մանրամասն քննելով Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցը և հիմնվելով նրա թղթերի վրա (հատկապես ԺԹ. և ԶԳ.), ցույց է տալիս, որ անհիմն են թագավորության անկման համար Մագիստրոսին վերագրվող մեղադրանքները[75]: Ի վերջո, եթե Վկայասերի նկատմամբ Գագիկ Անեցու թշնամանքի պատճառը Գրիգոր Մագիստրոսի «մասնակցությունն» էր Անիի անկմանը, ապա այդ տրամաբանությամբ Բագրատունի արքան նույնչափ քինախնդրությամբ պետք է լցված լիներ իր՝ Կոստանդնուպոլիս գնալու և բյուզանդացիների կողմից մայրաքաղաքի նվաճման գործում ոչ պակաս ու անհերքելի դերակատարում ունեցած Պետրոս Գետադարձի քրոջ որդի Խաչիկ Անեցու նկատմամբ: Սակայն, ինչպես տեսանք, Գագիկ Բ.-ը, Արծրունի եղբայրների հետ ամեն ջանք գործադրելով, կաթողիկոսին ազատեց բանտարկությունից: Պահլավունիները, իհարկե, հավակնություններ ունեին կաթողիկոսական աթոռի

---

[74] Տե՛ս **Արիստակէս Լաստիվերցի**, *Պատմութիւն*, էջ 561:

[75] Տե՛ս **Բարթիկյան,** *Գրիգոր Մագիստրոս*, էջ 265-274:

նկատմամբ, սակայն թեական է, եթե ոչ հերքելի Գագիկ Անեցուն՝ դրանց հակադարձելու ձգտում վերագրելը:

Մատթեոս Ուռհայեցու պնդմամբ՝ Գեորգ Լոռեցու առաջադրումը տարաձայնության պատճառ դարձավ նրա ու Վկայասերի միջև, քանի որ Լոռեցին դրժել էր Վկայասերին տված խոստումը (ուղեկցել նրան ուխտագնացության ժամանակ): Առաջ անցնելով՝ նշենք, որ նույն աղբյուրի հաղորդմամբ՝ 1072 թ. վեճ առաջացավ Լոռեցու և Վկայասերի միջև, ու վերջինս աթոռանկ արեց նրան՝ վերցնելով կաթողիկոսական քողը[76]: Եթե Գագիկ Անեցին թշնամաբար էր տրամադրված Վկայասերի նկատմամբ, ապա ինչո՞ւ 1072 թ. թույլ տվեց իր հովանավորյալ Գեորգ Լոռեցու աթոռանկությունը, հատկապես այն դեպքում, երբ Գրիգոր Վկայասերի հենարան Գագիկ Աբասյանը, ըստ Նիկողայոս Ադոնցի ու Ժերար Դեդեյանի, այլևս կենդանի չէր: Նիկողայոս Ադոնցը խնդիրը պարզաբանում է հետևյալ կերպ. նա համոզված է, որ 1072 թ. Բագրատունի երկու թագավորներն այլևս ողջ չէին, հակառակ պարագայում, ըստ նրա՝ Լոռեցուն աթոռանկ անելուց հետո Վկայասերը կտեղափոխվեր ոչ թե Մուտառասուն[77]՝ Գագիկի որդի Գուրգենի[78], այլ՝ Գագիկ Աբասյանի մոտ, իսկ Գեորգ Լոռեցին կգնար Գագիկ Անեցու մոտ: Գագիկի որդի Գուրգենի մոտ Վկայասերի հաստատվելը փաստող միակ աղբյուրը Մատթեոս Ուռհայեցու երկն է, ըստ որի՝ աթոռանկությունից հետո «Գէորգն վիրաւորեալ գնաց ի Տարսոն քաղաքն և անդ մեռաւ. և Տէր Գրիգորիսն եկեալ բնակեցաւ ի Մուտառասուն առ Գագիկ որդի Գուրգենայ»[79]:

---

[76] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 205-206:

[77] Մուտառասունը (Մուտալասկա, Դալասսա) գտնվել է Մելիտինեից արևելք՝ Եփրատ գետի ափին: Այդ ավանը պատկանել է Բյուզանդական կայսրության ծագումով հայ ազնվական ընտանիքներից Դալասենոսներին (մանրամասն տե՛ս **Ադոնց**, *Դալասենոսներ*, էջ 471-484):

[78] Նրա մասին տե՛ս **Վարդանյան**, *Պահլավունիները*, էջ 98-99:

[79] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 206:

*«Ժամանագրութիւն»-ից առատորեն օգտված Սմբատ Սպարապետի Տարեգրքում՝ խնդրո առարկա դրվագում, առկա է ակնառու տարբերություն: Այսպես՝ Սմբատ Սպարապետի արձանագրմամբ ոչ թե Վկայասերն է հաստատվել Գագիկի որդի Գուրգենի մոտ, այլ աթոռանկ արված Գեորգ Լոռեցին «... զի առաքեաց տէր Գրիգորիս և էառ զքօղն ի գլխոյն տէր Գէորգայ, և մերժեալ ընկէց յաթոռոյ կաթողիկոսութեանն. ուստի վիրաւորեալ տէր Գէորգ, գնաց ի Տարսոն Կիլիկեցւոց առ Գագիկ, որդին Գորգենայ»*[80]*: Այսինքն՝ Սմբատ Սպարապետը Վկայասերի գտնվելու վայրի մասին որևէ տեղեկություն չի հաղորդում:*

*Ժերար Դեդեյանը, փաստորեն համերաշխելով Նիկողայոս Ադոնցի հետ, հավանական է համարում, որ կաթողիկոսների տարաձայնության հիմքում մի կողմից Պահլավունիների հավակնություններն էին կաթողիկոսական իշխանության նկատմամբ, մյուս կողմից՝ դրանց հակադրվելու՝ Շիրակի Բագրատունիների ձգտումները*[81]*: Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ Վկայասերի հրաժարականի որոշումն անակնկալի բերեց հայոց ազատանուն, այդ թվում՝ թագավորին: Եթե ընդունենք, որ կաթողիկոսին տարհամոզողը Գագիկ Անեցին է, ապա պետք է արձանագրենք, որ նա կաթողիկոսին հակադրվելու մտադրություն չի ունեցել: Այսինքն՝ Վկայասերը Գագիկ Անեցուց երկյուղելու որևէ պատճառ չուներ: Ժերար Դեդեյանը Գագիկ Անեցու սպանությունը թվագրում է 1073-ով*[82] *չպատճառաբանելով Գեորգ Լոռեցու աթոռանկության (1072 թ.) հետ նրա փաստացի համերաշխելը:*

---

[80] **Սմբատ Սպարապետ,** *Տարեգիրք*, էջ 78: Նշենք, որ Վկայասերի ու Գեորգ Լոռեցու տարաձայնության՝ Սմբատ Սպարապետի ավանդած դրվագն Ուռհայեցու վկայությունից տարբերվում է ևս մեկ տեղեկությամբ, որին կանդրադառնանք ստորև:

[81] Տե՛ս **Dédéyan,** *Les Arméniens entre Grecs…*, vol. 1, էջ 228:

[82] Տե՛ս նույն տեղում, էջ 290-296:

Նշենք, որ Բագրատունի այս երկու թագավորների մահվան վերոգրյալ թվագրումները խնդրական են: Միայն հավելենք, որ հայագիտության մեջ քաղաքացիություն ստացած տեսակետի համաձայն՝ Գագիկ Բ. Անեցին ու Գագիկ Բ. Կարսեցին բյուզանդացիների ձեռքով դավադրաբար սպանվել են համապատասխանաբար 1079 և 1081 թթ.[83]: Սկզբնաղբյուրներում շրջանառվում են Գագիկ Անեցու սպանության տարբեր թվականներ՝ 1074 թ., 1076 թ., 1078 թ., 1081 թ.[84]:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ Նիկողայոս Ադոնցի և Ժերար Դեդեյանի եզրահանգումները խիստ հետաքրքրական են, սակայն անհերքելի կհամարվեն միայն այն ժամանակ, երբ ա. պարզվի, որ Վկայասերի հրաժարականը պայմանավորված էր Գագիկ Բ. Աբասյանի մահվամբ, իսկ Գագիկ Ա. Անեցին մինչ Գեորգ Լոռեցու աթոռանկությունն այլևս ողջ չէր, բ. 1060-ական թթ. դեռևս շարունակվում էր Պահլավունիների հետ Գագիկ Անեցու թշնամանքը, գ. թագավորի (ըստ Նիկողայոս Ադոնցի և Ժերար Դեդեյանի՝ Գագիկ Ա. Անեցու)՝ Վկայասերին տարհամոզելու ջանքերի վերաբերյալ Ուռհայեցու տեղեկությունը հավաստի չէ: Հավելենք միայն, որ այս հարցադրումների լիարժեք պարզաբանումը մեզ հայտնի սկզբնաղբյուրների հիմքով հնարավոր չէ:

Վկայասերի ու Գեորգ Լոռեցու փոխհարաբերությունների, և որ ամենակարևորն է՝ եկեղեցական իշխանությունում վերջինիս զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ առանցքային նշանակություն ունեցող տեղեկություն է հայտնում հենց Պահլավունի կաթողիկոսը. Գեորգ Լոռեցու աթոռանկությունից հետո իր գրած հիշատակարաններից

---

83 Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. II, էջ 127:

84 Տե՛ս **Մաթևոսյան**, *Հեթում պատմիչ*, էջ 46, 59: Աղավնի Ութուջյանի կարծիքով Գագիկ Բ. Կարսեցու մահվան՝ Սամվել Անեցու նշած թվականը (1067) շփոթմունք է: Ըստ նրա՝ պետք է ստույգ համարել թագավորների սպանության՝ Ուռհայեցու հաղորդած տարեթվերը (տե՛ս *Հայոց պատմություն*, հ. II, էջ 127):

*մեկում Գրիգոր Վկայասերը նրան հիշում է որպես իր փոխանորդ. «... աշակերտ մեծ գիտնականին Գէորգեայ՝* ***փոխանորդին մեր****»*[85]*: Առավել հետաքրքրական է այն, որ Գրիգոր Վկայասերը նրան հիշում է գովաբանական մակդիրով՝ «մեծ գիտնական»: Միքայել Ասորու «Յաղագս քահանայութեան» երկի հայերեն թարգմանության մեջ առկա կաթողիկոսական գավազանացանկում Գեորգ Լոռեցին հիշվում է որպես Վկայասերի* ***սնուցիչ****. «Գէորգ սնուցիչն Վահրամայ ամս երեք»*[86]*: Լոռեցին Վկայասերի փոխանորդ է հիշվում նաև «Յիշատակ սուրբ հայրապետանցն Հայոց Գրիգորիսի Վկայասիրի, Գրիգորի և Ներսեսի երգեցողի» հայսմավուրքյան վարքում (խմբ. Կիրակոս Արևելցի). «Կամեցաւ (Գրիգոր Վկայասերը – Վ. Թ.) գնալ ի Կոստանդինուպաւլիս, զի թարգմանեսցէ զպատմութիւնս սրբոց:... Եւ ձեռանդրեաց զԳէորգ վարդապետն* ***փոխանորդ իւր****, և ինքն գնաց ի թագաւորեալ քաղաքն»*[87]*: Հաշվի առնելով հետագա շարադրանքում փոխանորդ, տեղապահ և աթոռակից եզրերի հաճախակի օգտագործված լինելու փաստը՝ հարկ ենք համարում ստորև անցողակի անդրադառնալ դրանց իմաստային նշանակությանը՝ ինչպես խնդրո առարկա ժամանակ, այնպես էլ վաղ միջնադարում: Հավելենք միայն, որ սույն խնդիրն ունի ծավալուն քննության անհրաժեշտություն, ինչի լիարժեք իրականացումը հնարավոր է ինչպես միջնադարի վաղ և զարգացած շրջափուլերում, այնպես էլ ուշ շրջանում եկեղեցական պաշտոն հատկանշող այդ եզրույթների իմաստների վերհանմամբ:*

---

[85] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 109: Խնդրին մանրամասն անդրադարձած Մաղաքիա Օրմանյանը, ծանոթ չլինելով Վկայասերի 1076 թվակիր հիշատակարանին, Գեորգ Լոռեցուն համարում է կաթողիկոսական փոխանորդ և *«եւ ոչ աթոռին տէրը»* (**Օրմանեան,** *Ազգապատում*, սյուն. 1504): Ներսես Ակինյանը ևս Գեորգ Լոռեցուն համարում է կաթողիկոսական փոխանորդ (տե՛ս Ակինեան, *Մատենագրական հետազօտութիւններ*, էջ 235):
[86] ՄՄ, ձեռ. Հմր 1865, էջ 65բ:
[87] *Համաբարբառ Յայսմաւուրք*, էջ 147. **Տաշեան,** *Ցուցակ*, էջ 25:

*Այսպես՝ հայերենում «տեղապահ», «աթոռակից» և «փոխանորդ» բառերը համարվել են գրեթե նույնիմաստ*[88]*, սակայն հայ մատենագրության մեջ դրանք, պահպանելով հանդերձ իրենց համարժեքությունը, ունեցել են որոշակի տարբերություն: Խոսքը վերաբերում է հատկապես փոխանորդ և տեղապահ եզրույթներին:*

*Այսպես՝ «փոխանորդ»-ը և «փոխանորդել»-ը վաղ միջնադարի հայ մատենագրության մեջ հիմնականում օգտագործվել են երկու՝ հաջորդ ու հաջորդել*[89]*, իսկ առավել սակավ՝ փոխարեն իմաստով: Բերենք մի քանի օրինակ. ներկայացնելով Ներսես Ա. Մեծ (353-373) կաթողիկոսի եկեղեցաշինական ձեռնարկումները՝ Փավստոս Բուզանդը նրան համարում է իր նախորդ հայրապետների արժանի հաջորդ. «... եւ բազմացոյց զյորդաբուխ արդիւնսն ի շտեմարանս արքայութեանն, կարգացն առաջին հարցն մշակացն* ***փոխանորդ*** *եղեալ՝ գործակից լինելով»*[90]*: «Փոխանորդ»-ի հետևյալ օրինակը հետաքրքրական է այն առումով, որ տրվում է Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության գահաժառանգին: Պատմահոր հաղորդմամբ՝ արքունի ոստանում բնակվելու իրավունք ունեին միայն թագավորն ու թագաժառանգը, որին նա կոչում է արքայի փոխանորդ. «Քանզի սովորութիւն էր արքայի միայն բնակել յԱյրարատ եւ միոյ որդւոյ նորա, զոր* ***փոխանորդ*** *թագաւորի պահէին»*[91]*: Այսինքն՝ փոխանորդ մակդիրը տրվել է ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իշխանության ժառանգորդներին:*

*Ի տարբերություն «փոխանորդ» ու «փոխանորդություն» տերմինների՝ «տեղապահ»-ը և «տեղապահություն»-ը որպես եկեղեցա-*

---

[88] *Նոր բառագիրք Հայկազեան լեզուի*, հ. Առաջին, էջ 12, հ. Երկրորդ, էջ 863, 948:

[89] Տե՛ս **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն*, էջ 2020 և այլն. Տե՛ս նաև **Եղիշէ**, *Մեկնութիւն*, էջ 955:

[90] **Փաւստոս Բուզանդ**, *Պատմութիւն*, էջ 315:

[91] **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն*, էջ 2035, տե՛ս նաև էջ 1940, 1991, 1994:

կան պաշտոնյա ու պաշտոն նշանակող եզրեր՝ հայ մատենագրության մեջ եղել են սակավ գործածելի, սակայն իմաստի տեսանկյունից՝ որոշակի: Այսպես՝ Ներսես Ա. Մեծ կաթողիկոսը նախքան Հռոմ ուղևորվելը խաղին ձեռնադրել է Բագրևանդի և Արշարունիքի եպիսկոպոս և իր **տեղապահ**. «Ապա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեգնացութիւնն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս խադ յեպիսկոպոսութիւն Բագրաւանդայ եւ Արշարունեաց, **եթող զսա իւր փոխանակ ետեղապահ, եւ գնաց»**[92]: Առավել հետաքրքրական է այն, որ Ներսեսի վերադարձից հետո խադն այլևս հիշվում է ոչ թե որպես տեղապահ, այլ՝ աթոռակից. «... եւ ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զխադ»[93]: Փոքր-ինչ վերապահությամբ՝ մատնանշելի է նաև Հովսեփ Վայոցձորեցու օրինակը: Նրան, Պատմահոր վկայությամբ, Մեսրոպ Մաշտոցը կարգել էր եպիսկոպոսապետության տեղապահ. «Իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն ետեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելւոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտն Յովսէփ քահանայ ի Վայոց ձորոյ, ի Խողոցիմ գեղջէ»[94]: Դատելով Ղազար Փարպեցու համապատասխան տեղեկություններից՝ Հովսեփն այնդպես էլ չի ստացել կաթողիկոսական ձեռնադրություն. «... հանդերձ երանելեաւն Յովսէփաւ, որ թէպէտ եւ զձեռնադրութիւն երիցութեան ունէր՝ սակայն յաթոռ կաթողիկոսութեանն էր վիճակեալ արժանաւորապէս»[95]: Դա, անշուշտ, չի խոչընդոտել նրան առաջնորդելու Հայոց կաթողիկոսությունը: Այս տեսանկյունից խիստ որոշակի է Վրթանես Քերթողի օրինակը: Ուխտանեսը նրան հիշում է միայն «տեղապահ» տիտղոսով, և Վրթանեսն էլ, ինչպես Վայոցձորեցին,

[92] **Փաւստոս Բուզանդ**, *Պատմութիւն*, էջ 334:
[93] Նույն տեղում, էջ 341:
[94] **Մովսէս խորենացի**, *Պատմութիւն*, էջ 2113:
[95] **Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն*, էջ 2267 և այլն:

«զայնքան անցելոց ամացն առանց Առաջնորդի ոչինչ թեթեւ եւ թեթի թողեալ զՏեղապահութիւն իւր, այլ լի եւ կատարեալ դատիւ եւ դատաստանաւ առնել իւաւունս եւ գործել զարդարութիւն յամենայն ժամ»[96]: Ի դեպ, Վրթանեսը տեղապահ է կարգվել Մովսես Բ. Եղիվարդեցու (57-604) մահվանից հետո[97]: Նկատենք, որ Աբրահամ Ա. Աղբաթանեցուն (607-613) կաթողիկոս են ընտրել ոչ թե Վրթանես Քերթողի մահվանից հետ, այլ նրա կենդանության ժամանակ: Տեղապահը կաթողիկոսի՝ անգամ տևական բացակայության պարագայում չէր դառնում հայրապետական լիարժեք իշխանություն կրող: Այսպես՝ Ներսես Ա. Մեծի՝ Հռոմում արգելափակված լինելու ժամանակ, երբ Արշակ Բ.-ը (350-368) կաթողիկոսական տեղապահ Խադից պահանջում է օրհնել նորակառույց Արշակավանի եկեղեցին, նա հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ իրավասու չէ. «... բազում անգամ ընդդիմանայր նմա (Խադին — Վ. Թ.: Խադը դեմ էր Արշակավանի կառուցմանը) եւ յանդիմանէր սուրբն Խադ եպիսկոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զնա, թէ ե՛կ ուղղեա սեղան յեկեղեցւոջն յաւանն յԱրշակաւանն: Իսկ նա բազում անգամ կշտամբէր եւ յանդիմանէր զթագաւորն Արշակ եւ զամենայն մեծամեծս եւ զիշխանս: Բայց ես, ասէ, **տեղապահ եմ. եւ ոչ ինչ առանց այնորիկ**, որ թողն զիս հայրն, ունիմ իշխանութիւն գործել ինչ»[98]:

Այս դեպքում հարց է ծագում. Լոռեցուն համարել Վկայասերի փոխանորդ՝ հաջորդը լինելու իմաստով, թե տեղապահ: Որքան էլ զարմանալի թվա, սակայն հարցն ունի երեք պատասխան: Հավելենք միայն, որ փոխանորդության ու տեղապահության սակավադեպ լինելը հնարավորություն չի ընձեռում վերջնական եզրակացու-

---

[96] **Ուխտանէս**, *Պատմութիւն*, էջ 555: Վրթանես Քերթողի տեղապահության մասին Ուխտանեսի ճիշտակումները տե՛ս նույն տեղում էջ 518, 521, 522, 547, 550, 554:

[97] Տե՛ս **նույն տեղում**, էջ 550:

[98] **Փավստոս Բուզանդ**, *Պատմութիւն* էջ 335:

*թյան հանգելու, սակայն առկա օրինակները, թերևս, բավարար են ճշմարտությանը մոտ եզրահանգումներ անելու։ **Ա.** Եթե հաշվի առնենք, որ Լոռեցին Վկայասերին փոխանորդել է վերջինիս հրաժարականից հետո, ապա կանոնապես սխալ չէ նրան Գրիգոր Բ.-ի հաջորդ համարելը։ **Բ.** Սակայն Վկայասերը հրաժարումից հետո էլ շարունակել է գլխավորել Հայոց եկեղեցին։ Հայտնի է նաև, որ 1072 թ. նա աթոռանկ է արել Լոռեցուն, ինչը նշանակում է, որ վերջինիս նկատմամբ գերագահություն է ունեցել։ Վկայասերը հայրապետական աթոռից վերջնականապես հրաժարվելու մտադրություն, ինչպես ստորև կտեսնենք, չի ունեցել։ Ավելին՝ նա դարձավ Պահլավունիների կաթողիկոսական ժառանգական իշխանության հիմնադիրը, ինչը նշանակում է, որ Վկայասերը Լոռեցուն չէր ընտրել որպես իր հաջորդի՝ հայրապետական իշխանության ժառանգի իմաստով։ Այս դեպքում արդեն Վկայասերի՝ Լոռեցուն իր փոխանորդ կոչելը պետք է հասկանալ որպես տեղապահ կամ փոխարեն իմաստով։ Գ. Խնդրի պարզաբանման նոր հնարավորություն են ընձեռում Խաչիկ Անեցու՝ Պետրոս Գետադարձի կողմից փոխանորդ կարգվելու վերաբերյալ ժամանակի պատմիչներ Արիստակես Լաստիվերցու և Ուռհայեցու հայտնած տեղեկությունները։ Խաչիկ Անեցու պաշտոնեական կարգավիճակը հատկանշելիս պատմիչները չեն օգտագործում ո՛չ փոխանորդ, ո՛չ տեղապահ և առավել ևս աթոռակից եզրույթները։ Նրանց հավաստմամբ՝ Խաչիկը Պետրոս Գետադարձից ստացել է հայրապետական ձեռնադրություն. «Եւ կացուցանեն ի տեղի նորա (Պետրոս Գետադարձի – Վ. Թ.) զԽաչիկ՝ զնորին քեռորդի, որ* ***ձեռնադրութիւն հայրապետութեանն*** *վաղնջուց ընկալեալ էր»*[99], *«... անուանեաց (Պետրոս Գետադարձը – Վ. Թ.) զաթոռ հայրապետութեան իւրոյ զամենագովելին զՏէր Խաչիկ»*[100]*։ Այս տեսանկյու-*

---

[99] **Արիստակէս Լաստիվերցի**, *Պատմութիւն* էջ 579։

[100] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 104։

*նից ուշագրավ է փոխանորդի՝ գործող կաթողիկոսի ժամանակ ու նրա հետ նույն՝ «կաթողիկոս» տիտղոսով հիշատակվելու հանգամանքը, որպիսի վկայության հանդիպում ենք Մրենի Հայոց ՆՂ. (11 մարտ 1041-10 մարտ 1042) թվակիր վիմագրում: Այստեղ Խաչիկ Անեցին, լինելով Պետրոս Գետադարձի փոխանորդը, ևս հիշվում է որպես կաթողիկոս. «ՆՂ (1041) թուականութեանս Հայոց* ***ի հայրապետութեան Տէր Պետրոսի եւ Խաչկա Հայոց կաթողիկոսաց*** *այս իմ հրամանք են Գագկա Շահնշահի որդոյ Աշոտոյ, ազատեալ եմ զՄրենոյ զհարկն...»*[101]*: Ինչպես հայտնի է, Գէորգ Լոռեցին ևս ինչպես մինչ աթոռանկությունը, այնպես էլ դրանից հետո կոչվել է կաթողիկոս: Նա՝ որպես Վկայասերի հետ զուգահեռ աթոռակալած հայրապետ, հիշվում է նաև 1077 թվակիր հիշատակարանում. «Ի հինգհարիւրորդի քսան եւ վ[եց] եր[որ]դի (1077) ամի թուաբերութեանս Հայւոց..., ի կուրապաղատութեանն Մարեմայ բարեպաշտի..., յամս աստուածապատիւ եւ հոգեւոր տերանց մերոց* ***Հայոց կաթողիկոսաց տեառն Գրիգորիսի եւ տեառն Գէորգայ****»*[102]*: Որպես կանոն՝ փոխանորդի անունն արձանագրվում էր գերագահ կաթողիկոսից հետո: Ինչպես քննությամբ կպարզենք, երկրորդ և երրորդ պատասխանները, տարբեր լինելով հանդերձ, փոխլրացնող են և չեն խոչընդոտում Գէորգ Լոռեցու եկեղեցական պաշտոնի ճշգրտմանը, ինչը հնարավոր է Գրիգոր Վկայասերի հրաժարականի իրական դրդապատճառների վերհանմամբ: Առաջ անցնելով նշենք, որ Լոռեցուն առավել պատշաճում է տեղապահի կարգավիճակը, թեև այն լիարժեքորեն համադրելի չէ տեղապահության և փոխանորդության թվարկածս դեպքերին, ուստի ունի առանձին հատկանշնամն անհրաժեշտություն:*

---

[101] **Սարգիսեան,** *Տեղագրութիւն*, էջ 197. **Մաթեւոսյան,** *Անին մայրաքաղաք*, էջ 38-39:

[102] **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 109-110:

*Աթոռակից եզրի պարզաբանումը ևս որոշակի է: Փաստելի է, որ այդ տիտղոսը մեծամասամբ կիրառվել է հոգնակի իմաստով: Բազմաթիվ են սկզբնաղբյուրային տեղեկությունները, որոնց համաձայն՝ կաթողիկոսին աթոռակից են կոչվել եպիսկոպոսները*[103]*: Այսինքն՝ Գեորգ Լոռեցուն և Բարսեղ Անեցուն Վկայասերին աթոռակից կոչելն այնքան էլ հիմնավոր չէ: Կարծում ենք, որ այն առավել պատշաճում է եգիպտահայերի հոգևոր առաջնոր Գրիգորի եկեղեցական կարգավիճակին:*

*Նկատենք, որ Գրիգոր Վկայասերի կողմից Գեորգ Լոռեցուն փոխանորդ կոչելը հիմնավոր կասկածի տակ է դնում, եթե ոչ՝ հերքում այն տեսակետը, թե վերջինիս ընտրությամբ Գագիկ Բ. Անեցին հակադրվում էր Վկայասերի գերագահ իշխանությանը: Այս դեպքում արդեն բացատրելի են դառնում այն տեղեկությունները, որոնց համաձայն՝ Վկայասերը հայրապետական իշխանությունը Գեորգին փոխանցել է իր որոշմամբ՝ առանց որևէ պարտադրանքի: Ի տարբերություն Մատթեոս Ուռհայեցու հաղորդման, թե Գրիգոր Վկայասերը պարտադրված է Լոռեցուն ձեռնադրել իր փոխարեն, «Յիշատակարան սուրբ հայրապետացն Գրիգորիսեանցն եւ Պետրոսեանցն» վարքի հաղորդմամբ Պահլավունի կաթողիկոսը հայրապետական աթոռը հոժարակամ է փոխանցել «իւր վարդապետին». «**Զի իւր կամաւ տուեալ զիշխանութիւնն կաթողիկոսութեան յիւր վարդապետն՝ ի Գէորգ վարդապետն** և ինքն վարդապետութեան և թարգմանութեան պարապէր»*[104]*: 1098 թվակիր հիշատակարաններից մեկում*

---

[103] **Կոմիտաս կաթողիկոս**, *Կնիք Հաւատոյ*, էջ 141, տե՛ս նաև **Սմբատ Բագրատունի**, *Թուղթ*, էջ 337, 339. **Ներսէս Գ. Տայեցի**, *Կանոն*, էջ 577:

[104] **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 421. *Հայսմավուրք*, էջ ՋՃՀԶ (676), **Տաշեան**, *Ցուցակ*, էջ 92: Կաթողիկոսական իշխանության կամավոր փոխանցումը Լոռեցուն Ժերար Դեդեյանի իրավացի դիտարկմամբ նրան ազատում է հայրապետական գահաթոռը զավթողի մեղադրանքից (տե՛ս **Dédéyan**, *Les Arméniens entre Grecs...*, vol. 1, էջ 228):

արձանագրված է, որ Վկայասերը փոխանորդ է կարգել իր հարազատներին, հարկավ, այդ թվում՝ Գեորգ Լոռեցուն ու այդպիսով հնարավորություն ստացել ազատորեն զբաղվելու գրական գործունեությամբ. «... **զայլս ոմանս յիւրոց հարազատաց ձեռնադրէ փոխանակ իւր,** եւ ինքն զանխլաբար պանդխտանայ աղաւթից եւ վերծանութեան պարապելով»[105]: Վկայասերի կողմից կաթողիկոսական իշխանությունը Գեորգ Լոռեցուն փոխանցելու վերաբերյալ Վարդան վարդապետի վկայությունը ևս դրա՝ առանց որևէ պարտադրանքի կատարված լինելու անուղղակի փաստարկ է. «... **Եւ ամ մի կալեալ զաթոռն ի Ծամնդաւ՝ Թողու ի Գէորգ վարդապետն իւր Լօռեցի:** Եւ ինքն անցեալ գնայ ի Կոստանդնուպօլիս»[106]:

Թեև Գեորգն իրականում կաթողիկոսական **«փոխանորդ»** էր, սակայն նրա ընտրության հանգամանքները հուշում են, որ կանոնական իրավունքի տեսանկյունից նա լիիրավ կաթողիկոս էր: Որպես Հայոց դիտապետ, ասել է թե՝ կաթողիկոս, Լոռեցուն հիշում է իր աշակերտ Կիրակոսը 1117 թվակիր մի հիշատակարանում. «Ընդ որս և զսուրբ վարդապետն մեր զԳէորգ յիշեսջիք, **զդիտապետն Հայոց**»[107]: Նկատենք, որ Գեորգ Լոռեցու կաթողիկոսական ընտրությունը կատարվել էր ընդունված կարգի համաձայն՝ ժողովական հաստատմամբ ու կանոնական առումով հավասարազոր էր Վկայասերի ձեռնադրությանը: Ավելին՝ գահից հրաժարված կաթողիկոսի կենդանության ժամանակ նոր հայրապետի ընտրության նախադեպ արդեն իսկ կար ԺԱ. դարում: Խոսքը վերաբերում է Սարգիս Ա. Սևանցու (992-1019) հրաժարականին ու Պետրոս Ա. Գետադարձի ձեռնադրությանը. «Եւ ի չորեքհարիւր վաթսուն եւ ութ թուականին (1019 – Վ. Թ.) ձեռնադրի տէր Պետրոս ի կաթողիկոսութիւն առ կենաւքն

---

[105] **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 117:
[106] **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 102:
[107] **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 149:

տէր Սարգսի»[108], - գրում է Արիստակես Լաստիվերցին: Կարմիր վանքի ձեռագիր հավաքածուի մի անթվակիր «Մաշտոց»-ից տեղեկանում ենք, որ Պետրոս Ա. Գետադարձը կաթողիկոսական օծումն ստացել է Սարգիս Ա. Սևանցուց. «Վանական պատմագիրն ասէ, զՊետրոս պատրիարգն, Սարգիս կաթողիկոսն, ի կենդանութեան իւրում օծեալ էր **իւրում ձեռօքն**»[109]: Այս վկայությունն առավել արժևորվում է, քանզի դրա իրական հեղինակը Վանական վարդապետն է: Աղբյուրում վերջինս հիշվում է «պատմագիր» մակդիրով, ինչը թույլ է տալիս կարծել, որ գրիչն այդ տեղեկությունը քաղել է Վանական վարդապետի՝ ցարդ անհայտ Պատմությունից: Պետրոս Գետադարձի ձեռնադրությունը (հրաժարական տված կաթողիկոսի կողմից) մեզ հետաքրքրող հիմքով թե՛ ժամանակին և թե՛ հետագայում անկանոն չի համարվել: Փաստորեն, այս հիմնավորմամբ Լոռեցուն վերագրելի է կաթողիկոսական լիարժեք իշխանություն, սակայն հաշվի առնելով նրա փոխանորդ լինելը՝ պետք է արձանագրենք եկեղեցական պաշտոնների անհամատեղելի համադրում, որը, ինչպես ստորև կտեսնենք, ունի իր պատճառները:

Գեորգ Լոռեցու աթոռակալումը երկար չտևեց. գիտենք, որ ընտրությունից մի քանի տարի անց՝ 1072 թ., վեճ առաջացավ նրա ու Վկայասերի միջև, ու վերջինս աթոռանկ արեց Լոռեցուն՝ նրանից

---

108 **Արիստակէս Լաստիվերցի**, *Պատմութիւն*, էջ 532: Հայրապետական աթոռից Սարգիս Ա. Սևանցու հրաժարվելու դրդապատճառների ու Պետրոս Ա. Գետադարձի կաթողիկոսական ընտրության մասին մանրամասն տե՛ս **Մաթևոսյան**, *Անին մայրաքաղաք*, էջ 25-29:

109 **Կյուլեսէրեան**, *Ցուցակ*, սյուն. 673: Այս տեղեկությունը բառացիորեն առկա է նաև Վարդան վարդապետի երկում. *«Զոր լուեալ Վասիլ կայսեր (Բյուզանդիայի Վասիլ Բ. կայսրը - Վ. Թ.), գայ բանակի ի դաշտն Կարնոյ. գայս իմացեալ Յովհաննիսի երկեաւ, և առաքէ առ նա զՊետրոս պատրիարգն պատարագօք,* ***զոր տէր Սարգիս ի կենդանութեանն իւրում օծեալ էր իւրով ձեռօք ի յԱնի,*** *մեծ հանդիսիւ»* (**Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 93), ինչն աներկբա է դարձնում այն փաստը, որ պատմիչն այն քաղել է իր ուսուցիչ Վանական վարդապետի Պատմությունից:

*վերցնելով կաթողիկոսական քողը. «Իսկ ի թուականութեանն Հայոց ՇԻԱ. (3 մարտ 1072 – 2 մարտ 1073) եղև հակառակութիւն ի մէջ Տէր Գրիգորիսի և Տէր Գէորգեայ. և առաքեաց Տէր Գրիգորիսն և ընկէց զՏէր Գէորգն յաթոռոյ հայրապետութեանն՝ և առեալ զքօղն ի գլխոյ նորա»[110]: Մեջբերված քաղվածքից կարելի է մակաբերել, որ այս տարաձայնությունն ունեցել է բոլորովին այլ պատճառ, քան Վկայասերին Լոռեցու տված խոստման դրժումն էր: Պատմիչը, ինչպես տեսնում ենք, աթոռանկության դրվագում չի հիշում կաթողիկոսների միջև նախկինում եղած վեճը: Նիկողայոս Ադոնցի իրավացի դիտարկմամբ՝ Ուռհայեցին «կաթողիկոսների վեճի պատճառը... լրջմիտ չի բացատրում», նրա համոզմամբ՝ տարաձայնության պատճառը Վկայասերին տված խոստումից Լոռեցու հրաժարումը չէր, ինչը, ըստ Ադոնցի, Ուռհայեցու ենթադրությունն է[111]: Կաթողիկոսական վերոնշյալ գավազանացանկի հեղինակը, անշուշտ հետևելով Ուռհայեցուն, խուլ ակնարկ է անում Լոռեցուն աթոռանկ անելու այլ պատճառների մասին. «Զոր եւ յետ սակաւ ժամանակի,* ***յաղագս իրիք ինչ սխալման մեղադրեաց նմա*** *տէր Գրիգորիս,* ***ընդ բանիւ արար զնա և ընկէց յաթոռոյ****»[112]: Թեև խոստման դրժումը, որպես կաթողիկոսների միջև ծագած հակադրության հնարավոր պատճառ, հերքել չենք կարող, սակայն այն Լոռեցու աթոռանկության միակ և գլխավոր պատճառ համարելը ևս վերջնական չէ: Սպառիչ եզրահանգման համար անհրաժեշտ են լրացուցիչ հիմնավորումներ, ինչն աղբյուրների համերաշխ լռության պայմաններում դեռևս իրագործելի չէ:*

*Սմբատ Սպարապետի եզակի վկայության համաձայն, որը չենք գտնում Մատթեոս Ուռհայեցու երկում, սելջուկ սուլթան Մելիքշահը*

---

110 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 205-206:

111 Տե՛ս **Ադոնց**, *Ռուբինյանների նախահայրը*, էջ 512:

112 **Պողարեան**, *Ցուցակ*, հ. Եօթներորդ, էջ 449:

*(1072-1092) Գեորգ Լոռեցու աթոռանկությունից հետո՝ 1072 թ., հատուկ ժողով է հրավիրել ու հաշտեցրել նրան և Վկայասերին. «Ի թուին Հայոց ՇԻԱ. (521=1072) սա (Մելիքշահը – Վ. Թ.) ժողով արարեալ դադարեցուցանէր զհակառակութիւն հայրապետացն Հայոց, տէր Գրիգորիսի Վկայասիրի, և տէր Գէորգայ»*[113]*: Եթե հավաստի է Սմբատ Սպարապետի տեղեկությունը, ապա մնում է կարծել, որ այս առթիվ Մատթեոս Ուռհայեցու լռությունը պայմանավորված էր կաթողիկոսների տարաձայնությանը մուսուլման տիրակալի միջամտության հանգամանքով: Այսպես՝ արձանագրելով սուլթան Ալփ Արսլանի կողմից Գագիկ Բ. Անեցուն արված առաջարկը՝ Հայոց թագավորական իշխանությունը սելջուկյան տիրապետության պայմաններում վերականգնելու վերաբերյալ՝ պատմիչը թագավորի մերժումն արդարացնում է նրա քրիստոնյա լինելով՝ փաստորեն դրա հիմքում դնելով սուլթանի կրոնական պատկանելությունը. «... խորհեցաւ (Գագիկ Բ. Անեցին – Վ. Թ.) գնալ առ Աբասլան սուլտանն Պարսից և տիրանալ աթոռոյ թագաւորութեան տանն Հայոց, զի բազում անգամ կոչէր զԳագիկ սուլտանն, և նա յաղագս քրիստոնէական հաւատոյ արգելեալ լինէր»*[114]*: Քանի որ Ուռհայեցին Բարսեղ Անեցու և Մելիքշահի 1090 թ. հանդիպումը (այս դրվագին մանրամասն կանդրադառնանք ստորև) դիտում է որպես ոչ պատվաբեր, չնայած փորձում է արդարացնել առաջինի քայլը*[115]*, ապա այս պարագայում լռությունն իրողությունը գնահատելուց խուսափելու լավագույն միջոցն էր: Թերևս դա է պատճառը, որ Սամվել Անեցին սել-*

---

113 **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 78:

114 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 180:

115 *«Եւ արդ այս ոչ է մեղադրելի գնալ հայրապետին առ այլազգի թագաւոր և առնել խաղաղութիւն սրբոյ Եկեղեցւոյ. զի յաղագս խաղաղութեան գնաց սուրբն Բարսեղ առ անօրէնն Յուլիանոս թագաւորն, և սուրբն Ներսէս առ ուրացողն Վաղէս թագաւորն Յունաց, և սուրբն Մարութա առ Յազկերտ Պարսից արքայն»*, - կարդում ենք Ուռհայեցու երկում (Նույն տեղում, էջ 241):

ջուկ տիրակալի հետ Բարսեղ Անեցու հանդիպման մասին գրելիս բավարարվում է Հովհաննես Սարկավագի երկից քաղված ու կաթողիկոսի անունն անգամ չվկայող թռուցիկ ակնարկով: Արձանագրելով Մելիքշահի մահը՝ Հովհաննես Սարկավագը գրում է. «... զի սիրէր զազգս մեր այնքան, մինչև զի աղաւթս հայցէր և աւրհնութիւն. յորմէ և անդ երբեմն չոգաւ հայրապետն»[116]: Ինչ վերաբերում է կաթողիկոսների տարաձայնության վերացմանը Մելիքշահի միջամտելուն, ապա դրա միակ հավանական շարժառիթը Բյուզանդական կայսրության տարածքում գտնվող Հայոց կաթողիկոսությունն իր ազդեցության տակ առնելն էր:

Գեորգ Լոռեցու աթոռանկությունից հետո Վկայասերը չզբաղեցրեց հայրապետական գահաթոռը: Դա որոշակի փաստվում է նաև նույն ժամանակ Վկայասերին Փիլարտոս Վարաժնունու արած առաջարկությամբ՝ կաթողիկոսական աթոռն իր իշխանության տարածքում հաստատելու վերաբերյալ. «Յայսմ ժամանակի անօրէնն Փիլառտոս յղարկեաց և կոչեաց զՏէր Գրիգորիս յաթոռ հայրապետութեանն իւրոյ. և նա ոչ եկն ի կոչն նորա, վասն զի զարհուրեալ էր ի չարաշունչ գազանէն: Դարձեալ գրեաց Փիլառտոսն առ սուրբ հայրապետն և ասէր. «Չէ օրէն աթոռոյս հայրապետութեան **առանց հայրապետի կալ**»[117], - գրում է Մատթեոս Ուռհայեցին: Մերժելով Փիլարտոս Վարաժնունուն[118] Գրիգոր Վկայասերն առաջարկում է կաթողիկոսական աթոռը հանձնել Պետրոս Ա. Գետադարձի քեռորդի

---

[116] **Աբրահամյան,** *Հովհաննես Իմաստասեր*, էջ 130. Հմմտ. **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 199: Կարեն Մաթևոսյանն իրավացիորեն եզրակացնում է, որ *«Սամվել Անեցու՝ Հովհաննես Սարկավագի թղթից մեջբերված այս հատվածում վերջինս ակնարկում է Բարսեղ Ա. Անեցի կաթողիկոսի 1090 թ. այցելությունը Մելիքշահին»* (**Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 402, ծանոթ. 298):

[117] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 210:

[118] Գրիգոր Վկայասերի՝ Փիլարտոս Վարաժնունու առաջարկի մերժման պատճառներին կանդրադառնանք հետագա շարադրանքում:

տեր Սարգսին. «Դի՛ր իմ հրամանաւն յաթոռ հայրապետութեանդ զՏեր Սարգիս զքուրորդին Տէր Պետրոսի»[119]: Փիլարտոսն էլ համոզվելով, որ «Տէր Գրիգորիս այլ ոչ է դառնալոց յաթոռ հայրապետութեան իւրոյ», Սարգսին Հոնիում ձեռնադրել է տալիս կաթողիկոս[120]: Այս ձեռնադրությունը տեղի է ունեցել ընդունված կարգի համաձայն՝ «եպիսկոպոսաց և հարանց վանականաց և կրօնաւորաց» ժողովի հաստատմամբ և հայրապետական գահաթոռի թափուր լինելու պարագայում: Այս դեպքում ևս պահպանվել է կաթողիկոսի ընտրության կանոնական կարգը: Ավելին՝ Վկայասերը Սարգսին է ուղարկում «զքօղն և զգաւազանն և զսուրբ նշանն Տէր Պետրոսի»[121]՝ այդպիսով առավել ընդգծելով նրա իշխանության կանոնականությունը[122]: Կիրակոս Գանձակեցին ևս Բարսեղ Անեցու հայրապետական ձեռնադրությունն օրինական է համարում՝ հաշվի առնելով կաթողիկոսական աթոռի՝ Վկայասերի կողմից զբաղեցված չլինելու փաստը. Նա գրում է, որ Տաշիր-Ձորագետի արքա Կյուրիկե Ա.-ը (1050-1089) Անեցու ընտրությունը նախաձեռնեց, երբ տեսավ, որ Վկայասերը հեռացել է հայրապետական աթոռից ու գնացել Հռոմ. «Իբրև ետես Կիւրիկէ արքայ յազգէն Բագրատունեաց..., եթէ եթող տէր Գրիգորիս զաթոռն իւր և գնաց ի Հռոմ, կոչեաց առ ինքն զտէր Յովսէփ, զկաթողիկոսն Աղուանից, և ետ ձեռնադրել զտէր Բարսեղ կաթողիկոս Հայոց»[123]:

Պետրոս Ա.-ի հետ ազգակցությունը գահաժառանգման (այդ թվում՝ եկեղեցական պաշտոնների) իրավունքի՝ ժամանակի ընկալ-

---

[119] Նույն տեղում: Հաշվի առնելով Սասունի Թոռնիկյանների հետ Փիլարտոսի հակամարտությունը և հատկապես վերջինիս կողմից դրա ննգաբար հանգուցալուծելը, ինչպես նաև Թոռնիկյանների հետ Պահլավունիների խնամիական կապը՝ միանգամայն սպասելի և տրամաբանված էր այս մերժումը:

[120] Տե՛ս նույն տեղում:

[121] Նույն տեղում:

[122] Հմմտ. **Dédéyan,** *Les Arméniens entre Grecs...,* vol. 1, էջ 230-231:

[123] **Կիրակոս Գանձակեցի,** *Պատմություն*, էջ 98:

մաս տեսանկյունից լրացուցիչ վավերականություն էր հաղորդում Սարգսի կաթողիկոսական իշխանությանը: Ինչպես Խաչիկ Բ. Անեցին, այնպես էլ Սարգիսն ազգակցական նույն կապն ուներ Գետադարձի հետ: Հատկանշական է, որ Հովհաննես Զ. Սսեցու (1203-1221) ընտրությանը հակադրվող Սեբաստիայի հակաթոռ կաթողիկոսության հիմնադիր Անանիա եպիսկոպոսն իր իշխանական հավակնությունները հիմնավորում էր Պետրոս Գետադարձի հետ ազգակցությամբ. այդ առթիվ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ Յովհաննէսն՝ զի ընտանի էր թագաւորին Լևոնի (Լևոն Ա. Մեծագործին – Վ. Թ.), բռնացաւ և կալաւ: Իբրև ետես զայն միւս եպիսկոպոսն՝ Անանիա, չոգաւ նա առ սուլտանն, զոր հոռոմոց կոչեն, և ետ նմա կաշառս, և նստաւ կաթողիկոս ի Սևաստ, **զի ասէր զինքն յազգէ կաթողիկոսին Պետրոսի, որ կայ թաղեալ անդէն**»[124]: Փաստորեն, նախորդ կաթողիկոսների հետ ազգակցությունը հայրապետական աթոռի նկատմամբ հավակնություններ ունենալու, առավել ևս՝ դրանք օրինական հռչակելու ծանրակշիռ գրավական էր:

Մասնագիտական գրականության մեջ, հավանաբար հետևելով Մաղաքիա Օրմանյանին, սակայն հղելով Մատթեոս Ուռհայեցու ու Սմբատ Սպարապետի երկերը, Սարգսի ընտրության թվական է նշվում 1076-ը[125]: Խնդիրն այն է, որ Մատթեոս Ուռհայեցին Սարգսի ընտրությունը թվագրում է ոչ թե 1076-ով, այլ հայոց ՇԻԱ. (3 մարտի 1072 – 2 մարտի 1073) թվականով[126]: Կարծում ենք՝ այս ընտրությունը 1076-ով թվագրելու հիմքը ոչ թե Ուռհայեցու կամ նրան հետևող Սմբատ Սպարապետի, այլ Վարդան վարդապետի՝ «Հաւաքումն պատմութեան» ժամանակագրական բնույթի երկի համապա-

---

124 **Նույն տեղում**, էջ 149:

125 Տե՛ս **Օրմանեան**, *Ազգապատում*, սյուն. 1516. **Բոռնազյան**, *Հայաստանը և սելջուկները*, էջ 189. **Վարդանյան**, *Պահլավունիները*, էջ 100. **Մութաֆյան**, *Կիլիկիան*, էջ 369:

126 Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 210:

*տասխան տեղեկությունն է, որը ներառող պարբերության թվական տվյալը, սակայն, վերաբերում է ոչ թե Սարգսի ընտրությանը, այլ Վկայասերի եղբայր Վասակ Պահլավունու սպանությանը. «Ի հինգ-հարիւր քսան և հինգ թուին (1076 – Վ. Թ.) սպանին Հոռոմք զՎասակ իշխանն զեղբայր կաթուղիկոսին Վահրամայ, որ էր տուկ Անտիոքու, ի նմին քաղաքի, նենգութեամբ. և զօրք նորա ամրացեալ ի կլայն, ետուն զքաղաքն ի Փիլարտոսն, որ բռնացեալ էր յայնժամ ի վերայ բազում գաւառաց՝ հայ ազգաւ ...: Այս Փիլարտոս ձեռնադրել ետ զՍարգիս քորորդի տեառն Պետրոսի կաթողիկոսի ի Միջագետս, ... մինչ կենդանի էր Վահրամ և Գէորգ, զոր աքսորեցին տէր Վահրամ և տէր Բարսեղ՝ որ յարևելս, զոր ի Հաղբատ ձեռնադրեցին տէր Ստեփանոս կաթողիկոս Աղուանից: ... Այլ և զկնի մահուանն տեառն Սարգսի կաթուղիկոսի ետ ձեռնադրել ի տեղին Փիլարտոսն զԹէոդորոս ոմն»*[127]*: Ինչպես դժվար չէ կռահել այս ընդարձակ մեջբերումից, պատմիչը համապատասխան թվականի տակ նախապես արձանագրած չլինելով Սարգսի ընտրությունը և օգտագործելով Փիլարտոսին առաջին անգամ հիշատակելու պատեհությունը, հավելյալ հայտնում է Անտիոքին տիրելուց զատ Վարաժնունու այլ ձեռնարկումների, տվյալ դեպքում՝ Սարգսի ընտրությամբ կաթողիկոսություն հիմնելու մասին: Ի դեպ, Վասակի սպանությունն ու Անտիոքի հանձնումը Փիլարտոսին նույն՝ 1076-ով է թվագրում նաև Մատթեոս Ուռհայեցին*[128]*, և Վարդան վարդապետն այդ տեղեկությունը, վստահաբար, քաղել է հենց նրա աշխատությունից*[129]*:*

---

[127] **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 104-105: Նշենք, որ Մաղաքիա Օրմանյանը Սարգսի ընտրությունը թվագրելիս հիմնվում է Վարդանի երկի վրա, սակայն պատմիչի՝ թվական տվյալ պարունակող այս ընդարձակ վկայությունը խիստ կրճատումներով է հղված նրա աշխատության համապատասխան հատվածում (տե՛ս **Օրմանեան**, *Ազգապատում*, սյուն. 1517):
[128] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 213:
[129] Տե՛ս **Անթապյան**, *Վարդան Արևելցի*, էջ 266:

*Ուշագրավ է, որ Սարգիսը, շարունակելով կաթողիկոսական իշխանության փոխանցման ավանդույթը, մահվանից առաջ այն հանձնում է հայրապետանոցի եպիսկոպոսներից Թեոդորոսին, որը հայտնի էր «Ալախոսիկ» մականունով*[130]*։*

*Ինչպես Սարգսի, այնպես էլ Թեոդորոսի վերաբերյալ աղբյուրները չափազանց կցկտուր տեղեկություններ են հաղորդում, իսկ նրանց հայրապետական ընթացքը գրեթե լուսաբանված չէ ժամանակի մատենագրական հուշարձաններում։ Հիշատակարանային տեղեկություններ Սարգսի վերաբերյալ մեզ հայտնի չեն, իսկ Թեոդորոսին՝ «Հայոց կաթողիկոս» հորջորջմամբ հանդիպում ենք* ***1094*** *թվակիր մի հիշատակարանում. «Շնորհիւ Աստուծոյ ես տէր Թէոդորոս Հայոց կաթողիկոս, ետու զսուրբ Աւետարանս հաւր Դաւթի եւ որդւոյ իւրոյ Մարկոսի»*[131]*։*

*Ջահան գավառը, որտեղ գտնվում էր կաթողիկոսանիստ Հոնի քաղաքը,* ***1085*** *թ. թյուրք-սելջուկները գրավում են, և այդ ամենի պարտադրանքով Փիլարտոս Վարաժնունին իշխանության կենտրոնը փոխադրում է Մարաշ՝ Թեոդորոսից պահանջելով տեղափոխվել այնտեղ։ Սակայն վերջինս, ինչպես հաղորդում է Մատթեոս Ուռհայեցին, սելջուկների հարուցած խոչընդոտների պատճառով չի կարողանում գնալ։ Դրանից հետո Փիլարտոսը որոշում է նոր կաթողիկոսություն հիմնել Մարաշում և այն առաջնորդելու առաջարկով դիմում է Սուրբ Աստվածածնի վանքի արքեպիսկոպոս տեր Հովհաննեսին, սակայն նույնպես մերժում ստանում։ Փիլարտոսը, սակայն, չի ընկրկում և Մարաշում նոր կաթողիկոսություն հիմնելու գործն ավարտին է հասցնում Վարագա Սուրբ Նշան վանքի վանահայր Պո-*

---

130 Մատթեոս Ուռհայեցին նրան հիշում է Թորոս անվամբ (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն*, էջ 215-216։

131 **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 116։

*ղոսին այնտեղ կաթողիկոս ձեռնադրել տալով*[132]*: Պողոսն ընտրվում է Հոնիում աթոռակալող կաթողիկոսի (Թեոդորոս Ալախոսիկի) օրոք ու առանց նրա համաձայնության: Թերևս դա է պատճառը, որ Մատթեոս Ուռհայեցին, անօրինական համարելով այս ընտրությունը, նշում է, որ Պողոս Վարագեցին ձեռնադրվել է ոչ թե Աստծո (այսինքն՝ կանոնական ընտրությամբ), այլ Փիլարտոսի հրամանով:*

*Հոնիի ու Մարաշի աթոռներից զատ՝ Վկայասերի օրոք կաթողիկոսություններ հիմնվեցին Անիում և Եգիպտոսում: Առաջ անցնելով՝ նշենք, որ Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ Գրիգոր Վկայասերը Հայոց ՇԻԱ. թ. (3 մարտ 1072 – 2 մարտ 1073 ) գալիս է Անի և այնտեղ եպիսկոպոս ձեռնադրում իր քրոջ որդի Բարսեղ Անեցուն, որն արդեն 1081 թ. Հաղբատում, Վկայասերի համաձայնությամբ, ընտրվում է կաթողիկոս՝ իր հայրապետական իշխանությունն իրականացնելով Հայաստանում*[133]*: Նույն մատենագրի վկայությամբ՝ Վկայասերն այնուհետև ձեռնարկում է իր նշանավոր ուղևորությունը, որի հանգրվաններից՝ Եգիպտոսում, հաշվի առնելով տեղի հայերի պատկառելի թվաքանակը (30.000), նրանց հոգևոր առաջնորդ (ըստ որոշ աղբյուրների՝ կաթողիկոս) է կարգում իր մյուս քրոջ որդի Գրիգորին*[134]*:*

---

[132] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 228-229:

[133] Կաթողիկոսական այս ձեռնադրության հիմքով Սամվել Անեցին ու ԺԲ. դ. մատենագիրներից Մխիթար Անեցին Գրիգոր Վկայասերի աթոռակալումը հաշվում են 17, իսկ Բարսեղ Անեցունը, սկսած 1081-ից, 31 տարի (տե՛ս **Սամուէլ Անեցի**, *Հաւաքմունք*, էջ 125-129. **Մխիթար Անեցի**, *Մատեան*, էջ 69): Գրիգոր Վկայասերի և Բարսեղ Անեցու կաթողիկոսության տարիների գրեթե նույն թվագրումը տեղ է գտել նաև Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության մեջ (տե՛ս **Հակոբյան**, *Մանր ժամանակագրություններ*, հ. II, էջ 339-340):

[134] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 211: Վկայասերի ուղևորությանը հանգամանորեն անդրադարձել ենք սույն աշխատության հավելվածում:

*Հայագիտության մեջ Վկայասերի աթոռակալման ընթացքում հիմնված կաթողիկոսությունները մեծ մասամբ դիտվել են որպես հակաթոռություններ, ինչպես նաև աթոռակցության կամ փոխանորդության կարգավիճակով ստեղծված հայրապետական կենտրոններ*[135]*։ Հակաթոռության կարգավիճակ հիմնականում վերագրվել է Հոնիի ու Մարաշի կաթողիկոսություններին՝ մասնավորաբար Թեոդորոս Ալախոսիկի ու Պողոս Վարագեցու աթոռակալման շրջանում։*

*Մասնագիտական գրականության մեջ կաթողիկոսական վերոնշյալ աթոռների բնութագրման խնդրում նկատվող տարակարծությունն առաջին հերթին պայմանավորված է սկզբնաղբյուրային որոշ տեղեկությունների հակասականությամբ ու իրականությունը լիարժեքորեն չարտացոլելու հանգամանքով։ Այդ իսկ պատճառով առաջանում է Գրիգոր Վկայասերի հայրապետական ընթացքի ու հատկապես նշյալ աթոռների մասին ավանդող ինչպես ժամանակի, այնպես էլ հետագա որոշ աղբյուրների համադիր քննության անհրաժեշտություն։ Այս տեսանկյունից պետք է առանձնացնել Մատթեոս Ուռհայեցու, Վարդան վարդապետի երկերն ու Սամվել Անեցու մի քանի Շարունակողների վկայությունները։*

*Խնդրո առարկա կաթողիկոսական աթոռներին հետազոտողների տված հատկանշումները մեծ մասամբ ազդված են Մատթեոս Ուռհայեցու վկայություններից, որոնց շարքում համեմատական քննության կարիք ունեն Հոնիի ու Մարաշի աթոռակալներ Սարգսին, Թեոդորոս Ալախոսիկին ու Պողոս Վարագեցուն, ինչպես նաև Անիի աթոռակալ Բարսեղ Անեցուն վերաբերողները։ Մատթեոս Ուռհայեցու*

---

[135] Տե՛ս **Օրմանեան,** *Ազգապատում*, սյուն. 1515-1518, 1521-1525, 1532-1534, 1536-1538. **Վարդանյան**, *Պահլավունիները*, էջ 94-108. **Բոռնազյան,** *Հայաստանը և սելջուկները*, էջ 189-195. **Մութաֆյան**, *Կիլիկիան*, էջ 368-370. **Grousset,** *Histoire*, էջ 635. **Mahé,** *L’eglise Arménienne*, **էջ 531. Dédéyan,** *Les Arméniens entre Grecs...*, vol. 1, էջ 230-240. **Հակոբյան**, *Գրական ուսումնասիրություններ*, էջ 62. **Մաթևոսյան,** *Անին մայրաքաղաք*, էջ 46-49 և այլն:

հաղորդումները, անտարակույս, չափազանց կարևոր են, քանզի նա, ինչպես նշում է Հրաչ Բարթիկյանը, «դեպքերի ու դեմքերի սոսկ արձանագրող չէ, այլ ուսումնասիրող»[136]: Հայագիտության մեջ կաթողիկոսության՝ ԺԱ. դարի երկրորդ կեսի դրությունը բնութագրելիս գերազանցապես վկայակոչվում է Մատթեոս Ուռհայեցու՝ աթոռի մասնատումն ու ստեղծված վիճակը ծայրահեղ քննադատող հետևյալ հաղորդումը, որը, ընդարձակ լինելու պատճառով, կհղենք որոշ կրճատումներով. «Յայսմ ժամանակիս էր աղմուկ և խռովութիւն մեծ ի վերայ աթոռոյն սուրբ Լուսաւորչին Գրիգորի. վասն զի յաւուրս յայսոսիկ ոչ հրամանաւն Աստուծոյ և կամ արժանաւորութեամբ էր կարգադրութիւն սրբոյ Աթոռոյն, այլ զօրութեամբ և կարողութեամբ և բարձրագահ իշխանութեամբ. և այս ոչ լինէր յայտնութեամբ Հոգւոյն Սրբոյ, այլ լինէր ի ձեռն պատահմանց և յաջողութեանց և տրօք ոսկւոյ և արծաթոյ: ... Աստանօր սկիզբն եղև կատարելոյ տեսլեան սրբոյն Սահակայ Պարթևի, զոր ասացն ջնջել ոսկեդիր կարգացն և գծագրել սևադեղ թանաքով. վասն զի ահա ի ժամանակիս այսմիկ ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի ահա Տէր Վահրամ յԵգիպտոս, և Տէր Թէոդորոս ի Հոնին, և Տէր Բարսեղ ի թագաւորաբնակ քաղաքն Հայոց յԱնի. և Տէր Պօղոս ի Մարաշ քաղաքն. և սոքա իւրաքանչիւր ոք առնէին ձեռնադրութիւնս և օծանէին եպիսկոպոսունս և տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն, և ի նոցանէ օրհնէին քահանայք...: Եւ էր այս ամենայն սուգ մեծ ի վերայ Եկեղեցւոյն Աստուծոյ, վասնի զի մի փարախն ոչխարաց ընդ չորս հօտապետութիւնս բաժանեցաւ և **գայլք եղեն** պահապանք հօտին Քրիստոսի»[137]:

---

136 **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն*, էջ XIX:

137 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 229-230: Այս մեջբերման հղումները տե՛ս **Անանեան**, *Ս. Ներսէս Շնորհալի*, էջ 329. **Բոռնազյան**, *Հայաստանը և սելջուկները*, էջ 194-195. **Վարդանյան**, *Պահլավունիները*, էջ 103 և այլն:

Այս մեջբերման ու ժամանակագրության համապատասխան այլ հատվածների համեմատությունը ցույց է տալիս, որ Ուռհայեցու բացասական բնորոշումները մեծ մասամբ պատճառաբանված չեն, ու հանիրավի է դրանք վերոհիշյալ բոլոր կաթողիկոսներին անխտիր վերագրելը: Այսպես՝ ժամանակագրության սույն վկայությանը նախորդող ու հաջորդող շարադրանքում հեղինակը ոչ միայն չի քննադատում այդ աթոռների (բացառությամբ՝ Մարաշի) ստեղծումն ու դրանց առաջնորդներին, այլև նրանց հասցեին շռայլում է դրվատանքի խոսքեր: Նա Սարգսին հիշում է «**ամենագովելին Տէր Սարգիս հայրապետն Հայոց**»[138] արտահայտությամբ: Վերջինիս խիստ դրականորեն է ներկայացնում նաև Վարդան վարդապետը. «Այս Փիլարտոս ձեռնադրել ետ զՍարգիս քորորդի տեառն Պետրոսի կաթողիկոսի ի Միջագետս, **այր սուրբ և պարկեշտ**»[139]: Կաթողիկոսական աթոռներից Անիին բացասական որակումներ տալիս Ուռհայեցին հակասում է ինքն իրեն: Անդրադառնալով Բարսեղ Անեցու կաթողիկոսական ձեռնադրությանը՝ նա արձանագրում է. «Եւ եղև օրն այն օր մեծ և ուրախութիւն ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»[140]:

Կարծում ենք՝ հատկապես Հոնիի ու Մարաշի աթոռների նկատմամբ պատմիչի վրդովմունքն ազդված էր հետևյալ իրողություններով.

**ա**. Ինչպես տեսանք, այս երկու աթոռների հիմնումը նախաձեռնել էր Փիլարտոս Վարաժնունին, որի նկատմամբ Ուռհայեցին խորը հակակրանք էր տածում: Նրա ժամանակագրության՝ կաթողիկոսական իշխանության մասնատման փաստը ծայրահեղ քննադատող վերոբերյալ քաղվածքը հաջորդում է Պողոս Վարագեցու՝ խստագույն պախարակման արժանացած կաթողիկոսական ձեռնադրու-

---

[138] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 215:
[139] **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 104:
[140] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 221-222:

*թյան մասին շարադրանքին ու հստակորեն կրում է դրա ազդեցությունը[141]: Փիլարտոս Վարաժնունուն ու Պողոս Վարագեցուն վերագրվող մեղադրանքները կարծես արհեստականորեն տարածվում են մյուս կաթողիկոսների վրա:*

*բ. Միջնադարի հայ նշանավոր հոգևոր-եկեղեցական գործիչների՝ Ներսես Մեծի, Սահակ Պարթևի (387-439) և Հովհաննես Կոզեռնի տեսիլների վկայակոչումը, որոնցից պատմիչը կատարում է ոչ բառացի քաղագրումներ, արհեստականորեն խտացրել է քննադատության գույները: Այսպես՝ առաջինը նշված է Սահակ Պարթևի տեսիլը, որտեղից վկայակոչված է կաթողիկոսների՝ ոչ թե Աստծո, այլ աշխարհիկ իշխանների կամքով, կաշառատվությամբ ստացած ձեռնադրության ու նրանց արծաթասեր լինելու մասին[142]: Այսպես՝ կաթողիկոսներից ոչ թե Աստծո հաճությամբ, այսինքն՝ ոչ կանոնական, այլ ժամանակի իշխանավորների կամքով էր կայացել ոչ միայն Պողոս Վարագեցու, այլև Բարսեղ Անեցու ընտրությունը. նա ձեռնադրվել էր Տաշիր-Ձորագետի թագավոր Կյուրիկե Ա.-ի հրամանով ու Անիի մուսուլման կառավարիչ Մանուչեի համաձայնությամբ[143]: Սակայն դժվար թե Ուռհայեցին նրա հայրապետական օծումը համարեր պախարակելի, քանզի մինչ այդ արձանագրել էր, որ Բարսեղի ձեռնադրությամբ «նորոգեալ եղև աթոռ սրբոյն Գրիգորի (Գրիգոր Լուսավորչի – Վ. Թ.) ի քաղաքն Անի, որ ի վաղուց ժամանակաց հետէ խափանեալ էր մախանօք նենգաւորութեամբ չար և դառնացեալ ազգին Հոոոմոց»[144]: Ավելին՝ կաթողիկոսի ընտրությանն աշխարհիկ իշխանության մասնակցությունը պարտադիր էր կանոնական իրա-*

---

[141] Տե՛ս նույն տեղում, էջ 228-229:

[142] Տե՛ս նույն տեղում, էջ 229, հմմտ. **Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն*, էջ 2231-2232:

[143] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն* էջ 220-222, **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 104:

[144] **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 221:

*վունքի տեսանկյունից ու հիմնված էր դարեր ի վեր ձևավորված ավանդույթի վրա։ Ինչ վերաբերում է կաթողիկոսների՝ հոգևոր բարձրագույն կոչումը կաշառատվությամբ ստանալուն, ապա հենց Ուռհայեցու շարադրանքը նրանց նման մեղք վերագրելու որևէ հիմք չի տալիս։*

*Կաթողիկոսներին հավասարապես քննադատելը (հատկապես Սահակ Պարթևի տեսիլի ազդեցությամբ նրանց գայլերի հետ համեմատելը) մեծացրել է սխալվելու հավանականությունը։ Կարծում ենք՝ հայրապետական աթոռի մասնատումն ու ծանր վիճակը սգացող Ուռհայեցին այդ շարքում չպետք է ներառեր Բարսեղ Անեցուն, որն արդեն 1090 թ., հենվելով սելջուկ տիրակալ Մելիքշահի օժանդակության վրա, հաջողությամբ վերականգնեց կաթողիկոսական աթոռի ընդհանրականությունը[145]։*

*Մասնավոր ուշադրության են արժանի Սարգսին, Թեոդորոս Ալախոսիկին Ուռհայեցու տված հատկանշումները, որոնք նկատելիորեն տարբեր են Պողոս Վարագեցու ընտրության բնութագրումից։ Նա որևէ կերպ կասկածի տակ չի դնում առաջին երկուսի ընտրության կանոնականությունը, մինչդեռ Պողոսի ձեռնադրությունը, հաշվի առնելով ընդունված կարգի բացահայտ խախտմամբ կայացած լինելը, համարում է ոչ կանոնական։ Դա գիտակցել է նաև Պողոսը, քանզի կարճ ժամանակ անց հրաժարվել է աթոռից։*

*Հիշյալ կաթողիկոսություններին որևէ կերպ անդրադարձած աղբյուրներում ու գիտական հետազոտություններում մշտապես հիշվում է Մարաշի աթոռը։ Մենք ևս, հաշվի առնելով այս նոր՝ հերթական աթոռի գոյության փաստը, այն ներառել ենք Վկայասերի աթոռակալման շրջանում հիմնված կաթողիկոսությունների շարք։*

---

[145] Բարսեղ Անեցու այս ձեռնարկին, որին հաջորդել է Հոնիի աթոռակալ Թեոդորոսին աթոռանկ անելու դրվագը, մանրամասն կանդրադառնանք սույն աշխատության վերջին գլխում:

*Մեկ նկատառում սակայն. Ուռհայեցու հաղորդմամբ՝ Պողոս Վարագեցին աթոռակալել է ընդամենը մի քանի օր, ու նրա հրաժարականից հետո Մարաշի կաթողիկոսությունը, չունենալով նոր առաջնորդ, փաստորեն դադարել է գործելուց:*

*Հետաքրքրական է, որ իրարից տարբեր են նաև Սարգսի ու Թեոդորոսի ընտրության վերաբերյալ Ուռհայեցու բնութագրումները: Առաջինի ձեռնադրությունն արձանագրելով՝ նա գրում է. «... ձեռնադրեցին զՏէր Սարգիս յաթոռ կաթուղիկոսութեանն Հայոց ի քաղաքն՝ որ կոչի Հոնի, ի Ջահան գաւառի, վասն զի էր այր սուրբ և հրաշափառ տեսլեամբ»[146]: Մինչդեռ Թեոդորոսի դեպքում Ուռհայեցին բավարարվում է տեղի ունեցած ընտրության պարզ արձանագրմամբ[147], իսկ արդեն անդրադառնալով Բարսեղ Անեցու կողմից Թեոդորոսից հայրապետական նշանակները վերցնելուն՝ գրում է. «Եւ ելեալ արքունական հրամանօք Տէր Բարսեղն գնաց մեծաւ ուրախութեամբ, և արք փառաւորք ի սուլտանէն զհետ իւր, և եկեալ հասանէր ի Ջահան գաւառին. և յարեաւ ի վերայ Տեառն Թէոդորոսի, որ հրամանաւ Փիլառտոսին նստեալ էր կաթուղիկոս ի Հոնին. և Տէր Բարսեղն ընկենոյր յաթոռոյն զՏէր Թէոդորոսն և առեալ ի նմանէ զքօղն և զգաւազանն և զսուրբ Նշանն Տէր Պետրոսի՝ և արար միահեծան զհայրապետութիւնն իւր»[148]: Այս մասին առավել որոշակի է Վարդան վարդապետի բացատրությունը: Նա, անդրադառնալով Թեոդորոսից կաթողիկոսական նշանակները վերցնելուն, նրան մեղադրում է հայրապետական իշխանությունն անօրինաբար յուրացնելու մեջ. «... համարձակեալ առնու (Բարսեղ Անեցին – Վ. Թ.) զգա-*

---

[146] **Նույն տեղում,** էջ 210:

[147] *«...մեռանէր ամենագովելին Տէր Սարգիս հայրապետն Հայոց, որ էր քուրորդի Տեառն Պետրոսի կաթուղիկոսին Հայոց. և հրամանաւ նորին նստուցին յաթոռ կաթուղիկոսութեանն Հայոց Տէր Թորոսն՝ զդրան եպիսկոպոսն Տեառն Սարգսի Հայոց կաթուղիկոսին»* (Նույն տեղում, էջ 215):

[148] Նույն տեղում, էջ 240-241:

*ւազանն և զանունն ի Հոնեցոյն, որ անձամբ առեալ էր արտաքոյ կարգաց զկաթուղիկոսութիւնն»*[149]*:*

*Հոնիի և մյուս կաթողիկոսությունների կարգավիճակի հատկանշման համար անհրաժեշտ է պարզել առանցքային մեկ հարց. արդյո՞ք դրանք հակաթոռություններ էին: Այս խնդրում առավել կարևոր են ոչ թե պատմիչների՝ շատ դեպքերում կանխակալ բնորոշումները, այլ նշված աթոռների՝ ա. ձևավորման կանոնական հիմքերը, բ. համեմատությունը քննվող ժամանակաշրջանում ստեղծված հակաթոռությունների հետ:*

*Հոնիի աթոռի հիմնումը չէր հակասում կանոնական իրավունքին: Գեորգ Լոռեցու գահազրկումից հետո Վկայասերը չէր վերականգնել իր իշխանությունը, այսինքն՝ Սարգսի ընտրության ժամանակ կաթողիկոսական աթոռը թափուր էր: Ավելին՝ նա ընտրվել էր մինչ այդ գահից հրաժարված կաթողիկոսի համաձայնությամբ, ինչպես ժամանակին Պետրոս Գետադարձն ու Գեորգ Լոռեցին: Նույն հիմքով էին ստեղծվել նաև Եգիպտոսի ու Անիի կաթողիկոսությունները՝ Վկայասերի համաձայնությամբ և նրա առաջադրած թեկնածուների առաջնորդությամբ: Այսինքն՝ միայն Փիլարտոսի նախաձեռնությամբ կարգված լինելն ու այդ ազդեցությամբ Ուռհայեցու տված հատկանշումները Հոնիի աթոռակալներ Սարգսին ու Թեոդորոսին հակաթոռ համարելու բավարար հիմքեր չեն:*

*Հակաթոռության գլխավոր հատկանիշը գործող կաթողիկոսի գերագահությունը չճանաչելն է: Այս առումով համեմատելի օրինակ է 1113 թ. ստեղծված Աղթամարի կաթողիկոսությունը, որի հիմնադիր Դավիթ Աղթամարցին, պատճառաբանելով Գրիգոր Գ.-ի անչափահաս լինելը, հրաժարվեց ընդունել նրա իշխանությունը: Այս տեսանկյունից գնահատելու պարագայում մեզ զբաղեցնող կաթողիկո-*

---

[149] Այս վկայությունը ծանոթագրելով՝ Ղևոնդ Ալիշանը Հոնիի կաթողիկոսությունը բնորոշում է որպես հակաթոռություն (տե՛ս **Վարդան վարդապետ,** *Հաւաքումն պատմութեան,* էջ 104, ծանոթ. 3):

*սությունների, բացի Մարաշի, վերագրելի չէ հակաթոռության հատկանիշ: Բացառություն չէ նաև Հոնիի աթոռը, քանզի հիմնվել էր Վկայասերի համաձայնությամբ: Այսինքն՝ այն Սարգսի աթոռակալման շրջանում չի եղել հակաթոռություն: Թեև կանոնական իրավունքի տեսանկյունից Հոնին հակաթոռություն չէր, սակայն Բարսեղ Անեցու կողմից կաթողիկոսական նշանակները Թեոդորոսից վերցնելու վերաբերյալ Մատթեոս Ուռհայեցու և Վարդան վարդապետի հաղորդած տեղեկությունները հուշում են Ալախոսիկի՝ հակաթոռ լինելու մասին: Կարծում ենք՝ աղբյուրների և հատկապես Վարդան վարդապետի՝ Թեոդորոսին հակաթոռ կաթողիկոս կոչելու հիմքը ոչ այնքան Փիլարտոսի համաձայնությամբ ձեռնադրվելն էր, որքան այն, որ նա կաթողիկոսական իշխանությունը ստացել էր ոչ թե Գրիգոր Վկայասերի թույլատվությամբ, ինչպես Սարգիսը, այլ հենց վերջինիս կողմից: Սակայն դա դիտավորության հետևանք չէր, քանի որ Գրիգոր Վկայասերն այդ ժամանակ, ինչպես ստորև կտեսնենք, գտնվում էր Կոստանդնուպոլսում, ուստի բնական է, որ Թեոդորոսի ընտրությանը միջամտել չէր կարող: Միայն Փիլարտոսի հրամանով ընտրված լինելը դեռ բավարար չէր Թեոդորոսին մեղադրելու համար, քանզի հակառակ պարագայում, Վարդան վարդապետը ստիպված կլիներ հակաթոռ կոչել նաև Սարգսին: Սակայն ինչպես Վարդան վարդապետը, այնպես էլ Ուռհայեցին միայն դրվատանքի են արժանացնում Սարգսին: Միևնույն ժամանակ, Վարդան վարդապետն ու հատկապես Մատթեոս Ուռհայեցին Թեոդորոսին հակաթոռ բնորոշելով՝ հավասարության նշան չեն դնում նրա ու Պողոս Վարագեցու միջև: Վարդան վարդապետը ոչ պակաս գովաբանությամբ ու նույնիսկ «սուրբ» մակդիրով է հիշում Թեոդորոսին. «մեռաւ սուրբ կաթուղիկոսն Թէոդորոս ի Հոնի, լի՛ն ամենայն առաքինութեամբ, և թաղեցաւ մօտ ի տէր Սարգիս»[150], մինչդեռ նրա՝ հակաթոռ լինելու*

[150] Նույն տեղում, էջ 108:

*դեպքում տրամաբանական կլինեին բացասական բնորոշումները: Ուռհայեցին ևս պակաս գովաբանության չի արժանացնում նրան. արձանագրելով Թեոդորոսի մահը՝ պատմիչը գրում է. «Յայսմ ամի (1096 – Վ. Թ.) մեռաւ մեծ երաժիշտն և սիւնն սրբոյ Եկեղեցւոյ Տէր Թէոդորոս կաթուղիկոսն Հայոց և թաղեցաւ ի Հոնին՝ մօտ ի Տէր Սարգիսն»*[151]*: Թե՛ Մատթեոս Ուռհայեցին և թե՛ Վարդան վարդապետը Թեոդորոսին, ի տարբերություն Պողոս Վարագեցու, անգամ աթոռանկությունից հետո շարունակում են կոչել «Հայոց կաթողիկոս»*[152]*: Մինչդեռ Մատթեոս Ուռհայեցին Պողոս Վարագեցուն հրաժարականին հաջորդած շրջանում՝ 1092-1093 թթ., հիշում է միայն «եպիսկոպոս» տիտղոսով*[153]*:*

*Ամփոփենք՝ Ուռհայեցու և Վարդան վարդապետի երկասիրությունները, անհրաժեշտ աղբյուրներ լինելով հանդերձ, պատճառաբանված բացատրություն չեն տալիս կաթողիկոսական մի քանի աթոռների համաժամանակյա գոյության փաստին: Այդ իսկ պատճառով այդ երկերը թեև կարևոր, սակայն բավարար չեն կաթողիկոսական աթոռի շուրջ ստեղծված իրադրության արդյունավետ քննության ու հիմնավոր եզրակացությունների հանգելու համար:*

*Որքան էլ անսպասելի է ու խնդրո առարկա թեմայի քննության տեսանկյունից ոչ շահեկան, սակայն կաթողիկոսական աթոռի շուրջ Վկայասերի ժամանակ ծավալված իրադարձություններն «անթույլատրելի» սակավությամբ են ներկայացված Սամվել Անեցու «Ժամանակագրութիւն»-ում, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ այդ երկի պատվիրատուն այլ անձ չէ, քան Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ. Պահլավունին: Սամվել Անեցին բավարարվել է միայն Վկայասերի աթոռակալման սկզբնատարին արձանագրելով. «Տէր*

---

151 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 252:
152 Տե՛ս նույն տեղում. **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 108:
153 Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 242:

*Գրիգորէս (կթղ.) ամս Ի (20)»[154]: Մեզ հետաքրքրող իրադարձությունների վերաբերյալ, ի տարբերություն Սամվել Անեցու, փոքր-ինչ առատ տեղեկություններ են հաղորդում նրա երկը լրացնող մի քանի Շարունակողներ, որոնց թվում շահեկանորեն առանձնանում է «Ժամանակագրութիւն»-ը մինչև 1335 թ. հասցրած օրինակի հեղինակը (Մաշտոցյան Մատենադարանի Հմր 1899 ձեռագիր): Սակայն նրա վկայություններից շատերը քննվող խնդրի տեսանկյունից չունեն առաջնային նշանակություն, քանզի գերազանցապես կրկնում են մեզ հայտնի մատենագիրների՝ հատկապես Մատթեոս Ուռհայեցու, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու՝ մինչ այդ ավանդած տեղեկությունները:*

*Անեցու այս Շարունակողի՝ կաթողիկոսական աթոռների թվաքանակին վերաբերող վկայությունների հիմնական աղբյուրը, ամենայն հավանականությամբ, Ուռհայեցու երկն է: Վերջինս մի դեպքում կաթողիկոսների քանակը հաշվում է չորս՝ Վահրամը (Գրիգոր Վկայասերը)՝ Եգիպտոսում, Թեոդորոսը՝ Հոնիում, Բարսեղը՝ Անիում, Պողոսը՝ Մարաշում[155], մյուսում՝ վեց՝ շարքում ներառելով Աղվանից կաթողիկոսին, ինչպես նաև Եգիպտոսում աթոռակալող Գրիգորին՝ Վկայասերի քրոջ որդուն[156]: Անեցու Շարունակողը ևս կաթողիկոսությունների թվաքանակը հաշվում է չորս և վեց: Սակայն չորսի պարագայում այդ տեղեկությունը դնելով 1077 թ. տակ՝ համապատասխանաբար որպես Հոնիի աթոռակալ հիշում է Սարգսին և իբրև գործող կաթողիկոս՝ այդ թվականին մահացած Գեորգ Լոռեցուն: Մյուս տեղեկությունն արդեն 1085 թ. ներքո նշելով՝ կաթողիկոսությունների թվաքանակը, ևս հետևելով Ուռհայեցուն, հաշվում է վեց: Ի տարբերություն իր աղբյուրի՝ Անեցու Շարունակողը նշում է, որ*

---

[154] **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 191:
[155] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 229:
[156] Տե՛ս **նոյն տեղում**, էջ 231:

*թե՛ Գեորգ Լոռեցին և թե՛ Սարգիսը կաթողիկոսական իշխանությունից զրկվել են աթոռանկության հետևանքով. «Ընկեցին յաթոռոյն զտէր Գէորգ վարդապետն եւ զտէր Սարգիս եւ եկաց միահեծան կաթուղիկոս Հայոց տէր Գրիգորիս»[157]: Գեորգ Լոռեցու աթոռանկության մասին վկայությունը, հաստատվելով Ուռհայեցու տեղեկությամբ, հավաստի է, մինչդեռ Սարգսի պարագայում՝ առավել քան կասկածելի: Եվ Ուռհայեցին, և՛ Վարդան վարդապետը վստահ են, որ Սարգիսը մահացել է որպես Հոնիի աթոռակալ՝ հասցնելով անգամ իր հաջորդ կարգել Թեոդորոս Ալախոսիկին: Սամվել Անեցու Շարունակողի այդ տեղեկության աղբյուրը, հավանաբար, Վարդան վարդապետի երկն է, որի համապատասխան դրվագում թե՛ Սարգսի ընտրության և թե՛ Գեորգ Լոռեցու աթոռանկության մասին հիշվում է մեկ նախադասության մեջ («Այս Փիլարտոս ձեռնադրել ետ զՍարգիս քորորդի տեառն Պետրոսի կաթողիկոսի ի Միջագետս, այր սուրբ և պարկեշտ, մինչ կենդանի էր Վահրամ և Գէորգ. զոր աքսորեցին տէր Վահրամ և տէր Բարսեղ»)[158]: Դա էլ, ամենայն հավանականությամբ, շփոթության մեջ է գցել Անեցու Շարունակողին:*

*Թեև վերոգրյալ կաթողիկոսությունները (բացառությամբ Մարաշի) հակաթոռություններ չէին, սակայն Վկայասերի կենդանության ժամանակ նրանց առաջնորդների կաթողիկոս հորջորջվելն անհամատեղելի է Գրիգոր Բ.-ի՝ հրաժարականին հաջորդած ժամանակահատվածում հայրապետական իշխանության պահպանման, ժամանակի մատենագրական հուշարձաններում (հատկապես ձեռագրերի հիշատակարաններում) որպես Հայոց կաթողիկոս հանդես գալու և, որ ամենակարևորն է՝ հրաժարականից հետո որպես հայության հոգևոր գերագահ առաջնորդ ընդունվելու փաստի հետ[159]:*

---

[157] **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 195:

[158] **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 104:

[159] Մխիթար Անեցու և Ստեփանոս Օրբելյանի կազմած կաթողիկոսական գավազանացանկերում, ինչպես նաև Սամվել Անեցու ժամանակագրական աղ-

*Այսպես՝ հիշյալ ժամանակահատվածով թվագրվող ձեռագրերի բազմաթիվ հիշատակարաններում՝ նաև իր հեղինակած, Գրիգոր Վկայասերը հիշվում է որպես Հայոց կաթողիկոս*[160]*: Հովհան Ոսկեբերանի «Պատմութեան»՝ 1101 թ. իր հեղինակած թարգմանության հիշատակարանում նա գրում է. «... **յերեսուն և ի վեց ամի մերոյ աթոռակալութեանս**՝ թարգմանեցի զվարս ճգնութեան մեծ և սքանչելի առնն Աստուծոյ Յովհաննու Ոսկեբերանի»*[161]*: Այսինքն՝ Գրիգոր Վկայասերն իր աթոռակալման ոչ մի ընդհատում չի արձանագրում: 1105 թ. տակ արձանագրելով Վկայասերի մահը՝ Ուռհայեցին նրա աթոռակալումը հաշվում է քառասուն տարի. «Եւ կացեալ սորա (Գրիգոր Վկայասերի – Վ. Թ.) յաթոռ հայրապետութեանն ամս քառասուն»*[162]*:*

*Խնդրի պարզաբանումը կապված է Վկայասերի հրաժարականի իրական պատճառների բացահայտման հետ, որն աղբյուրների համերաշխ լռության պարագայում թեև դժվար է, սակայն՝ ոչ անհնարին: Նրա հրաժարականի՝ Մատթեոս Ուռհայեցու ավանդած պատճառաբանությունը տարակուսանք է հարուցում, քանզի եթե ընդունելու լինենք, որ այն հավաստի է ու միակը, ապա ստիպված կլինենք արձանագրել, որ նորընծա կաթողիկոսը հայությանը պատուհասած ծանրագույն ժամանակաշրջանում գերադասել է անհաղորդ մնալ իր ժողովրդին բաժին հասած խնդիրներին*[163]*: Սակայն դժվար*

---

յուսակում անգամ հրաժարականին հաջորդած տարիներին որպես կաթողիկոս նշվում է Գրիգոր Վկայասերը (Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 126-127. **Մխիթար Անեցի,** *Մատեան*, էջ 69. Ստեփաննոս Օրբէլեան, *Պատմութիւն*, էջ 502):

[160] Տե՛ս **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 109-110, 134-135, 138 և այլն:

[161] Նույն տեղում, էջ 136:

[162] **Մատթէոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն*, էջ 299:

[163] Իրավացի է Կարեն Մաթևոսյանը գրելով, որ *«Այս իրողությունը տարակուսանք է հարուցում այն առումով, որ պետականությունից զրկված, քաղաքականապես պառակտված եւ բյուզանդացիների հարուցած դավանաբանական խնդիրներին հանդիման գտնվող հայ ժողովրդի հոգեւոր հովիվը, փաստորեն, կաթողի-*

է կարծել, որ Վկայասերը կարող էր նման պայմաններում Հայոց եկեղեցու շահերը ստորադասել ճգնակեցությանը տրվելու իր ցանկությանը: Հարկավ, նա ժառանգել էր ոչ միայն հոր պաշտոնը, այլև նրա քաղաքական ու հայրենասիրական պատգամները[164]: Գրիգոր Մագիստրոսն անդրդվելի էր հայոց դավանական ինքնուրույնության պահպանման հարցում, ուստի հորդորում էր որդուն՝ ապագա կաթողիկոսին, «զաւանդութիւնն (նկատի ունի հայոց դավանանքը – Վ. Թ.) մեր ոչ մոռանալ երբէք եւ զփոյթ սիրոյն առ Քրիստոս Աստուած մեր եւ զլոյս ճրագի նախնւոյն մերոյ ոչ շիջուցանել, զՊարթեւին ասեմ քոյոյ հաւուն»[165]: Գրիգոր Վկայասերի աշխարհայացքի ձևավորման վրա, ըստ Ավդալբեկյանի իրավացի դիտարկման, ազդել էին «դեպի Հայաստան ծայր առած օտար նվաճողների ոտնձգությունները, Բագրատունյաց թագավորության մեջ հրաբխող ներհակ ուժերի պայքարը, հայ-բյուզանդական դիվանագիտական խաղերն ու կալվածափոխությունները, թոնդրակյան աղանդավորական շարժման լայն հորձանուտը, որպիսի պայմաններում գոյատևելու պատվարն ու հույսը կապվում էր ազգային կրթական օջախների ու ավանդների պահպանման ու ամրապնդման հետ»[166]:

Վերոգրյալն ի մի բերելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ կաթողիկոսական աթոռի շուրջ ԺԲ. դարի երկրորդ կեսին ծավալված իրադարձությունների ու դրանք ավանդող մատենագրական տեղեկությունների միջև առկա է որոշ անհամաձայնություն: Կարծում ենք՝ դա հնարավոր է բացատրել ու պատճառաբանել հետևյալ հարցադրումների պարզաբանման միջոցով: Այսպես՝ որո՞նք են.

---

*կոսի հանգամանքը պահպանում է սոսկ անվանապես»* (**Մաթևոսյան,** *Անիի մայրաքաղաք*, էջ 46):

164 Գրիգոր Մագիստրոս Պահլավունու քաղաքական կողմնորոշման մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, ինչպես նաև **Խաչերեան**, *Գրիգոր Պահլաւունի*, էջ 86-109:

165 **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք*, էջ 312:

166 **Ավդալբեկյան**, *«Յայսմաւուրք» ժողովածուները*, էջ 34:

**ա**. Ընտրությունից կարճ ժամանակ անց կաթողիկոսական իշխանությունից Գրիգոր Վկայասերի հրաժարման,

**բ**. Գեորգ Լոռեցուն հրապարակավ ոչ թե տեղապահ, այլ լիիրավ կաթողիկոս ձեռնադրելու,

**գ**. Հոնիում և Անիում կաթողիկոսական նոր աթոռների հիմնումը թույլատրելու պատճառները:

Այս հարցադրումների պատճառաբանված ու հիմնավոր պարզաբանումը հնարավոր է՝

**ա**. Պահլավունիների կաթողիկոսական ժառանգական իշխանության հաստատման,

**բ**. Անիի կաթողիկոսության հիմնադրման,

**գ**. Գրիգոր Վկայասերի՝ Կոստանդնուպոլիս այցելելու, ինչպես նաև նրա գրական ու թարգմանական գործունեության իրական նպատակների և դրանց պատճառների ու շարժառիթների քննության ու բացահայտման միջոցով:

Հայագիտության մեջ Վկայասերի հրաժարականի իրական պատճառների վերհանման խնդրում առավելապես բավարարվել են նրա՝ գրական գործունեությամբ զբաղվելու և ճգնակեցությանը տրվելու Մատթեոս Ուռհայեցու ավանդած պատճառաբանությունը մատնանշելով: Միևնույն ժամանակ հանդիպում ենք հրաժարականի հիշյալ պատճառաբանությանն արդարացիորեն հավատ չընծայող կարծիքի: Այսպես՝ Գրիգոր Մագսուտյանը, անդրադառնալով Վկայասերի հրաժարմանը, գրում է. «Թեև ասում են, որ նա այդ արել է հանուն մենակյաց կյանքի, գրական զբաղմունքների նկատմամբ ունեցած իր սիրո, այնուամենայնիվ միշտ չէ, որ հասկանալի է, թե ինչու էր նա մի շարք անգամներ պահանջ զգում վերադառնալ իր հայրապետական աթոռին և աթոռազուրկ անել իր կողմից ձեռնա-

*դրած կաթողիկոսներին»*[167]*: Նա միաժամանակ հավելում է, որ հրաժարականի իր քայլը Վկայասերը համաձայնեցրել է Գագիկ Աբասյանի և հայոց ազատանու հետ*[168]*: Գրիգոր Մագսուտյանը, սակայն, խորամուխ չի եղել հրաժարականի իրական պատճառների բացահայտմանը՝ բավարարվելով միայն վերոբերյալով:*

## Գ. Պահլավունիների կաթողիկոսական ժառանգական իշխանության հաստատումը

*Գրիգոր Լուսավորչի և Աղբիանոսների*[169] *տոհմերից զատ միայն Պահլավունիներն էին, որ կաթողիկոսական աթոռին ժառանգաբար տիրեցին երկարատև ժամանակահատված՝ այն փոխանցելով մի քանի սերնդի: Մյուս բոլոր դեպքերում կաթողիկոսական իշխանության փոխանցումն ազգակցին գերազանցապես սահմանափակվում էր մեկ ժառանգորդի աթոռակալմամբ*[170]*: Եկեղեցական պաշտոնների ժառանգաբար փոխանցումը ծայրահեղ քննադատող Ներսես Լամբրոնացին, նկատի ունենալով Պահլավունիների օրինակը, գրում է. «Եւ սկսեալ ի սրբոյն Սահակայ մինչև ի տէր Պետրոս, ոչ բնաւ վարեցին զհայրապետական աթոռն ժառանգութեամբ, այլ աստուածային ընտրութեամբ. յաղագս որոյ և ոչ եպիսկոպոսք զիւրեանց վիճակսն, և ոչ հարք վանից զվանորայս, այլ բարեպաշտ և քրիստո-*

---

167 **Մագսուտյան**, *Ընտրեալք Աստուծոյ*, էջ 73:

168 Տե՛ս նույն տեղում:

169 Աղբիանոսների տոհմից եպիսկոպոսապետական աթոռը հաջորդաբար զբաղեցրել են Շահակ Ա. Մանազկերտցին (373-377), Զավեն Ա. Մանազկերտցին (377-381) և Ասպուրակես Ա. Մանազկերտցին (381-386) (տե՛ս *Ամենայն Հայոց կաթողիկոսներ*, էջ 19, 20, 85, 198):

170 Այսպես՝ Հովհաննես Ե. Դրասխանակերտցի պատմիչ-կաթողիկոսը (899-931) հաջորդել է իր (հավանաբար մորեղբայր կամ հորեղբայր) Մաշտոց Ա. Եղիվարդեցուն, իսկ Աղթամարում աթոռակալած Թեոդորոս Ա. Ռշտունին (930-941) կաթողիկոսական իշխանությունը փոխանցել է եղբորը՝ Եղիշե Ա. Ռշտունուն (941-946) (տե՛ս նույն տեղում, էջ 80, 89):

*նէական օրինօք ընթանային»*[171]*: Կաթողիկոսական աթոռի ժառանգաբար փոխանցման անկանոնությունը որևէ կերպ արդարացնելու միտումով Պահլավունի կաթողիկոս Ներսես Շնորհալին եղբոր՝ Գրիգոր Գ.-ի կաթողիկոսական ձեռնադրությունը նկատի ունենալով, պնդում էր, որ վերջինիս ընտրությունը կատարվել է ոչ այնքան ժառանգման ավանդույթի ազդեցությամբ, որքան նրա հոգևոր-գիտական կարողությունները հաշվի առնելով. «**Ոչ յաղագս ըստ մարմնոյ ընտրութեան միայն, այլ և ի Հոգւոյն ընտրութենէ նախ ազդեցեալ.** որով յոյժ հրաշափառագոյն բանիւ և գործով քան զբազումս յաթոռակալացն գտաւ նախնեաց»*[172]*:*

*Գրիգոր Վկայասերի աթոռակալմամբ կաթողիկոսի ժառանգական իշխանությունը վերականգնվեց: Գրիգոր Բ.-ը, որի իշխանատունը Պահլավունի տոհմանունը սեփականել էր քաղաքական հեռամետ նկրտումներով*[173]*, օգտագործեց Գրիգոր Լուսավորչի հետ ազգակցություն ապահովող պահլավունիական ծագումը, ինչն առաջին հերթին դրսևորվեց կաթողիկոսական աթոռը ժառանգաբար փոխանցելու՝ դեռևս Լուսավորչի տոհմի սահմանած ավանդույթի վերականգնմամբ: Պահլավունի կաթողիկոսները հայրապետական աթոռին ժառանգաբար տիրելը պատճառաբանում էին հենց Լուսավորչի սահմանած ավանդներով:*

*Կաթողիկոսական ժառանգական իշխանության հաստատումը հայոց կենտրոնաձիգ պետության բացակայության, ինչպես նաև իշխանությունների խորը մասնատվածության պայմաններում արդյունավետ միջոց էր բացառելու կամ գոնե նվազեցնելու պայքարը հայ-*

---

[171] **Ներսես Լամբրոնացի**, *Խորհրդածութիւնք...*, էջ 535:

[172] **Ներսէս Շնորհալի**, *Թուղթք*, էջ 9:

[173] Պահլավունի տոհմանվան ծագման, մասնավորապես, դրա բաղաձական դրդապատճառների մասին հայագիտության մեջ առկա տեսակետների մասին մանրամասն տե՛ս **Վարդանյան**, *Պահլավունիները*, էջ 12-18. **Խաչերեան**, *Գրիգոր Պահլաւունի*, էջ 19-42. **Բաղդարյան**, *Պահլավունիներ*, էջ 58-77:

*րապետական աթոռի շուրջ, ինչն էլ իր հերթին կարևոր գործոն էր կաթողիկոսության գործունեության անընդհատությունն ապահովելու տեսանկյունից*[174]*։ Վերոգրյալի հաշվառմամբ՝ Գրիգոր Վկայասերի հրաժարականի՝ ճգնակեցությամբ զբաղվելու ձգտմամբ պատճառաբանվող հիմնավորումը համահունչ չէ կաթողիկոսական ժառանգական իշխանության հաստատմանը միտված նրա հետևողական ձեռնարկումներին։ Մասնավոր ուշադրության է արժանի այն փաստը, որ Պահլավունիները կաթողիկոսական աթոռի նկատմամբ իշխանական նկրտումներ դրսևորել են մինչ Վկայասերի ընտրությունը։ Կարեն Մաթևոսյանը տարաբնույթ սկզբնաղբյուրների համադիր քննությամբ վեր է հանել Գրիգոր Մագիստրոսի հետևողական ձեռնարկումները կաթողիկոսական իշխանությունը Պահլավունիների ձեռքում կենտրոնացնելու ուղղությամբ՝ եզրակացնելով, որ «Գրիգոր Մագիստրոսն այնքան հիմնավոր հող էր նախապատրաստել Վահրամի կաթողիկոսացման համար, որ նրան այլ բան չէր մնում, քան անգամ հոր մահից շուրջ 10 տարի անց ենթարկվել նրա կամքին, քանի որ այն արդեն դարձել էր նաև հանրային պահանջ»*[175]*։ Կաթողիկոսական աթոռի նկատմամբ Պահլավունիների իշխանական հավակնությունների պերճախոս հիմնավորումներ են ժամանակի վախճանաբանական կանխատեսումները, որոնցից Կարեն Մաթևոսյանն առանձնացրել է Սահակ Պարթևի տեսիլը, ըստ որի՝ Արշակունյաց թագավորության և Գրիգոր Լուսավորչի տոհմի հայրապետական իշխանությունը պետք է դադարեին, սակայն որոշ ժամանակ անց դրանք նորից պետք է վերածնվեին, և Լուսավորչի տոհմակիցները կրկին պետք է բազմեին կաթողիկոսական գահին. «... դար-*

---

[174] Թագավորական իշխանությունում տիրող խառնակ վիճակից օգտվելով է, որ Պետրոս Գետադարձը միայնակ որոշում է խաչիկ Անեցուն կարգել իր փոխանորդ (տե՛ս **Մաթևոսյան Կ.**, *Անին մայրաքաղաք*, էջ 40)։
[175] **Մաթևոսյան**, *Անիի ազնվականության պատմությունից*, էջ 80։

*ձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց, եւ նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւեղէ սրբոյն Գրիգորի»*[176]*: Հետաքրքրական է, որ տեսիլը կանխատեսում էր Լուսավորչի տոհմից ոչ թե մեկ, այլ մի քանի կաթողիկոսների աթոռակալումը, այսինքն՝ հայրապետական ժառանգական իշխանության վերահաստատումը. «Եւ մագաղաթն հաստուածաձեւ, որ ցուցաւ քեզ գրեալ ի սկզբանն կարգս ինչ ոսկեղէն գրով՝ զձեռնադրութիւն* ***արանց սրբոց*** *եցոյց քեզ շնորհք Հոգւոյն սրբոյն,* ***որք*** *ի զաւակէ երանելւոյն Գրիգորի յաջորդեսցեն արժանապէս զաթոռ քահանայապետութեան»*[177]*, - կարդում ենք տեսիլի մեկնության մեջ: Առավել հետաքրքրական է այն, որ Գրիգոր Վկայասերն իր հայրապետական ընտրությունը պայմանավորում էր հենց սահակյան տեսիլով: Պատմելով իր նշանավոր ուղևորության մասին՝ նա գրում է. «... ես Գրիգորիս, որդի Գրիգորի Պալհաւունոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռաց հաւոյն իմոյ սրբոյն Գրիգորի,* ***եւ ըստ յառաջատես տեսլեան սրբոյն Սահակայ****»*[178]*:*

*Պահլավունիների իշխանական հավակնությունները սրբագործվում էին ինչպես Գրիգոր Լուսավորչի, այնպես էլ Արշակունիների հետ փաստվող ազգակցությամբ. «... ես (Գրի)գոր՝ որդի Գրիգորի Մագիստրոսի ի Հայկազունւոյ ըստ աշխարհի Պարթեւ,* ***ըստ ժառանգութեան Պահլաւիկ, ըստ ցեղընտիր լինելոյ յազգէ Արշակունի,*** *որ և ողորմութեամբն Աստուծոյ կոչեցա ի դիտապետութիւն Անքանազեանս և բնիկ աթոռ հայրապետութեան* ***նախնեացն իմոց*** *(նկատի ունի Գրիգոր Լուսավորչի տոհմը — Վ. Թ.) ...»*[179]*, - արձանա-*

---

176 **Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն*, էջ 2232. **Մաթևոսյան**, *Անիի ազնվականության պատմությունից*, էջ 76-79:
177 **Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն*, էջ 2231:
178 **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 109:
179 Նույն տեղում, էջ 135-136: Պահլավունիների ու հատկապես Վկայասերի արշակունիական ծագման՝ ԺԱ. և հետագա դարերով թվագրվող արձանագրումներն անտարակույս ազդված էին Գրիգոր Լուսավորչի ծագման խորենա-

գրում էր Վկայասերը: Պատահական չէ, որ հենց այդ շրջանում են հաճախադեպ դառնում Լուսավորչի տոհմի հետ Պահլավունիների ազգակցությունը հավաստող վկայությունները, որոնց շարքում առավել արժեքավոր են հենց Գրիգոր Վկայասերի ու Պահլավունի այլ կաթողիկոսների հեղինակածները. «… ես Գրիգորիս, որդի Գրիգորի Պալհաւունոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ **արժանացեալ աթոռաց հաւոյն իմոյ սրբոյն Գրիգորի** (Գրիգոր Լուսավորչի – Վ. Թ.)»[180]: Գրիգոր Լուսավորիչ-Պահլավունիներ ազգակցական կապը շեշտադրվեց նաև Վկայասերի ազգական հաջորդ կաթողիկոսների կողմից: Այսպես՝ Ներսես Շնորհալին 1137 թվակիր մի հիշատակարանում, վկայակոչելով իր եղբորը՝ կաթողիկոս Գրիգոր Գ. Պահլավունուն, գրում է. «… որ ոչ ըստ արժանոյն կոչեցեալ Ներսէս ի գերահռչակ եւ ի վսեմական տեառնէ իմմէ, եւ եղբաւրէ Գրիգորիս, **գոլով նախնոյն մերոյ Լուսաւորիչի արեանառու աթոռակալի անուանակիր**»[181]: Պահլավունիների հետ միայն մայրական գծով ազգակից Ներսես Շնորհալին (նա հայրական գծով սերում էր Ապիրատյան նշանավոր տոհմից[182]) իր Վիպասանության մեջ, հաշվի առնելով հայրապետական աթոռի նկատմամբ իշխանական հավակնությունների տեսանկյունից պահլավունիական ծագման կարևորությունը, գիտակցաբար շեշտադրում է իր հոր՝ Ապիրատի մայրական գծով ծագումը. «Զմեր ըստ մարմնոյ հայրն բարձեալ // **ԶՊահլաւունին**

---

ցիական բանաձևումից. *«Սա (Գրիգոր Լուսավորիչը – Վ. Թ.), որպէս ամենեցուն յայտնի է, աշխարհաւ Պարթեւ, գաւառաւ Պահլաւ, յազգէ թագաւորեցելոյ զատուցեալ Արշակունի, ի ցեղէ Սուրենական»* (**Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն*, էջ 1996):

[180] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 109:

[181] Նույն տեղում, էջ 160: Ներսես Շնորհալու Վիպասանության մեջ բազմիցս շեշտադրվում է Պահլավունիների արշակունիական ծագումը:

[182] Ապիրատյանների մասին մանրամասն տե՛ս **Մաթևոսյան,** *Գրիգոր Ապիրատ*, էջ 101-137:

*ազգաւ սերեալ // ... Իշխանութեամբ շքեղացեալ, // Զնախնական անուն առեալ, // Որ Ապիրատն էր յորջորջեալ, // Թոռն մեծի Գրիգորի լեալ, // Որ Մագիստրոս մականուանեալ»*[183]*: Հավելենք, որ Գրիգոր Լուսավորչի հետ Պահլավունիների ազգակցական կապն այդ տոհմի ներկայացուցիչներից զատ արձանագրում էին ժամանակի այլ հեղինակներ պատմագրական տարբեր հուշարձաններում: Բերենք դրանցից մեկը. «Յորում ժամանակի հանդիպի թիւ թուականիս Հայոց ՇԽԷ (1098), ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Գրիգորիսի, **ի զարմէ Սրբոյն Գրիգորի**»*[184]*:*

*Ուշագրավ է այն փաստը, որ մինչ այդ աթոռակալած Հայոց կաթողիկոսներից միայն Վկայասերն է որպես հոգևորական ընտրել Գրիգոր անունը. «Խաւսք Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, որ նախ Վահրամ առձայնեալ և յորժամ կաթողիկոս ձեռնադրեցաւ՝ **Գրիգորիս կոչեցաւ յանուն նախ[ն]ոյն իւրոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին,** ասացե[ա]լ վասն պատուիրանաց նախահարցն», «Զնա (Վկայասերին – Վ. Թ.) առեալ հաւանութեամբ ամենեցուն օրհնեցին և եդին յաթոռն հայրապետական կաթուղիկոս Հայոց և **կոչեցին զՎահրամն յանուն սուրբ Լուսաւորչին՝ Գրիգոր**»*[185]*, - կարդում ենք ԺԱ.-ԺԲ. դարերով թվագրվող հիշատակարանային վկայություններում: Վկայասերի՝ երկրորդ Գրիգոր Լուսավորիչ լինելը հատուկ ընդգծել է նաև Մատթեոս Ուռհայեցին. «Զսա յայտնեաց Հոգին Սուրբ նստել յաթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի նախնւոյն իւրոյ, վասն որոյ զսա տեսանէին զարդարեալ հեզութեամբ և ամենայն արդարութեամբ՝ **երկ-***

---

183 **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 128-129:

184 **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 117. **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 69-70 և այլն:

185 **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 273-274, 420: Հետաքրքրական է, որ ԺԲ. դարի երկրորդ կեսից մինչև ԺԳ. դարի սկիզբն աթոռակալած Պահլավունի վեց կաթողիկոսներից հինգի անունը եղել է Գրիգոր:

*բորդս* ***Գրիգոր*** *անուանի երևեալ»*[186]*: Այս պայմաններում միանգամայն սպասելի էր նաև որոշ ընդհանրություն Լուսավորչի ու Վկայասերի հայրապետական ընթացքի միջև, ինչի արձանագրմանը լավագույնս ծառայեցվեց ժամանակի մատենագրությունը: Խոսքը վերաբերում է ձեռնադրությունից կարճ ժամանակ անց հայրապետական աթոռից Վկայասերի հրաժարվելուն ու ճգնակյաց դառնալուն: Վկայասերի այս քայլը հար և նման է Գրիգոր Լուսավորչի՝ եպիսկոպոսապետական աթոռից հրաժարվելուն ու ճգնակեցությանը տրվելուն, ինչի մասին Պատմահայրը գրում է. «Յետ լուսաւորելոյ զամենայն Հայս լուսով աստուածգիտութեան, և ջնջելոյ զխաւար կռապաշտութեանն, եւ լնլոյ զամենայն կողմանս եպիսկոպոսաւք և վարդապետաւք՝ սիրեաց զլերինս և զամայութիւն և զհանդարտութեամբ մտաց յինքեան կեալ, որպէս զի խաւսեսցի ընդ Աստուծոյ անզբաղապէս.* ***փոխանորդ իւր թողլով զորդի իւր զԱրիստակէս, ինքն կալով ի գաւառին Դարանաղեաց, ի լերինն Մանեայ այրս»***[187]*: Հայրապետական փոխանորդ նշանակելու ու ճգնակեցությանը տրվելու Գրիգոր Լուսավորչի ձեռնարկումները Մովսես Խորենացու և Ագաթանգեղոսի երկերում ներկայացված են փոքր-ինչ տարբեր: Այսպես՝ ըստ Ագաթանգեղոսի՝ ճգնակեցությունից առաջ Գրիգոր Լուսավորիչը «արքունի դրան վերակացու» է կարգում Աղբիանոսին. «Եւ զԱղբիանոս զայր ճշմարիտ եւ աստուածասէր՝ վերակացու թողոյր արքունական դրան բանակին»*[188]*: Այս մասին առավել մանրամասն ու որոշակի են Ագաթանգեղոսի երկի հունարեն և հին վրացերեն խմբագրությունները: Առաջինի հաղորդմամբ՝ Գրիգոր Լուսավորիչն Աղբիանոսին (աղբյուրում՝ Աղբիոսին) նշանակել է Մամիկոնյանների իշխանության, այսինքն՝ սպարապետական տան եպիսկոպոս: Հաշվի առնե-*

[186] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 155-156:
[187] **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն*, էջ 1993-1994:
[188] **Ագաթանգեղոս**, *Պատմութիւն*, էջ 1708:

*լով, որ սպարապետը մշտապես ուղեկցել է թագավորին, Լուսավորիչը «հրամայեց, որ Աղբիոսը միշտ թագավորի մոտ լինի և իր, [Գրիգորի] տեղը գրավի»*[189]*: Հաջորդիվ աղբյուրում կրկին նշվում է, որ «Սուրբ Գրիգորը ամեն ինչ կատարելուց հետո, սրբազան Աղբիոսին թողեց իրեն պատկանող վայրում* ***տեղապահելու****, իսկ ինքն ամբողջ երկրով մեկ եպիսկոպոսներ էր հաստատում...»*[190]*: Նույն վկայությունը, փոքր-ինչ տարբեր, առկա է նաև հին վրացերեն խմբագրության մեջ, որտեղ կարդում ենք. «Իսկ Աղբիոսին, որը գերազանցում էր բոլորին ինչպես գործունեությամբ ու արժանավորությամբ, այնպես էլ հանգստությամբ ու համեստությամբ, Մեծն Գրիգորը, երբ ինքը բարձրանում էր Հայաստանի բարձր լեռը՝ սովորության համաձայն անապատում ճգնելու, կամեցավ ու թողեց, որպեսզի իր փոխարեն տիրության վերակացությամբ կատարի այն ամենը, ինչ նրանից տեսել էր: Իսկ ինքն անձամբ հեռացավ այնտեղից ու գնաց»*[191]*: Այս քաղվածքներից արդարացիորեն տպավորություն է ստեղծվում, թե Աղբիանոսը կարգվել է որպես Լուսավորչի փոխանորդ: Սակայն իրականում նա եղել է սոսկ տեղապահ, ինչպես օրինակ՝ խադ եպիսկոպոսը: Ինչպես պարզվում է Ագաթանգեղոսի հայերեն բնագրի՝ Լուսավորչի որդի Արիստակեսին հայրապետական փոխանորդ կարգելու դրվագից և այդ իրողության՝ միջնադարի հայ պատմագրության, մասնավորապես Անանիա Մոկացի կաթողիկոսի տված մեկնաբանությունից, Աղբիանոսին եպիսկոպոսապետի փոխանորդ համարելն աներկբա չէ: Ագաթանգեղոսի հայերեն բնագրում հստակ տարբերակված է Աղբիանոսի՝ միայն «արքունի դրան եպիսկոպոս»,*

---

189 **Ագաթանգեղոս**, *Վարք*, էջ 178: Ագաթանգեղոսի երկի՝ Իսպանիայի Էսքուրիալ մատենադարանում պահվող հունարեն խմբագրությունը բարձրարժեք ուսումնասիրությամբ հրատարակել է Ժերար Գարիտը տե՛ս **Garitt G.**, *Documents pour l’étude du livre d’Agathange*, Vatican, 1946:

190 Նույն տեղում:

191 **Մուրադյան**, *Ագաթանգեղոս*, էջ 215:

*իսկ Արիստակեսի՝ փոխանորդ կարգվելը: Ի տարբերություն Աղբիանոսի՝ Արիստակեսին պատմիչը հիշում է հենց այդ՝ փոխանորդ տիտղոսով. «**Ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր**»[192]: Այս երկի հայերեն ու հունարեն տարբերակներից պարզվում է, որ Աղբիանոսը թագավորին ուղեկցել է ոչ թե որպես եպիսկոպոսապետական փոխանորդ, այլ իբրև Մամիկոնյանների իշխանության եպիսկոպոս, ասել է թե՝ «վերակացու ... արքունական դրան բանակին»: Ագաթանգեղոսը հիշում է, որ որդուն փոխանորդ կարգելիս Գրիգոր Լուսավորիչն առաջնորդվել է աստվածաշնչյան «Փոխանակ հարց եղիցին որդիք կալ իշխան ի վերայ երկրի»[193] սկզբունքով, ինչն անհնար է դարձնում Աղբիանոսին իրեն հաջորդող կարգելը: Հայոց եկեղեցու նորահաստատ նվիրապետական համակարգում Աղբիանոսի զբաղեցրած դիրքի ուշագրավ պարզաբանում է կատարել Անանիա Մոկացին. հակադարձելով Խոսրով Անձևացու համապատասխան պնդմանը՝ նա գրում է. «Ուսի՛ր, ոչ որպէս քեզ թուի, հայրապետն վասն Աւան քաղաքին կամ արքայական դրան եպիսկոպոս գոլով՝ այսքանաւք միայն առաւելուլ գահերիցութեամբ, ապա թէ ոչ, պարտ էր ի տեսլեանն սուրբ Լուսաւորչին զՄիապետութիւնն ի վերայ Ալբիանոսի տեսանել, զի նա կարգեցաւ վերակացու արքայական դրան բանակին, որում եւ ըստ քեզ* ***աւելորդ էր քան զԱլբիանոս այլում կարաւտանել եպիսկոպոսի, այսինքն՝ Ռստագիսի*** *կամ այլ ումեք»*[194]*: Մոկացին հաստատապես պնդում է, որ «արքունի դրան եպիսկոպոս» կարգվելը տվյալ դեպքում չէր հատկանշում Աղբիանոսի գահերեցությունը, ասել է թե՝ փոխանորդական կարգավիճակը, քանզի այն վերապահված էր Արիստակեսին: Այսինքն՝ եթե Աղբիա-*

[192] **Ագաթանգեղոս**, *Պատմութիւն*, էջ 1717:
[193] Սաղմոս ԽԴ. 17. **Ագաթանգեղոս**, *Պատմութիւն*, էջ 1717:
[194] **Անանիա Մոկացի**, *Յաղագս որ ասեն, թէ մի պատիւ հայրապետին եւ եպիսկոպոսին*, էջ 286:

նոսն արդեն իսկ փոխանորդ էր, ինչու եկեղեցական այդ պաշտոնը հանձնվեց Արիստակեսին։ Հավելենք, սակայն, որ Ագաթանգեղոսի (հատկապես՝ հունարեն խմբագրության) և Մովսես Խորենացու երկերում առկա այս տարակարծությունը մեզ զբաղեցնող խնդրի տեսանկյունից ունի ածանցյալ նշանակություն, քանզի Գրիգոր Վկայասերը Լուսավորչի ձեռնարկումները (կաթողիկոսական իշխանությունից հրաժարվելու և ճգնակեցությանը տրվելու) կրկնելիս նախ և առաջ հիմնվել է միջնադարի հայ պատմագրական ավանդույթի վրա, որը, որպես Լուսավորչի փոխանորդ՝ ճանաչել է միայն Արիստակեսին՝ հետևողականորեն մոռացության մատնելով Աղբիանոսի, ըստ Ագաթանգեղոսի երկի հունարեն խմբագրության, Լուսավորչի փոխարեն առժամանակ տեղապահելը։

Վերադառնալով Գրիգոր Լուսավորչի և Վկայասերի ձեռնարկումների հաջորդ ընդհանրությանը՝ նշենք, որ հոգևոր երկու առաջնորդները ճգնությանը տրվում են Հայոց եկեղեցու համար բախտորոշ իրադարձություններից հետո. Գրիգոր Լուսավորչի դեպքում դա քրիստոնեության պետականորեն ընդունումն էր ու եկեղեցական իշխանության սաղմնավորումը, իսկ Վկայասերի պարագայում՝ կաթողիկոսական իշխանության վերականգնումը[195], որը պակաս կարևոր չէր՝ հաշվի առնելով հայերին Քաղկեդոնի դավանանքը պարտադրելու բյուզանդական իշխանությունների որոշումը, որն առավել դյուրին կիրագործվեր կաթողիկոսական իշխանության բացակայության պայմաններում։ Հայագիտության մեջ, ինչպես նշվեց, Վկայասերի հրաժարականը պատճառաբանվել է Գագիկ Կարսեցու մահվամբ, Պահլավունիների հետ Գագիկ Անեցու թշնամանքով, ինչ-

[195] *«... սա (Գրիգոր Վկայասէրը – Վ. Թ.) պայծառացոյ զկարգ կրօնաւորութեանն յազգս Հայոց, և սովաւ նորոգեցաւ աթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի ի Հայաստան աշխարհս»*, - գրում է Մատթեոս Ուռհայեցին (**Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 156)։

*պես նաև միայնակեցությանը տրվելու ու գիտական գործունեությամբ զբաղվելու ձգտմամբ: Կարծում ենք՝ կաթողիկոսական իշխանությունից Գրիգոր Վկայասերի հրաժարման դրդապատճառների թվում հանիրավի անտեսվել է Գրիգոր Լուսավորչի գործունեության որոշ դրվագներ ամեն կերպ կրկնօրինակելու նրա փորձը: Դա, հաշվի առնելով կաթողիկոսական իշխանությանը ժառանգաբար տիրելու Պահլավունիների ու հատկապես Վկայասերի նպատակադրումը, միտված էր սրբագործելու Լուսավորչի տոհմի ու այդպիսով նաև կաթողիկոսական իշխանության միակ օրինական ժառանգորդի նրա հավակնությունը: Եթե Ուռհայեցին հակված է կարծել, որ Վկայասերը ճգնակյացի ցուպն ընտրելով նմանվեց Եղիա մարգարեին, Հովհաննես Մկրտչին և Սուրբ Անտոնին[196], ապա Սմբատ Սպարապետը համոզված է, որ «Ի սոյն ժամանակի (1067 թ. – Վ. Թ.) սուրբ հայրապետն, որդի Գրիգորի Մագիստրոսի, կամեցաւ ի բաց կալ ի հայրապետութենէ ողջունելով զվարս միանձնաւորութեան, **յիշելով զնախնոյն իւրոյ զվարս, զմեծին Գրիգորի Լուսաւորչին, որ զկնի այնչափ չարչարանաց ի միայնաստանս ճգնէր»**[197]: Այն, որ ճգնությունը գերադասելով՝ Վկայասերը ձգտում էր կրկնել Գրիգոր Լուսավորչին, հստակ մատնանշում է նրա մահախոսականի հեղինակ Վարդան Հայկազնը. «Ապա զնախնոյն զմտաւ ածէր, || ԶԼուսաւորչին հանդէս յիշէր: || Որ զամենայն կիրս աւարտէր, || Եւ յանապատսըն դադարէր. || Նոյնպէս եւ սա զայն նախանձէր || Ու ի մէնաստանսըն յաւժարէր»[198]:*

---

[196] Տե՛ս նույն տեղում, էջ 190:

[197] **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 69-70: *«... թուականիս Հայոց Շխէ (1098 - Վ. Թ.) ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Գրիգորիսի ի զարմէ Ս. Գրիգորի՝ ամենայնիւ հարցն նմանեալ բարեկարգութեամբ»* (**Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 259, 420):

[198] **Վարդան Հայկազն**, *Տաղ գերեզմանական*, էջ 776:

*Գրիգոր Լուսավորչի ու Վկայասերի գործունեության հաջորդ՝ քննվող խնդրի տեսանկյունից, թերևս, առանցքային կարևորություն ունեցող համընկնումը ճգնակեցությունից առաջ կաթողիկոսական փոխանորդ կարգելն է։ Գրիգոր Լուսավորիչն իր փոխանորդ էր նշանակել որդուն՝ Արիստակեսին, իսկ Վկայասերը՝ նախ իր վարդապետ Գեորգ Լոռեցուն, ապա՝ քեռորդի Բարսեղ Անեցուն։ Թե՛ Գրիգոր Լուսավորչի և թե՛ Վկայասերի պարագայում ճգնությամբ զբաղվելը հայրապետական իշխանությունից վերջնական հրաժարում չէր։ Հետաքրքրական է, որ որպես լիիրավ հովվապետ՝ Արիստակեսը քահանայապետական աթոռը զբաղեցրեց, երբ Լուսավորիչը «ոչ եւս երեւեցաւ յայտնել ումեք»*[199]*։ Վկայասերի՝ Գեորգ Լոռեցուն հաջորդած փոխանորդ Բարսեղ Անեցին ևս հայրապետական աթոռը, որպես միանձնյա կաթողիկոս, զբաղեցրեց այդպես էլ իր իշխանությունը կանոնապես չվերականգնած, սակայն դրանով հանդերձ, միակ գերագահ կաթողիկոս Գրիգոր Բ.-ի մահվանից հետո։*

*Թեև Մատթեոս Ուռհայեցին նշում է, որ հրաժարականից հետո Վկայասերը սկսեց վարել խստակրոն կյանք և ապրել միայն չոր ու ցամաք սննդով, սակայն առավել համոզիչ են այն վկայությունները, ըստ որոնց, նա «շրջէր հետիոտս յամենայն տեղիս և քարոզէր ըստ նմանութեան առաքելոցն Քրիստոսի»*[200]*։ Ճգնակյացի կյանք վարելով հանդերձ՝ Գրիգոր Լուսավորիչը ևս ժամանակ առ ժամանակ դուրս էր գալիս քարայրից և շրջում ժողովրդի մեջ՝ քրիստոնեական վարդապետությունը քարոզելով. «Այլ թէպէտ եւ բնակեցաւ անդ, սակայն ընդ ժամանակս ժամանակս յայտնեալ շրջէր ընդ աշխարհս, հաստատէր ի հաւատս»*[201]*։ Վկայասերը նույնպես «ոչ ի միում վայրի*

---

[199] **Մովսես Խորենացի**, *Պատմութիւն*, էջ 1994։

[200] **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 420. *Հայսմավուրք*, էջ ՉՀԵ (675)։

[201] **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն*, էջ 1994. Հմմտ. **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 130։

բնակեալ», - գրում է Ներսես Շնորհալին,- «Պանդխտաբար յերկիր շրջեալ, || Զքաղցեալ հոգիսն կերակրեալ...|| Ուր ազգ Հայոց բազում իջեալ, || Անդ զնոսին լուսաւորեալ, || **Եւ ի հաւատս հաստատեալ»**[202]։ Եթե Գրիգոր Լուսավորչի դեպքում «**հաստատէր ի հաւատս**» արտահայտությամբ պետք է հասկանալ Հայաստանում քրիստոնեություն քարոզելն ու նորահաստատ եկեղեցու հիմքերն ամրակայելը, ապա Գրիգոր Վկայասերի պարագայում դա այլ բան չէր, քան Բյուզանդական կայսրության ազդեցության տակ գտնվող հայկական ու հայերով բնակեցվող երկրամասերում Հայոց եկեղեցու դիրքերի ամրապնդումը և ինքնուրույնության պահպանումը։

Պահլավունի կաթողիկոսները, ինչպես վերը նշվեց, հայրապետական աթոռը ժառանգելու ոչ կանոնական իրողությունն արդարացնելու միտումով հաճախ են հենվել Լուսավորչի տոհմի օրինակի վրա։ Թերևս դա նկատի ունի Ներսես Լամբրոնացին՝ գրելով. «Քանզի ի Քրիստոսէ և յիւրոցն բաւականապէս ուսաք զառաջադիր խորհուրդս, ոչ ունելոյ զհոգևոր իշխանութիւն ժառանգաւորութեան, այսուհետև կարօտիմք ուսանել զնոյն և ի մերոց հարցն առաջնոց՝ որք գնացին զկնի Փրկչին մերոյ, և մեզ զնոյն շաւիղս ցուցին։ Զի թէ ի սոցանէ կարեմք տիրապէս հաստատել զկամս բանիս, ամենևին յամօթ եղեալ կշտամբին որք ստերիւրեն զճշմարտութիւնն. **մանաւանդ զի և բազումք ի սոցանէ զնիւթ գործոյս ունել վկայեն ասելով՝ թէ ի սրբոյն Գրիգորէ որդիքն և ցեղք նոցին զաթոռն ժառանգեցին. և զի հայրապետական տունն այսօր այսու անուամբ և գործով ճոխանայ»**[203]։ Պահլավունիների համար Լուսավորչի տոհմի բացարձակ ու անառարկելի հեղինակությունը լավագույն պատվարն էր այս մեղադրանքի դեմ։

---

[202] **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 117-118։
[203] **Ներսես Լամբրոնացի**, *Խորհրդածութիւնք...*, էջ 532-533։

*Ուշագրավ է, որ աստիճանաբար արմատավորվում էր կաթողիկոսի ընտրության ժամանակ հավանական թեկնածուներին առաջին հերթին նախորդ աթոռակալի ազգակիցների մեջ փնտրելու միտումը: Հայտնի է, որ Պետրոս Գետադարձը դեռևս կենդանության օրոք փոխանորդ էր կարգել իր քրոջ որդի Խաչիկ Անեցուն, որն էլ նրա մահվանից հետո բազմեց կաթողիկոսի աթոռին: Կաթողիկոսական իշխանության փոխանցման այս սկզբունքի ազդեցությամբ Խաչիկ Անեցուց հետո կաթողիկոսի հավանական թեկնածու պետք է համարել Պետրոս Գետադարձի մյուս քեռորդուն՝ Հոնիի կաթողիկոսության առաջին աթոռակալ Սարգսին: Այս դեպքում արդեն նախորդ երկու կաթողիկոսների հետ վերջինիս ազգակցական կապը ծանրակշիռ գործոն էր հայրապետական աթոռի ժառանգման տեսանկյունից: Ուշագրավ է, որ Պահլավունի կաթողիկոս Ներսես Շնորհալին իր «Վիպասանութեան» մեջ, առանց Պետրոս Գետադարձի և նրա հաջորդ Խաչիկ Անեցու անուններն արձանագրելու, ինչպես նաև նկատի ունենալով վերջինիս մահվանից հետո նոր կաթողիկոս ընտրելու՝ բյուզանդական իշխանությունների սահմանած արգելքը, գրում է. «Հայոց հովուացն վախճանեալ || Տուն Պետրոսեան ի բաց բարձեալ[204], || Որպէս Հեղեայն այն ծերացեալ, || Որով Յունաց ընդ մեզ չարեալ, || Այլում լինել թոյլ ոչ տուեալ»[205]: Հետաքրքրական է, որ Ներսես Շնորհալու «Վարք»-ի հեղինակը, ևս ոչ պատահական, շրջանցել է Խաչիկ Բ. Անեցու աթոռակալումը. «ընդ այն ժամանակս*

---

204 Մանիկ Մկրտչյանը, ծանոթագրելով *«Տուն Պետրոսեան ի բաց բարձեալ»* հատվածը, գրում է, որ Շնորհալին նկատի է ունեցել Հիսուս Քրիստոսի տասներկու աշակերտներից Պետրոսին (տե՛ս Ներսէս Շնորհալի, Վիպասանութիւն, էջ 151, ծանոթ. 71): Սակայն մեջբերված հատվածի նախորդ և հաջորդ տողերը հստակ հուշում են, որ խոսքը վերաբերում է Պետրոս Գետադարձին և նրա հաջորդ Խաչիկ Բ. Անեցուն: Ի դեպ, «Պետրոսեանք» տոհմանունը հանդիպում ենք միջնադարյան այլ սկզբնաղբյուրներում ևս (**Յովսէփեան,** *Յիշատակարանք,* սյուն. 419-422 և հտ.):

205 **Ներսէս Շնորհալի,** *Վիպասանութիւն,* էջ 114:

*(Պետրոս Գետադարձի մահվանից հետո – Վ. Թ.) բարձեալ լինէին հովուապետքն Հայոց յաշխարհէ, և պակասեալ տունն տեառն Պետրոսի յարժանաւոր ժառանգաւորէ... և մնայր տունս Թորգոմեան զեւթն ամ առանց հայրապետի»*[206] արձանագրելով փաստորեն, որ Պետրոս Գետադարձի մահվանից հետո նրա տոհմից որևէ ժառանգորդ այլևս չկար: Այսինքն՝ կաթողիկոսի ժառանգական իշխանության կողմնակից Ներսես Շնորհալին ու նրա վարքագիրը ջանում են ցույց տալ, որ Գրիգոր Վկայասերի ընտրությամբ Պետրոս Գետադարձի տոհմի իրավունքները չէին խախտվել, քանզի նրա շառավիղներից այլևս «արժանավոր ժառանգներ չկային»:

Բարսեղ Անեցուն Գրիգոր Վկայասերի թողած պատգամ-կտակի համաձայն՝ վերջինիս մահվանից հետո հայրապետական աթոռն անցնելու էր իր քրոջ թոռին՝ Ծովք դղյակի տեր Ապիրատ իշխանի որդի Գրիգորին (ապագա կաթողիկոս Գրիգոր Գ.-ին): Հետևելով Վկայասերի օրինակին՝ վերջինս ևս թողել էր այդպիսի մի կտակ՝ պատգամելով կաթողիկոսական իշխանությունը հանձնել իր՝ նույնպես Գրիգոր անվամբ եղբորորդուն (ապագա կաթողիկոս Գրիգոր Դ. Տղային (1173–1193)). «Ի հրամանէ գերերջանիկ Տեառն Գրիգորիսի (Գրիգոր Գ.-ի) և յանդարձ կտակէն եհաս վիճակ հայրապետական եղբաւրորդւոյ նորին Տեառն Գրիգորի մականու Տղայ կոչեցելոյ»*[207]: Եղբոր կտակին հետևելով՝ Ներսես Շնորհալին ևս վերահաստատում է իր եղբորորդու՝ հայրապետական աթոռի ժառանգման իրավունքը. «Ի թուին ՈԻԲ (622= 1173) սուրբ լուսաւորիչ հայրապետն տէր Ներսէս... գրէր ի կտակն իւր և պատուէր տայր նստուցանել յաթոռ նորա զորդի եղբօրն իւրոյ երիցագունի Վասլի, զարքեպիսկոպոսն տէր Գրիգոր, մականուն Տղայ»*[208]:

---

[206] *Սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 16:
[207] **Արվանձտեանց**, *Թորոս Աղբար*, էջ 116:
[208] **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 190-191:

*Պահլավունիների՝ հայրապետական աթոռին երկար ժամանակով ժառանգաբար տիրելը, ինչպես արդեն նշվեց, հնարավոր դարձավ հայ աշխարհիկ կենտրոնաձիգ իշխանության բացակայության պայմաններում: Դա անուղղակի փաստվում է Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումից հետո Լևոն Ա.-ի (1187-1219) նախաձեռնությամբ Պահլավունի կաթողիկոսների ժառանգական 138-ամյա իշխանության դադարեցմամբ: Ինչպես հայտնի է, Գրիգոր Զ. Ապիրատի (1194-1203) հաջորդ Հովհաննես Զ. Սսեցին Պահլավունյաց տոհմից չէր:*

## Դ. Անիի կաթողիկոսության հիմնումը

*Ինչպես արդեն նշել ենք, բյուզանդական իշխանությունները խստիվ արգելել էին Հայոց կաթողիկոսի վերադարձն Անի*[209]*: «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորեսեանցն եւ Պետրոսեանցն» վարքի հաղորդմամբ՝ բյուզանդական արքունիքը Պետրոս Գետադարձին Կոստանդնուպոլսում առժամանակ պահելուց հետո իբր թույլատրել է վերադառնալ Անի, սակայն հայրապետը հրաժարվել է՝ իր որոշումը պատճառաբանելով Հայաստանում թագավորական իշխանության չգոյությամբ. «Եւ կեցեալ անդ սուրբ հայրապետն մեր ի Կոստանդինուպօլիս ամս Դ. (4), եւ օր ըստ օրէ յաւելոյր պատիւ կաթողիկոսին ի կայսերէն: Եւ ապա յետ Դ. (4) ամացն մեծարանօք և պատուով արձակեաց զնա երթալ յաթոռն իւր յԱնի: Եւ նա ոչ ժամանեաց գալ ի յԱնի, զի անտիրացեալ էր ի թագաւորաց: Այլ եկեալ ի Սեբաստիայ և մնաց անդէն առ որդիսն Սենեքարիմայ Արծրունոյ»*[210]*:*

---

[209] Հայոց կաթողիկոսության անիական շրջանի պատմության մանրամասն քննությունը տե՛ս **Մարևոսյան Կ.**, *Անի*, էջ 23-40. Նույնի՝ *Անին մայրաքաղաք*, էջ 9-57:

[210] **Յովսէփեան,** *Յիշատակարանք*, սյուն. 419: Հայսմավուրքի կոստանդնուպոլսյան հրատարակության (1730 թ.) մեջ նշված է, որ Պետրոս Գետադարձը

*Սա հակասում է Արիստակես Լաստիվերցու վկայությանն առ այն, որ բյուզանդական իշխանությունները կաթողիկոսին արգելել էին վերադառնալ Անի: Նման բարյացակամ վերաբերմունքը քիչ հավանական է թեկուզ այն պատճառով, որ Պետրոս Գետադարձի մահվանից հետո կայսերական իշխանություններն անլուր հալածանքներ հարուցեցին Խաչիկ Բ.-ի նկատմամբ՝ թույլ չտալով նրա վերադարձը մայրաքաղաք: Այդուհանդերձ, եթե խնդրո առարկա աղբյուրի տեղեկությունը համապատասխանում է իրականությանը, ապա պնդելի է, որ բյուզանդական իշխանությունները վստահ են եղել, որ Պետրոս Գետադարձն Անիի անկումից հետո չի վերադառնա այնտեղ՝ մայրաքաղաքի անկման խնդրում ունեցած դերակատարման համար: Հիշենք, որ Ատոմ Արծրունին երաշխավորել էր կայսերը, որ կաթողիկոսը ձեռնպահ կմնա Անի վերադառնալուց[211]: Կայսրը, ինչպես տեսանք, նույն արգելքը սահմանել էր նաև Խաչիկ Բ. Անեցու նկատմամբ: Կաթողիկոսը հայոց իշխանների վրա ունեցած ակնառու ազդեցությամբ, անշուշտ, իրական վտանգ էր Բյուզանդիայի համար:*

*Մանազկերտի 1071 թ. ճակատամարտում թյուրք-սելջուկներից բյուզանդական բանակի կրած խայտառակ պարտությունն էապես խարխլել էր կայսրության դիրքերը Փոքր Ասիայում՝ բնականաբար թուլացնելով նրան ենթակա իշխանությունների, ինչպես նաև Հայոց կաթողիկոսության նկատմամբ առանձնահատուկ վերահսկողությունը: Անշուշտ, ստեղծված իրադրությունը նպաստավոր էր իրագործելու վտարանդիության մեջ գտնվող կաթողիկոսի բաղձանքը՝ Հայաստան վերադառնալը, ինչը խստիվ արգելել էին բյուզանդական իշխանությունները: Վերջիններիս խիստ մտահոգում էր Գետադարձի հնարավոր վերադարձը, քանզի կարծում էին, որ «երթեալ*

---

Բյուզանդիայի մայրաքաղաքում մնացել է երեք ամիս (տե՛ս *Հայսմավուրք*, էջ ՉՃՀԵ (675)):

[211] Տե՛ս **Արիստակես Լաստիվերցի**, *Պատմութիւն*, էջ 578:

*ապստամբեցուցանէ զԱնի»*[212]*: Սակայն որքան էլ Մանազկերտի պարտությունից հետո թուլացած լինեին բյուզանդական իշխանությունների զգոնությունն ու վերահսկողությունը Հայոց կաթողիկոսի նկատմամբ, այդուհանդերձ, չպետք է կարծել, որ այն այլևս կենսունակ չէր կամ ընդհանրապես չկար, առավել ևս, որ կաթողիկոսը գտնվում էր կայսրության կողմից վերահսկվող տարածքում: Ռոմանոս Դիոգենես կայսեր օրոք հայերի դեմ բորբոքված կրոնական հալածանքները հայոց ազատանուց պահանջում էին զգուշավորություն անգամ Մանազկետի ճակատամարտից հետո, քանզի սելջուկյան գերության մեջ գտնվող կայսրը, համաձայնության գալով սուլթան Ալփ Արսլանի հետ և նրանից օժանդակություն ստանալով, փորձում էր վերականգնել իր իշխանությունը՝ հակադրվելով Բյուզանդիայի նորընծա տիրակալ Միքայել է. Դուկասին (1071-1078): Բացի այդ՝ անգամ Մանազկերտի պարտությունից հետո Քաղկեդոնի դավանանքը հայերին պարտադրելու որոշումը չէր հանվել բյուզանդական արքունիքի օրակարգից ու լայնորեն շրջանառվում էր անգամ արտաքին լրջագույն սպառնալիքի պայմաններում: Բավական է նշել, որ արդեն Ալեքսիոս Ա. Կոմնենոսը (1081—1118), առանց չեզոքացնելու սելջուկյան հնարավոր արշավանքների սպառնալիքը, հետևողականորեն շարունակում էր կրոնական հալածանքները հայերի նկատմամբ: Կայսեր մահն արձանագրելով՝ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «... թագաւորն Հոռոմոց Ալէքս..., յոյժ ողորմած ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի, բայց ի վերայ ազգիս Հայոց յոյժ ատեցող երեւեալ: Սա գործեաց գործ, որ ոչ էր ըստ կամացն Աստուծոյ. հրամայեաց երկրորդ մկրտութիւն առնել և անարգեաց զնիկիական մկրտութիւնն և զՔաղկեդոնին հաստատէր զկարգ. և անամաչ զամենայն ազգն Հայոց մկրտէր և ոչ զարհուրէր ի Հոգւոյն Սրբոյ»*[213]*: Բյուզանդա-սելջուկյան հակամարտության պայմաններում հայերի*

[212] Նույն տեղում:

[213] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 345:

*հանդեպ կայսրության կրոնական քաղաքականությունը խստորեն քննադատում է ժամանակի նշանավոր մատենագիրներից Պողոս Տարոնացին՝ մատնացույց անելով դրա անհեռանկարայնությունը. «Իսկ սին եւ ժանդ, պիղծ եւ վատ արանցդ, որք են ի մեր ժամանակիս թագաւորք եւ իշխանքդ մորոսամիտք եղեալ, հայհոյեն զՀայք եւ նախատեն: Եւ թողեալ նոցա (թյուրք-սելջուկներին – Վ. Թ.) զհոգս պատերազմացն, որ է ընդդէմ ուրացողաց խաչին Քրիստոսի եւ փոխանակ նոցա դառնան եւ ընդ մեզ պատերազմին...: Որպէս զժանդաբարոյ շունք, որ զգայլն ո՛չ կարեն հալածել, դառնան եւ զմարդիկ խածանելով պատառեն: Այսպէս եւ առաջնորդքն հոռոմոց՝ զազգս Հայոց»[214]: Այսինքն՝ Մանազկերտի պարտության ազդեցությամբ Հայոց կաթողիկոսության նկատմամբ բյուզանդական իշխանությունների վերահսկողությունը միայն ժամանակավորապես էր թուլացել:*

*Վերադառնանք Գրիգոր Վկայասերին և, մասնավորապես, Գեորգ Լոռեցու աթոռանկությունից հետո նրա առջև ծառացած խնդրներին: Վերջինիս գահազրկումից հետո Վկայասերը բախվում է փաստացի պահպանվող իր կաթողիկոսական իշխանությունը վտանգող լրջագույն խոչընդոտի: Ինչպես հայտնի է, օգտվելով Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական զորքի ջախջախիչ պարտությունից, կայսերական բանակի հայազգի զորավար Փիլարտոս Վարաժնունին Հյուսիսային Ասորիքում հիմնեց անկախ իշխանապետություն, որի կազմում, ի թիվս Դաշտային Կիլիկիայի որոշ քաղաքների, ընդգրկված էին Մելիտենեն, Մարաշը, Անտիոքը և Եդեսիան[215]: Տա-*

---

214 Պողոս Տարոնացի, *Թուղթ*, էջ 523-524: Ստեղծված իրադրությունում առավել հեռատեսական կլիներ հակասելջուկյան պայքարում կայսրության ազդեցության տակ գտնվող հայ տարրի բյուզանդամետ դիրքորոշման ապահովումը, որն էապես պայմանավորված էր կայսերական իշխանությունների կրոնական քաղաքականությամբ:

215 Փիլարտոս Վարաժնունու իշխանության մասին մանրամասն տե՛ս **Բոռնազյան,** *Հայաստանը և սելջուկները*, էջ 182-198. **Арутюнова-Фиданян,**

րաձաշրջանում գտնվող հայկական իշխանությունների շրջանում գերագահ դիրք գրավելու, իր իշխանական հավակնությունները սրբագործելու և, վերջապես, նորաստեղծ պետության քաղաքական ինքնուրույնությունն առավել ամրապնդելու նպատակով Փիլարտոսը ձգտում էր կաթողիկոսական աթոռը հաստատել իր տիրույթներում, որպիսի առաջարկով դիմում է Գրիգոր Վկայասերին: Սխալված չենք լինի պնդել, որ Փիլարտոս Վարաժնունու առաջարկն անսպասելի էր Գրիգոր Վկայասերի համար: Այն ընդունել Վկայասերը, իհարկե, չէր կարող՝ հաշվի առնելով հետևյալ ծանրակշիռ պատճառները: Փիլարտոս Վարաժնունին ռազմական հակամարտության մեջ էր Պահլավունիների հետ խնամիական կապ ունեցող Սասունի Թոռնիկյանների հետ: Ավելին՝ Վկայասերի միջոցով հնազանդվելու կոչ էր հղել Թոռնիկ Ա.-ին և, ռազմական ճանապարհով հաջողության չհասնելով, Սասունի իշխանից կրած պարտության վրեժը լուծել էր նրան դավադրաբար սպանելու միջոցով[216]:

Փիլարտոս Վարաժնունու առաջարկի մերժումը որոշ չափով պայմանավորված էր նաև վերջինիս քաղկեդոնադավան լինելու հանգամանքով:

Ինչպես վերը նշվել է, Վկայասերը մերժեց Վարաժնունու հրավերը, ինչը ենթադրում էր, որ վերջինիս տիրույթներում լավագույն դեպքում կարող էր հիմնվել եպիսկոպոսական թեմ՝ հաշվի առնելով Վկայասերի՝ փաստացի պահպանվող կաթողիկոսական իշխանությունը: Սակայն քաղաքական անկախության ձգտող ու այն հայրապետական գահաթոռի ներկայությամբ օրինականացնել ցանկացող Փիլարտոսը դժվար թե համերաշխեր իր իշխանությունում ոչ թե կա-

---

*Армяне-халкедониты*, էջ 152-169. **Dédéyan**, *Les Arméniens entre Grecs...*, vol. 1, էջ 17-357:

[216] Այս մասին մանրամասն տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն*, էջ 206-209, տե՛ս նաև **Բոռնազյան**, *Հայաստանը և սելջուկները*, էջ 183-184. **Մարգարյան**, *Քաղաքական գործընթացները*, էջ 7:

*թողիկոսական աթոռի, այլ եպիսկոպոսական թեմի հաստատմանը: Ընդդիմանալ Փիլարտոսին, նկատի ունենալով այդ ժամանակ նրա հզորությունը, Վկայասերն ի զորու չէր: Մերժելով Վարաժնունու առաջարկն ու այլ թեկնածու չառաջադրելով՝ Գրիգոր Բ.-ը նրան կմղեր հակաթոռության ստեղծման, ինչը Պողոս Վարագեցու միջոցով նա հետագայում իրականացրեց: Մինչդեռ Սարգսի առաջադրմամբ Վկայասերն ստանում էր Հոնիի աթոռն իր ազդեցության տակ պահելու ինչ-որ հնարավորություն: Փաստորեն, Սարգսի աթոռակալմանն ու այդպիսով նաև կաթողիկոսական աթոռը Հոնի փոխադրելուն Վկայասերը համաձայնել էր հարկադրաբար: Բյուզանդական տիրապետության տակ գտնվող երկրամասերում հակաթոռության հիմնումը Հայոց եկեղեցու շահերի տեսանկյունից խիստ վտանգավոր էր: Գրեթե կասկածից վեր է, որ կայսերական իշխանություններն անմիջապես կօգտագործեին այդ հանգամանքը Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում պառակտում մտցնելու համար: Հայտնի է Բագրատունյաց թագավորության շրջանում ավատական իշխանությունների կենտրոնախույս նկրտումների հետևողական խրախուսումը Բյուզանդական կայսրության կողմից, ինչը կործանարար հետևանքներ ունեցավ Հայոց պետականության համար: Դա լրջագույն վտանգ կարող էր լինել կաթողիկոսական նոր վերականգնված իշխանության համար:*

*Փաստորեն, լավագույն լուծումը Պետրոս Գետադարձի քողն ու գավազանը Սարգսին ուղարկելով՝ նրա կաթողիկոսական լիարժեք իշխանությունն ընդգծելն էր, ինչն էլ Վկայասերն արեց:*

*Կաթողիկոսության փոխադրումը Հոնի ու Սարգսի կանոնական աթոռակալումը լրջորեն վտանգում էին Վկայասերի փաստացի պահպանվող հայրապետական իշխանությունը: Անհրաժեշտ էր որևէ կերպ հակազդել այդ իրողությանը, որպիսի քայլ պետք է դիտել Բարսեղ Անեցու եպիսկոպոսական, ապա նաև կաթողիկոսական ձեռնադրությունները, որոնցից առաջինը կատարել էր Վկայասերի*

*կողմից, իսկ երկրորդը՝ նրա հավանությամբ: Սարգսի ընտրությանը Վկայասերի տված համաձայնությունն արդարացիորեն ստիպողաբար համարելով՝ Բարսեղի եպիսկոպոսական, ապա նաև կաթողիկոսական ձեռնադրության մասին Ղևոնդ Ալիշանը գրում է. «Վկայասէր սրտանց չհաւանելով ըրածին և եղածին (նկատի ունի Հոնիի կաթողիկոսության հիմնումը – Վ. Թ.), և գուշակելով ալ աւելի անպատշաճ գործեր յապագայն, իր հօրքրոջ թոռը՝ Բարսեղ՝ եպիսկոպոս ձեռնադրեց Անւոյ (1074), որ մեծ նշանակութիւն մ'ունէր՝ Հայոց մայրաքաղաքն ըլլալով, և իբրև իրեն փոխանորդ թողուց: Շատ տարիներ ալ չանցած (1081) հաւանեցաւ որ նա ալ այն կողմերու կաթողիկոս անուանի, ապագայ յուսով իրեն յաջորդելու»*[217]*:*

*Բացի այդ՝ Հայաստանից հայրապետական աթոռի բացակայությունն անկասակած նպաստելու էր այնտեղ գործող տարբեր ազդեցիկ թեմերի կենտրոնախույս նկրտումներին: Կիլիկիայի հայկական պետության շրջանում Հռոմկլայում, ապա Սսում աթոռակալող հայոց կաթողիկոսների ընտրության հանգամանքների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կաթողիկոսական իշխանության կանոնականությունը և, որ ամենակարևորն է՝ համահայկականությունը մեծապես կախված էին Մեծ Հայքի եկեղեցական ազդեցիկ կենտրոնների դիրքորոշումից: Այս դեպքում Բարսեղի ձեռնադրությունը, թերևս, լավագույն լուծումն էր Հայաստանում Վկայասերի կաթողիկոսական իշխանության իրացման համար, քանզի նա, իր կամքից անկախ, չէր կարող դա բացահայտ ու արդյունավետ իրականացնել: Ի տարբերություն Վկայասերի՝ Բարսեղ Անեցին դուրս էր բյուզանդական իշխանությունների վերահսկողությունից, քանզի տարածաշրջանում արդեն հաստատվել էր սելջուկյան տիրապետությունը: Այսինքն՝ նա գործելու ավելի լայն հնարավորություններ ուներ, քան Վկայասերն ու նորընտիր կաթողիկոս Սարգի-*

---

[217] **Ալիշան,** *Շնորհալի*, էջ 41-42:

որ, առավել ևս, որ սելջուկյան նորահաստատ իշխանությունները, հատկապես սուլթան Մելիքշահը նկատելիորեն բարյացակամ էին տրամադրված Հայոց եկեղեցու նկատմամբ: Անեցին, արդեն 1081 թ. Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի կողմից ձեռնադրվելով, դառնում է կաթողիկոս «ի վերայ ամենայն աշխարհին Հայոց»[218], այսինքն՝ բուն Հայաստանում: Նրա կաթողիկոսական ձեռնադրությունը կատարվել էր Գրիգոր Վկայասերի հավանությամբ. «Նստաւ տէր Բարսեղն յաթոռն հայրապետական յԱնի, հրամանաւ քեռոյն իւրոյ տէր Գրիգորիսի Վկայասիրի եւ օծմամբ տէր Ստեփանոսի՝ Աղուանից կաթողիկոսի»[219]:

Սարգսի ընտրությունից հետո Բարսեղին եպիսկոպոս ձեռնադրելը, ինչպես նաև Հոնիի աթոռի գոյության ընթացքում Անիի կաթողիկոսության հիմնումն առաջադրում են Հայոց եկեղեցու նվիրապետական աստիճանակարգում հայրապետական այդ աթոռների և հատկապես նրանց առաջնորդների կարգավիճակի հստակեցման անհրաժեշտություն:

Ինչպես տեսանք, բացառությամբ Պողոս Վարագեցու, Վկայասերի օրոք գործած մյուս կաթողիկոսներին հակաթոռ կոչելը սխալ է: Միևնույն ժամանակ հիմնավորված չէ նրանց անխտիր որպես աթոռակից կամ հայրապետական փոխանորդ համարելը, քանզի այդ դեպքում ստիպված կլինենք արձանագրել մի քանի փոխանորդների համաժամանակյա գոյությունը: Խնդրին անդրադարձած Սարգիս Բոռնազյանը գրում է, որ կաթողիկոսի ընդհանրական իշխանությունը հրաժարականից հետո մնում էր Վկայասերի ձեռքում, ու Սարգի-

---

[218] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 221:

[219] Յովսէփեան, *Յիշատակարանք*, սյուն. 420. *Հայսմավուրք*, էջ ՈՃՀԵ (675): Բարսեղ Անեցու՝ Վկայասերի հրամանով ստացած կաթողիկոսական ձեռնադրությունը փաստում է նաև Վարդան վարդապետը. *«Գրէ (Գրիգոր Վկայասերը – Վ. Թ.) յարեւելս ձեռնադրել զազգականն իւր զսուրբն Բարսեղ կաթողիկոս»* (**Վարդան Արեւելցի**, *Ճառք*, էջ 365):

*որ պարզապես «օրինավոր աթոռակից» էր*[220]*: Ժերար Դեդեյանը, ընդունելով հանդերձ Սարգսի կաթողիկոսական իշխանության օրինականության փաստը, այդուհանդերձ, կարծում է, որ նա աթոռակից կաթողիկոս էր Փիլարտոս Վարաժնունու իշխանության տարածքում*[221]*: «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» հանրագիտարանի «Գրիգոր Բ. Վկայասեր» հոդվածում Սարգիսը, Գրիգորը (Եգիպտոսում), Բարսեղ Անեցին համարվում են որպես միաժամանակ գործած կաթողիկոսական տեղապահներ: Հաջորդիվ նշվում է, որ տեղապահներ նշանակելով «Գրիգոր Բ. Վկայասերը, փաստորեն, ցանկանում էր ապահովել աթոռը հունական ոտնձգություններից, որոնք իր վախճանից հետո կարող էին արգելք հանդիսանալ կաթողիկոսական նոր ընտրություններին, իսկ տեղապահի առկայության դեպքում հարցը կանխապես լուծված էր, ինչպես և եղավ»*[222]*: Եզրահանգման առաջին հատվածի հետ, այն է՝ փոխանորդի նշանակմամբ հնարավոր էր շրջանցել կաթողիկոսի ընտրության խնդրում բյուզանդական իշխանությունների հարուցած խոչընդոտները, համերաշխ ենք, սակայն մի քանի փոխանորդների համաժամանակյա գոյությունը հայրապետական իշխանության անընդհատությունն ապահովելու լավագույն միջոցը չէր, քանզի Վկայասերից հետո կարող էր հանգեցնել աթոռի համար պայքարի հենց նրանց միջև՝ պատճառ դառնալով նոր պառակտման: Դժվար թե Փիլարտոսի առաջարկը մերժած ու Պահլավունիների կաթողիկոսական ժառանգական իշխանությունը սկզբնավորած Գրիգոր Վկայասերը փոխանորդ կարգեր պահլավունիական ծագում չունեցող Սարգսին, այն պարագայում, երբ վերջինիս ընտրությունից անմիջապես հետո*

---

220 **Բոռնազյան**, *Հայաստանը և սելջուկները*, էջ 189:

221 Տե՛ս **Dédéyan**, *Les Arméniens entre Grecs...*, vol. 1, էջ 231:

222 *Ամենայն հայոց կաթողիկոսներ*, էջ 53:

*եպիսկոպոսի[223] կոչում էր շնորհել իր քեռորդի Բարսեղ Անեցուն, որին էլ պատրաստում էր որպես իր ժառանգորդ: Ինչ վերաբերում է Եգիպտոսում աթոռակալած Գրիգորի՝ որոշ աղբյուրներում կաթողիկոս հորջորջվելուն, ապա դա, ի թիվս մենագրության հավելվածում ներկայացված պատճառների, պայմանավորված էր ոչ այնքան նրա՝ իրապես կաթողիկոս լինելով, որքան Գրիգոր Վկայասերի՝ որոշ ժամանակ Եգիպտոսում մնալու իրողությամբ, որի ազդեցությամբ էլ այնտեղ հիմնված եպիսկոպոսական թեմն ընկալվում էր որպես կաթողիկոսություն: Թերևս դա է պատճառը, որ Մատթեոս Ուռհայեցին, Եգիպտոսի թեմը ներառելով այդ ժամանակ ստեղծված կաթողիկոսությունների շարք, տեղի աթոռակալ է հիշում նախ Վկայասերին և միայն հաջորդիվ արձանագրում այնտեղ զույգ կաթողիկոսների գոյության փաստը[224]: 1248-1275 թթ. միջակայքով թվագրվող «Պատմութիւն սրբոյ հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան» աշխատության հեղինակի հավաստմամբ՝ Եգիպտոսում անգամ կաթողիկոսարան է հիմնվել, որին տրվել են ընդարձակ կալվածքներ. «Իսկ թագաւորն եւ խալիֆան շինեն յնմայ եկեղեցի եւ կաթուղիկոսարան, տվեալ գիւղս եւ գաւառս, զի կարասցեն հաստատել զայն ի Եգիպտոս»[225]: Հետաքրքրական է, որ այնտեղ աթոռակալող Գրիգորը ԺԶ. դարով թվագրվող մի Հայսմավուրքում առկա «Յիշատակարան վարուց սուրբ հայրապետացն Գրիգորիսեանց» վարքում հիշվում է ոչ թե կաթողիկոս, այլ եպիսկոպոս տիտղոսով. «Եւ էր յայնժամն յազգէս Հայոց յԵգիպտոս Լ. Ռ. (30.000 – Վ. Թ.) տունս համարով. որոց ետ (Գրիգոր Վկայասերը – Վ. Թ.) եպիսկոպոս զքըւերորդին իւր Գ-*

---

223 Ըստ «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանցն եւ Պետրոսեանցն» վարքի՝ Գրիգոր Վկայասերը Բարսեղին շնորհել էր արքեպիսկոպոսի կոչում (տե՛ս **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 420. *Հայսմավուրք*, էջ ՉՃՀԵ (675)):
224 Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 229, 231:
225 **Տէր-Պետրոսյան**, *Խաչակիրները եւ հայերը*, հ. Բ, էջ 511:

րիգոր»[226]: Հիշատակարանի հետագա շարադրանքում Բարսեղ Անեցին ներկայացված է նախ որպես Անիի արքեպիսկոպոս, ապա կաթողիկոս. «Եւ աւրհնեաց զմիւս քուերորդին իւր զտէր Բարսեղ արքեպիսկոպոս Անոյ եւ տանն Շիրականայ, որ յետոյ կաթուղիկոս եղեւ», այսինքն՝ աղբյուրի հեղինակը հստակ տարբերակում է Գրիգորի՝ եպիսկոպոս, իսկ Բարսեղ Անեցու՝ կաթողիկոս լինելու հանգամանքները: Վկայասերի քեռորդի Գրիգորի՝ Եգիպտոսում ստացած ոչ թե կաթողիկոսական, այլ եպիսկոպոսական ձեռնադրությունը շեշտում է նաև Վարդան վարդապետը. «... և նաւին առեալ զնա (Գրիգոր Վկայասերին – Վ. Թ.) տանի ի Մսր (Եգիպտոս – Վ. Թ.). որ և մեծարեցաւ յոյժ ի սուլտանէն. և շինեաց վանս Հայոց, և ձեռնադրեալ զեղբօրորդի (պետք է լինի քրոջ որդուն – Վ. Թ.) իւր Գրիգորէս **եպիսկոպոս,** և ինքն գայ կատարի ի Կարմիր վանքն»[227]: Գրիգորի կաթողիկոսական ձեռնադրության դրվագն Ուռհայեցուց քաղած Սմբատ Սպարապետը, ի տարբերություն իր աղբյուրի, նրան կոչում է «կաթողիկոս Եգիպտոսի»[228]՝ առավել հստակ մատնանշելով նրա իրավազորության վարչական սահմանները:

Այսպիսով՝ Գեորգ Լոռեցուց հետո փոխանորդի պաշտոնը փոխանցվել է ոչ թե Սարգսին, այլ Բարսեղ Անեցուն: Թերևս դա նկատի ունի Վարդան վարդապետը՝ երկիցս գրելով, որ Բարսեղ Անեցին հաջորդել է Գեորգ Լոռեցուն. «ինքն (Գրիգոր Վկայասերը – Վ. Թ.) գայ կատարի ի Կարմիր վանքն ի սահմանս Եփրատ գետոյ առ Տօրոս լերամբն, **մերձ տեառն Բարսղի պատրիարգի որ զկնի Գէորգայ»,** «... զԳրիգոր զորդին Վասակայ, զԹոռն Ապիրատին:... Եւ էր եղբայր

---

[226] **Տաշեան**, *Ցուցակ*, էջ 92:
[227] **Վարդան վարդապետ,** *Հաւաքումն պատմութեան*, էջ 102-103: Պատմիչը Գրիգորին՝ որպես եպիսկոպոս հիշում է նաև Պահլավունի կաթողիկոսներին նվիրված իր ներբողում. *«... ձեռնադրէր նոցա* ***եպիսկոպոս*** *զքոյր որդին իւր, զոր ունէր ինքեան զԳրիգոր համանունն իւր»* (**Վարդան Արևելցի**, *Ճառք*, էջ 367):
[228] **Սմբատ Սպարապետ,** *Տարեգիրք*, էջ 82:

*տէր Բարսղի, որ* ***զկնի Գէորգեայ ձեռնադրեցաւ ի Հաղբատ կաթողիկոս***»[229]*։ Ուշագրավ է, որ «Պատմութիւն սրբոյ հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան» աշխատության հեղինակը Բարսեղ Անեցուն աթոռապահ է հիշում ոչ թե կաթողիկոսական ձեռնադրությունից հետո, այլ Վկայասերի՝ Կոստանդնուպոլիս կատարած ուղևորությունից առաջ. «Թողու զտէր Բարսեղ* ***ազգային իւր աթոռապահ****, որ եւ գնացեալ ի Կոստանդինուպօլիս»*[230]*։ Փաստորեն, Բարսեղ Անեցին Սարգսի, Թեոդորոս Ալախոսիկի և Գրիգորի (Եգիպտոս) կողքին միակն է, որ հիշվում է որպես կաթողիկոսական աթոռապահ։ Ի տարբերություն Լոռեցու՝ Անեցին Վկայասերից հետո աթոռակալել է որպես Հայոց եկեղեցու ընդհանրական առաջնորդ, ինչը թույլ է տալիս պնդել, որ հիմնազուրկ չէ նրան նաև հայրապետական փոխանորդ, այսինքն՝ որպես Գրիգոր Բ.-ի հաջորդ համարելը։ Գրիգորին ու Բարսեղ Անեցուն Վկայասերի շնորհած եկեղեցական պաշտոնների իրավազորության սահմանների ուշագրավ բաժանում է կատարում Ներսես Շնորհալու վարքագիրը։ Սմբատ Սպարապետի օրինակով նա էլ Գրիգորին կոչում է «կաթողիկոս Եգիպտոսի», որին Վկայասերը «թողոյր փոխանակ իւր անդր», այսինքն՝ ևս զատում է նրա իշխանության սահմանները*[231]*։ Մինչդեռ նույն հեղինակը Բարսեղ Անեցու վերաբերյալ գրում է, որ Վկայասերը նրան «կարգէր փոխանակ իւր հովիւ և վերատեսուչ Քրիստոսի հօտին»*[232]*, այսինքն՝ չէր չափավորում նրա իրավազորության աշխարհագրական սահմանները, թեևստույգ է, որ Բարսեղ Անեցին առաջնորդում էր բուն Հայաստանի հոգևոր-եկեղեցական կյանքը։*

---

229 **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 102-104։

230 **Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները եւ հայերը*, հ. Բ, էջ 511։

231 Տե՛ս *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 28։

232 Նույն տեղում, էջ 29-30։

*Այդ հիմքով Հոնիի աթոռի ստեղծումը պետք է պատճառաբանել նախ և առաջ տարածաշրջանի հայկական իշխանությունների շրջանում Փիլարտոս Վարաժնունու՝ նոր սաղմնավորվող իշխանության օրինականությունը սահմանելու և հիմնավորելու անհրաժեշտությամբ*[233]*: Հայկական և բյուզանդական աղբյուրների վկայությունները ի մի բերելով՝ Վիադա Հարությունովա Ֆիդանյանը եզրակացնում է, որ Փիլարտոս Վարաժնունին թե՛ հայության և թե՛ բյուզանդացիների շրջանում ընկալվում էր որպես բռնակալ (ուզուրպատոր)*[234]*: Այդ գիտակցող Վարաժնունուն, ըստ նույն հեղինակի, անհրաժեշտ էր օրինական հիմք իր իշխանության համար, որպիսին կարող էր ծառայել կաթողիկոսական աթոռի ներկայությունը նրա տիրույթներում*[235]*: Այսպես՝ չնայած ձևավորման կանոնական հիմքին՝ Հոնիի աթոռը հայության շրջանում այդպես էլ չընդունվեց որպես լիարժեք կաթողիկոսանիստ կենտրոն ու նրա իրավազորությունը չանցավ Փիլարտոս Վարաժնունու իշխանության սահմաններից այն կողմ: Դա հնարավոր է պատճառաբանել ոչ միայն Գրիգոր Վկայասերի փաստացի պահպանվող իշխանությամբ, այլ նաև Վարաժնունու իշխանության՝ ռազմաքաղաքական ու վարչական առումով սահմանափակ լինելով, որին վիճակված չէր գերագահ դիրք գրավել տարածաշրջանի հայկական պետական մյուս կազմավորումների շրջանում: Մինչդեռ Բարսեղ Անեցու կաթողիկոսական ձեռնադրումը չէր բխում որևէ պետական կազմավորման (տվյալ դեպքում կարող ենք մատնանշել Տաշիր-Ձորագետի թագավորությունը, որի գահակալ Կյուրիկե Ա.-ի հավանությամբ Բարսեղ Անեցին ձեռնադրվեց կաթողիկոս) ռազմաքաղաքական շահերից, այլ միտված էր Մեծ Հայքում կաթողիկոսական խաթարված իշխանության վերա-*

---

[233] Տե՛ս **Բոռնազյան**, *Հայաստանը և սելջուկները*, էջ 189:

[234] Տե՛ս **Арутюнова-Фиданян**, *Армяне-халкедониты*, էջ 161:

[235] Տե՛ս նույն տեղում:

*կանգնմանն ու իրացմանը, քանզի, ինչպես նշում է Մատթեոս Ուռհայեցին, այս ընտրությամբ «նորոգեալ եղև աթոռ սրբոյն Գրիգորի (Գրիգոր Լուսավորչի – Վ. Թ.) ի քաղաքն Անի»*[236]*: Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության հետևանքով Անիից հեռացված կաթողիկոսական աթոռը մայրաքաղաք վերադարձնելու ցանկությունը կենսունակ էր անգամ ԺԲ. դարի առաջին կեսին: Ուստի որպես փոխանորդանիստ կենտրոն՝ Անիի «նորոգեալ» աթոռը, ի տարբերություն Հոնիի, ուներ բացահայտ ու անվիճելի առավելություն:*

*Կաթողիկոսական աթոռների՝ Վկայասերի համաձայնությամբ ստեղծված լինելը հետագայում նրանց կողմից ընդհանրական աթոռի գերագահությունն ընդունելու երաշխիքներ էր ապահովում: Դա առկա աննախադեպ իրապայմաններում կաթողիկոսական ընդհանրական իշխանության իրացման արդյունավետ միջոց էր:*

*Վկայասերի աթոռակալման ընթացքում ձևավորված կաթողիկոսությունների իշխանությունը վարչական առումով սահմանափակ էր, այսինքն՝ նրանք չունեին համահայկական ընդգրկում: Այդպես էր ոչ միայն Հոնիի, այլև Անիի կաթողիկոսությունը, որի 1081 թ. ձեռնադրված հայրապետ Բարսեղ Անեցին, ինչպես նշվեց, իրավազոր էր միայն բուն Հայաստանում: Գրիգոր Վկայասերի և նրա օրոք գործած մյուս կաթողիկոսների փոխհարաբերությունները գերազանցապես բխում էին Խաչիկ Բ. Անեցուն Պետրոս Ա. Գետադարձի ուղղած ստորև մեջբերվող խոսքերի տրամաբանությունից. նկատի ունենալով նրանց միջև առկա ինչ-որ տարաձայնություն՝ «Պատմութիւն սրբոյ հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան» հեղինակը նշում է, որ Գետադարձը, հայրապետական քողն իր աթոռակցից վերցնելով, ասում է. **«Որչափ հայրն կենդանի է, որդին մեռած է»***[237]*: Այսինքն՝ հոգևոր գերագույն առաջնորդի (այս դեպքում՝ Գրիգոր*

---

[236] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 221:
[237] **Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները եւ հայերը*, հ.Բ, էջ 511:

*Վկայասերի) կենդանության և, որ ամենակարևորն է՝ փաստացի աթոռակալման ժամանակ անվանապես կաթողիկոս հորջորջվող Գեորգ Լոռեցին, Սարգիսը, Գրիգորը (Եգիպտոս), Թեոդորոս Ալախոսիկը և Բարսեղ Անեցին ստորադաս էին նրա գերագահ իշխանությանը։ Հարկավ այս հիմքով է, որ վերջիններս, բացառությամբ Բարսեղ Անեցու, որը Վկայասերի մահվանից հետո աթոռակալել է իբրև միանձնյա կաթողիկոս, նշված չեն Մխիթար Անեցու և Ստեփանոս Օրբելյանի կազմած կաթողիկոսական գավազանացանկերում*[238]*։*

*Պատմիչները միաբերան պնդում են, թե մասնատվեց կաթողիկոսական աթոռը, սակայն նորաստեղծ կաթողիկոսությունները, բացառությամբ Մարաշի, չէին հիմնվել Վկայասերին ընդդիմանալու կամ նրա իշխանությունը չընդունելու միտումով, այլ, ինչպես դիպուկ նշել է Բաբկեն Կյուլեսերյանը, ստեղծվել էին «ժամանակի, տեղւոյ եւ քաղաքական պայմաններու պահանջին տակ»*[239]*։ Նա, ընդհանրացնելով հավելում է, որ կաթողիկոսական ընդհանրական աթոռի տեղափոխությունների, ինչպես նաև այլ՝ կանոնական և ոչ կանոնական կաթողիկոսությունների առաջացման հիմքում «քաղաքական ազդակ մը կայ»*[240]*։*

*Զարգացած ավատատիրության շրջանում եկեղեցական վարչական միավորը համապատասխանեցվեց նախարարություններին փոխարինելու եկած իշխանությունների վարչական սահմաններին։ Այս*

---

[238] Տե՛ս **Մխիթար Անեցի**, *Մատեան*, էջ 69. Ստեփաննոս Օրբէլեան, *Պատմութիւն*, էջ 502: Ստեփանոս Օրբելյանի աշխատության ֆրանսերեն թարգմանության հեղինակ Մարի Բրոսսեն առանց թվահամարի գավազանացանկում ներառել է Գեորգ Լոռեցուն, Սարգսին, Թեոդորոս Ալախոսիկին ու Պողոս Վարագեցուն՝ նշելով, որ պատմիչը բաց է թողել նրանց անունները (տե՛ս **Stéphannos Orbélian**, *Histoire*, էջ 276-277): Իրականում Ստեփանոս Օրբելյանն այդ կաթողիկոսներին չի ներառել գավազանացանկ՝ հաշվի առնելով վերջիններիս՝ լիիրավ կաթողիկոս չլինելու պարագան:

[239] **Կիւլէսէրեան**, *Պատմութիւն*, սյուն. 7:

[240] Նույն տեղում:

*գործընթացն սկսվել էր դեռևս վաղ միջնադարից և եկեղեցու կողմից ավատատիրական վարչատնտեսական կառույցի ընդօրինակման արդյունք էր: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում այս խնդրով շահագրգռված էին առավելապես աշխարհիկ իշխանությունները: Դրա նպատակը հոգևոր իշխանության օժանդակությունը, հատկապես օտարի տիրապետության ժամանակ նրան վերապահված արտոնություններն առավել շահեկան օգտագործելն էր: Այդ էր պատճառը, որ ավատատիրական իշխանությունները ձգտում էին իրենց վարչական սահմաններում առանձին եկեղեցական թեմեր հաստատել: Վկայասերի աթոռակալման շրջանում մի քանի կաթողիկոսությունների և նրանց աթոռակալների՝ «կաթողիկոս» տիտղոսով հանդես գալը*[241]*, ի շարս վերոբերյալ իրողությունների, պայմանավորված էր ժամանակի ավատատիրական հարաբերությունների առանձնահատկություններով: Ստեղծված իրադրությունն աննախադեպ էր, քանզի գերագահ կաթողիկոսի կենդանության ու աթոռակալման ընթացքում հայոց մեջ մինչ այդ չէին եղել այլ՝ ոչ հակաթոռ և համաժամանակ գործող կաթողիկոսություններ (բացառությամբ՝ Աղվանից կաթողիկոսության)*[242]*: Ուշագրավ է, որ խնդրո*

---

[241] Սկզբնաղբյուրներում հաճախ ենք հանդիպում Հայոց եկեղեցու թեմական կենտրոնների առաջնորդ եպիսկոպոսների կամ արքեպիսկոպոսների՝ կաթողիկոսին համազոր «հայրապետ» տիտղոսով հիշատակումների: Այդպիսով շեշտվում էր նրանց՝ թեմն ընդգրկող գավառային եպիսկոպոսների նկատմամբ ունեցած գերադասությունը (տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պրակ I, էջ 2. **Մաթևոսյան**, *ԺԳ դ. հիշատակարաններ*, էջ 59 և հտ.):

[242] Այս առումով, իհարկե, ոչ առանց վերապահության, մատնանշելի է Սահակ Ա. Պարթևի աթոռակալման շրջանը: Հայտնի է, որ Սասանյան արքունիքը Հայոց կաթողիկոսությունն իր ազդեցության տակ պահելու նպատակով Սահակ Պարթևին բռնի կերպով զրկեց հայրապետական իշխանությունից՝ առժամանակ արգելափակելով Պարսկաստանում: Այդ ընթացքում Հայաստանում հաջորդաբար աթոռակալեցին պարսից դրածոներ հայազգի Սուրմակը, ապա՝ ասորի Բրքիշոն ու Շմուելը: Ի դեպ, Պատմահոր տեղեկությամբ՝ Շմուելն աթոռակալել է արգելափակումից ազատված և Հայաստան վերադարձած Սահակ

*տարկա կաթողիկոսությունների ձևավորմանը նախորդած Բագրա-
տունյաց թագավորության շրջանում և նկատվեց զարգացած ավա-
տատիրությանը բնորոշ նոր՝ հայոց քաղաքական համակարգում նա-
խընթաց չունեցող իրողություն, որպիսին թագավորական գերագահ
իշխանության առկայությամբ մանր ստորակա գավառական թագա-
վորությունների (Կարսի, Տաշիր-Ձորագետի, Սյունիքի) հանդես
գալն էր: Գաղտնիք չէ, որ եկեղեցական նվիրապետական կառույցը
գերազանցապես օրինակված էր աշխարհիկ իշխանության համա-
պատասխան համակարգից, և վերջինում տեղի ունեցող վարչաքա-
ղաքական փոփոխությունները վաղ թե ուշ դրսևորվում էին նաև եկե-
ղեցու համապատասխան կառույցում: Քննվող ժամանակահատվա-*

---

Պարթևին զուգահեռ: Պարսից արքունիքը նկատելիորեն սահմանափակել էր
Սահակի իշխանությունը՝ պարտավորեցնելով նրան «նստցի միայն յիւրեան
վիճակի, իշխանութիւն ունելով միայն վարդապետութեան սովորական կրաւ-
նիցն, եւ ձեռնադրութեան զայնցիկ՝ զորոց եւ Շամուէլն յանձն առնուցու»
(**Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն*, էջ 2105-2106): Վկայասերի և Սահակ Պար-
թևի հայրապետության ժամանակ կաթողիկոսական աթոռի շուրջ ծավալված
իրադարձությունները, ինչ-որ ընդհանրություն ունենալով հանդերձ, խիստ
տարբեր են: Վկայասերին զուգահեռ աթոռակալած կաթողիկոսներ Սարգիսը,
Բարսեղ Անեցին ու Գրիգորը (եգիպտահայերի հոգևոր առաջնորդը) կարգվել
էին կա՛մ նրա կողմից, կա՛մ նրա համաձայնությամբ, մինչդեռ Սուրմակին,
Բրքիշոյին ու Շմուելին նշանակել էր պարսից արքան և ոչ թե Սահակ Պարթևը:
Ի տարբերություն պարսից դրածոների, Սարգիսը (ապա նաև Թեոդորոս Ալա-
խոսիկը), Բարսեղ Անեցին ու Գրիգորը երբևէ չեն ունեցել կաթողիկոսի գեր-
ագահ իշխանությունը յուրացնելու հավակնություն: Սահակ Պարթևին զու-
գահեռ գահակալած Շմուելը, ինչպես հստակ արձանագրել է Պատմահայրը,
եղել է «ընդդիմափառ մեծին Սահակայ եւ հակառակաթոռ» (Նույն տեղում, էջ
2105): Թե՛ Սուրմակը, թե՛ Բրքիշոն և թե՛ Շմուելը չեն ընդգրկվել հայ մատե-
նագիրների կազմած հայրապետական գավազանացանկեր: Այս առումով
ուշագրավ բացառություն է Հայոց կաթողիկոսների՝ Միխայել Ասորու կազմած
գավազանացանկը, որտեղ Սուրմակը ներկայացված է որպես հակաթոռ, մինչ-
դեռ նույն ճանապարհով հայրապետական իշխանությունը տիրացած Բրքիշոն
ու Շմուելը, համազգի լինելով հեղինակին, հիշված են առանց այդ հատկորոշ-
ման (տե՛ս Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն*, էջ 34):

*ծի հայ աշխարհիկ իշխանությունում գերագահ կենտրոնի բացակայությունը նպաստում էր անկախական ձգտումներին ոչ միայն ավատական իշխանությունների շրջանում, այլև այդ ազդեցությամբ նաև Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցում։ Եթե ավատական ստորակա իշխանությունները բավարարվում էին իրենց տիրույթներում եպիսկոպոսական թեմերի հաստատմամբ, ապա գերագահության ձգտող պետական կազմավորումներին, տվյալ դեպքում՝ Փիլարտոս Վարաժնունու իշխանապետությանը՝ տարածաշրջանի հայկական իշխանությունների նկատմամբ գերադաս դիրք գրավելու և իր քաղաքական անկախությունն օրինականացնելու տեսանկյունից առավել պատշաճում էր կաթողիկոսական աթոռի առկայությունը։*

## Ե. Գրիգոր Վկայասերի այցը Կոստանդնուպոլիս

*Գրիգոր Վկայասերի այցը Կոստանդնուպոլիս բանալի նշանակություն ունի նրա հրաժարականի իրական դրդապատճառների բացահայտման խնդրում։*

*Ինչպես տեսանք, Գեորգ Լոռեցու աթոռանկությունից հետո Վկայասերը չէր զբաղեցրել հայրապետական աթոռը։ Դա լրացուցիչ շեշտում է Մատթեոս Ուռհայեցին՝ Սարգսի կաթողիկոսական ձեռնադրության դրվագում. «Եւ տեսեալ Փիլառտոսն զայս ամենայն՝ ծանեաւ եթէ Տէր Գրիգորիս այլ ոչ է դառնալոց յաթոռ հայրապետութեան իւրոյ. և յայնժամ հրամայեաց Փիլառտոսն լինել ժողով եպիսկոպոսաց և հարանց վանականաց և կրօնաւորաց. և ձեռնադրեցին զՏէր Սարգիս յաթոռ կաթուղիկոսութեանն Հայոց ի քաղաքն՝ որ կոչի Հոնի, ի Ջահան գաւառի»[243]։ Դատելով Վկայասերի կողմից կաթողիկոսական իշխանությունը Գեորգ Լոռեցուն փոխանցելու հանգամանքներից՝ վերջինս միաժամանակ և՛ կաթողիկոսական փոխա-*

---

[243] ***Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն*, էջ 210:

*նորդ էր (ըստ Գրիգոր Վկայասերի վերոբերյալ հիշատակարանի), և՛ լիիրավ կաթողիկոս (ըստ ձեռնադրության հիմքի)։ Սա եկեղեցական պաշտոնների անհամատեղելի համատեղում էր։ Նկատենք, որ Վկայասերը կաթողիկոսական իշխանությունը կարող էր փոխանցել տեղապահության իրավունքով, ինչի նախադեպերը մինչ այդ առկա էին։ Այսպես՝ Փավստոս Բուզանդի հաղորդմամբ՝ Ներսես Ա. Մեծ հայրապետը Հռոմ մեկնելուց առաջ Բագրևանդի և Արշարունյաց եպիսկոպոս Խադին նշանակում է իր տեղապահ. «Ապա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեգնացութիւնն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս Խադ յեպիսկոպոսութիւն Բագրաւանդայ եւ Արշարունեաց,* ***եթող զսա իւր փոխանակ եւտեղապահ, եւ գնաց***»[244]*։ Սահակ Պարթևի աթոռակալման շրջանում Մեսրոպ Մաշտոցը Վաղարշապատում տեղապահության իրավունքով վարել է կաթողիկոսական իշխանությունն ու այն փոխանցել Հովսեփ Վայոցձորեցուն (Հողոցմեցուն)*[245]*։*

*Փոխանորդի ընտրությունը հիմնականում կատարվում էր կաթողիկոսությանը սպառնացող վտանգի կամ հայրապետական իշխանության լիարժեք իրացման անհնարինության դեպքում։ Ուռհայեցու հաղորդմամբ՝ Բյուզանդիայի Ռոմանոս Դ. Դիոգենես կայսրը որոշել էր Մանազկերտում հաղթելուց հետո հայերին պարտադրել Քաղկեդոնի դավանանքը*[246]*, ինչն առավել դյուրին կիրականացվեր կաթողիկոսական իշխանության չգոյության պարագայում։ Տեղապահի կամ փոխանորդի ընտրությամբ ստեղծվում էին գործող կաթողիկոսի մահվանից հետո հայրապետական իշխանության գործու-*

---

244 **Փաւստոս Բուզանդ**, *Պատմութիւն*, էջ 334:

245 Տե՛ս **Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն*, էջ 2109, 2113:

246 Հավատալով Սեբաստիայի հույների՝ քաղաքի հայությանն ուղղված ամբաստանությանը՝ կայսրը երդվեց, որ *«Ի դառնալն իմ ի պատերազմէն Պարսից՝ բառնամ զհաւատն Հայոց»* (**Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 198):

*նեության շարունակման որոշ երաշխիքներ: Համաձայն Մատթեոս Ուռհայեցու՝ նույն մտավախությունը Պետրոս Գետադարձին դրդեց «աքսորից» առաջ կաթողիկոսական աթոռի փոխանորդ կարգել իր քեռորդի Խաչիկ Անեցուն. «Եւ Տէր Պետրոսն կամաւ իւրով յօժարեաց գնալ (Կոստանդնուպոլիս – Վ. Թ.), խորհեցաւ ի միտս իւր և ասէ. «Գուցէ այլ ոչ թողուն զիս Հոռոմք ելանել յարևելս», անուանեաց զաթոռ հայրապետութեան իւրոյ զամենագովելին զՏէր Խաչիկ»*[247]*: Կարեն Մաթևոսյանը, սակայն, հիմք ընդունելով Մրենի 1041 թվակիր արձանագրությունը, որտեղ Գետադարձի հետ որպես կաթողիկոս հիշվում է նաև Խաչիկ Անեցին, իրավացիորեն եզրակացնում է, որ վերջինս փոխանորդ էր կարգվել մինչ Պետրոս Գետադարձի աքսորը: Ըստ նրա՝ Գետադարձն այդ քայլին դիմել էր՝ օգտվելով Հովհաննես-Սմբատի մահվանից հետո երկրում ստեղծված քաղաքական խառնակ դրությունից և այդպիսով նպատակ ուներ խուսափել «նախորդ ժամանակաշրջանի խռովահույզ իրադարձությունների կրկնությունից եւ վստահելի գործակից ունենալ»*[248]*: Խռովահույզ իրադարձություններ ասելով՝ Կարեն Մաթևոսյանը նկատի ունի Հովհաննես-Սմբատի նախաձեռնությամբ Պետրոս Գետադարձին 1036 թ. աթոռանկ անելն ու Սանահնի Դեոսկորոս եպիսկոպոսին կաթողիկոս ընտրելը: Թեև այս հիմքով Ուռհայեցու վկայության հավաստիությունը վերանայելի է, սակայն փոխանորդի նշանակման դրդապատճառների վերհանման տեսանկյունից այն ունի կարևոր նշանակություն: Մատենագիրը հաստատում է, որ փոխանորդի նշանակումը կատարվում էր կաթողիկոսական իշխանությանը սպառնացող վտանգի դեպքում՝ գործող կաթողիկոսի մահվանից հետո աթոռի գործունեության շարունակումն ապահովելու նպատակով:*

---

[247] Նույն տեղում, էջ 104:

[248] Տե՛ս **Մաթևոսյան**, *Անին մայրաքաղաք*, էջ 38-40:

*Նկատենք, որ ի տարբերություն Գրիգոր Վկայասերի՝ Գետադարձը, փոխանորդ նշանակելով հանդերձ, չհրաժարվեց իշխանությունից՝ շարունակելով լիարժեքորեն իրացնել իր գործառույթները: Սա էական կարևորություն ունեցող փաստարկ է Վկայասերի հրաժարականի՝ միայն գրական գործունեությամբ պատճառաբնելը կասկածի տակ դնելու տեսանկյունից:*

*Լինելով ուղևորության հանգրվաններից մեկը՝ Կոստանդնուպոլիսը հերթականը չէր, ու Վկայասերի կամավոր ներկայությունն այնտեղ կարիք ունի մեկնաբանման: Հայոց կաթողիկոսը Կոստանդնուպոլսո՞ւմ: Գրիգոր Վկայասերին նախորդած ու հաջորդ կաթողիկոսները հնարավորինս խուսափել են այցելել Բյուզանդական կայսրության մայրաքաղաք՝ արդարացիորեն երկյուղելով մեղադրվել քաղկեդոնականությանը հարելու մեջ*[249]*:*

*Մինչ Կոստանդնուպոլիս գնալուց հրաժարված կաթողիկոսներին անդրադառնալը, փոքր-ինչ կանգ առնենք Հայոց մի քանի կաթողիկոսների՝ իրենց աթոռակալման ընթացքում Բյուզանդիայի մայրաքաղաք այցելելու դրդապատճառների վրա: Այս տեսանկյունից, իհարկե, խիստ վերապահությամբ, նշելի է Հայոց Հովհաննես Բ. Գաբեղենացի (557-572/74 թթ.) կաթողիկոսի՝ 572 թ. Կոստանդնուպոլիս գնալն ու պատրիարքի հետ քաղկեդոնիկ եկեղեցում հաղորդվելը, որի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում ժամանակի ասորի պատմիչ Հովհան Եփեսացին. «Սկզբում, երբ ժամանեցին հայոց կաթողիկոսն ու իրեն ընկերացող եպիսկոպոսներն ու մեծամեծները, որպես մոգերի անզգամ ու հեթանոս պետությունից փախած անձնավորություններ և որպես քրիստոնյաների պետության մեջ ապաստան գտածներ, հենց (տեղ) ժամանելիս մեծ հարգանքով ընդունվեցին, և առանց հարցուփորձի նրանք գնացին ու հաղորդ-*

---

[249] Տե՛ս **Բարթիկյան,** *Պետրոս Ա. Գետադարձ*, էջ 597-598:

*վեցին քաղաքի պատրիարքի հետ, առանց ստուգելու ու անհանգստանալու Քաղկեդոնի ժողովի կապակցությամբ, հոռոմների տերության մեջ (մտնող) բոլոր եկեղեցիներում առաջացած վեճերի ու բաժանումների մասին»*[250]*: Քաղվածքից հստակ երևում է, որ կաթողիկոսի այցը եղել է ոչ թե կամավոր, այլ նա Բյուզանդիայի մայրաքաղաք գնացել է Հայաստանում 571-572 թթ. հակապարսկական ապստամբության պարտությունից հետո՝ փորձելով խուսափել Սասանյան իշխանությունների վրեժխնդրությունից. ներկայացնելով ապստամբության մասին Կոստանդնուպոլսում Հովհաննես Գաբեղենացուց լսած տեղեկությունները՝ Եփեսացին գրում է. «Երբ այս բոլորը տեղի ունեցավ և ամբողջ Մեծ Հայքի ժողովուրդը տեսավ, որ իր դեմ դժվար մի պատերազմ արծարծվեց, պարսկական անզգամ պետության կողմից, որպես քրիստոնյաներ, հավաքվեցին բոլոր գավառներից, վախեցած ուզեցին ապաստան որոնել քրիստոնեական պետության (հոռոմների) մոտ»*[251]*: Մասնագիտական գրականության մեջ հիմնավոր փաստարկված է, որ քաղկեդոնիկ եկեղեցում Կոստանդնուպոլսի պատրիարքի հետ Հովհաննես Բ. Գաբեղենացու հաղորդվելը որոշակի քաղաքական իրադրության հետևանք է*[252]*: Մինչ Վկայասերն աթոռակալած կաթողիկոսներից Բյուզանդիայի մայրաքաղաք գնացել է նաև Սահակ Գ. Ձորոփորեցին (677-703) է: Բանն այն է, որ 680-ական թթ. կեսերին կրկին սրվում են արաբա-բյուզանդական հարաբերությունները: Օգտվելով խալիֆայության ժամանակավոր թուլությունից՝ Բյուզանդիան փորձեց նվաճել նախկինում արաբներին զիջած տարածքները: Եվ ահա 687 թ. Հուստինիանոս Բ. (685-695) կայսրը ստվարաթիվ զորքով ներխուժում է*

---

[250] **Հովհան Եփեսացի**, *Եկեղեցական պատմություն*, էջ 391-392:
[251] Նույն տեղում, էջ 390:
[252] Այդ մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 363-370. **Մելիքյան**, *"Narratio de rebus Armeniae"*, էջ 92-100:

*Հայաստան: Անդրադառնալով այս արշավանքին՝ «Narratio de rebus Armeniae» հայ-քաղկեդոնական երկի հեղինակը հայտնում է, որ կայսրը Սահակ Ձորոփորեցուն և հայոց եպիսկոպոսներին 689/90 թ. հրավիրում է Կոստանդնուպոլիս, որտեղ նրանք ընդունում են քաղկեդոնականություն և ստորագրում երդմնագիր, որ այլևս չեն հակառակվելու այս խնդրի շուրջ: Նույն աղբյուրի հաղորդմամբ՝ Հայաստան վերադառնալուց հետո հունադավանություն ընդունած հայ եկեղեցականները, այդ թվում՝ կաթողիկոսը, հանդիպում են տեղի հոգևորականների համառ դիմադրությանը: Վերջիններս հրաժարվում են ընդունել հայ եկեղեցականներին՝ նրանցից պահանջելով նզովել քաղկեդոնականությունը: Ի կատարումն այդ պահանջի՝ եկեղեցականները կաթողիկոսի գլխավորությամբ բանադրում են և՛ իրենց, և՛ քաղկեդոնականներին: «Նա (Հուստինիանոս Բ.-ը – Վ. Թ.) իր (թագավորության) Ե (5) տարին կաթողիկոս Սահակին (Ձորոփորեցուն – Վ. Թ.) և նրա եպիսկոպոսներին Կոստանդնուպոլիս հրավիրելով, միացրեց նրանց մեր տիրոջ և աստուծո երկու բնությունն՝ աստվածային և մարդկային, մեկ անձնավորությամբ անշփոթ և անբաժանելի ընդունողների հետ և նրանք գրավոր երդում տվեցին այլևս չհակառակվել: Նրանք, երբ վերադարձան, Հայաստանում մնացածները խորշում էին նրանց վերակացությունից, որպես հոռոմներին հարած և հակառակվում ու վիճում էին Սահակի  և նրա հետ գնացողների հետ, ասելով որ «եթե դարձի չգաք և չնզովեք նրանց, չենք ընդունի ձեզ մեր երկրում»: Իսկ նրանք սիրելով մարդկային փառքը և ոչ աստծո, նորից նզովեցին նախ իրենց, որպես հոռոմների հետ հաղորդված, ապա հոռոմներին և այդպիսով ցույց տվեցին, որ նրանք անբուժելի են իրենց չարության մեջ»[253]: Դավանաբանական «միության» մասին «Narratio de*

[253] **Բարթիկյան,** *«Narratio de rebus Armeniae»*, էջ 109:

*rebus Armeniae»-ի այս հաղորդումը հայտնի չէ որևէ այլ աղբյուրից՝ թե՛ հայկական և թե՛ օտար: Սակայն Զորոփորեցու աթոռակալման շրջանի մասին Ասողիկի վկայությունները որոշ հստակություն են մտցնում այս խնդրում: Դրանցից կարելի է մակաբերել, որ Զորոփորեցու այցը Կոստանդնուպոլիս և Քաղկեդոնի դավանությունն ընդունելը, եթե, իհարկե, իրապատում է հայ-քաղկեդոնական աղբյուրի հաղորդումը, կատարվել է հարկադրաբար: Անդրադառնալով Հուստինիանոս Բ.-ի՝ կառավարման չորրորդ տարում 689 թ., Հայաստան կատարած արշավանքին՝ պատմիչը նշում է, որ կայսրն իր մոտ է կանչում Հայոց, Վրաց, Աղվանից իշխաններին ու Հայոց կաթողիկոսին՝ 5 եպիսկոպոսների հետ և բանտարկում, իսկ ինքը գնում է Կոստանդնուպոլիս. «Իսկ ի գալ չորրորդ ամին Յուստիանոս ինքն խաղացեալ զաւրու ծանու՝ եկն ի կողմն մի Հայոց, ի լեառն, որ կոչի Արարտակ, եւ յերիս բաժանէ զզաւրս իւր, առաքէ ի Հայս, ի Վիրս եւ յԱղուանս. եւ կոչեալ առ ինքն զամենայն իշխանս աշխարհացս այսոցիկ. եւ ոչ ի կամաց, այլ ի հարկէ գնացեալ առ նա: Իսկ* ***նորա զոմանս յիշխանացն ընդ իւր առեալ եւ զոմանց զորդիսն պատանդս խնդրեալ, ընդ որս եւ զկաթողիկոսն Հայոց զՍահակ հանդերձ Ե. (5) եպիսկոպոսաւք արգելեալ առ ինքն.*** *եւ զոմանս յիշխանացն արքունատուր պատարագաւք պատուեալ՝ կացոյց իշխանս... եւ ինքն ի Կոստանդնուպոլիս դարձաւ»[254]: Սակայն «Narratio de rebus Armeniae»-ի հեղինակը, կարծում ենք՝ ոչ պատահական, ակնարկ անգամ չի անում կայսեր՝ Հայաստան կատարած արշավանքի վերաբերյալ: Հասկանալի է, որ այն արձանագրելու պարագայում խիստ դժվար կլիներ հավատել, որ կաթողիկոսի այցը Կոստանդնուպոլիս և հատկապես Քաղկեդոնի դավանանքն ընդունելը չեն եղել պարտադրված: Ասողիկը, սակայն, չի հստակեցնում,*

[254] **Ասողիկ**, *Պատմութիւն*, էջ էջ 702-703:

*թե արդյոք կայսրը կաթողիկոսին ու նրան ուղեկցող եպիսկոպոսներին իր հետ տարել է Կոստանդնուպոլիս, թե ոչ*[255]*:*

*Այժմ անդրադառնանք Հայոց այն կաթողիկոսներին, որոնք տարբեր պատճառաբանություններով, սակայն իրականում քաղկեդոնականությանը հարելու մեջ չմեղադրվելու մտավախությամբ, հրաժարվել են մեկնել Բյուզանդիայի մայրաքաղաք: Դեռևս 913 թ. բյուզանդական պատրիարք Նիկողայոս Միստիկոսին (901-907, 912-925) գրած նամակում Հովհաննես Ե. Դրասխանակերտցի (898-929) կաթողիկոսը հայտնում էր, որ փափագում է այցելել Կոստանդնուպոլիս, սակայն Աշոտ Բ. Թագավորին (914-928) ճանապարհելով, հրաժարվում է մեկնելուց՝ վախենալով մեղադրվել քաղկեդոնականություն ընդունելու մեջ. «Իսկ իմ չուեալ գնացի ի գաւառն Դերճան. և ամսօրեայ աւուրս ինչ ի նմա զետեղեալ՝ թէպետև ստէպ ստէպ հրաւիրակն կոչէր սիրալիր կամօք երթալ ի պալատն առ Կայսր, սակայն ես ոչ կամեցայ. զմտաւ ածեալ թէ գուցէ գտցի ոք և ընդ ակամբ հայեսցի զանդ երթալն իմ ի Քաղկեդոնիտսն յարակցել ինձ համարեալ: Եւ ապա այսպէս ոչ կամեցայ գնալ ի գայթակղութիւն մտաց տկարաց»*[256]*: Բյուզանդական կողմից Կոստանդնուպոլիս այցելելու հրավերներ բազմիցս են հղվել Հայոց կաթողիկոսներին, սակայն վերջիններս «մեկը՝* ***պարզ ու շիտակ****, մյուսը՝* ***պահպանելով քաղաքավարության բոլոր կանոնները*** *մերժեցին գնալ, շատ պարզ գիտակցելով, որ բյուզանդական արքունիքը մի բան է հետապնդում՝ իրենց ստիպել ընդունելու Քաղկեդոնի ժողովի որոշումները»*[257]*,- գրել է Հրաչ Բարթիկյանը: Կայսեր հրավերը «****պարզ ու շիտակ****» մերժած կաթողիկոսներից նա մատնանշում է Մովսես Բ. Եղիվարդեցուն*

---

[255] Նշյալ իրադարձությունների մանրամասն ու համակողմանի քննությունը տե՛ս **Մելիքյան**, *“Narratio de rebus Armeniae”*, էջ 147-149:
[256] Յովհաննէս Դրասխանակերտցի, *Պատմութիւն*, էջ 533-534:
[257] **Բարթիկյան**, *Պետրոս Ա Գետադարձ*, էջ 597:

*(574-604), որը, ի պատասխան Մավրիկիոս կասեր (582-602) պահանջին, ասել է, որ «չեմ անցնի Ազատ գետը, չեմ ուտի փռան հացը և չեմ խմի ջրախառն տաք գինի»[258]: Համաձայն պարսկա-բյուզանդական 591 թ. պայմանագրի՝ Ազատ գետը դարձել էր երկու տերությունների միջև սահման: Մովսես կաթողիկոսի նշած «փռան հացն» ու «գինին» խորհրդանշում էին բյուզանդական քաղկեդոնիկ եկեղեցում կիրառվող հաղորդության հացն ու ջրախառն գինին[259]: Ինչ վերաբերում է կայսեր հրավերը «**քաղաքավարության բոլոր կանոնները**» պահպանելով մերժած հայրապետներին, ապա այս շարքում հիշատակելի են Ներսես Դ. Շնորհալին և Գրիգոր Դ. Տղան: Նրանք Հայոց ու քաղկեդոնիկ եկեղեցիների միության շուրջ բյուզանդական իշխանությունների հետ վարած բանակցությունների ընթացքում բազմիցս տարբեր պատճառաբանություններով հրաժարվել են Կոստանդնուպոլիս մեկնելուց[260]: Հատկապես հետաքրքրական է Ներսես Շնորհալու՝ Մանուել Կոմնենոս կայսեր հրավերը մերժելու պատճառաբանությունը. «... զի անհնար էր յայնժամ զխնդիր թագաւորին կատարել, այսինքն՝ զիւրն երթալ ի թագաւորական քաղաքն յաղագս ծանրաբեռն լինելոյ եկեղեցական հոգովք»[261]: Պարզից էլ պարզ է, որ սա ոչ միայն մերժման հիմնավոր պատճառաբանություն չէր, այլև նույնիսկ կայսեր հրավերին չպատշաճող: Հետևելով իր նախորդի օրինակին՝ Գրիգոր Դ. Տղա կաթողիկոսը ևս, կայսեր հրավերն ընդունելով հանդերձ, երկիցս հրաժարվել է մեկնել Կոստանդ-*

---

[258] **Բարթիկյան,** «*Narratio de rebus Armeniae*», էջ 107. Նույնի՝ *Պետրոս Ա Գետադարձ*, էջ 597:

[259] Տե՛ս **Բարթիկյան,** *Պետրոս Ա Գետադարձ*, էջ 597:

[260] Այս մասին մանրամասն տե՛ս **Բարթիկյան,** *Կիլիկյան Հայաստան*, էջ 639-653: Նույնի՝ *Պետրոս Ա Գետադարձ*, էջ 593-600:

[261] **Ներսէս Շնորհալի,** *Թուղթ ընդհանրական*, 1865, էջ 148. **Բարթիկյան,** *Պետրոս Ա Գետադարձ*, էջ 598:

*նուպոլիս*[262]*։ Վերոգրյալի հաշվառմամբ պատահական չպետք է հա-
մարել, որ Ներսես Շնորհալին իր «Վիպասանութեան» մեջ, անդրա-
դառնալով Վկայասերի ուղևորությանը, խուսափում է նրա՝ Կոս-
տանդնուպոլսում եղած լինելը փաստելուց և այդ տեղանունը փո-
խարինում է «Յարևմտականսն»՝ թերևս որևէ հստակ երկրամաս
չնշանակող եզրույթով*[263]*։ Ուշագրավ է, որ Հովհաննես Դրասխանա-
կերտցու՝ Կոստանդնուպոլիս չգնալու դրդապատճառը չէր մոռացվել
անգամ ԺԳ. դարում։ Այդ մասին տեղեկանում ենք «Վասն մոլորման
Ջատկին» 1292 թվակիր գրվածքից. «... թագաւորն յունաց մեծաւ
պատուով առաքեաց ի Հայք եւ փափաքանաւք կոչեաց առ ինքն
զկաթողիկոսն (Հովհաննես Դրասխանակերտցուն – Վ. Թ.) ի տեսու-
թիւն, եւ ոչ կամեցաւ գնալ, ասելով պատճառ զայս ինչ եթէ զի մի
գայթակղեցուսցէ զազգ իւր, կարծիս տալով ի գնալն քաղկեդոնիկ
եղեալ, ոչ գնաց»*[264]*։ Հաջորդիվ կարդում ենք. «Եւ ի Գրիգորի կաթո-
ղիկոսի (հավանաբար նկատի ունի Գրիգոր Դ. Տղային – Վ. Թ.)
թխտերն, որ ի Հոռմկլայն էին, գրած էր այսպէս. եթէ յոյնք **առաքե-
ցին եւ խնդրեցին** թէ զայլն ամենայն ներենք ձեզ, միայն զայս մինս
արարէք, զի Բ բնութիւն ասէք, եւ միաբանիմք սիրով, **եւ հրաժարե-
ցին եւ յանձն ոչ առին**»*[265]*։*

*Այսպիսով՝ հարց է ծագում, թե որ դեպքում էր հնարավոր Վկա-
յասերի կամավոր այցելությունը Կոստանդնուպոլիս, իհարկե՝ կաթո-
ղիկոսական աթոռից **կանոնական** և **հրապարակավ** հրաժարման։
Դատելով Կիրակոս Գանձակեցու և Մատթեոս Ուռհայեցու վկայու-
թյուններից՝ այն կատարվել էր ժողովական որոշմամբ. «Եւ կոչեալ*

---

[262] Տե՛ս **Բարթիկյան**, *Պետրոս Ա. Գետադարձ*, էջ 598։
[263] **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 118։
[264] **Պողարեան**, *Ցուցակ*, հ. Երրորդ, էջ 615։
[265] Նույն տեղում։

զհօտ իւր՝ զեպիսկոպոսս և զերիցունս, և զիշխանս, ասաց նոցա զմտածումն իւր»[266], - գրում է Կիրակոս Գանձակեցին:

Գեորգ Լոռեցուն տեղապահ նշանակելով՝ Գրիգոր Վկայասերը չէր կարող խուսանավել բյուզանդական իշխանությունների հարուցած արգելքներից: Հրապարակային հրաժարականն ու Լոռեցուն լիիրավ կաթողիկոս կարգելն ազատ գործելու հնարավորություն պետք է տային նրան, հատկապես՝ Հայոց եկեղեցու դավանական ինքնուրույնության ամրապնդման ուղղությամբ, որին էլ ամբողջովին միտված էր նրա թարգմանական գործունեությունը, ինչին առավել մանրամասն կանդրադառնանք ստորև: Ուստի պատահական չէ, որ Վկայասերի «պանդխտանալը», նույնն է թե՝ սրբոց վարքերի ուսումնասիրությամբ ու թարգմանությամբ զբաղվելը սկզբնաղբյուրներում հիշվում է հրաժարման փաստի արձանագրումից անմիջապես հետո՝ տպավորություն ստեղծելով, թե կաթողիկոսի պաշտոնը որոշակիորեն խոչընդոտում էր այդ հույժ կարևոր գործին[267]: Այս կարծիքն անուղղակիորեն հաստատում է նաև Վարդան վարդապետը՝ գրելով. «Եւ գիտացեալ (Գրիգոր Վկայասերը – Վ. Թ.), թէ ոչ ոք է այնմ բաւական որպէս զինքն, որ վարժեալ էր ի մանկութենէ հելլէն լեզուաւ եւ գրով: Եւ զայն եւս մտածեալ, եթէ զերկու պսակն փառաց յոյնք առ ինքեանս տարան ի Հայոց Մեծաց զկաթողիկոսութիւն եւ զթագաւորութիւն: Գրէ յարեւելս ձեռնադրել զազգականն իւր զսուրբն Բարսեղ կաթողիկոս, եւ ի տեղի իւր թողու

---

266 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն*, էջ 95-96. **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 190:

267 Քաղվածաբար նշենք այս միտքը հաստատող սկզբնաղբյուրային՝ վերն արդեն հղված մի քանի վկայություն. *«Զայլս ոմանս յիւրոց հարազատաց ձեռնադրէ փոխանակ իւր, եւ ինքն զանխլաբար պանդխտանայ աղաւթից եւ վերծանութեան պարապելով», «զի իւր կամաւ տուեալ զիշխանութիւնն կաթողիկոսութեան յիւր վարդապետն՝ ի Գէորգ վարդապետն և ինքն վարդապետութեան և թարգմանութեան պարապէր»* և այլն:

*զԳէորգ վարդապետն իւր եւ ինքն զանխլաբար… գնայր զերկայնաձիգ ճանապարհն հետի յիսուսաբար վաստակեալ ի թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպալիս»*[268]*: Սակայն նա Կոստանդնուպոլիս մեկնեց ոչ թե հրաժարականից անմիջապես հետո, այլ միայն 1075/76 թ.: Կարծում ենք՝ ուղևորության առժամանակ հետաձգումը պետք է պատճառաբանել 1068 թ. բյուզանդա-սելջուկյան ռազմական հակամարտության վերսկսմամբ: Նույն թվականին Բյուզանդիայում գահ բարձրացած Ռոմանոս Դ. Դիոգենես կայսրն արշավանք ձեռնարկեց սելջուկ -թյուրքերի դեմ և տևական մարտերից հետո՝ 1069 թ., գրավեց Մեմբիջ քաղաքը: Դրան շուտով հաջորդեցին երկուստեք ռազմական բախումները՝ ընդհուպ մինչև Մանազկերտի 1071 թ. ճակատամարտը, որտեղ կրած ջախջախիչ պարտությունը նկատելիորեն խարխլեց Բյուզանդական կայսրության դիրքերը Փոքր Ասիայում*[269]*: Ինչպես ստորև կտեսնենք, Կոստանդնուպոլսում թարգմանություններ կատարելու և տեղի գրադարաններից ազատորեն օգտվելու թույլատվություն Վկայասերն ստացավ միայն կայսեր ու պատրիարքի համաձայնությամբ: Այսինքն՝ հրաժարականից հետո Կոստանդնուպոլիս մեկնելն արդյունք տալ չէր կարող, քանզի կայսրը մայրաքաղաքում չէր, իսկ երկիրն էլ պատերազմի մեջ էր: Դրա հետևանքով նաև խիստ վտանգավոր էին դարձել Կոստանդնուպոլիս տանող ճանապարհները, ինչը ևս ուղևորությունն առժամանակ հետաձգելու ծանրակշիռ պատճառ էր: Վերոգրյալի հաշվառմամբ՝ միանգամայն տրամաբանական պետք է համարել երկարատև ուղևորությունը միայն 1075/76 թ. սկսելը, երբ տարածաշրջանում իրավիճակն արդեն որոշակիորեն կայունացել էր:*

---

[268] **Վարդան Արևելցի**, *Հաւաք*, էջ 365-366:

[269] Այդ մասին մանրամասն տե՛ս **Բոռնազյան**, *Հայաստանը և սելջուկները*, էջ 133-165:

*Գրիգոր Վկայասերի՝ Կոստանդնուպոլիս այցելելու ժամանակ Հովհաննես Դրասխանակերտցու մատնանշած մտավախությունը չկար ու չէր էլ կարող լինել, քանզի նա այնտեղ այցելեց ոչ որպես Հայոց կաթողիկոս: Դա նրան հնարավորություն տվեց խույս տալու բյուզանդական իշխանությունների կողմից հաճախ հարուցվող դավանաբանական վեճերից ու Քաղկեդոնի դավանանքն ընդունելու պարտադրանքից:*

*Փաստորեն, անհրաժեշտ էր, որ գոնե կայսրության սահմաններում, ինչպես նաև ոչ հայկական միջավայրում Գեորգ Լոռեցին ներկայանար որպես լիիրավ կաթողիկոս: «Գիրք Թղթոց» ժողովածուում ներառված «Տեառն Գէորգայ Հայոց Վերադիտողի եւ հոգեշնորհ փիլիսոփայի պատասխանի Թղթոյն Յովհաննէսի Ասորւոց պատրիարգի» նամակից պարզվում է, որ Գեորգ Լոռեցին որպես Հայոց կաթողիկոս պատասխանել է ասորիների պատրիարք Հովհաննես Բարշուշանի (1064–1073)՝ հայերին ուղղված մեղադրական գրությանը: Նամակին անդրադարձած հայագետները, թվում է, միակարծիք են, որ պատասխանի հեղինակը Գեորգ Լոռեցին է[270]: Եթե այդպես է, ապա վերջինս մինչ 1072 թ. նաև արտաքին աշխարհում հանդես է եկել որպես Հայոց կաթողիկոս:*

*Այսպիսով՝ հրաժարականի հիմքում, ի թիվս վերոբերյալ և ստորև ներկայացվելիք այլ գործոնների, ընկած էին նաև բյուզանդական տիրապետության պայմաններում ազատ գործելու հնարավորության բացակայությունն ու առկա խոչընդոտներն ամեն կերպ հաղթահարելու ժամանակի հրամայականը: Այդ հանգամանքը որո-*

---

[270] Տե՛ս **Տէր-Մինասեանց**, *Հայոց եկեղեցու յարաբերութիւնները…*, էջ 93, 189-193. **Վարդանեան**, *Յովհաննէս Ժ. Բար-Շուշան*, սյուն. 200-202. **Օրմանեան Մ.**, *Ազգապատում*, սյուն. 1503. **Անասեան**, *Վարդան Այգեկցին*, էջ 203, 204, 293: Լոռեցու պատասխան թղթի քննական հրատարակությունը տե՛ս Գէորգ Լոռեցի, *Թուղթ*, էջ 633-693:

*շակիրեն փաստվում է 1098 թվակիր մի հիշատակարանում. «Յորում ժամանակի հանդիպի թիւ թուականիս Հայկոց ՇԽէ (1098), ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Գրիգորիսի, ... **եւ զի յոյժ խռովութեան եւ բազմավրդով էր ժամանակս ի բռնակալութենէ այլասեռից, զայլս ոմանս յիւրոց հարազատաց ձեռնադրէ փոխանակ իւր**, եւ ինքն զանխլաբար պանդխտանայ աղաւթից եւ վերծանութեան պարապելով»[271]: Վկայասերի համաձայնությամբ ձեռնադրված կաթողիկոսներին **«յիւրոց հարազատ»** կոչելով՝ գրիչն արձանագրում է նրանց (նկատի ունենք Գեորգ Լոռեցուն, Բարսեղ Անեցուն) համերաշխ և, որ ամենակարևորն է՝ փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերությունները: Այս դեպքում արդեն լիարժեքորեն պատճառաբանվում է հրաժարականից հետո նրանց նկատմամբ Գրիգոր Վկայասերի գերագահ իշխանության փաստացի պահպանումը:*

## Զ. Գրիգոր Վկայասերի գրական և թարգմանական գործունեության իրական շարժառիթները

*Գրական գործունեությամբ և հունարեն ու ասորերեն վարքաբանական գրականության թարգմանությամբ Գրիգոր Վկայասերի զբաղվելը[272] հայագիտության մեջ գնահատվել է որպես զուտ գիտական, այսինքն՝ չեն բացահայտվել նրա գործունեության այդ ոլորտի իրական դրդապատճառներն ու հետամտած նպատակները: Կարծվել է, որ նա հայրապետական իշխանությունից հրաժարվել է, քանզի առավել գերադասել է հոգևորականի կյանքն ու գիտական զբաղմունքները: Վկայասերի գրական գործունեությունը հետապն-*

---

[271] **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 117:

[272] Գրիգոր Վկայասերի գրական ու թարգմանական գործունեության մասին մանրամասն տե՛ս **Ավդալբեգյան**, *«Յայսմաւուրք» ժողովածուները*, էջ 29-53. **Վարդանյան**, *Հայոց տոնացույցը*, էջ 267-297:

*դում էր որքան հոգևոր ու գիտական, այնքան էլ քաղաքական նպատակներ*[273]*: Այն միտված էր էթնոկրոնական նոր միջավայրում, որտեղ հայ աշխարհիկ իշխանական տարրը դեռ նոր էր սաղմնավորվում և կայուն պատվար չէր Հայոց եկեղեցու համար, ապահովել վերջինիս դավանական և ծիսական ինքնուրույնությունը: Դա այլևս մեկուսի, առանց այլ եկեղեցիների (հատկապես՝ Բյուզանդիայի քաղկեդոնիկ եկեղեցու) հետ առնչվելու, հնարավոր չէր: Սակայն հարաբերությունների սերտացումը չէր նշանակում բյուզանդական կողմի առաջադրած պահանջների, հատկապես Քաղկեդոնի դավանանքնի ընդունում, այլ, ինչպես մինչ այդ էր, հիմնավոր և պատճառաբանված պատասխանել դրանց: Բյուզանդական իշխանությունների շարունակական ճնշման պայմաններում անհրաժեշտ էր անխոցելի դարձնել Հայոց եկեղեցու տեսակետը եկեղեցիների միության և Քաղկեդոնի դավանանքը մերժելու վերաբերյալ, ինչն առավել դյուրին կլիներ թե՛ քաղկեդոնիկ և թե՛ Հայոց եկեղեցիների կողմից ընդունելի վարքաբանական գրականության օգտագործմամբ: Պարզ է, որ օտարալեզու երկերի արդյունավետ կիրառումը հնարավոր էր դրանք հայերեն թարգմանելու միջոցով: Քննվող ժամանակաշրջանում այդ խնդիրն ուներ առավել քան քաղաքական կարևո-*

---

[273] Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններում ռազմաքաղաքական շարժառիթների գերակայությունը հայագիտության կողմից արդեն իսկ հիմնավորված ու փաստարկված է (այդ մասին մանրամասն տե՛ս **Բարթիկյան,** *Կիլիկյան Հայաստան*, էջ 639-653. Նույնի՝ *Հայ-բիզանդական եկեղեցական յարաբերութիւնները*, էջ 27-63. **Բոզոյան,** *Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը*, էջ 14 և այլն. Նույնի՝ *Եկեղեցական բանակցություններ*): Վկայասերի հրաժարականի վերոբերյալ պատճառաբանությունից նկատելիորեն տարբեր և, թերևս, իրականությանն առավել մոտ է Միքայել Չամչյանցի տեսակետը, համաձայն որի՝ օտարի տիրապետության պայմաններում աթոռակալելու, մասնավորապես ազգին պատուհասած դժվարությունները հաղթահարելու անհնարինությունը նրան դրդեց առժամանակ ձեռնպահ մնալու հայրապետական գործառույթներից (տե՛ս **Չամչեանց**, *Պատմութիւն*, հ. Բ, էջ 994):

րություն, հակառակ պարագայում՝ հնարավոր չէ բացատրել հայ աշխարհիկ իշխանությունների մասնակցությունը բյուզանդական կողմի հետ տարվող դավանաբանական բանավեճերին, որոնք այնքան հաճախադեպ էին այդ շրջանում:

Վկայասերը հունարեն վարքաբանական գրականության որոշ նմուշների թարգմանությունը[274], ինչպես նաև եկեղեցական շատ տոների՝ հայոց տոնացույց մուծելը պատճառաբանում է հստակ և մեկին. «… ես Գրիգորիս ծառայ Աստուծոյ և դիտապետ Հայաստան ազգիս, համարձակեալ վասն սիրոյ վկայից Քրիստոսի, յաւելի ի նախակարգեալ տաւնսն Հռոմի ամսոց, ընտրեալ ի Տաւնամակաց յոքունց զսակաւս, որ ի բազմաց անփոյթ էր լեալ: Եւ մեք աշխատեալ զայսպիսի համառաւտահաւաք **Տաւնամակս** գրեցաք ի պայծառութիւն եկեղեցւոյ, զոր ցանկ ընթերցցի ի նմա ի ժամու սոսկալի պատարագին, **զոր մի ոք աւելորդ վարկցի՝ զորոց զվարս քաղաքավարական պատմութեանց, զոր ոչ գոյր առ մեզ հայ գրով**, մեք աշխատութեամբ թարգմանեցաք ի յունականէն ի մերս գիր ու բառ»[275]: Տոնանամակի (Հայսմավուրք), կամ ազգային տոնական ժողովածուների ստեղծումը, ինչը Վկայասերի գրական գործունեության առանցքն է, եկեղեցական տոնակարգի սահմանումից զատ, ուներ պատմաքաղաքական կարևորություն՝ ազգային ավանդները պահպանելու և օտարների հնարավոր ոտնձգություններին հակադարձելու տեսանկյունից[276]:

---

[274] Ի դեպ, դրանք այնպիսի աշխատություններ էին, որոնք ընդունելի էին Հայոց եկեղեցու կողմից և որևէ կերպ չէին խաթարում նրա դավանական անաղարտությունն ու ինքնուրույնությունը: Այսինքն՝ կարող էին ոչ միայն հարստացնել հայոց կրոնական պատկառելի ժառանգությունը, այլև նպաստել մեր եկեղեցու դիրքերի ամրապնդմանը:

[275] **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 139:

[276] Տե՛ս **Ավդալբեգյան**, *«Յայսմաւուրք» ժողովածուները*, էջ 36:

*Վկայասերի թարգմանած ստեղծագործությունները կա՛մ մինչ այդ հայերենի փոխադրված չէին, կա՛մ էլ չկային Հյուսիսային Ասորիքի և Մերձավոր Արևելքի նոր հիմնվող հայկական եկեղեցական կենտրոններում. «Կամեցաւ գնալ ի Կոստանդինուպաւլիս, զի թարգմանեսցէ զպատմութիւն սրբոց և զճառս ներբողականս,* ***որ ոչ գտան իւր առ մեզ հայ լեզուով և գրով***»[277], - *կարդում ենք Պահլավունի կաթողիկոսների հայսմավուրքյան վարքում: Ըստ Ներսես Շնորհալու վարքագրի՝ Գրիգոր Վկայասերն ուներ «շնորհս թարգմանութեան և միշտ քննէր զգիրս ամենայն ազգաց և զպիտանիսն՝* ***զոր ըստ մերս թերի գտանէր՝*** *թարգմանէր աշխատասիրաբար ինքեամբ և այլովք ոմամբք ճարտարօք, և աւանդէր եկեղեցւոյ սրբոյ. կարգէր տօնս վկայից և արանց սրբոց»*[278]: *Այն, որ հունարեն ու ասորերեն կրոնական գրականությունից Վկայասերի թարգմանություններն ունեին հայոց ծիսական ժառանգության մեջ առկա բացը լրացնելու նպատակ, շեշտում է նաև նրա մահախոսականի հեղինակը. «Թարգմանութեանցն պարապէր, || Զամէն ազգաց գիրըս քննէր: || Զորս պիտանի բանս ճանաչէր, || Զայն ի լեզու մեր փոխարկէր, || Մեզ զամենայնն ընդարձակէր, ||* ***Եւ զորս պակաս լըցուցանէր***»[279]:

*Հայոց եկեղեցու նկատմամբ բյուզանդական իշխանությունների վարած քաղաքականությունը չէր սահմանափակվում նրա ծիսական համակարգում այս կամ այն ծեսի ու սրբոց վարքերի բացակայությունը մատնանշող հանդիմանություններով: Այն ուներ հստակ արտահայտված հակահայկական բնույթ, ինչը դրսևորվում էր Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը սահմանափակող պահանջներով, հոգևորականության (այդ թվում՝ կաթողիկոսի) նկատմամբ սահմանված արգելքներով ու վերահսկողությամբ, որոնք Վկայասերը, ոչ*

---

277 *Համաբարբառ Յայսմաւուրք*, Ը, Աւգոստոս, էջ 147. **Տաշեան**, *Ցուցակ*, էջ 25, 565:
278 *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 18-19:
279 **Վարդան Հայկազն**, *Տաղ գերեզմանական…*, էջ 777-778:

*ավել, ոչ պակաս, համեմատում էր մինչ այդ հայերի հանդեպ մուսուլման տիրապետողների գործադրած հալածանքների հետ. «... ես (Գրի)գոր՝ որդի Գրիգորի Մագիստրոսի... կոչեցա ի դիտապետութիւն Ասքանազեանս և բնիկ աթոռ հայրապետութեան նախնեացն իմոց, եւ բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց* ***հեթանոսաց*** *(նկատի ունի մուսուլման տիրակալներին – Վ. Թ.)* ***և ի յե(ր)կաբնակաց*** *(նկատի ունի քաղկեդոնականներին – Վ. Թ.)»*[280]*:*

*Հայոց եկեղեցական գրականությունը, անշուշտ, պետք է հարստացվեր: Այն, որ Վկայասերի նպատակը քաղկեդոնիկ եկեղեցուն ու դավանանքին մերձենալը չէր, հիմնավորվում է հակաքաղկեդոնական բնույթի մի շարք երկասիրությունների՝ նրա օրոք թարգմանվելու և ընդօրինակվելու փաստով: Այսպես՝ Վկայասերի հրամանով է կատարվել հակաքաղկեդոնական ասորի գործիչ Սուրբ Բարսումայի վարքի թարգմանությունը. «Ես Գրիգոր նուաստ քահանայ ի բազում գթոյ գրեցի զվարս մեծի ճգնաւորին Քրիստոսի Պարսամաւի...: Այս պատմութիւն վարուց երանեալ ճգնաւորի (Բարսումայի – Վ. Թ.) նախ գոլով թարգմանեալ ի հոյակապ և հռչակաւոր մայրաքաղաքն Հայոց Մելիտինւոյ,* ***հրամանաւ և ծախիւք մեծին Գրիգորիսի կաթողիկոսի և վկայասիրի,*** *ի ձեռն Գրիգորի ուրում[ն] քահանա[յ]ի»*[281]*: Այս վարքն իր կարևորությունը պահպանեց նաև հետագայում. այն ոչ միայն վերստին թարգմանվեց*[282]*, այլև, որ ամենակարևորն է՝ մուտք գործեց հայոց Հայսմավուրքների մեջ*[283]*: Հետաքրքրական է, որ Ներսես Շնորհալին թարգմանության օրինակն ստացողներին հորդորում է. «վերըստին գրէք զայս պատմու-*

[280] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 135-136:

[281] **Անասյան,** *Հայկական մատենագիտություն*, սյուն. 1438. Նույնի՝ *«Արմատ հաւատոյ»*, էջ 284:

[282] Տե՛ս **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 160:

[283] Տե՛ս **Անասյան,** *Հայկական մատենագիտություն*, սյուն. 1439-1441. Նույնի՝ *«Արմատ հաւատոյ»*, էջ 284:

*թիւն երանելոյն», այսինքն՝ հետևողականորեն տարածել*[284]*։ Այս շարքին պետք է դասել Գրիգոր Վկայասերի կողմից, ինչպես նաև նրա նախաձեռնությամբ «Գիրք թղթոց» ժողովածուի, Հովհաննես Գ. Օձնեցու (717-728) «Գիրք կտակի ուղղափառութեան» երկի ընդօրինակումները, օտար հեղինակներից Հովհանն Ոսկեբերանի ու Եփրեմ Ասորու աշխատությունների թարգմանությունները*[285]*։ Վերջին երկու հեղինակների բազմաթիվ երկասիրություններ ներառված են Վարդան Այգեկցու կազմած «Արմատ հաւատոյ» ժողովածուում, որն օգտագործվել է որպես «պատուար քաղկեդոնական շարժման դէմ»*[286]*։ Ինչպես հայտնի է, այդ էր նաև «Գիրք թղթոց» ժողովածուի ստեղծման նպատակը. «Թղթոց Գրքին պարունակութիւնն ալ դիտելով, կրնանք յաւելուլ թէ առաւելապէս Նեստորական և Քաղկեդոնական մեծ խնդիրը եղաւ պատճառ՝ որ անոր վերաբերյալ գրութիւններ ի մի հաւաքուին և ծառայեն Հայաստանեայց Եկեղեցւոյն և Հայրապետական Աթոռոյն իբր ձեռնարկ մը, այդ խնդրոյն վրայ որոշ ուղղութիւն մը ունենալու համար ընդդիմախոսից հանդէպ»*[287]*,- կարդում ենք ժողովածուի 1901 թ. հրատարակության առաջաբանում։*

*Աղբյուրների միաբերան հավաստմամբ՝ Վկայասերը ջերմ ընդունելության է արժանացել Կոստանդնուպոլսում, և կայսեր հրամանով նրան հասու են եղել «զմատեանսն ամենայն»*[288]*։ Դատելով Վկայասերի թարգմանած աշխատությունների բնույթից՝ բյուզանդական իշխանությունների նման բարեհաճությունն անսպասելի էր, քանզի դրանք պետք է ծառայեցվեին հակաքաղկեդոնական պայքարին։ Մնում է կարծել, որ բյուզանդական արքունիքում տեղյակ չէին*

---

[284] Տե՛ս **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 160։

[285] Տե՛ս **Պողարեան**, *Յուցակ*, հ. երրորդ, էջ 238. **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 108, 111, 134։

[286] **Անասեան**, *Վարդան Այգեկցին*, էջ 208 և հտ.։

[287] *Գիրք թղթոց*, էջ Ե։

[288] *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 22։

*Վկայասերի ձեռնարկած բոլոր թարգմանություններին, հակառակ պարագայում՝ նրան չէին ընդառաջի։ Այս դեպքում արդեն լիովին բացատրելի է դառնում Ներսես Շնորհալու վարքագրի վկայությունն այն մասին, որ Գրիգոր Վկայասերը բյուզանդական իշխանություններից գաղտնի՝ իր քրոջ որդի Գրիգորիսի միջոցով է այդ աշխատությունների թարգմանությունները դուրս բերել Կոստանդնուպոլսից՝ մտավախություն ունենալով, որ բյուզանդական իշխանությունները կարգելեն դա անել. «կասկածէր սուրբ հայրապետն (Գրիգոր Վկայասերը – Վ. Թ.) ի յունականն խօթամիտ և բարձրայօնակ հնացեալ չարութենէ. զի թէ իմասցին,* ***ոչ տացեն հանել ի նոցանէ զթարգմանեալ մատեանսն***։ *Ապա այլ իմն խորհուրդ զմտաւ ածեալ, պատրաստէր զորս ընդ նմայն էին ազգայինքն իւր, և ընտրելոց արանց ժողով, և զորդի քեռն իւր... զտէր Գրիգորիոս հանդերձ ամենայն կահիւն իւրենաց մտանել ի նաւ. և յառաջագոյն անցանել ի սահմանս Պաղեստինացւոց. և ինքն զկնի սակաւ աւուրց առեալ հրաման յարքայէ, և ողջունիւ բաժանեալ յամենեցունց, զի թեթեւակի բացանաւեալ հասցէ նոցունց»*[289]*։ Թարգմանությունները, ի վերջո, որոշ ժամանակ անց փոխադրվեցին Քեսունի Կարմիր վանք*[290]*։*

*Մերձավոր Արևելքի նոր հիմնվող հայկական հոգևոր-եկեղեցական կենտրոններում կար հայերեն կրոնական գրականության պակաս, ինչը բյուզանդական քաղկեդոնիկ եկեղեցու դեմ ժամանակին մղվող պայքարում հայոց դիրքերը դարձնում էր խոցելի. «Որ թէպէտ եւ հարկաւորն կայր յամենայնէ այլ ոչ լիակատար եւ անթերի, զորս նա (Գրիգոր Վկայասերը – Վ. Թ.) ոչ կամեցաւ թողուլ այլոց ազգաց պատճառս պարծանաց ունել ինչ աւելի, քան զմեզ»*[291], - կարդում

[289] Նույն տեղում, էջ 22-23:

[290] Տե՛ս *Համաբարբառ Յայսմաւուրք*, Ը, Աւգոստոս, էջ 147. **Տաշեան**, *Ցուցակ*, էջ 25:

[291] **Վարդան Արեւելցի**, *Ճառք*, էջ 365:

*ենք Վարդան վարդապետի՝ Պահլավունի կաթողիկոսներին ուղղված ներբողում: Այդ բացը լրացնելու նպատակով հայ գիտնական-հոգևորականները, հետևելով Գրիգոր Վկայասերի օրինակին, հաճախ էին մեկնում Կոստանդնուպոլիս, քանզի հայրենիքի ճանապարհը սելջուկյան իշխանությունների հարուցած խոչընդոտների պատճառով խիստ վտանգավոր էր: Այսպես՝ հավանաբար Սկևռայում գրված 1095-1099 թվակիր մի հիշատակարանից տեղեկանում ենք, որ տեղի հոգևորականներից ոմն Գրիգոր, մտահոգ հայերեն կրոնական գրականության բացակայությամբ, գնում է Կոստանդնուպոլիս և մի կրոնավորի միջոցով հայերեն թարգմանում սրբոց վարքեր*[292]*:*

*Գրիգոր Վկայասերի հեղինակած հիշատակարանների, ինչպես նաև Մատթեոս Ուռհայեցու հաղորդումների ժամանակագրությանը հետևելով՝ պարզում ենք, որ կաթողիկոսը թարգմանական ու գրական գործունեությամբ զբաղվելու իր հետամտած իրական նպատակները բացահայտում է աթոռակալման վերջալույսին, երբ Բարսեղ Անեցու ջանադիր գործունեության շնորհիվ վերականգնվել էր Հայոց կաթողիկոսի ընդհանրական իշխանությունը, և համեմատաբար կայուն հիմքեր էին ստեղծվել դրա շարունակականության համար: Ասվածի առհավատչյան 1102 թ. Ծռազատկի առթիվ հայերի ու բյուզանդացիների միջև առաջացած վիճաբանության առիթով ուռհայեցիներին ուղղված կաթողիկոսի թուղթ-հորդորն է: Ինչպես հայտնի է, դեռևս Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս Ա.-ի (527-565) հրամանով նշանավոր տոմարագետ Իռիոնը շրջանառության մեջ էր դրել տոմարական նոր աղյուսակ, ըստ որի՝ Հարության տոնը նշվում էր ապրիլի 5-ին: Սակայն Հայոց եկեղեցին, մերժելով Իռիոնի տոմարը, այն շարունակում էր տոնել ապրիլի 13-ին, ինչն էլ ժամանակ առ ժամանակ Հայոց և հունադավան եկեղեցիների միջև վիճա-*

---

292 Տե՛ս **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 121. **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 257-258:

բանությունների պատճառ էր դառնում: Բյուզանդացիների մեղադրանքներին հակադարձելու նպատակով Եդեսիայի հայերը դիմում են այդ ժամանակ Սև լեռների Արեգի մենաստանում գտնվող Գրիգոր Վկայասերին: Անսալով իր հայրենակիցների խնդրանքին՝ կաթողիկոսը նրանց է ուղարկում շրջաբերական թուղթ, որի պատճենը, բարեբախտաբար, պահպանվել է Ուռհայեցու երկում: Դրանից հետևում է, որ հայության շրջանում հստակ պատկերացում չկար Գրիգոր Վկայասերի «մեկուսացման» վերաբերյալ, և առկա էր մտայնություն, թե իբր հայրապետը հաղորդակից չէ իր հոգևոր հոտին պատուհասած դժվարություններին: Այստեղ, թերևս, առաջին անգամ Վկայասերը հրապարակայնորեն փարատում է ժողովրդի շրջանում առկա մտավախությունն ու պնդում, որ զորավիգ է ուռհայեցիներին և հաստատակամ հայոց դավանական ինքնուրույնության պահպանման խնդրում. «... **ոչ իբրև զվատասրտեալ հովիւ արտաքոյ մնամ կրիցն,** այլ կամաւորութեամբ ես մահակից ձեզ գտանիմ յամենայն գործս և ի տեսակս տանջանաց **և ոչ օտարանամ կամ յուրաստ կամ**»[293]:

Մեր առջև կարծես նոր կաթողիկոս է հառնում՝ ըմբոստ ու անգամ ընդվզման պատրաստ. «... ահա պատրաստ կամ յամենայն իրս տալ պատասխանի, զոր ինչ և հարցանիցեն, բայց ի պատեհ և դիպող ժամու. և եթէ տանջանօք է կամ բռնութեամբ, և ոչ յայնմանէ յուրաստ կամք»[294], - դիմելով ուռհայեցիներին՝ գրում է Վկայասերը: Նա բացահայտում է, որ իր դեգերումների, փախուստի և տառապանքների գլխավոր նպատակը հայոց դավանանքի անխոցելիությունն առավել ամրապնդելն էր, ինչի կարիքն այնքան զգացվում էր այդ ժամանակ: Կաթողիկոսը հավելում է, որ եթե սին է առ Աստված ունեցած հույսը, և արդարացված չեն դավանանքի համար կրած տառապանքները, ապա զուր է հայադավանության համար նրա

[293] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 289-290:
[294] Նույն տեղում, էջ 290:

*մղած անհաշտ պայքարը. «... զնոյն և ես ասեմ, եթէ այս ամենայն շրջագայութիւնս և փախուստ անձուկս ինձ տարապարտ է անցեալ, եթէ վասն պարսաւելի հաւատոյս զայս գործեցի. և քառասուն ամ կամ իմով հայրապետութեամբ և զիմ հայրենի տունն ի խաղաղութեան ժամանակի թողի՝ ի չայս փոխեցայ»*[295]*: Սակայն նա առավել քան համոզված է, որ պայքարն անպտուղ չի մնացել, քանզի ինքն այլևս հայոց հավատքի ճշմարտացիությունը հավաստող բազում հիմքեր ունի, որոնց շարքում են, անշուշտ, իր հեղինակած և հատկապես թարգմանած արժեքավոր գործերը. «... բայց յուսովն Աստուծոյ եմ և* ***վկայութեամբ Սուրբ Գրոց****, վասն զի զուղղափառն և զանթերին ունիմ զհաւատն»*[296]*:*

*Կաթողիկոսը վրդովմունքի պահին անգամ չի կորցնում իր ողջախոհությունը՝ համոզված պնդելով, որ պատասխանի համար ամեն պահ չէ, որ պատեհ է, ուստի կոչ է անում ժամանակ առ ժամանակ համբերել, մինչ իրապայմանների՝ հօգուտ հայերի դասավորվելը: Պետք չէր մոռանալ, որ բյուզանդական կողմը հանդես էր գալիս գերիշխողի ու պահանջողի դիրքերից, իսկ մեր գլխավոր խնդիրը դրանց դեմ պատնեշ կառուցելն էր: Հակամարտող կողմերի ուժային անհամաչափությունը որոշակիորեն նպաստեց հայոց հոգևոր-եկեղեցական նշանավոր հայրերի կողմից դավանական հանդուրժողականության ու ազգամիջյան համերաշխության գաղափարների քարոզչությանը հատկապես ԺԲ. և ԺԳ. դարերում, թեև այդ սնող այլ հիմնավոր պատճառներ ու հիմքեր ևս կային*[297]*: Դա միջոց էր Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը պահպանելով հանդերձ՝ հաշտության եզրեր գտնել Քաղկեդոնիկ եկեղեցու, ինչպես նաև բյուզանդական ու վրացական իշխանությունների հետ:*

---

[295] Նույն տեղում, էջ 291:

[296] Նույն տեղում:

[297] Տե՛ս **Անասեան,** *Վարդան Այգեկցին*, էջ 179-220. **Մուրադեան,** *Դաւանաբանական…*, էջ 319-343:

Վերոգրյալի հաշվառմամբ վերադառնալով Գրիգոր Վկայասերի հրաժարականին՝ դժվար է պնդել, թե Մատթեոս Ուռհայեցուն հայտնի էին դրա իրական պատճառները: Մի բան, սակայն, պարզ է. տեղյակ լինելու դեպքում անգամ նա չէր հրապարակի դրանք, քանզի իր երկասիրությունը շարադրում էր բյուզանդական տիրապետության շրջանում և «գաղտնիքի բացահայտումը» վտանգավոր կլիներ կաթողիկոսության համար[298]: Մեկ այլ տեղ՝ հայկական իշխանությունների նկատմամբ խաչակիրների գործած վայրագությունների մասին շարադրելիս, Մատթեոս Ուռհայեցին հայտնում է, որ կաշկանդված է և չի կարող ավելին հայտնել. «... զբազում անիրաւութիւնս նոցա կամէի գրել, բայց ոչ համարձակեցաք, զի ընդ իշխանութեամբ նոցա էաք»[299]:

***

Հայագիտության մեջ քննվող ժամանակաշրջանը կաթողիկոսական իշխանության համար իրավացիորեն բնորոշվել է որպես անցումային, քանզի այս պատմափուլում է, որ տեղի է ունենում կաթողիկոսական իշխանության սահմանների և այդ հիմքով նաև՝ տիտղոսի փոփոխություն. «Կաթողիկոս Հայոց Մեծաց» տիտղոսի աշխարհագրական ընկալումն աստիճանաբար փոխվում է էթնիկ հատկանիշով, որն էլ ընկած է «Կաթողիկոս Ամենայն հայոց» կոչմանը

298 «Գաղտնապահ» լինելը բնորոշ էր միջնադարի հայ պատմիչներին: Այս առումով նշելի է Կիրակոս Գանձակեցու՝ Հայաստանի իշխանավորների հետ Կարակորում մեկնելու ժամանակ Հեթում Ա.-ի ունեցած հանդիպմանը քննարկված հարցերի մասին «լռելը», ինչը, Գրիգոր Միքայելյանի իրավացի կռահմամբ, իր երկասիրությունը մոնղոլական տիրապետության և Հեթումի թագավորության շրջանում շարադրելու արդյունք էր (տե՛ս **Микаелян,** *История*, էջ 306): Գանձակեցին նույնպիսի գաղտնապահությամբ է նկարագրում 1249 և 1259-1261 թթ. հայ-վրացական հակամոնղոլական ապստամբությունները՝ այդպես էլ չբացահայտելով դրանց իրական պատճառները:
299 **Մատթէոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն*, էջ 339:

*հիմքում*[300]*: Արդեն ԺԴ.-ԺԷ. դդ. արաբալեզու սկզբնաղբյուրներում Հայոց կաթողիկոսին հիշում էին «խալիֆա» տիտղոսով՝ հարկավ նկատի ունենալով նրա համազգային իշխանությունը*[301]*: Ուշագրավ է, որ Վարդան վարդապետը Գրիգոր Վկայասերին իր ներբողում ևս հիշում է որպես «խալիֆա»՝ նրան հավասարազոր համարելով մուսուլմանների հոգևոր առաջնորդի հետ: Շարադրելով Եգիպտոսում Վկայասերի հայտնվելու մասին՝ պատմիչը գրում է. «Եւ անհա կցեալ լինէր բանն աւետիք ի տեսողաց ոմանց, եթէ* ***խալիֆայն Հայոց Մեծաց*** *կայ ի սահմանս մեր յեզր ծովուն: Եւ հաւուցեալ զբանն ի* ***խալիֆայն տաճկաց****, որ նստէր անդ յազգէն ալեայ»*[302]*: «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսի շրջանառմամբ, սակայն, «Կաթողիկոս Հայոց Մեծաց»-ը դուրս չեկավ գործածությունից: Գրիգոր Վկայասերն արդեն 1101 թ. հանդես էր գալիս «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսով՝ զուգահեռաբար պահպանելով «Կաթողիկոս Հայոց Մեծաց» կոչումը. «Տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա թարգմանողի ճառիս՝* ***տեառն Գրիգորի (Վկայասէր) կաթողիկոսի ամենայն Հայոց****», «... հրամանաւ երիցս երանեալ* ***հայրապետին տեառն Գրիգորիսի Հայոց Մեծաց կաթողիկոսի****»*[303]*: Չմոռանանք, որ Կիլիկիո թագավորների «Ամենայն Հայոց» կոչումն ամենայն հավանականությամբ փոխառված էր կաթողիկոսական համանուն տիտղոսից*[304]*:*

*Կաթողիկոսական մի քանի աթոռների ձևավորումը պայմանավորված էր ընդհանրական աթոռի շուրջ ստեղծված՝ նախադեպ չունեցող իրադրությամբ: Առաջին անգամ էր, որ կաթողիկոսական աթոռը դուրս էր եկել Հայոց բնաշխարհից ու հայտնվել էթնոկրոնա-*

---

[300] Մանրամասն տե՛ս **Բոզոյան,** *«Կաթողիկոս Հայոց»*, էջ 80-85:

[301] Տե՛ս նույն տեղում, էջ 84. Տե՛ս նաև **Նալբանդյան,** *Արաբական աղբյուրները*, էջ 297. **Դանիելյան,** *Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի...*, էջ 217-222:

[302] **Վարդան Արեւելցի,** *Ճառք*, էջ 367:

[303] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 134, 135, 137, 138 և այլն. **Բոզոյան,** *Եկեղեցական բանակցություններ*, էջ 203:

[304] Տե՛ս **Տեր-Պետրոսյան,** *Խաչակիրները եւ հայերը*, հ. Բ, էջ 196:

*կան մի միջավայրում, որտեղ հայերը մեծամասնություն չէին կազմում: Այդ երկրամասերը նոր էին զանգվածաբար բնակեցվում հայերով, ուստի պատահական չէ, որ դեռ ԺԱ. դարի երկրորդ կեսին ժամանակակիցներն այդ տարածքները անվանում էին «օտար աշխարհ»*[305]*:*

*Ի տարբերություն աշխարհիկ իշխանության՝ Հայոց եկեղեցին դեռևս Խաչիկ Ա. Արշարունեցու (972-990) օրոք էր վարչական կառույցներ հաստատել Կիլիկիայում ու Հյուսիսային Ասորիքում՝ Տարսոնում, Անտիոքում և Սուլնդայում՝ հիմնելով թեմական երեք կենտրոններ. «Իսկ յաւուրս Տեառն Խաչկայ հայրապետին Հայոց սփռեալ տարածեցաւ ազգս Հայոց զկողմամբքն արեւմտից, մինչեւ ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորւոց եւ ի Տարսոն Կիլիկեցւոց եւ ի Սուլնդայ եւ յամենայն գաւառսն յայնոսիկ»*[306]*: Սակայն դա դեռևս բավարար չէր տարածաշրջանի պետական տարբեր կազմավորումներում հատվածաբար բնակվող հայության, ինչպես նաև նորաստեղծ հայկական իշխանությունների շրջանում կաթողիկոսի ընդհանրական իշխանությունը վերջնականապես հաստատված համարելու տեսանկյունից: Դրա ամրապնդմանը կարող էր նպաստել ազգային միակենտրոն իշխանությունը, որն այդ ժամանակ ո՛չ հայրենիքում, ո՛չ էլ նրա սահմաններից դուրս, ցավոք, գոյություն չուներ: Գրիգոր Վկայասերի պանդխտանալն ազդված էր ոչ միայն տարածաշրջանի տարբեր իշխանություններում հայերի տարալույծ բնակությամբ, այլև նախ և առաջ ազգային պետական գահաթոռ կենտրոնի բացակայությամբ. «Տէրն պանդուխտ թափառաւոր, || Ի*

---

[305] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 153. Յովսէփեան, *Յիշատակարանք*, սյուն. 421. Վահրամ Րաբունի, *Պատմութիւն Ռուբենեանց*, էջ 190 (կից Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» փարիզյան հրատարակությանը, Փարիզ, 1859). Վարդան Հայկազն, *Տաղ գերեզմանական…*, էջ 783. **Արիստակէս Լաստիվերցի**, *Պատմութիւն*, էջ 592:

[306] **Ասողիկ**, *Պատմութիւն*, էջ 810:

*հայրենեացն անտեղաւոր։ || Շըրջէր յերկիր անփառաւոր, || Հանգիստ չունէր նըմանաւոր, || **Չէր տէրունի տուն գահաւոր, || Ոչ պետական պըսակաւոր»**[307],- կարդում ենք նրա դամբանականում։ Անգամ մեկ դար անց, երբ կարծես որոշակիորեն հստակեցված էին կաթողիկոսական իշխանության վարչական սահմանները, ու առավել ամրապնդվել էր կաթողիկոսների՝ «Ամենայն հայոց» տիտղոսը, Ներսես Դ. Շնորհալին դժգոհում էր, որ «շրջել առ ամենեսեան՝ ընդ ամենայն կողմանս աշխարհի… անկարելի է՝ յաղագս ժամանակիս չարութեան և բազմիշխանութեան։ Եւ քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ գոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստելով յաթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան մերոյ զաստուածային պատուիրանս»*[308]։

[307] **Վարդան Հայկազն**, *Տաղ գերեզմանական*, էջ 783:

[308] **Ներսես Շնորհալի**, *Թուղթ ընդհանրական*, 1995, էջ 60:

# ԳԼՈՒԽ Գ.

## ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Գրիգոր Վկայասերի հայրապետական ընթացքին քաջագիտակ Մատթեոս Ուռհայեցին կցկտուր տեղեկություններ է հաղորդում նրա 1080-1090-ական թթ. գործունեության վերաբերյալ: Ինչպես տեսանք, Բարսեղ Ա. Անեցու կաթողիկոսական ձեռնադրությունից (1081 թ.) հետո հայրապետի հիմնական գործառույթները, հարկավ, Վկայասերի հավանությամբ, տրվեցին նրան: Դա Գրիգոր Բ.-ին հնարավորություն ընձեռեց ազատորեն զբաղվելու Հայոց եկեղեցու դավանական ինքնուրույնության ամրապնդման ոչ պակաս կարևոր գործով, որին էլ միտված էր նրա սուրբգրային ու թարգմանական գործունեությունը: Վկայասերի մահն արձանագրելով՝ Ուռհայեցին գրում է. «...սա նորոգեաց զկարգ հաւատոց Հայաստանեայց և անհանգիստ թարգմանութեան էր պարապեալ, և զամենայն պակասութիւն կտակարանացն Աստուծոյ առ մեզ կարգաւ կատարեալ զարդարեաց ի Յունաց և յԱսորւոց թարգմանութեան հոգս տարեալ՝ անդադար խորհրդով և ամենայն պայծառութեամբ Սուրբ Գրոց ելից զեկեղեցի Հայաստանեայցս»[1]:

Կաթողիկոսի ընդհանրական իշխանության վերականգնման համար շրջադարձային նշանակություն ունեցավ Բարսեղ Անեցու 1090 թ. հանդիպումը սելջուկյան սուլթան Մելիքշահի հետ: Հայրապետը լավագույնս նախապատրաստվել էր սելջուկ տիրակալի հետ բանակցություններին. Անեցու պատվերով Հովհաննես Իմաստասերը թյուրք-սելջուկների, հատկապես Մելիքշահի մասին մանրամասն տեղեկություններ էր հավաքել, որոնք, անշուշտ, կարևոր էին բա-

[1] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 299:

նակցությունների հաջող ելքի համար[2]: Այս նշանակալի իրադարձությունը հանգամանորեն ներկայացնում է Մատթեոս Ուռհայեցին, որի երկում կարդում ենք. «Դարձեալ ի թուականութեանս Հայոց ի յամս ՇԼԹ. (1090 թ. – Վ. Թ.) յարուցեալ հայրապետն Հայոց Տէր Բարսեղ և գնացեալ առ տիեզերակալ սուլտանն Մելեքշահն, զի տեսանէր զհաւատացեալսն Քրիստոսի, զի նեղէին զնոսա ի տեղիս տեղիս և հարկս պահանջէին յեկեղեցեացն Աստուծոյ և յամենայն ժառանգաւորացն նորա՝ և զվանորայսն և զեպիսկոպոսունսն հարկիւ չարչարէին. յայնժամ կաթուղիկոսն Հայոց Տէր Բարսեղ տեսեալ զայս ամենայն զնեղութիւնս և խորհեցաւ գնաց առ բարի և քաղցր թագաւորն Պարսից... առ ի ծանուցանել նմա զայս ամենայն: Եւ տեսեալ սուլտանին զՏէր Բարսեղն՝ յոյժ մեծարեաց զնա և կատարեաց զամենայն խնդրուածս նորա. և արարեալ զամենայն կամս Տէր Բարսեղին և ազատեաց զամենայն եկեղեցիս և զվանորայսն և զքահանայսն. և առեալ գիր ազատութեան, և հրովարտակօք և մեծարանօք արձակեաց զհայրապետն Հայոց»[3]: Օտարի իշխանության պայմաններում սովորաբար ապահարկության իրավունք ունեցող եկեղեցին զրկվել էր այդ արտոնությունից, ինչն էլ առավել վատթարացրել էր նրա՝ առանց այն էլ ծանր վիճակը: Թեև ըստ Ուռհայեցու՝ Բարսեղ Անեցու դիմում-խնդրանքը վերաբերում էր Հայոց եկեղեցու ապահարկության իրավունքի վերականգմանը, սակայն կասկածից վեր է, որ հայրապետը սուլթանի առջև բարձրացրել է նաև կաթողիկոսի ընդհանրական իշխանության վերականգնման հարցը՝ հայցելով նրա օժանդակությունը: Այս մասին իր Վիպասանության մեջ հիշում է Ներսես Շնորհալին. «Եւ զխնդիրսն կատարեալ: || Որ և հրաման անդուստ առեալ, || Հրահոսանօք այսրէն դարձեալ, || Զհակառակաց հոյլս հերքեալ, || Որք զհաւատս պառակտեալ: || Զեկեղեցի սուրբ

[2] Տե՛ս **Մաթևոսյան**, *Հովհաննես Սարկավագ*, էջ 184:
[3] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 240:

*ազատեալ, || Եւ վերստին միաւորեալ»*[4]*: Ստանալով Մելիքշահի հավանությունը, ինչպես արդեն նշվել է, Բարսեղ Անեցին անմիջապես մեկնեց Հոնի ու Թեոդորոս Ալախոսիկից վերցրեց հայրապետական իշխանության նշանակներն ու այդպիսով «արար միահեծան զհայրապետութիւնն իւր»*[5]*: Հոնիի աթոռը ևս, հիմնված լինելով կանոնական ճանապարհով, կարող էր հավակնել հայրապետական իշխանության միասնական կենտրոնի դերին: Դրա համար, սակայն, անհրաժեշտ էր քաղաքական հենարան, որից այդ կաթողիկոսությունն այլևս զուրկ էր: Հակառակ դրան՝ Բարսեղ Անեցին գործում էր Մելիքշահի օժանդակությամբ, ուստի պատահական չէ, որ կաթողիկոսական նշանակները Թեոդորոսից վերցնելիս դիմադրության չհանդիպեց:*

*Սամվել Անեցու Շարունակողներից մեկի տեղեկությամբ՝ Բարսեղ Անեցին իբր «զամենայն հակառակսն հնազանդեցուցանէ, որք էին յայնմ ժամանակի Զ (6) կաթուղիկոսք, գնացեալ առ մեծ սուլտանն Մելիքշահ»*[6]*: Սելջուկ սուլթանի հետ Անեցու հանդիպումն արձանագրելով հանդերձ՝ այս տեղեկությունը պարունակում է փաստական սխալ՝ հատկապես կաթողիկոսությունների թվաքանակի վերաբերյալ: Վկայասերի օրոք հիմնված կաթողիկոսություններից* ***1090*** *թ. գործում էին միայն Հոնիի և Անիի աթոռները: Վերջինին հնազանդեցնել հասկանալի պատճառներով Բարսեղ Անեցին չէր կարող, քանզի հենց ինքն էր այն առաջնորդում:*

*Թեև ըստ Ուռհայեցու՝ Բարսեղ Անեցին Թեոդորոսի աթոռանկությամբ «արար միահեծան իշխանութիւն իւր», սակայն տարակույս լինել չի կարող, որ այդպիսով նա վերականգնել էր առաջին հերթին Գրիգոր Վկայասերի գերագահ իշխանությունը, որն անթաքույց ըն-*

---

[4] **Ներսէս Շնորհալի,** *Վիպասանութիւն,* էջ 126:
[5] **Մատթէոս Ուռհայեցի,** *Ժամանակագրութիւն,* էջ 240-241:
[6] **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ,** *Ժամանակագրութիւն,* էջ 197:

*դունում էր. «Եւ Տէր Բարսեղ հնազանդ լեալ ամենայն հրամանաց Տեառն Գրիգորիսի»*[7], *- գրում է Մատթեոս Ուռհայեցին: Դա լրացուցիչ հաստատում է, որ Անեցին մինչ Վկայասերի մահը՝ 1105 թ., եղել է կաթողիկոսական փոխանորդ*[8]*:*

*Աղբյուրները համերաշխ են այն հարցում, որ «եւ վաղճանելոյն տէր Վահրամա (Գրիգոր Վկայասերի – Վ. Թ.) միայպետեաց տէր Բարսեղ»*[9]*: Կաթողիկոսական աթոռի միասնականության հաստատման տեսանկյունից Գրիգոր Վկայասերի և Բարսեղ Անեցու սերտ համագործակցությունը չափազանց կարևոր էր:*

*Կաթողիկոսի ընդհանրական իշխանության վերականգնումն ուներ համազգային նշանակություն, ու տրամաբանական է, որ այդ մասին պետք է տեղյակ լինեին հայության բոլոր հատվածները: Ռազմաքաղաքական իրապայմանների բերումով հայության մի ստվար հատված քննվող ժամանակաշրջանում բնակություն էր հաստատել հայրենիքից դուրս՝ Հյուսիսային Ասորիքում, Կապադովկիայում ու Կիլիկիայում և, գտնվելով վարչաքաղաքական տարբեր կազմավորումներում, չուներ միասնական տարածք ու սահման: Ստեղծված իրադրությունում Բարսեղ Անեցուն չէր մնում այլ բան, քան հայրապետական շրջայցերի միջոցով այդ երկրամասերի հայությանն իրազեկել կաթողիկոսական իշխանությունում տեղի ունեցած փոփոխությունների մասին՝ այդպիսով հիմք դնելով հայրապետի (այս դեպքում՝ Գրիգոր Վկայասերի) իշխանության համահայկական ընդգրկմանը: Իրավացի է Վրեժ Վարդանյանը՝ գրելով, որ այդ առաքելությամբ է Բարսեղ Անեցին կաթողիկոսական նշանակները*

---

[7] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 300, **Վարդանյան**, *Պահլավունիները*, էջ 103:

[8] Սա հայագիտության մեջ արդեն իսկ քաղաքացիություն ստացած հիմնավոր տեսակետ է (տե՛ս **Մաթևոսյան**, *Անին մայրաքաղաք*, էջ 48):

[9] **Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները եւ հայերը*, հ. Բ, էջ 512. **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 300. **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 421 և այլն:

*Թեոդորոսից վերցնելուց հետո այցելել Կեսարիա, Անտիոք, Եդեսիա և տարածաշրջանի հայաբնակ այլ երկրամասեր*[10]*: 1154 թվակիր հիշատակարաններից մեկում Բարսեղ Անեցու օրոք ավանդական դարձած հայրապետական շրջայցերի մասին կարդում ենք. «Արդ յաւուրս տեառն Բարսղի սովորութիւն էր Հայոց կաթուղիկոսացն՝ յառաջն շրջիլ ամ յամէ ընդ Հայք և ի հայրական խնամաւք ուղղել զամենեսեան ի կանոնական սահմանս»*[11]*:*

*Շրջայցի վերջին հանգրվան Եդեսիայում Բարսեղ Անեցին երկար չմնաց: Մելիքշահի դավադիր սպանությունից հետո նրա որդիների ու եղբայրների միջև սկսված գահակալական արյունահեղ կռիվներն*[12] *այլևս անհնարին էին դարձնում Անեցու քիչ թե շատ ապահով կեցությունը սելջուկյան տիրապետության տակ գտնվող Եդեսիայում: Ուստի անվտանգության նկատառումներից ելնելով՝ նա գերադասեց տեղափոխվել Անի, որտեղ, պետք է ենթադրել, փոքր-ինչ ավելի ապահով էր այդ ժամանակ*[13]*:*

*1090-ականներին արդեն իսկ ամրապնդվում էին կաթողիկոսական իշխանության սահմանները, և հայ իշխանները, նրանց թվում և Գող Վասիլը, ձգտում էին կաթողիկոսական աթոռը հաստատել իրենց իշխանությունում: Այդպիսով հայության շրջանում ընդլայնվում էր նաև տվյալ իշխանության ազդեցությունը: Թերևս այդ իրողությունը նկատի ուներ Մխիթար Այրիվանեցին՝ գրելով. «Վասիլն և այլ իշխանք Կիլիկիոյ տարան աղաչանօք առ ինքեանս զտէր Գրիգոր կաթողիկոսն»*[14]*: Մատթեոս Ուռհայեցու և Մխիթար Այ-*

---

[10] Տե՛ս **Վարդանյան**, *Պահլավունիները*, էջ 104. **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 241:

[11] **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 171:

[12] Այս մասին տե՛ս **Բոռնազյան**, *Հայաստանը և սելջուկները*, էջ 217-223:

[13] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 243, **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 107-108:

[14] **Մխիթար Այրիվանեցի**, *Պատմութիւն*, էջ 61:

*բիվանեցու հաղորդմամբ՝ Գրիգոր Վկայասերը Գող Վասիլի իշխանություն տեղափոխվեց կյանքի վերջալույսին միայն և հաստատվեց Քեսունի նշանավոր Կարմիր վանքում. «... և ի ժամանակի մահուանն հանդիպեցաւ (Գրիգոր Վկայասերը – Վ. Թ.) առ մեծ իշխանին Հայոց՝ որ ասի Գող Վասիլ, որ էր այր հզօր և պատերազմող, վասն զի առ սա եղև ժողովեալ մնացեալ գունդն Հայոց»*[15]*:*

*Այնուհետև աղբյուրները շուրջ մեկ տասնամյակ գրեթե լռության են մատնում Գրիգոր Վկայասերի ու Բարսեղ Անեցու գործունեությունը: Սելջուկյան իշխանությունների երկպառակտչական պատերազմներն ու խաչակրաց արշավանքները 1090-ականներին գրեթե ամբողջությամբ կլանել էին մատենագիրների ուշադրությունը: Այս տասնամյակում Գրիգոր Վկայասերին անսպասելիորեն հանդիպում ենք Երուսաղեմում՝ խաչակիրների կողմից այդ քաղաքի գրավման ժամանակ (1099 թ.): Քաղաքի մուսուլմանները փորձում են սպանել կաթողիկոսին, սակայն նրան հաջողվում է փրկվել*[16]*:*

*Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ 1103 թ. Բարսեղ Անեցին «ամենայն պաշտօնէիւք իւրովք և ազատօք, եպիսկոպոսօք և քահանայիւք» Անիից տեղափոխվեց Եդեսիա և տեղի խաչակիր իշխան Բալդուին Բ. Բուրգացուց (1100-1118) մեծարանքի արժանացավ՝ որպես պարգև նրանից ստանալով գյուղեր*[17]*: Նման ներկայացուցչական կազմով Եդեսիա ուղևորվելն ու կեցության համար գյուղեր ստանալը կարծել է տալիս, որ սա հերթական շրջայց չէր: Ոչ թե Գող Վասիլի համեմատաբար ապահով իշխանությունում, այլ վտանգնե-*

---

[15] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 299-300. **Մխիթար Այրիվանեցի**, *Պատմութիւն*, էջ 61. **Ալիշան**, *Հայապատում*, էջ 350:

[16] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 267:

[17] Տե՛ս **նույն տեղում**, էջ 294, տե՛ս նաև **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 113:

*րով լի Եդեսիայում[18] Բարսեղ Անեցու հաստատվելը պետք է պատճառաբանել քաղաքի հայության դեմ Բյուզանդիայի քաղկեդոնիկ եկեղեցու կողմից հաճախ հարուցվող դավանաբանական խնդիրներին (ինչպես օրինակ՝ 1102 թ. Ծռազատկի առթիվ առաջացած վեճը) արդյունավետ հակադարձելու անհրաժեշտությամբ, քանզի «Եւ Անտիոք և ամենայն Կիլիկիա և Ուռհա ունէին սաստիկ պատերազմ ընդ Յոյնք վասն հաւատոյ, զի ջանային դարձուցանել յիւրեանց անհաստատ տումարն զՀայք և այսպիսի ջանս և աշխատութիւնս հասուցանէին ազգիս Հայոց, և ոչ կարացին շարժել զնոսա»[19]: Դավանաբանական վեճերն առանձնահատուկ կրքոտությամբ էին ընթանում Եդեսիայում: Հայերի դրությունն ավելի վատթարացավ, երբ քաղաքի ասորիները, տեղի տալով բյուզանդացիների ճնշմանը, անցան նրանց կողմը՝ քակելով այդ խնդրում հայերի ունեցած դաշինքը[20]:*

*1103 թ. վախճանվում է Աղվանից կաթողիկոս Ստեփանոսը, և Եդեսիայում գտնվող Բարսեղ Անեցին, որն ըստ ամենայնի վարում էր կաթողիկոսության վարչական իշխանությունը, իր եպիսկոպոսներից մեկին ուղարկում է Հայոց Արևելից կողմեր, որտեղ նրա մասնակցությամբ կայացած եպիսկոպոսական ժողովը կաթողիկոս է ընտրում Ստեփանոսի եղբորը: Վերջինիս, ըստ Ուռհայեցու, անբարո վարքի պատճառով կարճ ժամանակ անց բանադրանքի է ենթարկվում հենց Բարսեղ Անեցին: Այս դրվագը բացորոշ վկայում է, որ անգամ Վկայասերի և նրա աթոռապահ Բարսեղ Անեցու՝ Մեծ Հայքից դուրս գտնվելու պարագայում բուն Հայաստանում ազդու էր նրանց հայրապետական իշխանությունը:*

---

[18] Եդեսիայում ԺԱ. դարի երկրորդ կեսին և ԺԲ. դարի սկզբներին տարածաշրջանի քրիստոնյա ու մուսուլման տիրապետողների միջև տեղի ունեցած հաճախադեպ զինաբախումների մասին մանրամասն տե՛ս **Степаненко,** *Ишханы Эдессы*, էջ 87-94.

[19] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 287:

[20] Նույն տեղում:

Այս ժամանակափուլի պատմությունը Մատթեոս Ուռհայեցու երկից քաղած Վարդան վարդապետը, ի տարբերություն իր աղբյուրի, հայտնում է, թե Բարսեղ Անեցին, հավանաբար խաչակիրների ու սելջուկների զինաբախումներից նեղություն կրելով, վերադարձել է Անի: Բարսեղի վերադարձն Անի պետք է թվագրել 1103-1105 միջակայքով: Ոչ վաղ անցյալում Եդեսիայում հաստատված Բարսեղ Անեցու վերադարձի դրդապատճառը, այն է՝ «նեղեալ յազգի ազգի շփոթման», այնքան էլ հիմնավոր չի թվում, քանզի եթե դա արվել էր անվտանգության նկատառումներից ելնելով, ապա առավել ապահով կլիներ ոչ թե վտանգներով լի վերադարձն Անի[21], այլ Գող Վասիլի իշխանություն տեղափոխվելը, որտեղ այդ ժամանակ գտնվում էր Գրիգոր Վկայասերը: Եթե ստույգ է Վարդան վարդապետի այս հաղորդումը, ապա մնում է կարծել, որ Բարսեղի վերադարձն ուներ մասնավոր պատճառ, որպիսին կարելի է համարել նրա կողմից Աղվանից նորընծա կաթողիկոսին բանադրելը: Դրան, բնականաբար, պետք է հաջորդեր նոր կաթողիկոսի ընտրությունը, որին Բարսեղի մասնակցությունը, Աղվանից կաթողիկոսությունը Հայոց հայրապետի ընդհանրական աթոռի ազդեցության տակ պահելու տեսանկյունից, ուներ անվիճելի կարևորություն: Սակայն կարճ ժամանակ անց կյանքի վերջալույսին գտնվող Վկայասերի կոչով Անեցին կրկին թողնում է մայրաքաղաքն ու ուղևորվում Քեսուն. «Յայնմ ժամանակի պատրիարգն Բարսեղ նեղեալ յազգի ազգի շփոթմանէն գնաց յաթոռն իւր յԱնի. և իսկոյն հասանէ նմա խնդիր ի տէր Գրիգորիսէ Պահլաւէ, որ և Վահրամն, Վկայասէր կոչեցեալ, եթէ հասեալ է ժամանակ իմ, եկ յուղարկեա զիս առ Տէր»[22]:

---

[21] Վարդան վարդապետի հաղորդմամբ՝ Անիից Քեսուն ուղևորվող Բարսեղ Անեցին Մանազկերտի մոտ հարձակման ենթարկվեց հույն ավազակների կողմից, որոնք *«կամեցան կողոպտել զնոսա»* (**Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 113-114):

[22] Նույն տեղում, էջ 113:

*Ճանապարհի դժվարությունները հաղթահարելով՝ Անեցին 1105 թ. հասնում է Քեսունի Կարմիր վանք, որտեղ էլ մահվան մահճում գտնվող Վկայասերը, նրան փոխանցելով կաթողիկոսի գերագահ իշխանությունը և նրա հոգածությանը հանձնելով իր քրոջ թոռներ Ներսեսին ու Գրիգորին, մահանում է: Վերջինս, Վկայասերի պատգամի համաձայն, Բարսեղ Անեցուց հետո պետք է զբաղեցներ կաթողիկոսի աթոռը: Գրիգոր Բ.-ն իր կամքի կատարման երաշխավոր է կարգում Գող Վասիլին. «Իսկ երևեալ պատանի ումն Գրիգորիս անուն՝ որ քուրոջ որդւոյ որդի էր Տեառն Վահրամայ, զնա յատենի կացուցանէր Տէր Գրիգորիս և անուանէր զնա կաթուղիկոս տանն Հայոց զկնի մահուան Տեառն Բարսեղի. և միջնորդ կացուցանէր զիշխանն Հայոց զՎասիլն՝ զտէրն Քեսնոյ և ամենայն աշխարհաց նորա»[23]:*

*Գրիգոր Վկայասերի մահվանից հետո այլևս միանձնյա կաթողիկոս Բարսեղն Անի չվերադարձավ[24]: Կաթողիկոսական աթոռը դեռևս Գրիգոր Վկայասերի օրոք հաստատվել էր Գող Վասիլի իշխանությունում, որտեղ, հարկավ, առավել ապահով էր, քան քաղաքամայր Անիում: Վասիլի իշխանությունն անվտանգ պատվար էր դարձել տարածաշրջանի հայկական ցաքուցրիվ ուժերի համար. «... ժողովեալ մնացեալ զօրքն Հայոց և ամենայն ազգն Բագրատունեացն և Պալհաւունեացն և որդիք թագաւորացն Հայոց, և ամենայն ազգն Պալհաւունեացն հանդերձ ազատագունդ զօրօքն Հայոց առ նա (Գող Վասիլի իշխանությունում – Վ. Թ.)»[25]: Բարսեղ Անեցին Գող Վասիլի խոստովանահայրն էր և մեծ հեղինակություն էր վայելում նրա արքունիքում: Վերջինիս մահվանից (1112 թ.) հետո Անեցու նախաձեռնությամբ հրավիրված ընդհանուր՝ տեղի աշխարհիկ ու հոգևոր*

---

[23] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 300:
[24] Տե՛ս **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 116:
[25] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 323:

ազատանու ժողովն իշխանությունը հանձնեց Վասիլի հոգեզավակ Տղա Վասիլին. «Եւ արար միաբան ժողով Տէր Բարսեղ և տայ զամենայն իշխանութիւնն ի տղայ Վասիլն, և եղև ուրախութիւն ի վերայ ամենայն տանն Հայոց»[26]:

Ցավոք, Անեցուն վիճակված չէր երկար աթոռակալել: 1113 թ. մայիսին Բեհեսնիի սահմանների մոտ գտնվող Վարդահերի կոչվող գյուղի տներից մեկի տանիքը, որի վրա եպիսկոպոսների ու քահանաների հետ բացօթյա աղոթում էր Բարսեղ Անեցին, փուլ եկավ՝ մահացու վնասելով կաթողիկոսին: Դժբախտ պատահարից հետո ընդամենը երեք օր ապրած հայրապետին տեղափոխեցին Շուղր անապատ, որտեղ էլ նա, կատարելով Վկայասերի վերջին պատգամը, կաթողիկոսական իշխանությունը փոխանցեց նրա քրոջ թոռանը՝ Գրիգորին. «Եւ ծանրացեալ տանիսն բլաւ, և այլ ումեք վնաս ոչ եղեւ, բայց միայն կաթուղիկոսին, զի հարեալ ողն ի քար բեկաւ: Բայց ապրեցաւ Գ. (3) օր: Եւ ասաց տանել զինքն ի Շուղր անապատ, ուր եղեալ էր քեռին իւր Գրիգոր Վկայասէրն, եւ ինքն ձեռօք իւրովք էաւծ և եդ ի տեղի իւր զորդի Ապիրատին՝ զմանուկն տէր Գրիգորիս, եւ ապա ինքն վախճանեցաւ եւ թաղեցաւ անդէն ի Շուղրն՝ մօտ ի տէր Գրիգորիս»[27]: Ընդունված կարգի համաձայն՝ Բարսեղի մահվանից հետո Կարմիր վանքում հրավիրվեց «ժողով եպիսկոպոսաց և հարանց», որտեղ էլ Գրիգորին ձեռնադրեցին կաթողիկոս «ի վերայ ամենայն տանն Հայոց»[28]:

Գրիգոր Վկայասերի և Բարսեղ Անեցու ջանքերով կաթողիկոսական իշխանությունը, ի վերջո, հաջողվեց հաղթահարել Բյուզան-

---

26 Նույն տեղում, էջ 324:

27 **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 421. *Հայսմավուրք*, էջ ՁԾՀՁ (676). **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 329. **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 116:

28 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 330:

*դական կայսրության սահմանած խոչընդոտները, ժամանակի այլ արգելքները և հայրապետական աթոռի գործունեության քիչ թե շատ կայուն հիմք ստեղծել: Սակայն նոր մարտահրավերները դեռ առջևում էին, որոնցից էր Աղթամարի կաթողիկոսության հիմնումն ու Պահլավունիների հայրապետական իշխանության դեմ հարուցված ընդդիմությունը:*

*Եթե կաթողիկոսական իշխանության փոխանցումը Գրիգոր Վկայասերից Բարսեղ Անեցուն տեղի ունեցավ հարթ ու արժանացավ համընդհանուր ընդունելության, ապա վերջինիս կողմից այն Գրիգոր Գ.-ին ժառանգելն առաջ բերեց լուրջ հակազդեցություն՝ հատկապես Աղթամարի եպիսկոպոսական աթոռի կողմից:*

*Գիտենք արդեն, որ կաթողիկոսական աթոռը ժառանգաբար փոխանցելու մտայնությունը եղել է դեռևս Վկայասերի գահակալման շրջանում, ինչը դիտվել է որպես Լուսավորչի տոհմի աթոռակալման շարունակություն. «... տայր (Գրիգոր Վկայասերը – Վ. Թ.) ցնա (Բարսեղ Անեցուն – Վ. Թ.) յաւանդ զերկուս պատանեակսն զԳրիգորիս և զՆերսէս զորդիս մեծազօր իշխանին Ապիրատին որդւոյ քեռն իւրոյ որ էր եղբայր տէր Գրիգորի որ յԵգիպտոս. և պատուիրէր սնուցանել զնոսա զգուշութեամբ,... լինել ժառանգ սրբոյ աթոռոյն,* ***զի մի անպայազատ մնասցի ի զարմէ նախնոյն իւրոյ սրբոյն Գրիգորի****»[29],- կարդում ենք Ներսես Շնորհալու «Վարք»-ում:*

*Սամվել Անեցու երկը լրացնող մի տեղեկության համաձայն՝ Գրիգոր Գ.-ը կաթողիկոսական ձեռնադրությունն ստացել էր 15 տարեկանում. «Աստ ի վախճանելն տեառն Բարսղի եւ ի նստիլն տեառն Գրիգորիսի տղայ հասակաւ՝ ԺԵ (15) ամաց յաթոռ հայրապետական»[30]: Գրիգորի ընտրությանը ժամանակակից Մատթեոս Ուռհայեցին, առանց տարիքն արձանագրելու, նշում է նրա դեռա-*

[29] *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 30:
[30] **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 204:

*հաս լինելը. «…նստաւ ի հայրապետական աթոռն մինչ էր ի տղայու-թեան հասակին»*[31]*։ Այս տեղեկությունը հետագայում մուծվեց խնդրին անդրադարձած մատենագրական այլ երկեր ևս*[32]*։ Ուշա-գրավ է, որ Գրիգոր Գ.-ի պատվերով իր երկը շարադրած Սամվել Անեցին, ծավալուն անդրադարձ կատարելով պատվիրատուի կաթո-ղիկոսական ընտրությանը, ակնարկ անգամ չի անում նրա տարիքի վերաբերյալ*[33]*։*

*Եվ ահա, Գրիգորի պատանեկան տարիքը պատճառ բերելով՝ Աղթամարի Դավիթ արքեպիսկոպոսը՝ Աբդլմսեհ Արծրունու որդին, հինգ եպիսկոպոսների կողմից 1113 թ. ձեռնադրվում է կաթողիկոս՝ հիմք դնելով Աղթամարի կաթողիկոսությանը*[34]*։*

*Դավթի կաթողիկոսական իշխանությունն սկզբնական շրջա-նում ընդունեցին հայաստանյան մի շարք եկեղեցական կենտրոն-ներ. «Եւ յետ մահուն տէր Բարսղին՝ ապստամբեցաւ Աղթամար, և տէր Դաւիթ արքեպիսկոպոսն Աղթամարայ նստաւ ինքնագլուխ կա-թուղիկոս։ Որ ընկալան և հնազանդեցան նմա իշխանքն և ամենայն արքեպիսկոպոսունքն արեւելից և աթոռակալքն Թադէոսի առաքե-լոյն և Տաթեւուն, Բջնուն և Հաղբատուն»*[35]*։ Հաղորդման հեղինակն այս թեմերի դիրքորոշումը բացատրում է Լուսավորչի Աջի և սրբա-զան այլ նշանակների՝ Աղթամարում գտնվելու փաստով. «Եւ ունէր առ իւր զԱջն Լուսաւորչին, զքօղն և զգաւազանն։ Վասն այսորիկ*

---

[31] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 330:

[32] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 142. **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 421-422. *Հայսմաւուրք*, էջ ՁԾՀՁ (676):

[33] Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 203-204:

[34] Աղթամարի կաթողիկոսության մասին մանրամասն տե՛ս **Ակինեան Ն.**, *Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ*, Վիեննա, 1920: Կաթողիկոսու-թյան ամբողջական պատմությանը նվիրված արժեքավոր աշխատություն է հեղինակել Վրեժ Վարդանյանը, (տե՛ս Վարդանյան Վ., *Աղթամարի կաթողի-կոսության պատմություն*, Ս. Էջմիածին, 2017):

[35] **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 421-422. *Հայսմաւուրք*, էջ ՁԾՀՁ (676):

*հնազանդեցան նմա արեւելեանքն տարի մի»*[36]*: Հայաստանյան թեմական կենտրոնները չէին հաշտվում կաթողիկոսական աթոռի՝ հայրենիքից դուրս գտնվելու իրողության հետ: Թերևս դա է պատճառը, որ Գող Վասիլի իշխանությունում Բարսեղ Անեցու հաստատվելը հարուցեց նրանց խորը դժգոհությունը*[37]*: Առավելապես հենց այդ հանգամանքով պետք է բացատրել հայաստանյան մի քանի թեմական աթոռների՝ Դավիթ Աղթամարցու կաթողիկոսական ձեռնադրությունն ընդունելը: Ուշ շրջանի պատմիչ Գրիգոր Դարանաղցին այս մասին գրում է. «Եւ կաթողիկոսք այսր եւ անդր շուրջ գալով եւ հանգիստ ոչ ուրեք գտանելով, մինչ ի մեծ Բարսեղն Պահլաւունի, որ նախ եկեալ ի Քեսուն՝ մերձ ի Կարմիր վանսն առ Վասիլ իշխանին, զոր Եւլուզակն կոչէին ի յանապատ իմն բնակեալ ի մէջ լերանց Շուղր անուանեալն: **Եւ յորժամ հեռացաւ Տէր Բարսեղն ի վերին աշխարհէն ի յԱնւոյ, նա՛ մեծամեծ հռչակաւոր վանորէից եպիսկոպոսքն եղեն ապստամբք ի կաթողիկոսէն Բարսեղէ»***[38]*:*

*Դավիթը քաջ գիտակցում էր, որ Գրիգոր Պահլավունու դեռահասությունն անհաղթահարելի կռվան չէր իր կաթողիկոսական ձեռնադրությունն օրինականացնելու համար, ուստի սկսեց Աղթամարի աթոռի իշխանական նկրտումները հիմնավորող այլ կռվանների փնտրտուքը, որոնց շարքում առավել կարևորվում էր տոհմական ծագումը: Պայքարի նույն միջոցներն ընտրեցին նաև Պահլավունիները: Վերջիններիս ու Արծրունիների իշխանական հավակնությունները և դրանց հիմնավորումները շրջանառվում էին այդ տոհմերին հարող գործիչների կամ հենց նրանց ներկայացուցիչների հեղինակած աշխատություններում և այլ բնույթի սկզբնաղբյուրներում:*

[36] **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 422. *Հայսմավուրք*, էջ ՉԾՀԶ (676):
[37] Տե՛ս **Մաթեւոսյան**, *Անին մայրաքաղաք*, էջ 49:
[38] **Գրիգոր Կամախեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 302-303:

*Այսպես՝ Թովմա Արծրունու և նրա Անանուն շարունակողի երկերին կցված, ըստ ամենայնի՝ ԺԲ. դարի կեսերին գրված փոքրածավալ պատումի հեղինակը, բառ անգամ չհիշատակելով Պահլավունի կաթողիկոսների մասին, Դավիթ Աղթամարցուն համարում է Գրիգոր Լուսավորչի աթոռի ժառանգ, որպիսին վերջինիս որդիներն էին. «Սա (Աղթամարի Դավիթ եպիսկոպոսը – Վ. Թ.) … առեալ զպատիւ քահանայութեան եւ զեպիսկոպոսութեան եւ զարհի եպիսկոպոսութեան եւ զկաթողիկոսութեան. եւ նստոյց զնա Տէր յաթոռ մերոյ սուրբ Լուսաւորչին սրբոյն Գրիգորի եւ խառնեաց զնա ի կարգս սուրբ հարցն առաջնոց՝ սուրբ Ռստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, եւ Գրիգորիսի, Ներսէսի եւ Սահակայ»*[39]*: Ուշագրավ է, որ հեղինակը, այդուհանդերձ, չի փորձում որևէ արյունակցական-ազգակցական կապ նշել Լուսավորչի տոհմի ու Արծրունիների միջև, ինչը հայրապետական իշխանության ժառանգման խնդրում տվյալ ժամանակահատվածում առավել ծանրակշիռ հանգամանք էր: Դժվար թե Անանունին անծանոթ լինեին Պահլավունի կաթողիկոսները, սակայն նրանց հիշելու պարագայում կառաջանար Դավթի (որպես Հայոց կաթողիկոսի) աթոռակալումը հիմնավորելու անհրաժեշտություն, ինչն այնքան էլ դյուրին չէր Պահլավունիներ-Գրիգոր Լուսավորչի տոհմ ազգակցական կապը փաստող և ժամանակին լայն տարածում ու ընդունելություն գտած տեսակետի առկայությամբ: Աղթամարի աթոռի հավակնությունները խարսխվում էին նաև Վասպուրականում երկար ժամանակ գոյություն ունեցած Արծրունիների թագավորական իշխանության ավանդույթի վրա. «Եւ զի ասեն աթոռ է սա թագաւորացն Արծրունեաց և վայել է լինել և պատրիարգ»*[40]*,- Դավթի պատճառաբանությունները նկատի ունենալով՝ գրում է Վարդան վարդապետը: Այս հիմքով է, որ Աղթամարի կաթողիկոսությունը*

---

[39] **Թովմա Արծրունի եւ Անանուն**, *Պատմութիւն*, էջ 303:

[40] **Վարդան վարդապետ**, *Հաւաքումն պատմութեան*, էջ 116:

*Վասպուրականում դիտվում էր որպես «զԱթոռ հայրապետական և զթագաւորական մերոյ ազին»[41]: Բացի այդ, մատնանշվում էր Աղթամարի՝ որոշ ժամանակ կաթողիկոսանիստ եղած լինելու հանգամանքը:*

*Դավթի հիմնավորումները խմբավորված ներկայացնելու դեպքում կլինեն հետևյալները. **ա.** Աղթամարի՝ նախկինում որպես կաթողիկոսանիստ և թագավորական իշխանության կենտրոն լինելը[42], **բ.** Գրիգոր Լուսավորչի պատարագի սեղանի, գավազանի, մաշկեղեն գոտու, Հռիփսիմե կույսի հողաթափի և նաև արյունոտ պարեգոտու այնտեղ գտնվելը, **գ.** Արծրունիների տոհմից սերելը, որով Դավիթը ներկայանում էր որպես Վասպուրականի թագավորների հոգևոր ժառանգորդ:*

*Գրիգոր Գ. Պահլավունու կովանները գերազանցապես խարսխվում էին Լուսավորչի տոհմի ու Արշակունիների, ինչպես նաև նախորդ երկու կաթողիկոսներ Գրիգոր Վկայասերի ու Բարսեղ Անեցու հետ ունեցած ազգակցության վրա:*

*Նկատի ունենալով, որ Գրիգոր Լուսավորչի տոհմի հետ Պահլավունիների ազգակցական կապը նշող սկզբնաղբյուրային տեղեկու-*

---

41 **Փիրղալեմեան**, *«Նոտարք հայոց»*, էջ 97:

42 Դվինի 893 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով կաթողիկոսարանն ավերվել էր, և Գեորգ Բ. Գառնեցի կաթողիկոսը հարկադրաբար հանգրվանել էր Վանում: Նա 897 թ. վախճանվեց ու թաղվեց Ձորովանքում: Խույս տալով արաբների հետապնդումից՝ Աղթամարի Սուրբ Խաչ վանքում էր ապաստանել նաև Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը: Նրանից հետո այստեղ աթոռակալեցին Ստեփանոս Բ. Ռշտունի, Թադեոս Ա. Ռշտունի և Եղիշե Բ. Ռշտունի կաթողիկոսները: Հայրապետական աթոռը որոշ ժամանակ Աղթամարում էր նաև Անանիա Մոկացի կաթողիկոսի (946-968) օրոք: Նա, սակայն, հաշվի առնելով կղզու մեկուսի ու անառիկ դիրքը և առավել չափով Հայոց արքա Աբաս Բագրատունու (928-953) ցանկությունը, հայրապետական գահաթոռը տեղափոխեց Շիրակ՝ Երազգավորսի մոտ գտնվող Արգինա ավան: Աղթամարում 968 թ. ապաստանեց նաև Հայոց կաթողիկոս Վահան Սյունեցին:

*թյուններին արդեն անդրադարձել ենք, կբավարարվենք Պահլավունիների արշակունիական ծագումը փաստող երկու վկայությունների (մեկը՝ Գրիգոր Մագիստրոսի, մյուսը՝ Գրիգոր Վկայասերի ծագման վերաբերյալ) հղմամբ՝ հավելելով, որ այդ բնույթի հաղորդումները բազմաքանակ են թե՛ ժամանակի և թե՛ հետագայի սկզբնաղբյուրներում. «... այր ոմն ի թագակալ տոհմէ յԱրշակունեաց ի Պահլաւունեաց զարմէ, արեանառու ազգականութեամբ ի շառաւիղէ սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի, որդի Վասակայ Պահլաւունւոյ և Մարտիրոսի տեառն Բջնոյ՝ Գրիգորիոս անուն»[43], «Ես [Գրի]գոր՝ որդի Գրիգորի Մագիստրոսի ի Հայ[կազուն]ւոյ ըստ աշխարհի պարթեւ, ըստ ժառանգութեան պահլաւիկ, ըստ ցեղ ընտիր լինելոյ* ***յազգէ Արշակունի»***[44]*:*

*Ստեղծված իրադրությունը պահանջում էր խնդրի շուտափույթ լուծում, հակառակ դեպքում, կաթողիկոսական իշխանության տրոհումն անխուսափելի էր: Այս պարագայում լավագույն ու ազդեցիկ միջոցը ժողովական որոշմամբ Աղթամարի կաթողիկոսության հիմնումը դատապարտելն էր, որը պետք է լիներ ոչ թե անցողակի, այլ պատճառաբանված և պարունակեր Դավթի ներկայացրած մեղադրանքը հերքող հստակ հիմնավորումներ: Այդպիսին դարձավ Սև լեռան 1114 թ. ժողովը, որի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ում ու «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանց եւ Պետրոսեանցն» վերոհիշյալ վարքում: Ներսես Շնորհալու հաղորդումը, ըստ էության, անհասցե է և ընդհանրական տեղեկություն է տալիս ժողովի մասին. «Որք յաղագս սոյն և այսր իրի յանդգնութեան՝ ի ժամանակս տեառն մերոյ և եղբօր Գրիգորիսի կաթուղիկոսի սրբոյ, ի սուրբ լեառնն՝ մեծաւ սինհոդոսիւ, սուրբ և առաքինեաց արանց ազգիս*

---

[43] *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ պատմութիւն վարուց*, էջ 12-13:

[44] **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 285:

Հայոց՝ ժողովով աւելի քան զերկու հազար և հինգ հարիւր անձանց եպիսկոպոսաց, վարդապետաց, հարց վանականաց և միանձանց սրբոյ լերինն, նզովեալ հերքեցան յեկեղեցւոյ Քրիստոսի, և սրով բանին Աստուծոյ հատեալ՝ ի բաց ընկեցան որպէս գնեխեալ և զփտեալ անդամ յառողջ մարմնոյ եկեղեցւոյ՝ անէծս ցաւագինս կուտեալ ի գլուխ նոցա»[45], սակայն կասկածից դուրս է, որ այն վերաբերում է Սև լեռան ժողովին: Մյուս աղբյուրը մանրամասն տեղեկություններով շահեկանորեն տարբերվում է «Թուղթ ընդհանրական»-ից: Ըստ Ներսես Շնորհալու՝ ժողովին մասնակցում էին պատկառելի թվով հոգևորականներ՝ 2500 հոգի, մինչդեռ վարքի հաղորդմամբ՝ ժողովականների թվաքանակը 300 է, որը, կարծում ենք, առավել հավանական է. «... ժողովեցան գիտնական ծերքն, որ առ տէր Գրիգորիսն կային: **Գճ.** (300 – Վ. Թ.) **անձն** կարգաւորաց, եպիսկոպոսաց և վարդապետաց և փիլիսոփայից»[46]: Հաջորդիվ ներկայացված է ժողովի որոշումը, որը տարբեր նախադեպերի օրինակով հերքում է Գրիգոր Գ.-ին ներկայացված մեղադրանքը: Այս պատասխանն ուղղված էր ոչ այնքան Դավիթ Աղթամարցուն, որքան նրա գերագահությունն ընդունած հայաստանյան թեմերին. «Եւ գրեցին յարեւելս, թե զի՞նչ իցեն սխալանք՝ կաթողիկոսի տղայական հասակն, զի սուրբ է անձամբն, ուղղափառ հաւատովն և բարի գործով, անարատ մարմնով և մաքուր հոգով, աստուածահաճոյ վարուք՝ ընտրեալ ի սուրբ ազգէ, սնեալ և վարժեալ ի ձեռն սուրբ և գիտնական դաստիարակաց: Ո՛չ ԲԺան ամաց էր Սողոմոն և թագաւորեաց ի վերայ Իսրայելի եւ իրաւունս արար ի մէջ Բ. կանանցն: Ո՛չ ԲԺան ամաց էր Դանիէլ մանուկն, որ մարգարէացաւ և զծերսն Շուշանայ դատապարտեաց ի մահ: Այլ և առաջինն **Գրիգորիս՝ որդի Վրթանայ մանուկ էր ԺԵ. (15) ամաց, զոր ձեռնադրեաց սուրբն Գրի-**

[45] **Ներսես Շնորհալի**, *Թուղթ ընդհանրական*, 1995, էջ 116:
[46] **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 422. *Հայսմավուրք*, էջ ՉՃՀԶ (676):

**գոր և առաքեաց յԱղուանս:** Նոյնպէս և այս Գրիգորիս ԺԵամեայ ածեալ ի տեառն Բարսղէ ազգականէ իւրմէ: Ապիրատ հայրն Գրիգորիսի և տէր Բարսեղն մօրաքոյրորդիք էին միմեանց՝ ք[ո]ւերորդիք մեծին Գրիգորի Վկայասիրին»[47]: Աղթամարի աթոռի մեղադրանքը հերքելու տեսանկյունից չափազանց կարևոր էր Վրթանեսի մանկահասակ որդի Գրիգորիսի օրինակը: Հիշենք, որ նրան Անանուն Արծրունին նշել էր Գրիգոր Լուսավորչի ժառանգների թվում, որոնց կարգին, ըստ նույն մատենագրի՝ «խառնեաց զնա (Դավիթ եպիսկոպոսը — Վ. Թ.)»[48]:

Հավելենք, որ Գրիգոր Գ.-ին ոչ հասուն տարիքում կաթողիկոս ձեռնադրելը կատարվել էր Բարսեղ Անեցուն պատուհասած մահացու պատահարի պարտադրանքով և չուներ դիտավոր բնույթ: Ներսես Շնորհալու Վարքից տեղեկանում ենք, որ Բարսեղը նրան «ի յարբունս հասակի» տվել էր քահանայական կոչում[49]: Թերևս դա նկատի ունի Վարդան վարդապետը՝ գրելով, որ Բարսեղ Անեցին մինչ Երուսաղեմ ուխտագնացություն ձեռնարկելը, «հրաւիրեալ զեպիսկոպոսունս և զվանորեայս երկրին և զիշխանսն գալ ի տօն վարդավառին, ձեռնադրել զԳրիգորիս յաստիճան առաքելական»[50]:

Այժմ անդրադառնանք Դավիթ Աղթամարցու ներկայացրած հավակնություն-հիմնավորումներին:

Աղթամարի՝ նախկինում կաթողիկոսանիստ և թագավորանիստ լինելու հանգամանքն այնքան էլ ծանրակշիռ չէր, քանզի այդ ժամա-

---

47 **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 422. *Հայսմաւուրք*, էջ ՁԾՀԶ (676):

48 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, *Պատմութիւն*, 303: Որպես մանկահասակ տարիքում կաթողիկոսական ձեռնադրության նախընթաց օրինակ՝ նշելի է նաև Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Հուսիկի ընտրությունը. *«... Նստուցանէին զցանկալին մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական»* (**Փաւստոս Բուզանդ**, *Պատմութիւն*, էջ 292):

49 *Տե՛ս Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 31:

50 **Վարդան վարդապետ,** *Հաւաքումն պատմութեան*, էջ 116. Նույնի՝ *Ճառք*, էջ 370:

*նակ հայաստանյան եկեղեցական կենտրոնների թվում այդ տեսանկյունից առավել շահեկան վիճակում էր Անին, որը ոչ վաղ անցյալում էր կորցրել թագավորական ու կաթողիկոսական կենտրոնի իր կարգավիճակը: Արձանագրենք, որ Անիի աթոռն այս պայքարում հարում էր Գրիգոր Գ.-ին՝ դատապարտելով Աղթամարի ինքնագլխությունը. «Սակայն ոչ եղև ընկալեալ, թէ և շատիցս եղև աշխատ ընծայիւք և աղաչանօք, մանաւանդ ի յԱնւոյ գլխաւորացն. որոց գրէ մեծ շնորհակալութիւն օրհնութեամբ պատրիարգն Գրիգորիս ամենայն վանորէիւք Սեաւ լերինն, և շրջակայ եպիսկոպոսացն ձեռագրով»*[51]*,- գրում է Վարդան վարդապետը: Անիի աթոռի դիրքորոշումն այս խնդրում չափազանց կարևոր ու որոշիչ էր, քանզի այն Մեծ Հայքի հոգևոր կենտրոնների շարքում այդ ժամանակ «երիցագոյն աթոռն էր զառաջինն»*[52]*: Դրանով պետք է բացատրել Դավիթ Աղթամարցու շահագրգռությունն այդ աթոռի աջակցությունն ստանալու հարցում: Ավելին՝ Գրիգոր Գ.-ը, նկատի ունենալով Բարսեղ Անեցու հետ իր ազգակցությունը, Անին համարում էր «իւր սեփհական»*[53]*:*

*Ըստ Վարդան վարդապետի՝ Դավիթ Աղթամարցին, որպես հիմնավորում, նշում էր Վահան Սյունեցի կաթողիկոսի (968-969)՝ Ձորովանքում թաղված լինելը: Այս պնդումն առավել քան անհիմն է ու անհեռատես, քանզի այդ կաթողիկոսը հայտնի է որպես քաղկեդոնամետ, ինչի պատճառով էլ աթոռանկ էր արվել, և տվյալ դեպքում Ձորովանքն ապաստան էր ծառայել ժողովական մերժման արժանացած հայրապետի համար:*

*«Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանց եւ Պետրոսեանցն» վարքի համաձայն՝ արևելյան եկեղեցաթեմերի՝ Դավթին*

[51] **Վարդան վարդապետ,** *Հաւաքումն պատմութեան,* էջ 116:
[52] *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց,* էջ 46:
[53] **Մարևոսյան,** *Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը,* էջ 16:

*հարելը պատճառաբանված էր սրբազան նշանակների այնտեղ գտնվելու փաստով. «Եւ ունէր (Դավիթ Աղթամարցին – Վ. Թ.) առ իւր զԱջն Լուսաւորչին, զքօղն և զգաւազանն: Վասն այսորիկ հնազանդեցան նմա արեւելեանքն»*[54]*: Վերջիններիս (բացառությամբ՝ Լուսավորչի Աջի)՝ Աղթամարում գտնվելու փաստը շեշտում են նաև Թովմա Արծրունին, նրա երկին կցված ԺԲ. դարի կեսերով թվագրվող Պատմության Անանուն հեղինակը, ինչպես նաև Վարդան վարդապետը*[55]*:*

*Վարքի հաղորդմամբ՝ հաստատվելով Գող Վասիլի իշխանությունում՝ Բարսեղ Անեցին պահանջեց Աղթամարից իր մոտ փոխադրել հայրապետական նշանակները, սակայն այնտեղ ընդդիմացան նրա պահանջին «Եւ առաքեաց խնդիր յԱղթամար սուրբ Աջոյ Լուսաւորչին, քօղին և գաւազանին: Եւ նոքա ոչ ետուն ոչ թէ վասն հակառակութեան, այլ վասն սիրոյ և մտերիմ հնազանդութեան, զի թերեւս*

---

[54] Լուսավորչական նշանակների վերաբերյալ մանրամասն տե՛ս **Կիւլէսէրեան,** *Պատմութիւն,* սյուն. 1269-1342: «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանց եւ Պետրոսեանցն» վարքի հաղորդումից կարելի է մակաբերել, որ Լուսավորչի Աջն Աղթամար էր փոխադրել Բարսեղ Անեցին (տե՛ս **Յովսէփեան,** *Յիշատակարանք*, սյուն. 420): Այս տեղեկության հավաստիությունն արդարացիորեն կասկածի տակ է դրվել մասնագիտական գրականության մեջ՝ հաշվի առնելով թեկուզև այն հանգամանքը, որ Բարսեղի՝ Աղթամար գնալը չի հաստատվում այլ աղբյուրներով (տե՛ս **Կիւլէսէրեան,** Պատմութիւն, սյուն. 1277-1278. **Օրմանեան**, Ազգապատում, սյուն. 1579): Հիմնավոր է Մաղաքիա Օրմանյանի կարծիքն առ այն, որ Թովմա Արծրունու Անանուն շարունակողի՝ *«զգաւազան ամենազաւր աջոյն»* վկայությունը սխալ է *«մեկնուած եւ գաւազանը աջին հետ շփոթուած»* (**Օրմանեան**, Ազգապատում, սյուն. 1579): Իրավ, Թովմա Արծունին ևս իր շարադրանքի համապատասխան տեղում որոշակի նշել է ոչ թե Աջի, այլ գավազանի՝ Ձորովանքում լինելը. *«... Ձորոյ վանս անուանեն, ի վկայարան սրբոց Հռիփսիմեանց, զոր շինեալ էր սրբոյն Գրիգոր, ուր զսեղանն սուրբ եւ* ***գաւազանն*** *հովուական...»* (**Թովմա Արծրունի եւ Անանուն**, *Պատմութիւն*, էջ 104):

[55] Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն,** *Պատմութիւն*, էջ 104, 300. **Վարդան վարդապետ,** *Հաւաքումն պատմութեան*, էջ 116:

*դարձցի և գայ հոգեւոր տէրն ի տեղի իւր յԱղթամար։* ***Իսկ տէր Բարսեղն շրջեալ առ նորօք ակն տալ Հայոց ժողովրդեանն, ուր ցրուեալ էին յօտար յերկիրն յայն»***[56]*։ Ընդգծված հատվածը հուշում է, որ էթնոկրոնական նոր միջավայրում ստվարացող հայ տարրն առավել չափով ուներ հոգևոր առաջնորդի աջակցության կարիք, և Բարսեղի որոշումը՝ մնալ Գող Վասիլի մոտ, պայմանավորված չէր միայն վերջինիս իշխանության ապահովությամբ։*

*Աղթամարում սրբազան նշանակների հայտնվելը պայմանավորված էր ոչ թե վերջինիս կաթողիկոսանիստ լինելու հանգամանքով, այլ տեղանքի անառիկությամբ։ Թովմա Արծրունու վկայությունից կարելի է մակաբերել, որ սրբազան մասունքներ այնտեղ էին դեռևս Դ. դարից և պահվում էին Գրիգոր Լուսավորչի կառուցած Հոփիսիմյանց վկայարանում, «զոր այժմ (պատմիչը նկատի ունի իր ապրած ժամանակը – Վ. Թ.) Զորայ վանս անուանեն»*[57]*։ Առաջնորդվելով կաթողիկոսի ընտրության գործում նշանակների ազդեցության աղթամարյան ընկալմամբ՝ պետք է կասկածի տակ առնել մինչ Դավիթ Աղթամարցին աթոռակալած Հայոց կաթողիկոսների իշխանության կանոնականությունը, քանզի այդ նշանակներն Աղթամարում էին անգամ ԺԲ. դարում, մինչդեռ դա ավելի քան հիմնազուրկ է։ Այս պարագայում առավել զորեղ են Սև լեռան 1114 թ. ժողովի ընդունած որոշումներն ու Գրիգոր Գ.-ի ընդհանրական իշխանության ճանաչումը Հայոց եկեղեցու թեմական կենտրոնների գերակշիռ մասի կողմից։ Այդ հիմքով է, որ նախապես Դավթին հարած հայաստանյան թեմական աթոռները, ի վերջո, ընդունեցին Գրիգոր Գ.-ի գերագահությունը. «Զայս (ժողովի որոշումը – Վ. Թ.) լուեալ աթոռակալացն արեւելից, արքեպիսկոպոսունքն և իշխանքն հնազանդե-*

---

[56] **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 421-422. *Հայսմավուրք*, էջ ՉՃՀԵ (675), ՉՃՀԶ (676):

[57] **Թովմա Արծրունի եւ Անանուն**, *Պատմութիւն*, էջ 104:

*ցան սուրբ աթոռոյն Գրիգորի կաթողիկոսին։ Եւ Աղթամար մնաց յապըստամբութեանն իւրեանց»*[58]*։ Հայաստանյան եկեղեցաթեմերի վրա Աղթամարի ազդեցությունը նվազեցնելու նպատակով, ըստ Ռընե Գրուսեի, Գրիգոր Գ.-ը կաթողիկոսական աթոռը մոտեցրեց Մեծ Հայքին՝ 1125–1148 թթ. գտնվելով Ծովքում*[59]*։ Աթոռի փոխադրումը Ծովք պայմանավորված էր նաև Քեսունի իշխանության՝ Եդեսիայի կոմսի ազդեցության տակ անցնելու հանգամանքով*[60]*։ Ի վերջո, չէր մարել նաև կաթողիկոսական աթոռն Անի վերադարձնելու հնարավորությունը։ Գրիգոր Գ.-ին չէր լքել հայրապետական աթոռը հայրենիքում վերահաստատելու ցանկությունը, ինչի ուղղությամբ նա մի քանի անգամ գործնական քայլեր ձեռնարկեց։ Այսպես՝ Սամվել Անեցու եզակի վկայության համաձայն՝ Գրիգոր Գ.-ը բանակցություններ է վարել Անիի ամիր Աբուլասվարի հետ՝ հայրապետական աթոռն այնտեղ տեղափոխելու նպատակով. «Բայց սրբազան հայրապետն եւ առաջնորդն հաւատոյ տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլսուար վասն իւր սեփական աթոռոյս, գալ այսրէն նորա յաւժար կամակցութեամբ»*[61]*։ Սակայն քաղաքական անբարենպաստ իրադրության պատճառով խափանվում է կաթողիկոսական աթոռի վերադարձն Անի*[62]*։*

---

[58] **Յովսէփեան,** *Յիշատակարանք*, սյուն. 422. *Հայսմաւուրք*, էջ ՉԾՀԶ (676):
[59] Տե՛ս **Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները եւ հայերը*, հ. Ա, էջ 353:
[60] Տե՛ս **Մաթևոսյան,** *Անին մայրաքաղաք*, էջ 50:
[61] **Սամուել Անեցի եւ Շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, էջ 208. **Մաթևոսյան,** *Անին մայրաքաղաք*, էջ 50:
[62] Անգամ այս պարագայում Գրիգոր Գ.-ին չի լքում Անի տեղափոխվելու նպատակադրումը, որի իրագործման երկրորդ փորձը նա ձեռնարկում է արդեն 1149-1150 թ.: Կաթողիկոսն անգամ որոշում է այդ նպատակով բանակցություններ վարել Վրաց թագավորի հետ: Սակայն Անի ուղևորվելու ճանապարհին հյուրընկալվում է Թլպաշարի տիրուհուն, որն էլ, տեղեկանալով կաթողիկոսի մտադրության մասին, խոստանում է նրան հատկացնել Հռոմկլա անա-

*Սև լեռան ժողովի որոշումները, սակայն, վերջ չդրեցին Աղթամարի կաթողիկոսությանը, և այն շարունակեց գոյատևել մինչև 1895 թ.։ Ուշագրավ է, որ 1113 թ. հետո Վասպուրականի հոգևոր-եկեղեցական կենտրոններում գրված ու ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում Աղթամարի կաթողիկոսները շատ հաճախ հիշվում են «Հայոց կաթողիկոս» հորջորջմամբ՝ անթաքույց արտահայտելով իրենց՝ կաթողիկոսի ընդհանրական իշխանությունը յուրացնելու ձգտումը։ Սակայն կաթողիկոսության ստեղծման սկզբնական շրջանում անգամ Վասպուրականում դեռևս միանշանակ չէր ընկալվում Դավիթ Աղթամարցու իշխանությունը։ Այստեղ 1118 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում նշվում է, որ այն գրվել է «... ի հայրապետութեանն տեառն Դաւթի Հա[յ]ոց կաթողիկոսի ի Վասպու[րական] յորում կայր եւ այլ կաթողիկոս ի ներքին երկրին, մերձ ի յԱնտիոք։* ***Արդ, եթէ ո՞ր ճշմարիտ է կամ ո՞ր սուտ, զայն Աստուած գիտէ****»[63]։ Մեկ այլ՝ 1123 թվակիր հիշատակարանում ընդգծվում է Դավթի՝ միայն Աղթամարի, ասել է թե՝ Վասպուրական աշխարհի կաթողիկոս լինելը. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս՝ ի թուականիս Հայոց ՇԿԲ.? (=1123) և ի Կիլիկիայի Լևոն թագաւորին, ի հայրապետութեան Դաւթի՝ Թոռնիկեան տեառն, կաթողիկոսի Աղթամարայ»[64]։*

*Այսպիսով՝ Աղթամարում Գրիգոր Լուսավորչի և սրբազան այլ նշանակների առկայությունն անհերքելի հիմնավորում չէր Դավթի ընտրությունն ու իշխանությունն օրինականացնելու տեսանկյունից։ Պարզ տրամաբանությունն անգամ հուշում է, որ այդ նշանակներն*

---

ռիկ ամրոցը: Կարճ ժամանակ անց Գրիգոր Գ.-ը տեղափոխվում է այնտեղ (տե՛ս **Մաթևոսյան,** *Անին մայրաքաղաք*, էջ 51-52):

63 **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 153:

64 **Լալաեան,** *Ցուցակ*, սյուն. 780-781. **Յովսէփեան,** *Յիշատակարանք*, սյուն. 331-333:

*ավելին, քան խորհրդանշական բնույթ, չէին կարող ունենալ։ Հաճախադեպ են Լուսավորչի Աջի՝ կաթողիկոսի ընտրությամբ պայմանավորված, հափշտակության միջոցով այս կամ այն հոգևոր կենտրոնում հայտնվելու դեպքերը, և ուշագրավն այն է, որ դրանք մեծ մասամբ միայն հետին թվով են սրբագործել արդեն իսկ կատարված ընտրության վավերականությունը։ Կարծում ենք՝ նույն մտայնությամբ է «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանց եւ Պետրոսեանցն» վարքում տեղ գտել Աջին վերաբերող հետևյալ հաղորդումը. «Եւ յետ ամաց՝ զԱջն սուրբ և զքօղն գողացան յԱղթամարայ և տարան առ կաթուղիկոսն տէր Գրիգորիս՝ ի Ծովքն Արգնու։ Եւ ապա յետոյ փոխեցան ի Հռոմկլայն»*[65]*։ Սրբազան պարագաները ոչ թե ապահովել են կաթողիկոսի ընտրության վավերականությունը, այլ խորհրդանշել որևէ եկեղեցական կենտրոնի կաթողիկոսանիստ լինելը, մինչդեռ այդպիսին կոչվելու համար պարտադիր էր կաթողիկոսի և ոչ թե այդ նշանակների առկայությունը։*

*Թեև Գրիգոր Գ.-ի ընդհանրական իշխանության ճանաչման ու հաստատման համար կարճ ժամանակ պահանջվեց, սակայն ժամանակի աշխարհընկալումը պարտադրում էր հիմնավորել տակավին պատանի տարիքում նրա ստացած կաթողիկոսական ընտրության օրինականությունը, ու քանի որ այն նախատեսված չէր կանոնական իրավունքով, անհրաժեշտ էր նախադեպի կամ այլ օրինակի միջոցով անելու դա։ Այդ իրագործելու լավագույն հարթակը ժամանակի գրավոր հուշարձաններն էին։ Եվ ահա նույն ժամանակահատվածում Սարգիս Շնորհալու՝* ***1106, 1113*** *և* ***1154*** *տարեթվերով թվագրվող «Մեկնութիւն կաթուղիկէից թղթոց» ժողովածուի հիշատակարանում, կարծում ենք՝ ոչ պատահական, շրջանառվում է համառոտ պատում աստվածաբանական խորը գիտելիքներ ունեցող ութ*

[65] **Յովսէփեան,** *Յիշատակարանք*, սյուն. 422. *Հայսմավուրք*, էջ ՋՃՀԶ (676)։

*կամ տաս տարեկան մի քահանայի մասին, որի տարիքը պատճառ բերելով, Քեսուն գավառի հոգևորականներից ոմանք «նախանձաբեկ լինէին և չարախաւսէին» կաթողիկոս Բարսեղ Ա. Անեցուն: Վերջինս, ծանոթանալով մանուկ քահանայի աստվածաբանական գովելի կարողություններին՝ նրան թեմական առաջնորդ է նշանակում Գող Վասիլի իշխանությունում. «...գիրկս արկանէր նմա և համբուրէր, և եդ զզարդարեալ գաւազանն յուսկոյ, և յարծաթոյ ի ձեռս նորա, և զվաւերականն իւրովի ի մատն նորա, և ի վաղւին, որ էր աւր տէրունեան՝ արար զնա եպիսկոպոս նահանգացն, որ ընդ իշխանութեամբ մեծ իշխանին Վասիլ»*[66]*: Հաջորդիվ հիշատակարանում նշվում է, որ նրա աշակերտներից էր Սարգիս Շնորհալին, իսկ ընկերներից էին Գրիգոր Գ.-ը և Ներսես Շնորհալին: Առավել հետաքրքրական է, որ հիշատակարանի հեղինակը, կարծում ենք՝ ևս ոչ պատահական, արձանագրում է Աղթամարի Դավիթ կաթողիկոսի՝ Գրիգոր Գ.-ի իշխանությունը չընդունելու պատճառաբանությունը, այսինքն՝ վերջինիս տղայական հասակը: Չնայած հիշատակարանը կցված է Սարգիս Շնորհալու աշխատությունը պարունակող ձեռագրին, սակայն առավելապես պատմում է նրա ուսուցչի՝ մեզ ծանոթ մանկահասակ քահանայի մասին, որի՝ Բարսեղ Անեցուց ստացած եպիսկոպոսական ձեռնադրության օրինականությունը հիշատակարանի հիմնական ասելիքն է: Փաստորեն, ամրագրվում էր հոգևորականների ընտրության օրինականությունը՝ ըստ նրանց կարողությունների ու աստվածաբանական գիտելիքների համապատասխան մակարդակի:*

*Վերադառնալով կաթողիկոսական ժառանգական իշխանության հաստատման փաստին՝ նշենք, որ կանոնական իրավունքն արգելում էր եկեղեցական պաշտոնների ժառանգաբար փոխանցու-*

[66] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 172. **Յովսէփեան,** *Յիշատակարանք*, սյուն. 306. **Տաշեան,** *Ցուցակ*, էջ 751:

*մը: Դեռևս վաղ միջնադարյան կանոնական որոշումներում հանդիպում ենք այդ երևույթին արգելող դրույթի. «Զի ոչ է պարտ եպիսկոպոսին՝ եղբաւր կամ որդւոյ կամ այլում ազգականի շնորհել զպատիւ եպիսկոպոսութեան, որպէս ինքն կամի ձեռնադրել, քանզի ժառանգաւոր եպիսկոպոսութեան իւրոյ առնել՝ չէ իրաւացի, զԱստուծոյն շնորհել մարդկային սիրոյ: Քանզի եւ ոչ զեկեղեցին Քրիստոսի ընդ ժառանգաւորութեամբ արժան է դնել: Ապա թէ ոք արասցէ զայս՝ անհաստատ լիցի ձեռնադրութիւն նորա եւ ինքն որոշեսցի»*[67]*: Ուշադրության է արժանի այն փաստը, որ այս կանոնն արդեն ԺԲ. դարի վերջին կրում է բովանդակային փոփոխություն: Մխիթար Գոշը, այն նույնությամբ մուծելով իր Դատաստանագիրք, կատարում է հետևյալ հավելումը. «Կանոնականս իրաւունք այսպէս է. զի ոչ իշխէ իւրոցն տալ, եւ ոչ միայն ձեռնադրել, եւ ոչ զեկեղեցին ժառանգութիւն առնել: Ապա եթէ յանդգնի, հոգեւոր դատաստան է.* ***թէ համոյ բազմաց թուեսցի՝ արհնութեամբ մասնաւորաւ հաստատել»***[68]*:*

*Միջնադարյան աշխարհայեցողությունն ու այդ պատմափուլի հասարակական գիտակցությունն իշխանական տոհմերի հավակնություններն այս կամ այն պաշտոնի (թե՛ աշխարհիկ, թե՛ եկեղեցական) նկատմամբ անվերապահորեն շաղկապում էին նրանց ծագման հետ*[69]*: Դա է պատճառը, որ միջնադարում աշխարհիկ (կայսերական, թագավորական, իշխանական) և եկեղեցական գահաթոռներ զբաղեցրած շատ տոհմեր «պարտադրաբար» այդ պաշտոնների նկատմամբ իրենց իրավունքները սրբագործում էին ինչպես մտա-*

---

[67] **Հակոբյան,** *Կանոնագիրք Հայոց*, հ. Ա., էջ 94:

[68] **Մխիթար Գոշ,** *Գիրք Դատաստանի*, էջ 53:

[69] Աշխարհիկ պաշտոնների պարագայում դա առավել տարածված էր, քանզի եկեղեցական կանոնական իրավունքն արգելում էր դրանց ժառանգաբար փոխանցումը, թեև դա անհաղթահարելի խոչընդոտ չէր:

*ցածրին, այնպես էլ որոշ դեպքերում իրականությանը համապատասխանող ծագումնաբանությամբ: Ուշագրավն այն է, որ այդ նույն հասարակությունը գրեթե չէր քննում շրջանառվող ծագումնաբանական ավանդությունների իսկությունը: Նշենք, որ շատ դեպքերում դա արվում էր հետին թվով, այսինքն՝ որևէ տոհմի կողմից իշխանական գահաթոռը զբաղեցնելուց հետո: Եվ ահա Աղթամարի Դավիթ կաթողիկոսի և Գրիգոր Գ.-ի միջև պայքարում կարևորություն էր տրվում նրանց տոհմական ծագմանը:*

*Կռվանների շարքում առավել զորեղ պետք է դիտել Պահլավունիներինը: Դավիթ Աղթամարցու արծրունիական ծագմանը նրանք հակակշռում էին իրենց «արշակունիական արմատներով»: Արշակունիների տոհմի համբավը, ազդեցիկ լինելով նաև հայկական միջավայրից դուրս, անառարկելիորեն առավել շահեկան և հաղթական դիրք էր ապահովում այս պայքարում*[70]*: Համեմատության համար նշենք, որ Բյուզանդական կայսրության քաղաքական գաղափարաբանությունը հատկապես Մակեդոնական (հայկական) արքայատոհմի օրինականության խնդրում մեծ տեղ էր հատկացնում արշակունիական ծագմանը՝ հետամտելով հստակ արտահայտված քաղաքական և նվաճողական նպատակներ*[71]*: Ավելին՝ Վասիլ Ա.-ն*

---

[70] Շիրակի Բագրատունյաց թագավորության վերջալույսին՝ հատկապես Գագիկ Բ. Անեցու թագավորության շրջանում, ակնառու էր Պահլավունիների ազդեցությունը թագավորական իշխանության վրա: Այդ հանգամանքը ԺԲ. դարի հայ պատմագրական միտքը, հատկապես դրա վառ ներկայացուցիչ Ուռհայեցին, գտնվելով Պահլավունիների անառարկելի հեղինակության ազդեցության ներքո, որոշ դեպքերում շղարշել է չափազանցված համադրություններով, որպիսին Գրիգոր Մագիստրոսին Իսրայելի թագավոր Դավթին օծող Սամուելի հետ համեմատելն է. «Ժամանակագրութեան»՝ Գագիկ Բ. Անեցու թագադրման դրվագում կարդում ենք. *«Սա երկրորդ Սամուէլ երեւեալ, որ էօծ զԴաւիթ արքայ ի վերայ տանն Իսրայէլի. սա թագաւորեցոյց զԳագիկ ի վերայ տանս Հայաստանեայց»* (**Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 87):

[71] Տե՛ս **Բարթիկյան**, *Հայաստանի նվաճումը*, էջ 233:

*(867-886) իր տոհմի արշակունիական շառավիղն սկսում էր Հայոց Տրդատ Գ. (287-330) թագավորից: Դավթի առաջադրած փաստարկներն իրավահաջորդության խնդիրը չէին լուծում: Նա անգամ ազգակից չէր Ժ. դարում Աղթամարում աթոռակալած Ռշտունի երեք կաթողիկոսներին և միանգամայն հասկանալի է, որ այդ հանգամանքն անգամ ներառված չէր նրա կռվանների շարքում:*

*Թեև ըստ Անանունի՝ Դավիթ Աղթամարցին բազմել էր Լուսավորչի գահին, սակայն մինչ նրա աթոռակալումն արդեն իսկ արմատացել էր այն համոզումը, որ կաթողիկոսական աթոռը դուրս էր եկել հայրենի բնաշխարհից ու դեգերում էր Կիլիկիայի մերձակա երկրամասերում: Բացի այդ՝ հայրապետական աթոռն Աղթամար փոխադրելը կնշանակեր կաթողիկոսական իշխանության փոխանցում Արծրունիներին: Հազիվ թե կաթողիկոսական աթոռի համար ծանրագույն շրջան հաղթահարած Պահլավունիները հեշտությամբ առաջնությունը զիջեին մեկ այլ տոհմի, առավել ևս, որ հայրապետական գահաթոռը զբաղեցնելու նպատակադրում ունեին նախքան Վկայասերի ընտրությունը:*

*Այսպիսով՝ Աղթամարի աթոռի ստեղծման ժողովական դատապարտումն ու հայաստանյան եկեղեցական կենտրոնների կողմից Գրիգոր Գ.-ի իշխանության ճանաչումը վերջնականապես հաստատեցին նրա հայրապետական ընդհանրական իշխանությունը: Այս ճանաչմամբ նշանավորվեց Հայոց հայրապետական աթոռի՝ ավելի քան կեսդարյա ծանրագույն շրջափուլի ավարտը, երբ այլևս հաղթահարված էին կաթողիկոսի ընտրության ու իշխանության կենսագործման դեմ Բյուզանդական կայսրության հարուցած արգելքները:*

# ՎԵՐՋԱԲԱՆ

*ԺԱ. դարի երկրորդ կեսի և ԺԲ. դարասկզբի Հայոց կաթողիկոսական իշխանության հիմնախնդրի քննությունը թույլ է տալիս կատարել հետևյալ հիմնական եզրակացությունները:*

**1.** *Հետամտելով Հայոց եկեղեցին Կոստանդնուպոլսի պատրիարքությանը ենթարկելու նպատակ՝ բյուզանդական իշխանությունները Շիրակի Բագրատունյաց թագավորության նվաճումից հետո աստիճանական թուլացման ու մեկուսացման ճանապարհով ձեռնամուխ եղան Հայոց կաթողիկոսության վերացմանը: Դա բխում էր հայերին Քաղկեդոնի դավանանքը պարտադրելու բյուզանդական արքունիքի որոշման տրամաբանությունից: Կայսրությանը սպառնացող սելջուկ-թյուրքական վտանգի պարագայում նման որոշումը, հիրավի, անհեռատես էր և կարող էր ծառայել որպես հայ ռազմաքաղաքական տարրին կայսրության դեմ տրամադրելու ազդակ: Սակայն իրականությունն այն է, որ անգամ այդ պարագայում Քաղկեդոնի դավանանքը պարտադրելու որոշումը չէր հանվել բյուզանդական իշխանությունների քաղաքական օրակարգից:*

**2.** *Սելջուկյան սուլթանությունից սպառնացող վտանգը, այդուհանդերձ, կայսրությանը հարկադրեց առժամանակ ձեռնպահ մնալ կաթողիկոսությունն իսպառ վերացնելու որոշումից ու Պետրոս Գետադարձի մահվանից հետո թույլատրել Խաչիկ Բ. Անեցու, ապա նաև Գրիգոր Վկայասերի աթոռակալումը: Այդպիսով, սակայն, ստեղծվում էր Հայոց կաթողիկոսի ընտրությունն այլևս բյուզանդական արքունիքի թույլատվությամբ անցկացնելու նախադեպ, ինչը ենթադրում էր, որ առաջադրվող թեկնածուն պետք է ստանար կայսեր հավանությունը:*

**3.** *Գրիգոր Վկայասերը, լինելով բյուզանդական պաշտոնյա, կարծես համապատասխանում էր կայսերական իշխանության առաջադրած պահանջներին: Սակայն նրա հայրապետական ընթացքը ցույց տվեց, որ հակառակ բյուզանդական կողմի սպասումների՝ կա-*

*թողիկոսը չվերածվեց կայսեր կամքը գործադրողի: Ավելին՝ իր իրական նպատակները աքողելով ճգնակեցությանը տրվելու և թարգմանությամբ ու գրական գործունեությամբ զբաղվելու ցանկությամբ ու այդ կերպ շրջանցելով բյուզանդական իշխանությունների սահմանած արգելքները՝ նա կայսրության ռազմաքաղաքական ազդեցության տակ գտնվող էթնոկրոնական նոր միջավայրում հայոց դավանական ինքնուրույնության պահպանման ու ամրապնդման կայուն հիմքեր ստեղծեց: Բյուզանդական իշխանությունների հարուցած խոչընդոտներն ամեն կերպ հաղթահարելու նպատակադրմամբ պետք է պատճառաբանել Գրիգոր Վկայասերի՝ ընտրությունից կարճ ժամանակ անց հայրապետական աթոռից կանոնական հրաժարումը, սակայն հայության շրջանում կաթողիկոսական իշխանության փաստացի (de facto) պահպանումը, ինչպես նաև նրա աթոռակալման շրջանում մի քանի կաթողիկոսությունների համաժամանակյա գոյության փաստը:*

**4.** *Բյուզանդիայի հակահայկական քաղաքականության (հատկապես Հայոց կաթողիկոսությունը վերացնելու որոշման), ինչպես նաև Կապադովկիայում ու Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական ռազմաքաղաքական ներուժի մասնատվածության պայմաններում՝ ապահովելու համար հայրապետական իշխանության գործունեության շարունակականությունը՝ Պահլավունիների կողմից վերականգնվեց կաթողիկոսի՝ դեռևս Ե. դարում ընդհատված ժառանգական իշխանությունը:*

**5.** *Գրիգոր Վկայասերի աթոռակալման շրջանում Հոնիում, Եգիպտոսում, Անիում ու Մարաշում հիմնված կաթողիկոսությունները վարչական առումով ունեին սահմանափակ իշխանություն: Վերջիններիս (բացառությամբ Մարաշի)՝ Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ հիմնված լինելն ապահովում էր հրաժարականից հետո նրա՝ փաստացի պահպանվող կաթողիկոսական իշխանության գերագահությունն ընդունելու երաշխիքներ: Այդպիսով՝ բյուզանդա-*

*կան իշխանությունների հարուցած տարատեսակ արգելքների պայմաններում կաթողիկոսական իշխանության իրացման հնարավորություն էր ստեղծվում:*

**6**. *Հայոց կաթողիկոսի միասնական իշխանության վերականգնման ուղղությամբ ԺԱ. դարի վերջերին Բարսեղ Անեցու ջանքերը, ի վերջո, պսակվեցին հաջողությամբ: 1090 թ. հանդիպելով սելջուկ սուլթան Մելիքշահի հետ և ստանալով նրա աջակցությունը՝ Բարսեղ Անեցին կարճ ժամանակամիջոցում վերականգնեց Գրիգոր Վկայասերի ընդհանրական իշխանությունը, որն անվերապահ ընդունում էր:*

**7**. *Կաթողիկոսական աթոռի՝ հայրենի բնաշխարհից դուրս գտնվելը, անշուշտ, նպաստում էր Մեծ Հայքի եկեղեցական ազդեցիկ թեմերի կենտրոնախույս նկրտումներին, որոնք 1113 թ. դրսևորվեցին նորընծա Գրիգոր Գ. Պահլավունու կաթողիկոսական իշխանության մերժմամբ ու Աղթամարի կաթողիկոսության ստեղծմամբ: Դրա ժողովական դատապարտումը, հարկավ, առաջին լուրջ խոչընդոտի հաղթահարումն էր Գրիգոր Գ.-ի կողմից՝ Հայոց կաթողիկոսի նոր սաղմնավորվող համահայկական իշխանության ամրապնդման գործում:*

**8**. *Մեծ Հայքի սահմաններից դուրս հայտնված հայ աշխարհիկ ու հոգևոր բարձրագույն իշխանությունների վերակազմավորումը տեղի էր ունենում նույն էթնոկրոնական և վարչաքաղաքական միջավայրում, ուստի մեծ մասամբ այդ գործընթացներն ընթանում էին զուգահեռաբար, սակայն ոչ միշտ՝ փոխկապակցված: Ի տարբերություն Բագրատունի թագավորների (Գագիկ Բ. Անեցու և Գագիկ Բ. Կարսեցու)՝ հայրենիքից դուրս գտնվելը կաթողիկոսների համար չդարձավ վերջնական ու անհաղթահարելի խոչընդոտ իրենց գործառույթներն իրականացնելու ճանապարհին: Հետաքրքրական է, որ երկարատև և ծանր պայքարի շնորհիվ ոչ միայն կանխվեց կաթողիկոսական իշխանության թուլացումն ու անկումը, այլև հնարավոր դարձավ նրա թե՛ հոգևոր և թե՛ վարչական իշխանության ամրապնդումն ու ընդլայնումը:*

# THE AUTHORITY OF THE ARMENIAN CATHOLICOSATE (MID-11$^{TH}$ CENTURY – EARLY 12$^{TH}$ CENTURY)


SUMMARY

After the fall of the Bagratid kingdom (1045), the Armenian Catholicosate was removed from Greater Armenia by order of the Byzantine Emperor. At first it was moved to Constantinople and then to Sebastia in Lesser Armenia. With the intention to bring the Armenian Church under the control of the Patriarchate of Constantinople, the Byzantine authorities undertook the abolishment of the Armenian Catholicosate. The aim was to enforce more easily Chalcedonism on the Armenians. In that period, the Seljuk Turks were threatening the Byzantine Empire, which meant that the Emperor's decision to convert the Armenians was improvident: it could provoke the Armenian political and military forces against the Empire. Nevertheless, the fact is that even in these circumstances the decision to enforce Chalcedonism on the Armenians remained on the political agenda of the Byzantine authorities.

However, the danger from the Seljuq Sultanate made the Emperor to reverse temporarily the decision about the abolishment of the Armenian Catholicosate. Against their will, the Byzantine authorities allowed Khachik Anentsi to be enthroned after the death of Catholicos Petros Getadarz. Though the Emperor was trying to forbid the election of a new Catholicos, once again attempting to convert the Armenians, this time, too, he did not achieve success and had to willingly approve the election of a new Catholicos.

Grigor Vkayaser (Gregory the Martyrophile), Grigor Magistros' son, was put up as a candidate. Being a Byzantine official, he seemed to meet the requirements of the imperial authorities, but in his activity, contrary to expectations, he proved not to be quite complaisant to the emperor. Moreover, he hid his real aims by devoting himself to an ascetic life and engaging in translation and literary work. In this way he overcame the obstacles put on his way by the Emperor and created a firm basis for preserving and strengthening the independence of the Armenian Church. Shortly after the election, he abdicated but actually preserved his patriarchal authority. Thus he was able to resolve the difficulties caused by the Byzantine authorities, which would hardly be the case if he kept his office as the acting Catholicos.

In a time when Byzantium was pursuing anti-Armenian policy (especially the decision to abolish the Armenian Catholicosate), and when the Armenian political and military forces were disunited in Cappadocia and Northern Syria, it was extremely difficult to secure the normal functioning of the Catholicosate and especially the election of a new Catholicos. Therefore, the Pahlavunis restored the hereditary succession to the patriarchal throne, which was interrupted as early as in the 5th century.

Under Grigor Vkayaser, new Catholicosates were established in Honi, Egypt, Ani, and Marash, which had limited administrative power. These Catholicosates (except the one in Marash) were founded with the consent of Grigor Vkayaser, which guaranteed his supremacy even after his resignation. However, their existence and particularly the Catholicosate of Honi, was a hindrance to the undivided authority of the Armenian Catholicos. At the end of the $11^{th}$ century, the

Catholicos of Ani Barsegh Anentsi, the nephew of Grigor Vkayaser, achieved success in its restoration: in 1090 Barsegh Anetsi met with the Seljuq Sultan Malikshah and, getting his support, instantly restored the undivided authority of Grigor Vkayaser by eliminating the Catholicosate of Honi.

During this period, the Armenian Catholicosate was outside of Greater Armenia, which furthered the autonomy of the main Armenian dioceses: obviously, they were dissatisfied with the fact that the Catholicosate was not inside the country. Perhaps that was the reason why several Armenian dioceses supported Bishop David in the establishment of the Aghtamar Catholicosate in 1113. But this was condemned in 1114 at the council of Black Mountain, which was an important step for strengthening the authority of the Catholicos of All Armenians.

The reestablishment of the Armenian secular and spiritual authorities outside of Greater Armenia was taking place in the same ethno-religious and political milieu. Therefore, these were mostly simultaneous (but not always interconnected) processes. Unlike in the case of the Bagratid kings (Gagik II Anetsi and Gagik II Karsetsi), the fact that the Catholicosate was outside of the homeland didn`t become an insurmountable obstacle for the Catholicoi to fulfil their functions. It is interesting that, as a result of a long and hard struggle, not only the weakening and fall of the patriarchal authority was prevented, but it also became possible to strengthen and expand the spiritual and administrative authorities.

# ՀԱՎԵԼՎԱԾ

# ԳՐԻԳՈՐ Բ. ՎԿԱՅԱՍԵՐԸ ՀՌՈՄՈՒՄ

## Սկզբնաղբյուրների հաղորդումները Գրիգոր Բ. Վկայասերի ուղևորության մասին

*Մասնագիտական գրականության մեջ դեռևս խնդրական է մնում Վկայասերի՝ ուղևորության ժամանակ Հռոմ այցելելու հարցը։ Այդ մասին ավանդող սկզբնաղբյուրները հիմնականում բաժանվում են երկու խմբի, որոնք մենք պայմանականորեն կոչել ենք Ա. և Բ.։*

*Ա. խմբում ներառել ենք սկզբաղբյուրային այն հաղորդումները (դրանցից առաջինը պատկանում է հենց Գրիգոր Վկայասերին), որոնցում արձանագրված չէ կաթողիկոսի այցը Հռոմ, իսկ Բ. խմբում՝ հակառակը՝ այդ մասին վկայող մատենագրական տեղեկությունները։*

*Պարզելու համար՝ արդյոք Վկայասերն այցելել է Հռոմ, թե ոչ, պետք է անդրադառնալ ինչպես ուղևորության այդ հանգրվանին, այնպես էլ դրա ամբողջ երթուղուն, այդ թվում՝ Եգիպտոս գնալու հանգամանքներին։*

*Հարցի համակողմանի քննության նպատակով, նաև հաշվի առնելով այն փաստը, որ մասնագիտական գրականության մեջ խնդիրն արծարծելիս չեն օգտագործվել ուղևորության մասին ավանդող մեզ հասանելի բոլոր աղբյուրները, ստորև քաղվածաբար, հնարավորինս սեղմ կներկայացնենք դրանց համապատասխան հատվածները[1]։*

### *Ա. խումբ*

***Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Գործոց Առաքելոց» երկը պարունակող ձեռագրի հիշատակարանը, հեղինակ՝ Գրիգոր Բ. Վկայասեր. «Յամի վեց հազարերորդի հինգհարիւերորդի առաջներորդի արարածոց աշխարհի և ի հազարերորդի եւթանասներորդի եւթներորդի (1077) կենարարին մերո գալստեանն, և ըստ Խոսրովային***

[1] Այդպիսով փորձել ենք հոդվածի բուն վերլուծական մասը բեռնաթափել սկզբնաղբյուրներից մեջբերվող քաղվածքներից։

*թուոյ Հայկազանցս հինգհարիւերորդի քսաներորդի հինգերորդի (1076), ի թագաւորութեանն Միքայէլի Դուկի, և ի պատրիարգութեան Կոզմայի երկաբնակի, ես Գրիգորիս, որդի Գրիգորի Պալհաւունոյ, ողորմութեամբ մեծին Աստուծոյ արժանացեալ աթոռոց հաւոյն իմոյ սրբոյն Գրիգորի, եւ ըստ յառաջատես տեսլեան սրբոյն Սահակայ, ի սաստկացեալ սրոյ Սկիւթացւոցն հալածանաւք հասի ի պայծառաշէն կայանս սրբոյն Կոստանդիանոսի և մեծաւ ըղձմամբ հայցեալ գտի զտենչալիս յոքունց, զգերահրաշ Մեկնութիւն Գործոց առաքելոցն մեծին Յովհաննու Ոսկեբերանի լուսաւոր և ոգեշահ վարդապետութեամբ։ Եւ հանդիպեալ հմտագոյն հռետորին Կիւրակոսի յունական և հայկական ուսմամբն պերճացեալ և առատաձեռն արգասեաւք, ետու թարգմանել զտենչալիս ոգւոյ իմոյ։ Եւ ընկալեալ սրտալիր ուրախութեամբ իբրև զտախտակսն նախամարգարէին, և մեծաւ տաժանմամբ հատեալ զհամատարածն Լիբիա և Ասիական ծոցոյն, խնամաւք Հոգւոյն հասի ի բաժինս Սեմայ, **ի ստորոտս Տորոսի, ի հրեշտակաբնակ կայարան սրբոցն...** (Ամանոսի լեռներում գտնվող Սև լեռան հոգևոր կենտրոններ - Վ. Թ.)»*[2]*։*

***Ներսես Շնորհալու «Վարք»-ը (1240 թ.).*** *«Գնայր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և երկիրպագանէր սուրբ տեղեացն որ անդ. և հասանէր յարեւմուտս, ուր ազգ բազում Հայոց իջեալ էին և լուսաւորեալ զհոգիս նոցա, և հաստատեալ ի հաւատս. գայր հասանէր ի թագաւորեալ քաղաքն Կոստանդինուպոլիս և յանդիման լինէր թագաւորին և պատրիարգին...։ Յայնժամ սուրբն Աստուծոյ ըստ խորագէտ իմաստութեանն իւրոյ խնդրէր (Գրիգոր Վկայասերը — Վ. Թ.) ի թագաւորէն և ի պատրիարգէն դադարել ժամանակս ինչ առ նոսա և ընթեռնուլ զմատեանս նոցա և օգտել. յօժարեալ կարգեցին ամենեցուն որոց ընդ նմա՝ կերակուրս և ռոճիկս յարքունուստ, և հրամայեցին անխնայ տալ զմատեանսն ամենայն նմա. որոյ դադարեալ*

[2] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 108-109։

*անդ բազումս ժամանակս և առեալ Թարգմանէր զվարս սուրբ հարցն և զպատմութիւնս վկայից…։*

*Իսկ յորժամ զկնի բազում ժամանակի բաւականացեալ լցան այնու որում փափաքէինն, կասկածէր սուրբ հայրապետն ի յունականն խօթամիտ և բարձրայօնակ հնացեալ չարութենէ. զի թէ իմասցին, ոչ տացեն հանել ի նոցանէ զթարգմանեալ մատեանսն։ Ապա այլ իմն խորհուրդ զմտաւ ածեալ, պատրաստէր զորս ընդ նմայն էին ազգայինքն իւր, և ընտրելոց արանց ժողով, և զորդի քեռն իւր….՝ զարքեպիսկոպոսն զտէր Գրիգորիոս հանդերձ ամենայն կահիւն իւրեննանց մտանել ի նաւ. և յառաջագոյն անցանել ի սահմանս Պաղեստինացւոց. և ինքն զկնի սակաւ աւուրց առեալ հրաման յարքայէ, և ողջունիւ բաժանեալ յամենեցունց, զի թեթեւակի բացանաւեալ հասցէ նոցունց։ Որոց մտեալ ի նաւ հնչեալ ուժգին հողմոյ՝ վարեր բռնութեամբ զնաւն, և ձգէր յեգիպտոս։ Եւ քանզի աշխարհն եգիպտացւոց ընդ իշխանութեամբ Արաբացոց էր, երկեան երկեւղ մեծ, և ակն ունէին վարիլ յաւար և ի գերութիւն։ Յայնժամ խորհուրդ իմաստութեան զմտաւ ածէր տէրն Գրիգորիոս. և զգենոյր զեկեղեցական զգեստն իւր և զգեցուցանէր զարսն եկեղեցականս իւրեանց զգեստուք, զարդարեցան և աշխարհայինքն ինքեանց ոսկիակուռ պատմուճանօք զորս ընկալեալ էին պարգեւ ի թագաւորէն Յունաց, և ամենեքեան պաճուճեալք նստան, մեծամեծքն ըստ իւրաքանչիւր աստիճանի, փոքունքն կանգնեցան ի սպասու առաջի։*

*Իսկ որպէս սովորութիւն էր առաքեաց կարգեալ իշխան տեղւոյն տեսանել և իմանալ թէ զինչ իցէ որ կայ ի նաւին կամ ուստի իցեն եկեալ. գնացին առաքեալքն և տեսին արս պատուականս… և հիացան ընդ սքանչելատեսիկն տեսիլ ափ ի բերան եղեալ դարձան առ իշխանն, և պատմեցին նմա։ Յայնժամ իշխանն յարուցեալ գայր առ նոսա յողջոյն պատուով և հնազանդութեամբ և հարցանէր հեզութեամբ, թէ Ո՞ ոք իցեն. և տուեալ պատասխանի, եթէ Ազգականք և սպասաւորք կաթողիկոսին Հայոց եմք, և առաքեաց զմեզ յառա-*

ջագոյն, զի և ինքն եկեսցէ, որպէս զի տեսցուք զսուրբ լեառնն Սի-
նա, և զմիայնարանս նախնի սրբոցն որ աստ, և երկիրպագեալ
դարձցուք յաշխարհն մեր: Ապա ընկալեալ իշխանն զնոսա պատուով
և հանգուցանէր մարդասիրաբար, և առաքէր վաղվաղակի ազդ
առնէր ամիրապետին իւրեանց մեծ խալիֆային, որ էր յառաջնոր-
դական աթոռ ազգին իւրեանց. որ էր այր բարի և իմաստուն..., որ
իբրեւ ծանեաւ՝ յոյժ ուրախ եղեւ, փութանակի առաքեաց ածել
զնոսա առ ինքն մեծաւ պատուով, զոր տեսեալ համբուրէր ըղձական
սիրով, և տեղեկացեալ հարցմամբ ի նոցանէ զպատճառս գալստեանն՝
ուրախ լինէր մանաւանդ յորժամ ծանեաւ թէ սուրբ հայրապետն
գալոց էր անդրէն. և հրամայեաց հանգուցանել զնոսա ի պատշա-
ճաւոր տեղւոջ...: Իսկ արքեպիսկոպոսն տէր Գրիգորիս վաղվաղակի
առաքէր առ սուրբ հայրապետն և ծանուցանէր նմա զիւրեանցն
պատահումն և հայցէր փութապէս հասանել առ նոսա. և լուեալ
սրբոյն Աստուծոյ զայսոսիկ, վաղվաղակի մտեալ ի նաւ՝ անդր հա-
սանէր. և բարեբարոյ խալիֆայն ամենայն մեծամեծովք իւրօք ելա-
նէր ընդ առաջ նորա, և առեալ զսուրբ ձեռսն համբուրէր և դնէր ի
վերայ աչաց և երեսաց իւրոց, և տայր մեծաւ գոհութեամբ օրհնու-
թիւն Աստուծոյ, որ այնպիսի մեծի փարթամութեան արժանի արար
զինքն. և հրամայէր պատրաստել նմա իջեւանս պատուականս...:
Ապա յետ բազում աւուրց տեսանելոյ զմիմեանս, և յոգնակի խօսակ-
ցութեան խնդրէր սուրբ հայրապետն հրաման դառնալոյ յաշխարհն
իւր: Իսկ նա ոչ առնոյր յանձն իւր ամենեւիմբ. թէպէտ սուրբ հայ-
րապետն պատճառէր և դնէր առաջի զերկեւղն Աստուծոյ յաղագս
բազում ժամանակաց անտէրունչ թողլոյ զժողովուրդն իւր: Ասէր.
Յայսպիսի մեծագոյն պարգեւէ առաքելոյ ինձ յԱստուծոյ, ոչ երբէք
զրկեալ աղքատացայց. դնէր և այլ պատճառս բանի յաղագս ոչ լի-
նելոյ անդ յազգէս Հայոց ունայն զհովուելն իւր: Իսկ նա բառնայր
զպատճառանս և երդմամբ հաստատէր լնուլ զաշխարհն Հայաս-
տանեաց ազգօք, զոր և արար իսկ, և բազմացոյց անդ բազմութիւն

*յոյժ իբր տանց տաս հազարաց, և ի նոցանէ բազում իշխանս և հեծեալազօրս պատուեալս: Եւ տեսեալ սրբոյ հայրապետին զջերմեռանդն և զգորովալիր սէր նորա, թողոյր փոխանակ իւր անդր զորդի քեռն իւր և ձեռնադրէր զնա կաթողիկոս Եգիպտոսի, և այսու հաւանեցուցանէր զբարեբարոյ խալիֆայն թողուլ զնա ելանել յաշխարհէն իւրոյ. ... և ինքն գայր հասանէր յայսկոյս բերելով եկեղեցւոյ Հայաստանեաց զգանձն մեծ ծածկեալ յագարակի..., և սա ի Սեաւ լերինն միայնարանս բնակէր միշտ պարապեալ ընթերցման սուրբ գրոց, և աստուածախօս աղօթից: Եւ դադարեալ ի նոյն ճգնութիւն ամս բազումս՝ գայր յետ ժամանակի ի սահմանս Քերսոն քաղաքի առ աստուածասէր իշխանն Վասիլ մականուանեցեալն Գող»*[3]:

***Վարդան Արևելցի. Պահլավունի կաթողիկոսներին նվիրված «Ներբող» (ԺԳ. դար).*** *«Գնայր զերկայնաձիգ ճանապարհն հետի յիսուսաբար վաստակեալ ի թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպալիս: Եւ հանդիպեալ անդ ոչ սակաւ փառաց ի թագաւորէն ի պատրիարգէն եւ ի մեծամեծացն: ... Եւ էր առաջի նորա արարեալ աննախանձաբար զտունս մատենից եւ դիւանաց գրչաց...: Իսկ իբրեւ գիտաց, եթէ աջն յաջողակ աջողեաց նմա զցանկալին իւր, եւ ահա ամենայն ինչ կատարեալ է: Դառնայր անդրէն ծանրաբեռնեալ զշահ վաճառուն լնոյր ի նաւս եւ ծովամուխ եղեալ կամեցաւ գնալ յաստուածակոխն Երուսաղէմ...: Սակայն ի տեսչութենէ վերնոյն առեալ զնաւն հողմոյն տարաւ յԵգիպտոս...: Նոյնպէս նորագոյն սքանչելեաւք եւ անդ ծանուցեալ լինի անձրեւն իմանալի եւ ճշմարիտ հսկաւղն Գրիգորիս, քանզի որպէս ի մուտն Տեառն շարժեցան ձեռագործքն եգիպտացւոց, եւ աստ շարժեալ լինէին ամպք եւ քաղցր եւ առատ անձրեւով ոռոգեցաւ բոլորն Եգիպտոս: ... Եւ ահա կցեալ լինէր բանն աւետիք ի տեսողաց ումանց, եթէ խալիֆայն Հայոց Մեծաց կայ ի սահմանս մեր յեզր ծովուն: Եւ հասուցեալ զբանն ի խա-*

---

[3] *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 20-29:

*լիֆային տաճկաց, որ նստէր անդ յազգէն ալեայ: Եւ նա հրաման տայ ելանել ընդ առաջ նորա: Եւ գնայր ամենայն հրապարակն Մըսրայ ի տեսութիւն նորին: Եւ տեսանէին իբրեւ զուարթունս ի բարձանց իջեալ, քանզի զգեցեալ էին զհանդերձս եկեղեցականս, ըստ աստիճանին պատուոյ: Պատրիարգն սուրբ Գրիգորիս եւ դասք եպիսկոպոսացն եւ քահանայիցն եւ սարկաւագացն եւ դպրացն, որ էին ընդ նմա: Որում երկրպագեալ եւ ուրհնեալք ի նմանէ եւ այնպէս առեալ երեւելի փառաւք ածէին ի քաղաքն, որոյ ելանէր ընդ առաջ եւ խալիֆայն ամենայն բազմութեամբ խառնիճաղանջ ժողովրդեամբն: Եւ ըստ արժանւոյն տարեալ նստուցանէին յեկեղեցին եւ առնէին մեծ ուրախութիւն աւուրս բազումս քրիստոնեայքն եւ աւտարացեղքն: Եւ աղաչէին զսուրբ հայրապետն հանապազ ընդ նոսա լինել եւ մի եւս մտածել զգնալն անտի, որովհետեւ հաճեցաւ Աստուած աստ ածել զքեզ: Եւ տային նմա արտաքոյ քաղաքին տեղի վայելուչ եւ բարետեսիլ, ուր շինեաց եկեղեցի եւ վանս բնակութեան: Ուր կեցեալ ժամանակս ինչ լուսաւորէր ողջագուրեալ մխիթարէր զհայադաւան քրիստոնեայսն որ անդ: Որք եւ պատճառս նորա բազմացան հաւաքելով առ նա յամենայն կողմանց: Վասն որոյ ձեռնադրէր նոցա եպիսկոպոս զքոյր որդին իւր, զոր ունէր ընդ ինքեան զԳրիգոր համանունն իւր եւ հաւասարաշնորհ: Եւ յաւրինէր զտեղին եպիսկոպոսարան եւ դնէր զնա պատրիարգ յԱթոռն Մարկոսի Աւետարանչի: … Եւ այսպիսի կանոնիւ վարժեալ զնոսա սուրբ Լուսաւորիչն երկրորդ հայրապետն Գրիգորիս: Եւ յետ երկուս ամաց գայ յԵրուսաղէմ եւ լցեալ անդ զբաղձանս կարաւտոյն եւ անտի երթայ ի Միջագետս եւ ապա Կարմիր վանքն կոչեցեալ առ Տիւրոս լերամբն ի վերայ Եփրատ գետոյն առ մեծ իշխանն Գող Վասիլն, եւ աղաչեցեալ ի նմանէ դադարէ անդ»*[4]:

[4] **Վարդան Արեւելցի**, *Ճառք*, էջ 366-368: Վկայասերի ուղեգնացության վերաբերյալ «Ներբող»-ի տեղեկությունները խիստ համառոտ ներկայացված են Միքայել Ասորու «Յաղագս քահանայութեան» երկի հայերեն թարգմանությա-

***«Պատմութիւն սրբոց հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան» (գրված՝ 1248-1275 թթ.).*** *«Որ եւ ապայ երեւեցաւ ճրագն ճշմարտութեան տէր Վահրամ եւ որդի Մագիստրոսի, որ կոչեցավ տէր Գրիգորիոսի Վկայայսէր, ազգէն սրբուն Գրիգորի, զարդարեալ հոգոյ եւ մարմնոյ բարեձեվութեամբ։ Գիտէր եւ գիրս յունարէն, զի յուսումնայկից էր Թագայորին Հռօմոց Ալեքսին։ Թողու զտէր Բարսեղ ազգային իւր աթոռապահ, որ եւ գնացեալ ի Կոստանդինուպոլիս, արար բազում գրեանց Թարգմանութիւնս եւ ճառից։ Որ եւ ընթեռնուր եւ վարդապետէր եւ մեկնէր ի լեզուս նոցայ զՍուրբ Գիրս, ընդ որ հիանային ընդ պարծանք մերոյ ազգիս։ Որ եւ բազում մեծայմեծ պարգեվօք դառնա աշխարըն իւր, որում ասէր Թագայորն. «Աթոռս իմ բավայկան է ինձ եւ քեզ, մ՛ի գնար ի մէնջ»։ Զի ոչ եկաց, ետուն մասունս նշխարաց սրբոց եւ մասն ի խաչայփայտէն, խաչս ոսկիայկուռս եւ բազում պարգեվս ի Թագայորէն։ Եւ դիմեալ երթար յԵրուսաղէմ, եւ հողմուն հանեալ ի Եգիպտոս։ Որ եւ հրաշք գործեցաւ ի նմայ, որպէս ի մտանելն Քրիստոսի ոչ էր սօվորութիւն, եկն անձրեւ երկիրն այն, եւ զի Նեղոս գետն ծօվանայ եւ լնու զպէտս անձրեւի։ Իսկ Թագայորն եւ խալիֆան շինեն յնմայ եկեղեցի եւ կաթուղիկոսարան, տվեալ գիւղս եւ գաւառս, զի կարասցեն հաստատել զայն ի Եգիպտոս։ Որ եւ ձեռնադրէ զտէր Գրիգորիոս որդի քվերն իւրոյ եւ Թողու Եգիպտոս։*

---

նը կցված կաթողիկոսական գավազանացանկում. *«Տէր Վահրամ որդի Գրիգոր Մաժիստրի, առեալ զաթոռն զկնի չորից ամաց խափանուածոյն. եթող զկաթուղիկոսութիւն և չոգաւ ի թարգմանութիւնքն ի Կոստանդինուպօլիս, և դարձաւ յԵրուսաղէմ գնալ նախ. և ակամայ եհան ծովն զնա ի Մսր. և զկնի երկու ամաց եկեալ առ Գող Վասիլն, կատարեցաւ ի Կարմիր վանսն»* (ՄՄ, ձեռ. Հմր 1865, էջ 65բ): Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ Վկայասերը Կարմիր վանքում հաստատվել է կյանքի վերջալույսին: Ինչպես ստորև կտեսնենք, կաթողիկոսը Եգիպտոսից վերադարձել է Սև լեռան հոգևոր կենտրոններ, որտեղ նրա՝ 1101 թ. գտնվելու մասին կա հիշատակարանային հստակ վկայություն: Այսինքն՝ Կարմիր վանք Վկայասերի փոխադրվելը պետք է թվագրել 1101-1105 թթ. միջակայքով:

*Առեալ անտի բազում նշխարս սրբոց եւ պարգեւս մեծամեծս, կտավս, իւղս եւ խունկս Եգիպտոսէ, եւ գայ աթոռն իւր՝ առ մեծ ըսպարապետըն Հայոց Գող Վասիլն, որ տիրեալ էր Քեսոնի, Պէսնոյ, ունէ զՄարաշ, զՌապըն...: Եւ կաթուղիկոսարան շինեցին ի դուռն Քեսնոյ, զԿարմիր վանքն»*[5]:

***«Յիշատակ սուրբ հայրապետանցն Հայոց Գրիգորիսի Վկայասիրի, Գրիգորի և Ներսեսի երգեցողի» հայսմավուրքյան վարք (խմբ. Կիրակոս Արևելցի).*** *«Կամեցաւ գնալ ի Կոստանդինուպաւլիս, զի թարգմանեսցէ զպատմութիւն սրբոց և զճառս ներբողականս, որ ոչ գտան իւր առ մեզ հայ լեզուով և գրով:*

*Եւ ձեռնադրեաց զԳէորգ վարդապետն փոխանորդ իւր, եւ ինքն գնաց ի Թագաւորեալ քաղաքն և ընկալեալ ի Թագաւորէն և ի պատրիարգէն Յունաց բազում մեծարանաւք և իբրև կատարեաց զգործն, յոր երթեալն էր ետ զգիրսն թարգմանեալսն յազգականն իւր և ի հոմանունն Գրիգոր յառաջ, քան զնա երթալ յաշխարհն Գերմանիկոյ՝ առ իշխանն Վասիլ: Եւ նաւարկեալ նորա գալ ուժգնակի հողմոյ հնչել տարաւ զնոսա յԵգիպտոս և ելեալ ի ցամաք՝ խալիփայն Տաճկացն, որ յԵգիպտոս մեծարանաւք պատուեաց զեպիսկոպոսն Գրիգոր և ոչ ետ նմա դառնալ ի տուն իւր առ կաթողիկոսն: Եւ եկեալ կաթողիկոսին ի տեղի իւր // և լուեալ, թէ յԵգիպտոս է եպիսկոպոսն Գրիգոր գնաց յԵրուսաղէմ և անտի էջ յԵգիպտոս, և ձեռնադրեաց զնա անդ կաթողիկոս, և նա բազմացոյց զքրիստոնեայսն, որ անդ հովուելով զնոսա՝ ըստ կամացն Աստուծոյ:*

*Եւ տէրն Գրիգորիս, առեալ զթարգմանեալ գիրսն, եկն ի տեղի իւր՝ ի Քեսոն և ի Կարմիր վանքն»*[6]:

---

[5] **Տէր-Պետրոսյան**, *Խաչակիրները եւ հայերը*, հ. Բ, էջ 511-512:

[6] *Համաբարբառ Յայսմաւուրք*, Ը, Աւգոստոս, էջ 147. **Տաշեան,** *Ցուցակ*, էջ 25:

## Բ. խումբ

**Մատթէոս Ուռհայեցի. «Ժամանակագրութիւն» (ԺԲ. դար).** «Եւ էր ի թուականութեանս Հայոց ՇԻԳ (1074-Վ. Թ.), և ապա զկնի այսորիկ գնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպօլիս և անդուստ ի Հռոմ և եկեալ յԵգիպտոս՝ շրջեցաւ ընդ անապատսն ամենայն առաջին սրբոց հարցն և կատարեաց զամենայն փափագումն սրտին իւրոյ. և հաստատեաց անդէն իւր զաթոռ հայրապետութեանն և կանգնեալ անդէն նորոգեաց զամենայն կարգ սուրբ եկեղեցւոյ. և բազում փառք և մեծութիւն ընկալաւ Տէր Գրիգորիս ի թագաւորէն Եգիպտոսի առաւել քան ի թագաւորէն Հոռոմոց: Եւ բազում զօրք ժողովեցան յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց. և Տէր Գրիգորիս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթուղիկոս զՏէր Գրիգոր՝ զքուրորդին իւր՝ և ինքն ելեալ գայր յաշխարհն Հայոց, վասն զի դեռ ևս կենդանի կայր մայրն նորա»[7]:

**«Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանցն եւ Պետրոսեանցն» վարքը (խմբ. Գրիգոր Խլաթեցի, ըստ բովանդակության**

---

[7] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 211: Ստորև ներկայացվող այս խմբի հաջորդ աղբյուրում՝ «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանցն եւ Պետրոսեանց» հայսմավուրքյան վարքում նշվում է, որ կաթողիկոսը մորն այցելել է Դարույնք բերդում. *«Եւ ինքն հոգեւոր տէրն Գրիգորիոս եկն յարեւելս, զի մայրն դեռ եւս կենդանի էր ի բերդն Դարօնից»* (**Յովսէփեան**, Յիշատակարանք, 420: Դարոնից կամ Դարույնք բերդը գտնվում է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Կոգովիտ գավառում): Նույն աղբյուրում հաջորդիվ նշվում է Վկայասերի՝ Բարսեղ Անեցուն եպիսկոպոս (ըստ Վարքի հեղինակի՝ արքեպիսկոպոս) ձեռնադրելու փաստը, և տպավորություն է ստեղծվում, թե դա կատարվել է ուղևորության ավարտին, այսինքն՝ 1074/75 թթ. հետո: Մինչդեռ, ինչպես հստակ արձանագրված է Ուռհայեցու երկում, Վկայասերը Բարսեղին եպիսկոպոս էր ձեռնադրել դեռևս 1072 թ.՝ նախքան երկարատև ուղևորությունը (տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 210-211): Գիտենք նաև, որ Բարսեղի ձեռնադրությունը կատարվել է Անիում, իսկ վարքի հեղինակը չի արձանագրում Վկայասերի այցն Անի, այլ հիշում միայն Դարույնք բերդ նրա հասնելը:

***ԺԲ. դար)***. *«Եմուտ ի Կոստանդինուպօլիս և անտի գնաց ի Հռոմ եւ ի Հռոմայ եկն նաւով յԱղեքսանդրիա և յԵգիպտոս, եւ պատուով մեծարեցաւ ի սուլտանէն և ի խալիֆայէն: Եւ էր յայն ժամանակն յազգէն Հայոց յԵգիպտոս ԼՌ (30000 – Վ. Թ.), որոց եւ եպիսկոպոս գք[ո]ւերորդին իւր Գրիգոր անուամբ: Եւ ինքն հոգեւոր տէրն Գրիգորիոս եկն յարեւելս, զի մայրն դեռ եւս կենդանի էր ի բերդն Դարօնից»*[8]:

***Սմբատ Սպարապետ. «Տարեգիրք» (ԺԳ. դար)***. *«Ի թուին Հայոց ՇԻԳ (523=1074) գնաց տէր Գրիգորիս ի Կոստանդինուպօլիս, և հաստատեաց զորս եգիտ անդ Հայս, և անտի գնաց ի Հռոմ, և անտի եկն յԵգիպտոս և շրջէր ընդ անապատսն ուր միայնացեալ ճգնէին սուրբ հարքն: Իսկ թագաւորն Եգիպտոսի ընկալեալ զնա փառաւորէր, և որպէս հրեշտակ Աստուծոյ համարէր եկեալ առ նա, և ոչ տայր նմա թոյլ ելանել յաշխարհէն իւրոյ, և խոստանայր նմա բազմացուցանել անտ զազգն Հայոց իբրեւ ԼՌ-աց (30.000): Եւ տէր Գրիգորիս ձեռնադրեաց կաթողիկոս Եգիպտոսի զտէր Գրիգոր քուերորդին իւր, որ մարմնով և հոգւով զարդարեալ էր գեղեցկութեամբ. և ինքն եկն յաշխարհն Հայոց զի մայրն կենդանի էր»*[9]:

***Կիրակոս Գանձակեցի. «Պատմութիւն Հայոց» (ԺԳ. դար)***. *«Եւ երթեալ սրբոյ հայրապետին ի Հռոմ, մեծապէս պատուեցին զնա ազգն ֆռանկաց: Եւ կատարեալ զուխտ իւր, եկ ի նաւ գալ ի Կոստանդնուպօլիս թարգմանութեան աղագաւ: Եւ յարուցեալ բռնութիւն հողմոյ ի ծովուն և տարեալ զնաւն ընդ այլ ճանապարհ, հանէ զնոսա յԵգիպտոս: Իսկ որք ընդ նմա էին սպասաւորքն նորա, երկեան զի սովորութիւն էր բնակչաց աշխարհին զալեկոծեալ նաւսն կողոպտել և սպանանել:*

---

8 **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, 420. *Հայսմաւուրք*, էջ ՁՃՀԵ (675):
9 **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 82:

*Եւ կացեալ սրբոյ հայրապետին Գրիգորիսի յաղօթս, եղև անձրև սաստիկ յԵգիպտոս, որ երբէք չէր լեալ: Իբրև տեսին զայս բնակիչք աշխարհին՝ զարհուրեցան, բայց հագարացին, որ թագաւորէր նոցա, այր իմաստուն էր, կոչեաց զզօրսն իւր և ասէ ցնոսա. «Դուք ինքնին գիտէք, զի յաշխարհիս Եգիպտացւոց անձրև չէ՛ եկեալ ի սկզբանց անտի մինչև ցայժմ, բայց միայն կարկուտ յաւուրսն Մովսիսի, և անձրև՝ մի, յորժամ Յիսուսն է եկեալ, սոյնպէս և այս նշան է գալստեան սքանչելագործ մարդոյ: Տեսէք, խնդրեցէ՛ք զնա, թէ ո՞ ոք է»:*

*Եւ շրջեալ զօրացն ընդ աշխարհն՝ գտին զԳրիգորիս իւրովք պաշտօնէիւքն, զի կային յաղօթս առ եզր ծովուն: Եւ ածին զնոսա առ սուլտանն: Եհարց զնոսա, եթէ՝ «Վասն ձե՞ր եկն անձրևս այս»: Եւ նոքա ասեն. «Այո՛»: Եւ ասէ ցնոսա. «Վասն ի՞նչ պատճառանաց, խնդրեցէք զայս»: Եւ նոքա ասեն, եթէ՝ «Երկեաք վասն սովորութեան աշխարհիս ի սպանմանէ, զի նաւաբեկ եղաք ի ծովու»: Եւ զամենայն իրսն ասացին ստուգութեամբ: Յայնժամ զարմացաւ և գովեաց զհաւատս նոցա և ասէ ցհայրապետն. «Նստի դու յԱղէքսանդրիա քաղաքի յաթոռն Մարկոսի, և ամենայն քրիստոնեայք, որք են ընդ իշխանութեամբ իմով, քե՛զ լիցին հնազանդ»: Եւ ետ նմա պարգևս բազումս, և սիրեաց զնա իբրև զհայր: Եւ յայնմ օրէ եղև աթոռն Աղէքսանդրիոյ հնազանդ աթոռոյ սրբոյն Գրիգորի. և անդ եկաց և վախճանեցաւ սուրբն ի փառս աստուծոյ գովութեամբ»*[10]*:*

*Այս խմբի սկզբնաղբյուրների գեթ թռուցիկ համեմատությունն աներկբա փաստում է, որ դրանց (բացառությամբ Կիրակոս Գանձակեցու հաղորդման) հիմքում Ուռհայեցու երկն է: Այլ խոսքով՝ մենք գործ ունենք Վկայասերի՝ Հռոմ գնալը վկայող ոչ թե մի քանի, իրարից տարբեր, այլ ըստ էության՝ մեկ աղբյուրի և նրա տեղեկության կրկնությունների հետ:*

[10] **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն*, էջ 96-98:

## Ուղևորության արծարծումները պատմագիտության մեջ

*Հետազոտողների մի մասը, Վկայասերի ուղևորությանը մանրամասն կամ հպանցիկ անդրադառնալով, կարծում է, որ կաթողիկոսը չի գնացել Հռոմ*[11]*, իսկ մյուս մասը, արժանահավատ համարելով Բ. խմբի սկզբնաղբյուրների տեղեկությունները, պնդում է հակառակը*[12]*:*

*Մաղաքիա Օրմանյանը, օգտագործելով Ուռհայեցու ժամանակագրության երուսաղեմյան հրատարակությունը (1869 թ.), որտեղ, որպես Կոստանդնուպոլսին հաջորդած հանգրվան, նշված է ոչ թե Հռոմ, այլ Հոռոմ երկրանունը, այսինքն՝ Բյուզանդիա, կարծում է, որ բացառելի է կաթողիկոսի՝ Հռոմ այցելած լինելը: Ինչպես գիտենք, Վկայասերը Հռոմ գնալու ցանկության մասին հայոց ազատանուն հայտնել էր իր հրաժարումը պատճառաբանելիս: Եվ ահա, երուսաղեմյան հրատարակության մեջ, ինչպես ուղևորության, այնպես էլ այդ դրվագում գրված է Հոռոմ երկրանունը*[13]*: Սակայն ժամանակագրության երկրորդ՝ վաղարշապատյան հրատարակության մեջ, որը կատարվել է հինգ ձեռագրերի բաղդատությամբ, մեզ հետաքրքրող հատվածներում նշած է ոչ թե Հոռոմ, այլ Հռոմ տեղանունը: Հոռոմ երկրանունն առկա է Ուռհայեցու երկը պարունակող՝ վաղարշապատյան հրատարակության մեջ օգտագործված երկու՝ Դ. և Ե. թվահամարը կրող ձեռագրերում: Երուսաղեմյան հրատարակությամբ առաջնորդվելը, սակայն, հարուցում է դժվար հաղթահարելի բարդություն: Այսպես՝ վաղարշապատյան հրատարակության՝*

---

[11] Տե՛ս **Օրմանեան,** *Ազգապատում*, սյուն. 1496-1498. **Տէր-Միքելեան,** *Հայաստանեայց եկեղեցին*, էջ 154. **Tournebize,** *Histoire*, էջ 165. **Laurent,** *Études*, էջ 98-99:

[12] Տե՛ս **Չամչեանց,** *Պատմութիւն*, հ. Բ, էջ 999-1000. **Ալիշան,** *Շնորհալի*, էջ 34, **Անանեան,** *Գրիգորիս Վկայասէր*, էջ 9-13. **Dédéyan,** *Les Arméniens entre Grecs*…, vol. 1, էջ 252-261. **Բալդարյան Ս.**, *Գրիգոր Բ Վկայասեր*, էջ 30-39 և այլն:

[13] **Մատթէոս Ուռհայեցի**, *Պատմութիւն*, էջ 229, 253:

*կաթողիկոսի ուղեգնացության երթուղին արձանագրած հետևյալ հատվածը՝ «...գնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպօլիս և անդուստ ի Հռոմ» ծանոթագրելով՝ Ժամանակագրության աշխարհաբար թարգմանության հեղինակ Հրաչ Բարթիկյանն իրավացիորեն եզրակացնում է. «Գրչագրերում հանդիպում է «ի Հոռոմ» և «ի Հռոմ» ընթերցվածքները, որ էականապես տարբեր իմաստներ ունեն։ Առաջինը Հռոմ քաղաքն է, երկրորդը՝ Բյուզանդական կայսրությունը։ Ճիշտը «ի Հռոմ»-ն է, քանի որ Կոստանդնուպոլիսը հենց «Հոռոմ»-ում է գտնվում, այսինքն՝ Բյուզանդական կայսրության մեջ, և նա չէր կարող Բյուզանդական կայսրությունից գնալ ի Հոռոմ, որ նույն Բյուզանդիան է»[14]։ Հարկավ, ըստ Ուռհայեցու՝ նախապես Կոստանդնուպոլիս այցելած Վկայասերը չէր կարող այնտեղից «ի Հոռոմ» գնալ, քանզի նա ինչպես ուղևորության սկզբում, այնպես էլ Կոստանդնուպոլսում եղած ժամանակ գտնվել է «Հոռոմ»-ում։ Ուշագրավ է, որ Մաղաքիա Օրմանյանը Վկայասերի ուղևորությանն անդրադառնալիս չի օգտագործում Ուռհայեցու երկի այս երկրորդ՝ առավել մանրամասն տեղեկություններ պարունակող հատվածը։ Այսինքն՝ պատմիչի հաղորդման «գնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպօլիս և անդուստ ի Հռոմ» հատվածի «Հռոմ» ընթերցվածը ստույգ է։ Այս տեսակետը հաստատող ծանրակշիռ կռվան է նաև այն, որ Ուռհայեցու աշխատությունից առատորեն օգտված Սմբատ Սպարապետի Տարեգրքում, որպես Կոստանդնուպոլսին հաջորդած հանգրվան, նշված է ոչ թե Հոռոմ, այլ Հռոմ տեղանունը[15]։*

*Վկայասերի՝ Հռոմ գնալը հավաստի չհամարող մյուս հեղինակները, ի տարբերություն Մաղաքիա Օրմանյանի, առանձին քննության նյութ չեն դարձրել կաթողիկոսի ուղեգնացությունը։ Այսպես՝ Արշակ Տեր-Միքելյանը, ճանապարհորդության սկիզբը թվագրելով*

---

[14] **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն*, 1973, էջ 328։
[15] Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 82։

*1075-ով, նշում է, որ Վկայասերը նախ գնացել է Կոստանդնուպոլիս, որտեղ երկար ժամանակ մնալուց հետո գնացել է Երուսաղեմ, իսկ այնտեղից՝ Եգիպտոս 1086 թ. (Նա հղում է Մատթեոս Ուռհայեցու, Կիրակոս Գանձակեցու երկերը և Ներսես Շնորհալու «Վարք»-ը): Տեր-Միքելյանը հավելում է, որ Վկայասերը «բանավէճ ունեցաւ» Ալեքսանդրիայի Կյուրեղ պատրիարքի հետ՝ «բազում հոգևորականաց ներկայեց իւր ուղղափառ խոստովանութիւնը»: Նա նշում է, որ կաթողիկոսն արևմուտք (հավանաբար նկատի ունի Հռոմը) գնալու մտադրություն է ունեցել, որն այդպես էլ չի իրագործել. «Թէև մտադրած պիտի եղած լինի նաև արևմուտք գնալու, սակայն չարաւ. թուի թէ արևելքում ցրուած Հայ իշխաններն էին Հայոց կաթուղիկոսաց այցելութեան կարօտում»* [16], - գրում է Տեր-Միքելյանը:

*Ֆրանսիացի հայագետ Ֆրանսուա Տուռնբիզը ևս, հակիրճ անդրադառնալով Վկայասերի ուղևորությանը, հավատ չի ընծայում նրա՝ Հռոմ գնալու վերաբերյալ ինչպես հայկական, այնպես էլ լատինական սկզբնաղբյուրների տեղեկություններին՝ դրանք համարելով ոչ իրապատում*[17]*: Նա, որպես լատինական աղբյուր, վկայակոչում է Բարոնիուսի «Եկեղեցական տարեգիրք»-ը, որտեղ, սակայն, նշված է Հռոմի Գրիգոր Է. պապի (1073-1085)՝ Վկայասերին գրած նամակը, վերջինիս պատվիրակ Հովհաննեսի՝ Հռոմ գնալը և նամակում արծարծված մի շարք այլ խնդիրներ, և ակնարկ չկա Հայոց կաթողիկոսի՝ Հռոմ կատարած այցելության վերաբերյալ*[18]*:*

*Վկայասերի այցը Հռոմ անհավանական է համարում նաև ֆրանսիացի մեկ այլ հայագետ Ժոզեֆ Լորանը: Նա ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ աղբյուրները որևէ մանրամասն*

---

[16] **Տէր-Միքելեան**, *Հայաստանեայց եկեղեցին*, էջ 154:
[17] Տե՛ս **Tournebize,** *Histoire*, էջ 165:
[18] Տե՛ս **Caesar S. R. E. Card Baronii**, *Annales Ecclesiastici*, էջ 482:

*չեն հաղորդում այդ այցելության մասին*[19]*: Այս առումով, իհարկե, չնչին բացառություն է Կիրակոս Գանձակեցին, սակայն նա էլ բավարարվում է նշելով, որ Վկայասերը Հռոմում արժանացել է պատշաճ ընդունելության:*

*Գերմանացի ժամանակակից հետազոտող Պետեր Հալֆտերը ևս համակարծիք է Վկայասերի՝ Հռոմ այցելելն անհավանական համարող հեղինակների հետ*[20]*:*

*Վկայասերի այցը Հռոմ հավաստի համարող տեսակետը պաշտպանող որոշ հեղինակներ մատնանշում են կաթողիկոսի դրա տարբեր թվականներ ու շարժառիթներ:*

*Այսպես՝ հիմք ընդունելով Մատթեոս Ուռհայեցու վկայությունը՝ Միքայել Չամչյանցը կարծել է, որ Վկայասերը ծրագրել էր նախապես այցելել Կոստանդնուպոլիս, ապա՝ Հռոմ, սակայն մատնանշելով Հայոց կաթողիկոսին Գրիգոր Է. պապի հղած նամակը, պնդել է, որ նա փոխել է երթուղին և գնացել Հռոմ: Այդ նամակին մենք դեռ մանրամասն կանդրադառնանք, սակայն նշենք, որ այն Վկայասերին ուղղված պատասխան է և թվագրվում է 1080-ով: Նամակում Հռոմի պապը Վկայասերին խնդրում է նույն կամ մեկ այլ պատվիրակի միջոցով իրեն ուղարկել Հայոց եկեղեցու դավանագիրը: Միքայել Չամչյանցը կարծում է, որ Վկայասերը որոշել է դավանագիրն անձամբ տանել պապին, առավել ևս, որ նախապես ծրագրել էր այցելել Հռոմ: Նա կամայականորեն փոխում է ինչպես Վկայասերի՝ պապին ուղղված նամակի, այնպես էլ վերջինիս պատասխանի տարեթվերը՝ դրանք թվագրելով 1075-ով. «Ելեալ ապա Գրիգորի ի քաղաքէն Անւոյ՝ գնաց ի կողմանս Սեաւ լերին ի Խարամանիա և կամէր անցանել ի Կոստանդնուպօլիս, և անտի երթալ ի Հռովմ, այլ գրեաց յառաջագոյն թուղթ յարգութեան առ համանուն իւր՝ եօթներորդ*

[19] Տե՛ս **Laurent,** *Études d'histoir Arménienne*, էջ 98-99:
[20] Տե՛ս **Halfter**, *Das Papsttum*, էջ 120-121:

*Գրիգոր պապ, և առաքեաց զայն ի ձեռն քահանայի միոյ, որոյ անուն էր Յովհաննէս։ Եւ սրբազան պապն գրեաց առ նա պատասխանի յամի Տեառն 1075 ի յունիսի 24 (ըստ ոմանց՝ յամի 1080)։ ... Զայս թուղթ առեալ Գրիգորի Վկայասիրի՝ ոչ ևս յամեաց ելանել ի ճանապարհ, այլ անյապաղ փութացեալ գնաց ի Հռովմ, որպէս և ունէր ուխտ յառաջմէն»*[21]*։ Հռոմի պապի նամակին մանրամասնորեն անդրադարձած Պողոս Անանյանը, արդարացիորեն հավատ չընծայելով Միքայել Չամչյանցի այս թվագրմանը, գրում է. «Չամչեան կը համարի թէ Վկայասէր Հռոմ գացած ըլլայ անձամբ պատասխանելու նամակին եւ Պապին միտքը շինած։ Արդ, Ուհռայեցիի վկայութեան համաձայն Վկայասէր 1074ին գացած պէտք է ըլլայ դէպի Հռոմ, մինչ նամակը գրուած է 1080 Յունիս 6ին։ Ուստի, սխալ է Վկայասէրի ուղեւորութիւնը կապել նամակին հետ, որով ինքնին կիյնայ ուղեւորութեան Չամչեանի ենթադրուած նպատակն ալ»*[22]*։ Ինչ վերաբերում է Հռոմի պապին Վկայասերի ուղղած նամակի թվականին, ապա սխալ չի լինի այն նույն՝ 1080 կամ դրան նախորդող տարով թվագրելը*[23]*։ Շարունակելով կաթողիկոսի ուղեգնացության վերաբերյալ իր քննությունը՝ Միքայել Չամչյանցը գրում է, որ նա Հռոմից գնացել է Երուսաղեմ, ապա Եգիպտոս, այնուհետև այցելել մորը և դրանից հետո վերադարձել Սև լեռներ*[24]*։ Չամչյանցն իր նշած երթուղում չի արձանագրում Վկայասերի՝ Կոստանդնուպոլիս գնալը։ Աղբյուրներից միակը, որտեղ արձանագրված չէ կաթողիկոսի այցը Բյուզանդիայի մայրաքաղաք, Կիրակոս Գանձակեցու երկն*

---

[21] **Չամչեանց**, *Պատմութիւն*, հ. Բ, էջ 999-1000: Հռոմի պապի նամակի՝ Միքայել Չամչյանցի առաջարկած թվագրումը Ս. Ագըլյանն օգտագործել է Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» քննական հրատարակության համապատասխան տեղեկությունը ծանոթագրելիս (տե՛ս **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 82):

[22] **Անանեան**, *Գրիգորիս Վկայասէր*, էջ 13:

[23] Հմմտ. **Կղեմէս Գալանոս**, *Միաբանութիւն*, էջ 228-233:

[24] Տե՛ս **Չամչեանց**, *Պատմութիւն*, հ. Բ, էջ 1000:

*է, որի տեղեկությունները, ինչպես ստորև կտեսնենք, հավաստի չեն այս ուղևորության երթուղին ճշտելու համար։ Միքայել Չամչյանը, իհարկե, չէր կարող առաջնորդվել միայն Գանձակեցու վկայություններով, սակայն բացառել նաև Վկայասերի այցը Կոստանդնուպոլիս ևս անհնարին էր, քանզի այն անհերքելի իրողություն է։ Այդ իսկ պատճառով նա ընտրում է խնդրի լուծման այլ եղանակ։ Այս հարցում Չամչյանցն օգտագործում է Բյուզանդիայի կայսեր Ալեքսիոս Ա.-ի (1081-1118) ժամանակ Կոստանդնուպոլսում ապրող որոշ հայերի՝ մայրաքաղաքում հայտնված Նեղոս անունով եվտիքյան հերետիկոսին հարելու փաստը։ Ըստ Աննա Կոմնենայի «Ալեքսիադա» երկասիրության՝ Նեղոսի հետևորդների շարքերը գնալով համալրվում էին նորանոր անդամներով, որոնց թվում քիչ չէին նաև հայերը։ Նրա վտանգավոր գործունեությանը վերջ տալու համար Նիկողայոս Գ. (1084-1111) պատրիարքի գլխավորությամբ Կոստանդնուպոլսում հրավիրված եկեղեցական ժողովը բանադրում է Նեղոսին, նրա ուսմունքն ու դրա հետևորդներին*[25]*։ Նկատի առնելով Նեղոսի ուսմունքին հայերի հարելու փաստը և կարծելով, որ դա էր նրանց նկատմամբ կայսեր հարուցած հալածանքների պատճառը՝ Միքայել Չամչյանցը եզրակացնում է, որ դրանց վերջ դնելու նպատակով Վկայասերը մեկնել է Կոստանդնուպոլիս և եկեղեցիների միության առաջարկ արել Ալեքսիոս կայսրին։ Որպես այս տեսակետը հաստատող կռվան՝ նա մատնանշում է Հռոմկլայի 1178 թ. եկեղեցական ժողովի վավերագրերից մեկում առկա հետևյալ տեղեկությունը. «Եկն եւ Գրիգորիոս Վկայասէր առ Ալեքսիոսիւ արքայիւ ի մեծ եկեղեցիդ. և չեղեւ հնար միութեան»*[26]*։ Նրա եզրահանգումը, անշուշտ, ունի գոյության իրավունք, սակայն այն սպառիչ համարելու համար*

---

[25] Տե՛ս **Anne Comnène**, *Alexiade*, էջ 187-188:

[26] *Ներսէս Լամբրոնացի, Խօսակցութիւնք…*, էջ 96. **Չամչեանց**, *Պատմութիւն*, հ. Գ, էջ 8:

*անհրաժեշտ է վերոբերյալ քաղվածքից զատ հաղթահարել Վկայասերի գործունեության առնչվող մեզ հայտնի մյուս բոլոր սկզբնաղբյուրների համերաշխ լռությունը կաթողիկոսի՝ Ալեքսիոսի գահակալման տարիներին Կոստանդնուպոլիս մեկնելու և եկեղեցիների միության գործը նախաձեռնելու վերաբերյալ: Միքայել Չամչյանցի վկայակոչած քաղվածքը Հռոմկլայի ժողովի ոչ պաշտոնական փաստաթղթերի շարքին դասվող «Գլխադրութիւնք Հոռոմոց զորս պահանջէն առ ի մէնջ ի պէտս խաղաղութեան, ընդ որս եւ լուծմունք առընթեր եդեալ» վավերագրից է*[27]*, որը վերագրվում է Ներսես Լամբրոնացու գրչին*[28]*: Արձանագրենք, որ Մատթեոս Ուռհայեցին ևս տեղյակ է Կոստանդնուպոլսում հայտնված նշյալ աղանդավորի գործունեությանը, սակայն ուշագրավ է, որ որևէ ակնարկ նրա ուսմունքին հայերի հարելու, Վկայասերի՝ Կոստանդնուպոլիս մեկնելու և առավել ևս՝ Ալեքսիոս կայսին եկեղեցիների միության առաջարկ անելու մասին չի հայտնում*[29]*:*

*Վկայասերի ուղևորության երթուղին մանրամասն քննած Ժերար Դեդեյանը, հավաստի համարելով Կիրակոս Գանձակեցու հաղորդումը և հարակից այլ սկզբնաղբյուրային տվյալներ, կարծում է, որ ստույգ է ոչ միայն կաթողիկոսի այցը Հռոմ, այլև այն, որ նա այնտեղ գնացել է դիվանագիտական առաքելությամբ: Բանն այն է, որ Մանազկերտի 1071 թ. ճակատամարտում թյուրք-սելջուկներից Բյուզանդիայի կրած պարտությունից հետո նորընծա կայսր Միքայել Է. Դուկասն (1067-1078) օգնության խնդրանքով դիմել էր Հռոմի Գրիգոր Է. պապին՝ միաժամանակ առաջարկելով վերականգնել Հռոմի և Կոստանդնուպոլսի եկեղեցական աթոռների՝ դեռևս 1054 թ. խաթարված միությունը: Ժերար Դեդեյանի կարծիքով՝ Կոստանդ-*

---

27 Տե՛ս **Բոզոյան**, *Եկեղեցական բանակցություններ*, էջ 187:

28 Տե՛ս **Ակինեան**, *Ներսէս Լամբրոնացի*, էջ 159:

29 Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 239:

նուպոլսից 1074 թ. Հռոմ ուղարկված պատվիրակության կազմում ընդգրկվել է նաև Գրիգոր Վկայասերը[30]: Վերջինիս՝ Կոստանդնուպոլսի պատրիարքության և Հռոմի պապական աթոռի միջև տեղի ունեցած բանակցությունների շրջանակներում Հռոմ այցելելու մասին առաջին անգամ թեական ենթադրություն է արել Ղևոնդ Ալիշանը՝ Ներսես Շնորհալուն նվիրված իր աշխատությունում. «Հարկաւ մեր եկեղեցական պատմութեան մէջ մեծ նշանակութիւն մը պէտք է ունենալ Վկայասիրին այս գործը, թէ և անոր բուն շարժառիթն քաջայայտ չըլլայ: Արդեօք այն մեծ կրօնից և գիտութեանց աղբիւրէն ալ նո՞ր և վաւերական գրքեր պիտի որոնէր, ... **ըլլայ Յունաց եկեղեցւոյ պահանջմանց համար**, ըլլայ ուրիշ բան»[31]: Սակայն նա իր մեկ այլ՝ «Հայապատում» աշխատության մեջ, ծանոթագրելով Շնորհալու Վիպասանության տեղեկությունն առ այն, որ Վկայասերը գնացել է Արևմուտք, ուր «ազգ բազում Հայոց իջեալ էին», գրել է. «Թէ և թուի ոմանց ի Հռովմ եւս երթալն. և չէ հաւանական թէ այն ատեն յԻտալիա այլ սփռուծ ըլլան Հայք, ինչպէս յետոյ ԺԳ. և ԺԴ. դարս, բայց ստուգիւ Հռովմայ Պապից հետ թղթակցութիւն ունեցեր է Վկայասէրն»[32]:

Որպես իր տեսակետը հիմնավորող փաստարկներ՝ Ժերար Դեդեյանը մատնանշում է **ա.** հայերի՝ Հռոմ ուխտագնացություն կատարելու ավանդույթը, **բ.** Գրիգոր Վկայասերի և Հռոմի Գրիգոր Է. պապի նամակագրությունը, և հատկապես այն, որ Հայոց կաթողիկոսին հղած պատասխանում պապը նրանից չի պահանջում այցելություն Հռոմ՝ ad limina, ինչը, ըստ հետազոտողի՝ պարտադիր էր լատին եկեղեցու հետ հարաբերությունները սերտացնել ցանկացող այլ ազ-

[30] Մանրամասն տե՛ս **Dédéyan**, *Les Arméniens entre Grecs...*, vol. 1, էջ 250-260:
[31] **Ալիշան,** *Շնորհալի*, էջ 34:
[32] **Ալիշան**, *Հայապատում*, էջ 349:

*գային եկեղեցիների առաջնորդների համար: Ժերար Դեդեյանը կարծում է, որ այդպիսի պահանջի բացակայությունը հնարավոր է բացատրել մինչ պապի հետ նամակագրությունը՝ 1080 թ., Վկայասերի՝ Հռոմ կատարած այցելությամբ*[33]*: Պարզելու համար, թե արդյոք ստույգ է այս տեսակետը, պետք է՝ ա. ճշտել կաթողիկոսի ուղևորության թվականը, երթուղին և, հատկապես Կոստանդնուպոլսին հաջորդած հանգրվանը, բ. ստուգել Կիրակոս Գանձակեցու տեղեկությունների հավաստիությունը, գ. հիմնվելով Հռոմի պապի՝ Վկայասերին հղած նամակի բովանդակության վրա՝ պարզել, թե արդյոք այն կարելի է համարել Հայոց կաթողիկոսի՝ մինչ 1080 թ. Հռոմում եղած լինելու փաստարկ:*

## Ուղևորության թվականը

*Վկայասերի գործունեությանը հպանցիկ անդրադարձած Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» երկի համապատասխան հաղորդումից կարելի է մակաբերել, որ կաթողիկոսը Կոստանդնուպոլիս մեկնել է Գեորգ Լոռեցու հայրապետական ձեռնադրությունից հետո, այսինքն՝ իր հրաժարականից կարճ ժամանակ անց: Սակայն մեզ զբաղեցնող մյուս սկզբնաղբյուրների, մասնավորապես Վկայասերի հիշատակարանի համաձայն՝ այցը Կոստանդնուպոլիս կայացել է ոչ թե Գեորգ Լոռեցու ընտրությունից, այլ նրա աթոռանկությունից (1072 թ.) առնվազն մի քանի տարի անց: Վարդան Արևելցու հետևյալ տեղեկությունը. «...և ամ մի կալեալ զաթոռն ի Ծամնդաւ՝ թողու ի Գէորգ վարդապետն իւր Լոռեցի: Եւ ինքն անցեալ գնայ ի Կոստանդնուպօլիս»*[34] *հիմք ունենալով՝ Մաղաքիա Օրմանյանը Վկայասերի տևական ուղևորության մեկնարկը թվագրում է նրա կաթողիկոսական ընտրությանը հաջորդող տարով՝ 1067-ով. «Գրիգորի ճա-*

---

[33] Տե՛ս **Dédéyan,** *Les Arméniens entre Grecs...*, vol. 1, էջ 260.

[34] **Վարդան վարդապետ,** *Հաւաքումն պատմութեան*, էջ 102:

նապարհորդութեան ելնելուն եւ Գէորգ Լոռեցիի աթոռակցութեան թուականը կը ստիպուինք դնել 1067-ին, հիմնուելով Վարդանի **ամ մի միայն կալեալ զաթոռն, թողու`** ընելուն»[35]: Նկատենք, որ Վարդան Արևելցու` Լոռեցու աթոռանկության ու Վկայասերի ուղևորության վերաբերող տեղեկությունները ներառված են ոչ թե մեկ, այլ երկու տարբեր նախադասություններում, ինչը նկատելիորեն նվազեցնում է այդ իրադարձությունների` իրար ժամանակագրորեն անմիջապես հաջորդելու հավանականությունը, առավել ևս, որ պատմիչի երկում նույն պարբերության մեջ ընդգրկված իրողությունները ոչ բոլոր դեպքերում են ժամանակային առումով հաջորդական: Վկայասերի ուղևորության մասին «Հաւաքումն պատմութեան» երկում առկա սեղմ հաղորդումն ընդարձակ ու նաև հավելյալ տեղեկություններով կա նույն հեղինակի` Պահլավունի կաթողիկոսներին նվիրված ներբողում: Ի տարբերություն «Հաւաքումն պատմութեան» երկի` ներբողում արձանագրված է, որ Վկայասերը հրաժարականից անմիջապես հետո այցելել է ոչ թե Կոստանդնուպոլիս, այլ գնացել Սև լեռան հոգևոր կենտրոններ, ապա հանգրվանել Միջագետքում` իր հոր կառուցած Տրուայի վանքում, և միայն դրանից հետո մեկնել Բյուզանդիայի մայրաքաղաք. «... եւ ի տեղի իւր թողու զԳէորգ վարդապետն իւր եւ ինքն զանխլաբար գնաց ի Սեաւ լեառն եւ անցանէ ի Միջագետս ի Տրուայ վանս, որ հաւր իւրոյ շինեալ էր եւ տայ ի դպրոցս զերկուս որդիսն մեծի իշխանին Ապիրատայ, որ էր որդի քեռ իւրոյ զնոսա անդ ի յուսումն տայ զԳրիգորիս եւ զՆերսէս:... Եւ ինքն ... գնայր զերկայնաձիգ ճանապարհն հետի յիսուսաբար վաստակեալ ի թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպաւլիս»[36]: Այսինքն`

[35] **Օրմանեան,** *Ազգապատում*, սյուն. 1496:

[36] **Վարդան Արեւելցի**, *Ճառք*, էջ 365-366: Ներբողի սույն հատվածում նշվում է, որ Վկայասերն իր զարմիկներ Գրիգորին ու Ներսեսին` ապագա կաթողիկոսներ Գրիգոր Գ.-ին և Ներսես Դ. Շնորհալուն, կրթության է հանձնում Տրուայի

*Վարդան Արևելցին, հետևելով ժամանակագրական բնույթի երկում իրադարձությունները հնարավորինս սեղմ շարադրելու սկզբունքին, «Հաւաքումն պատմութեան» երկում չի հիշատակել ներբողում առկա հավելյալ տեղեկությունը: Խնդրի լիարժեք պարզաբանմանն օգնում է այն, որ սկզբնաղբյուրները Վկայասերի այցը Կոստանդնուպոլիս ներառում են կաթողիկոսի երկարատև ուղևորության մեջ:*

*Մասնագիտական գրականության մեջ այս ուղևորության թվագրման ու երթուղու վերաբերյալ կարծիքները տարամիտվում են: Թվականներ հաղորդում են ընդամենը երկու աղբյուր, որոնցից մեկն Ուռհայեցու երկն է, իսկ մյուսը՝ Վկայասերի հիշատակարանը: Ինչպես Ուռհայեցին, այնպես էլ կաթողիկոսը նշում են միայն ուղևորության մեկնակի թվականը. առաջինը՝ Հայոց 523 (1074 թ.), երկրորդը՝ Փրկչական 1077 թ. և Հայոց՝ 525 (1076 թ.): Նշենք, որ այս հիշատակարանը չափազանց կարևոր է ոչ միայն ուղևորության թվագրման, այլև երթուղու ճշգրտման համար, քանի որ կաթողիկոսն ինքն է արձանագրում և՛ դրա թվականը, և՛ հանգրվանները. «Յամի վեց հազարերորդի հինգհարիւերորդի առաջներորդի արարածոց աշխարհի և ի հազարերորդի եւթանասներորդի եւթներորդի (1077) կենարարին մերո գալստեանն, և ըստ Խոսրովային թուոյ Հայկազանցս հինգհարիւերորդի քսաներորդի հինգերորդի (1076), ի թագաւորութեանն Միքայէլի Դուկի, և ի պատրիարգութեան Կոզմայի երկաբնակի, ես Գրիգորիս, որդի Գրիգորի Պալհաւունոյ..., ի սաստկացեալ սրոյ Սկիւթացւոցն հալածանաւք հասի ի* ***պայծառաշէն կայանս սրբոյն Կոստանդիանոսի***...: *Եւ ընկալեալ սրտալիր ուրախու-*

---

վանքում, սակայն այս տեղեկությունը ժամանակագրորեն չի համապատասխանում կաթողիկոսի հրաժարականին ու Լոռեցու աթոռակցությանը, քանզի թե՛ Գրիգորը և թե՛ Ներսեսը 1060-ական թվականների վերջին դեռ ծնված չէին: Սա, իհարկե, չի հերքում Վարդան վարդապետի վկայության մնացյալ հատվածի հավաստիությունը, քանզի, ինչպես ստորև կտեսնենք, Վկայասերն իր երկարատև ուղևորությունը սկսել է 1070-ական թվականների կեսերին:

*թեամբ իբրև զտախտակսն նախամարգարէին, և մեծաւ տաժանմամբ հատեալ զհամատարածն* ***Լիբիա***[37] *և Ասիական ծոցոյն, խնամաւք Հոգւոյն հասի ի բաժինս Սեմայ, ի ստորոտս* ***Տորոսի, ի հրեշտակաբնակ կայարան սրբոցն»***[38]*։ Կաթողիկոսի ուղևորությանը, մասնավորապես դրա թվագրմանն անդրադարձած Պողոս Անանյանը, հիմնվելով այս հիշատակարանի (1077 թ.) և Մատթեոս Ուռհայեցու (Հայոց 523=1074 թ.) հաղորդած թվական տվյալների վրա, կարծում է, որ հայրապետն այս քաղաքներ այցելել է ոչ թե նույն, այլ տարբեր ուղեգնացությունների ժամանակ, և որ առաջին երթուղին եղել է դեպի Հռոմը. «Այս յիշատակարանէն կը հետեւի որ Գրիգորիս Վկայասէր Կ. Պոլիս հասած է 1077 թուականին, Միքայէլ Տուկիծ կայսեր (1071-1078) եւ Կոսմա Պատրիարքի (1075-81) օրերուն եւ հոն գտած է սիրալիր ընդունելութիւն, քանի որ ուզած է ձեռնարկել թարգմանութիւններու։ Ուստի նկատի առած Մ. Ուռհայեցիին ՇԺԷ (1068) թուականին յիշած Գրիգորիսի մտադրութիւնը դէպի Հռոմ երթալու եւ ՇԻԳ (1074) թուականին այդ ճամբորդութիւնը կատարած ըլլալուն, եւ այս յիշատակարանին մէջ ըսուած ճամբորդութիւնը դէպի Կ. Պոլիս 1077ին, թարգմանութեան համար, յայտնի կը տեսնուի թէ երկու տարբեր ատեններ եղած ճամբորդութիւններ են, որոնք պատմիչներու քով միացած են կամ մին անտեսուած է»*[39]*։ Պողոս Անանյանի այս պնդման սկզբնաղբյուրային հիմքը Կիրակոս Գանձակեցու տեղեկությունն է այն մասին, թե Վկայասերը նախա-*

---

[37] Այս տեղանվամբ Վկայասերն արձանագրում է իր՝ Եգիպտոսում (Աֆրիկայում) եղած լինելը: Միջնադարի արաբ մատենագիրները Լիբիա կամ Լուբիա ասելով՝ նկատի են ունեցել Աֆրիկա մայրցամաքը: Միևնույն ժամանակ, այդ տեղանունով է հիշատակվում Եգիպտոսի արևմտյան նահանգներից մեկը (տե՛ս *Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր*, էջ 505, ծանոթ. 1: Աֆրիկայի Լիբիա անունը ծագում է անտիկ ժամանակներից:

[38] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 108-109:

[39] **Անանեան,** *Գրիգորիս Վկայասէր*, էջ 10:

*պես այցելել է Հռոմ, որտեղից Կոստանդնուպոլիս ուղևորվելիս նրա նավը, ենթարկվելով բեկման, կաթողիկոսին հասցրել է Եգիպտոս. «Եւ երթալ սրբոյ հայրապետին ի Հռոմ, մեծապէս պատուեցին զնա ազգն փռանկաց: Եւ կատարեալ զուխտ իւր, ել ի նաւ գալ ի Կոստանդնուպօլիս թարգմանութեան աղագաւ: Եւ յարուցեալ բռնութիւն հողմոյ ի ծովուն և տարեալ զնաւն ընդ այլ ճանապարհ, հանէ զնոսա յԵգիպտոս»*[40]*: Այդ իսկ պատճառով, ըստ նույն հեղինակի, կաթողիկոսի այցը Բյուզանդիայի մայրաքաղաք որոշ ժամանակով հետաձգվել է, սակայն, ի վերջո, կայացել 1077 թ.*[41]*: Ի դեպ, Կիրակոս Գանձակեցին հետագա շարադրանքում չի արձանագրում Վկայասերի այցը Կոստանդնուպոլիս, ինչը կասկածի ենթակա չէ: Մեկ դիտարկում. Վկայասերի հիշատակարանից Պողոս Անանյանի կատարած մեջբերումը թերի է և ավարտվում է ուղևորության առաջին հանգրվանի՝ Կոստանդնուպոլսի հիշատակությամբ, մինչդեռ կաթողիկոսը հաջորդիվ ներկայացնում է երթուղու այլ կայաններ ևս, այդ թվում՝ Եգիպտոսը: Ակնհայտ է, որ հիշատակարանն ամբողջությամբ մեջբերելու դեպքում դժվար կլիներ ուղևորության մասին Վկայասերի և մյուս աղբյուրների տեղեկությունները երկու տարբեր ճանապարհորդությունների վերագրելը:*

*Պողոս Անանյանը, որպես Վկայասերի՝ Հռոմ գնալու հավաստի փաստարկ, նշում է Ներսես Շնորհալու Վիպասանության՝ կաթողիկոսի ուխտագնացության մասին պատմող հետևյալ հատվածը.*

*«Յերուսաղէմ քաղաքն երթեալ,*
*Ուր փրկութիւնն մեր ծագեալ,*

---

40 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն*, էջ 96:

41 Պողոս Անանյանը թեև թվական չի նշում, սակայն, պարզ է, որ նա նկատի է ունեցել Վկայասերի հիշատակարանում արձանագրված 1077 թ., որն էլ ընդունում է որպես նրա երկրորդ՝ Կոստանդնուպոլիս կատարած ուղևորության տարեթիվ (տե՛ս **Անանեան**, *Գրիգորիս Վկայասէր*, էջ 10-11):

**Եւ ի սրբոց դիրս հասեալ,**
Յոր վայր նոցա նահատակեալ:
**Յարեւմտականսն ժամանեալ,**
Ուր ազգ Հայոց բազում իջեալ,
Անդ զնոսին լուսաւորեալ,
Եւ ի հաւատս հաստատեալ»[42]:

Նա կարծում է, որ «Յարեւմտականսն» եզրույթի ներքո Շնորհալին նկատի է ունեցել Հռոմը, իսկ «սրբոց դիրս» ասելով՝ Պողոս և Պետրոս առաքյալների գերեզմանները: Եթե Պողոս Անանյանի նշած երթուղին հավաստի է, ապա ստացվում է, որ Վկայասերը «սրբոց դիրս» (ըստ նրա՝ Պողոս և Պետրոս առաքյալների գերեզմաններ) այցելել է «Յարեւմտականսն» (ևս ըստ նրա՝ Հռոմ) գնալուց առաջ, ինչը, իհարկե, հնարավոր չէ: Սակայն դժվար է որոշակիորեն պարզել, թե աշխարհագրական ինչ տարածք է նկատի ունեցել Շնորհալին «Յարեւմտականսն» եզրույթի տակ, ինչը պարտադրում է սահմանափակվել վերջնական հաստատման կարոտ դատողությունների շրջանակներում: Այսպես, Շնորհալու վարքագիրը, որը քաջատեղյակ էր Վիպասանությանը, «**Եւ ի սրբոց դիրս հասեալ**, // Յոր վայր նոցա նահատակեալ» բառակապակցության փոխարեն գրել է. «Գնայր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և երկիրպագանէր **սուրբ տեղեացն որ անդ**»: Թվում է՝ վարքագիրը «**սրբոց դիրս**» նույնացրել է Երուսաղեմի «**սուրբ տեղեաց**» հետ, սակայն գերեզման նշանակող «դիր»-ը և քաղաքի սուրբ վայրերը բոլորովին տարբեր են: Ի տարբերություն իր աղբյուրի՝ Վիպասանության, վարքագիրը նշում է, որ «Յարեւմտականսն» ժամանելուց հետո Վկայասերը գնացել է Կոստանդնուպոլիս: Սա, անշուշտ, կարող է համարվել «Յարեւմտա-

[42] **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 117-118. **Անանեան**, *Գրիգորիս Վկայասէր*, էջ 10-11:

կանոն» Կոստանդնուպոլսից զատելու հիմք, բայց դժվար է պնդել, թե այն վերաբերում է Հռոմին: Բուն աղբյուրում՝ Վիպասանությունում, որպես Երուսաղեմին հաջորդած հանգրված նշված չէ Կոստանդնուպոլիսը, ուստի բացառելի չէ, որ Շնորհալին, «Յարևմտականսն» ասելով, նկատի է ունեցել հենց Բյուզանդիայի մայրաքաղաքը, առավել ևս, որ նույն աղբյուրի հաղորդմամբ՝ կաթողիկոսը «Յարևմտականսն» ժամանելուց հետո գնացել է Եգիպտոս: Ինչպես տեսանք, որոշ աղբյուրների հաղորդմամբ՝ Վկայասերը Կոստանդնուպոլսից է գնացել Եգիպտոս: Բացի այդ, «Յարևմտականսն» որևէ հստակ երկրանուն չնշանակող եզրույթ է, որն աշխարհաբար թարգմանությամբ լինում է «արևմտյան կողմերում»: Տարակուսանք է հարուցում այն փաստը, որ վարքագիրը «գլանում» է հիշել Հռոմը, այն դեպքում, երբ հանվանե նշում է ուղեգնացության մյուս հանգրվանները՝ Երուսաղեմ, Կոստանդնուպոլիս և Եգիպտոս: Թվում է՝ հարցի պարզաբանմանը կարող է օգնել «Արևմուտք»-ում բազում հայերի գոյության, ինչպես նաև նրանց շրջանում Վկայասերի ջանքերով հավատի հաստատման մասին Շնորհալու տեղեկությունը: Սակայն նույն ժամանակ թե՛ Իտալիայում[43] և թե՛ Կոստանդնուպոլսում հայկական համայքների առկայությունն առավել բարդացնում է մեկի կամ մյուսի օգտին դատողություն անելու հնարավորությունը: Այդուհանդերձ, ենթադրությունն առ այն, որ Վիպասանության մեջ Շնորհալին, «Յարևմտականսն» ասելով, հավանաբար նկատի է ունեցել Կոստանդնուպոլիսը, կարող է հավանական համարվել Սմբատ Սպարապետի համապատասխան հաղորդմամբ: Այսպես՝ նրա «Տարեգրքի»՝ Վկայասերի ուղևորությանը վերաբերող տեղեկությունները գրեթե բառացիորեն քաղված են Ուռհայեցու Ժամանակագրությունից, սակայն ինչպես որոշ իրադարձությունների դեպքում, այն-

[43] Տե՛ս *Հայ գաղթաշխարհի պատմություն*, հ. Երրորդ, էջ 13-22:

*պես էլ այս դրվագում Սմբատ Սպարապետը կատարել է որոշակի հավելում, ինչը կարող է օգնել պարզելու Շնորհալու նշած աշխարհագրական «Յարևմտականսն» վայրի տեղորոշումը։ Այսպես՝ Ուռհայեցին առանց մանրամասնելու արձանագրել է Վկայասերի՝ Կոստանդնուպոլսից Հռոմ գնալը. «... գնաց Տէր Գրիգորիս ի Կոստանդնուպօլիս և անդուստ ի Հռոմ»[44], մինչդեռ Սմբատ Սպարապետը, նույն տեղեկությունն իր երկ մուծելիս կատարել է հետևյալ հավելումը. «... գնաց տէր Գրիգորիս ի Կոստանդինուպօլիս, և* ***հաստատեաց զորս եգիտ անդ Հայս,*** *և անտի գնաց ի Հռոմ»[45]։ Ընդգծված հատվածը հուշում է, որ այս հավելման աղբյուրը, հավանաբար, Շնորհալու «Վիպասանությունն» է. որտեղ «Յարևմտականսն» տեղանվանը վերաբերող քառատողում կարդում ենք.*

*«Յարևմտականսն ժամանեալ,*
***Ուր ազգ Հայոց բազում իջեալ,***
*Անդ զնոսին լուսաւորեալ,*
***Եւ ի հաւատս հաստատեալ»***[46]*։*

*Այսինքն՝ Սմբատ Սպարապետը «Յարևմտականսն» եզրույթի տակ հասկացել է ոչ թե Հռոմը, այլ Կոստանդնուպոլիսը։*

***Հավատ հաստատել*** *նշանակում է դարձի բերել, իսկ տվյալ պարագայում՝ վերադարձնել նախկին կրոնին կամ դավանությանը։ Այսինքն՝ «Արևմուտք»-ում գտնվող հայերը, որոնց Վկայասերն «****ի հաւատս հաստատէր»****, հրաժարվել էին Հայոց եկեղեցու դավանությունից։ Իհարկե, ոչ առանց վերապահության, ենթադրելի է, որ Շնորհալին նկատի է ունեցել Կոստանդնուպոլսում ապրող այն հա-*

---

[44] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 211:
[45] **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, էջ 82:
[46] **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 117-118. **Անասեան**, *Գրիգորիս Վկայասէր*, էջ 10-11:

*յերին, որոնք հարել էին քաղաքում հայտնված ոմն Նեղոսի աղանդին, առավել ևս, որ Վկայասերի կեցությունը Կոստանդնուպոլսում ժամանակային առումով համընկնում է այդ աղանդավորի գործունեությանը*[47]*։*

*Պաշտպանելով Վկայասերի՝ երկիցս ուղևորություն կատարած լինելու տեսակետը՝ խնդիրը մանրամասն քննած Անժելա Կապոյան -Կույումջյանն առաջարկում է երկու ճանապարհորդությունների բոլորովին այլ թվագրում։ Հիմք ընդունելով Վկայասերի հիշատակարանի տեղեկությունները՝ նա կարծում է, որ կաթողիկոսի առաջին ուղևորությունը կայացել է 1076-1077 թթ. և ընթացել է այնտեղ նշված երթուղով՝ Կոստանդնուպոլիս-Լիբիա (իմա՝ Եգիպտոս) - Սև լեռներ*[48]*։ Որպես երկրորդ ուղևորության թվագրման հիմք՝ Կապոյան-Կույումջյանը մատնանշում է Ալեքսանդրիայի պատրիարքության տարեգրության տեղեկությունը Վկայասերի քրոջ որդի Գրիգորի՝ 1087 թ. Եգիպտոս ժամանելու մասին*[49]*։ Նրան, ինչպես գիտենք, Վկայասերը Եգիպտոսում ձեռնադրել է տեղի հայերի հոգևոր առաջնորդ։ Այս աղբյուրը, սակայն, որևէ տեղեկություն չի հայտնում Վկայասերի՝ այդ ժամանակ Եգիպտոս այցելելու մասին։ Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Կապոյան-Կույումջյանը, կաթողիկոսի ուղևորության մասին ավանդող մյուս սկզբնաղբյուրները կասկած չեն թողնում, որ նա գնացել է Եգիպտոս։ Վերոգրյալը հիմք ընդունելով՝ նա թեականորեն կարծում է, որ Վկայասերը երկրորդ անգամ Եգիպտոս այցելել է 1076-1077 թթ. հետո և կա՛մ այդ երկրից*

---

47 Սակայն այս դեպքում էլ պետք է ի մտի ունենալ Իտալիայում պավլիկյան աղանդավորների գոյության փաստը (*Հայ գաղթաշխարհի պատմություն*, հ. Երրորդ, էջ 10-11, 18)։

48 Տե՛ս **Kapoian-Kouyumjian**, *Le catholicos Gregoire II le Martyrophile*, էջ 319-320։

49 Տե՛ս *History of the Patriarchs of the Egyptian Church*, էջ 345-346։

*գնացել է մինչ իր քրոջ որդու ժամանելը, կա՞մ դրանից հետո*[50]*: Սակայն հիմնվելով Ներսես Շնորհալու վարքագրի տեղեկությունների վրա՝ Անժելա Կապոյան-Կույումջյանը կարծում է, որ քրոջ որդու ժամանումից առաջ Եգիպտոսից Վկայասերի գնալը հավանական չէ*[51]*:*

*Հաջորդ ուսումնասիրողը, որը համերաշխ է Վկայասերի՝ երկիցս ուղևորություն կատարելու տեսակետին, Ժերար Դեդեյանն է: Նա այդ խնդիրը մանրամասն ու համակողմանի քննել է իր “Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisades” արժեքավոր աշխատության առաջին հատորում: Նա, հիմնվելով Ուռհայեցու հաղորդման վրա, կաթողիկոսի առաջին ուղևորությունը թվագրում է 1073-1074-ով*[52]*: Դեդեյանը ևս համոզված է, որ Ուռհայեցու ժա մանակագրության ու Վկայասերի հիշատակարանի տեղեկությունները վերաբերում են կաթողիկոսի ձեռնարկած տարբեր ուղևորությունների. այսպես՝ հայրապետի առաջին այցը Բյուզանդիայի մայրաքաղաք և Եգիպտոս Ժերար Դեդեյանը թվագրում է համապատասխանաբար՝ 1073-1074 և 1074 կամ 1075 թվականներով, իսկ երկրորդը, հիմք ընդունելով Վկայասերի հիշատակարանը, 1077-ով*[53]*: Նա կարծում է, որ Վկայասերը երկու անգամ է այցելել ինչպես Կոստանդնուպոլիս, այնպես էլ Եգիպտոս*[54]*:*

*Ինչպես ստորև կտեսնենք, Ուռհայեցու նշած թվականի հետ համադրելի է հիշատակարանում արձանագրված ոչ թե 1077, այլ 1076 թ.: Եթե ընդունելու լինենք, որ Ուռհայեցու և Վկայասերի հի-*

---

[50] Տե՛ս **Kapoian-Kouyumjian,** *Le catholicos Gregoire II le Martyrophile*, էջ 319-320:

[51] Տե՛ս նույն տեղում, էջ 320:

[52] Տե՛ս **Dédéyan,** *Les Arméniens entre Grecs…*, vol. 1, էջ 261: Ուղևորությունը 1074-ով է թվագրում նաև Կլոդ Մութաֆյանը (**Մութաֆյան,** *Կիլիկիան*, էջ 369. Տե՛ս նաև **Kapoian-Kouyumjian,** *Le catholicos Gregoire II le Martyrophile*, էջ 315):

[53] Տե՛ս **Dédéyan,** *Les Arméniens entre Grecs…*, vol. 1, էջ 261:

[54] Տե՛ս նույն տեղում, էջ 247:

*շատակարանի տեղեկությունները վերաբերում են վերջինիս ձեռնարկած երկու տարբեր ուղևորությունների, ապա ստիպված կլինենք արձանագրել, որ կաթողիկոսն ընդամենը մեկ տարվա ընդմիջմամբ ձեռնարկել է տևական ժամանակ պահանջող երկու երկարաձիգ ուղևորություն, որոնցից առաջինի հանգրվաններ՝ Կոստանդնուպոլիս-Հռոմ-Եգիպտոս, այցելել է մեկ տարվա ընթացքում: Եթե այս ամենին գումարենք նաև այն տեսակետը, որ Վկայասերն ընդգրկվել է Կոստանդնուպոլսից Հռոմ մեկնած բյուզանդական պատվիրակության կազմում և մասնակցել վերջինիս ու Հռոմի պապի միջև կայացած բանակցություններին, ապա կաթողիկոսի ուղևորությունների այս թվագրումը դառնում է խիստ անհավանական:*

*Ուղեգնացության երթուղու ճշգրտման տեսանկյունից չափազանց կարևոր է, որ այդ մասին ավանդող աղբյուրներն Արևմուտքի ու Արևելքի քրիստոնեական սրբատեղիներ կաթողիկոսի կատարած այցելությունները չեն հիշում երկու ուղևորության շրջանակներում*[55]*: Այդ աղբյուրներից որևէ մեկը, այդ թվում՝ Վկայասերի հիշատակարանը, ակնարկ անգամ չեն անում կրկնակ ուղևորությունների մասին: Ժամանակագրության թվագրման ու Վկայասերի՝ Հռոմ այցելելու հարցը քննելիս կաթողիկոսի վերոբերյալ հիշատակարանն ըստ ամենայնի չի արժևորվել: Առաջ անցնելով նշենք, որ վերջինիս հիշատակարանի թվական տվյալները, առաջին հայացքից տարբեր լինելով, գրեթե չեն հակասում Ուռհայեցու արձանագրած թվագրմանը: Այսպես՝ Վկայասերի ուղևորությունը դնելով Հայոց ՇԻԳ թվականի (3 մարտի 1074 թ. – 2 մարտի 1075 թ.) տակ՝ պատմիչը չի հստակեցնում, թե տարվա որ հատվածում է այն սկսվել: Սա ամենևին չի*

---

[55] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 211. **Մաթևոսյան**, *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 108-109. Յովսէփեան, *Յիշատակարանք*, սյուն. 420. **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 117-121. *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 20-29 և այլն:

*պարտադրում այն անպայմանորեն թվագրել 1074-ով և ոչ թե՝ 1075-ով, առավել ևս, որ 1074 թ. մասին ստույգ ցուցում չկա: Այսինքն՝ ուղևորության սկիզբը 1075-ով թվագրելը նույնքան հիմնավոր է, որքան 1074-ով: Ուռհայեցու ժամանակագրության տարեթվերը դրված են Հայոց թվականով, այդ իսկ պատճառով ուղևորության վերաբերյալ նրա հաղորդած Հայոց ՇԻԳ թվականի (3 մարտի 1074 թ. – 2 մարտի 1075 թ.) հետ պետք է համադրել հիշատակարանում նշված ոչ թե Փրկչական՝ 1077, որով տարբերություն կլինի երեք տարի, այլ Հայոց 525 թվականը, այսինքն՝ 1076, առավել ևս, որ Վկայասերը երկուսն էլ հստակ առանձնացնում է: Փրկչական ու Հայոց թվականների միջև, որպես կանոն, կա երկու տարվա տարբերություն (Փրկչական 1077 =Հայոց 1075): Սակայն հիշատակարանում Վկայասերը հստակ նշում է, որ ուղևորությունը ձեռնարկել է Հայոց 1076 թ.: Տոմարագետ Ռաֆիկ Վարդանյանը կարծում է, որ Ուռհայեցու հաղորդած տարեթվերին արդի թվագրությամբ թվանշելիս պետք է գումարել ոչ թե 551, այլ 552[56], այսինքն՝ պատմիչի նշած ՇԻԳ թվականը կլինի 1075: Հիշատակարանում նշված է, որ Վկայասերը Կոստանդնուպոլիս հասել է Կոսմաս պատրիարքի աթոռակալման (1075–1081) ժամանակ: 1075 թ. հուշում է, որ կաթողիկոսն իր ուղևորությունը (իսկ նրա առաջին հանգրվանն ըստ հիշատակարանի՝ Կոստանդնուպոլիսն էր) չէր կարող սկսած լիներ այդ թվականից առաջ, քանզի Կիլիկիայի մերձակա երկրամասերից Բյուզանդիայի մայրաքաղաք հասնելու համար դժվար թե տարուց ավելի ժամանակ պահանջվեր: Այս դեպքում արդեն Ժամանակագրության և հիշատակարանի՝ ուղևորության մեկնարկին վերաբերող թվական տվյալները գրեթե համընկնում են: Միևնույն ժամանակ, եթե ընդունենք, որ ստույգ է Ուռհայեցու առաջարկած թվականին ոչ*

---

[56] Տե՛ս **Վարդանյան,** *Հայոց տոնացույցը*, էջ 562:

*թե 552, այլ 551 գումարելը, այդ դեպքում տարբերությունն ընդամենը մեկ տարի է, ինչը ևս անտարակույս է դարձնում, որ թե՛ Ուռհայեցին և թե՛ Վկայասերը խոսում են նույն ուղևորության մասին, որը տեղի է ունեցել 1075 կամ, որ առավել հավանական է՝ 1076 թ.։*

*Պետք է նկատի ունենալ, որ Վկայասերի հիշատակարանում նշված թվականը՝ 1076, Կոստանդնուպոլիս հասնելու տարեթիվն է, իսկ թե երբ է կաթողիկոսը վերադարձել Կիլիկիա, այդ աղբյուրում արձանագրված չէ։ Նույնը վերաբերում է նաև Ուռհայեցու հայտնած թվականին, որը ոչ թե ուղեգնացության ամբողջ ընթացքի, այլ միայն դրա մեկնարկի տարեթիվն է։ Նրա Ժամանակագրության մեջ հերթական թվականի ներքո շարադրված ոչ բոլոր իրադարձություններն են, որ տեղի են ունեցել տվյալ տարվա ընթացքում։ Այսպես, 1072 թ. տակ արձանագրելով Գեորգ Լոռեցու աթոռանկությունը, Ուռհայեցին գրում է, որ «Գէորգն վիրաւորեալ գնաց ի Տարսոն քաղաքն և անդ մեռաւ»[57]։ Սա ամենևին չի նշանակում, որ Լոռեցին նույն թվականին է մահացել, քանի որ, ինչպես որոշակի նշված է Վկայասերի՝ խնդրո առարկա հիշատակարանում, նա 1076 թ. ողջ էր։*

*Հիշատակարանի տեղեկությունն առ այն, որ Վկայասերը Կոստանդնուպոլսում գտել է Հովհան Ոսկեբերանի երկն ու թարգմանելու համար հանձնել Կիրակոսին, հուշում է, որ այս հաղորդումը վերաբերում է կաթողիկոսի այն ուղևորությանը, որի գլխավոր նպատակը Բյուզանդիայի մայրաքաղաքում թարգմանություններ կատարելն էր, ինչի մասին վկայված է ուղեգնացությանը լավատեղյակ սկզբնաղբյուրներում։ Սակայն պետք է արձանագրել, որ այն չափազանց «ժլատ» է մանրամասներ հաղորդելու տեսանկյունից։ Հիշատակարանն այն տպավորությունն է թողնում, որ Վկայասերը Կոստանդնուպոլսից հետո է գնացել Լիբիա (իմա՝ Եգիպտոս), ինչը, սա-*

---

[57] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 206։

կայն, չի հաստատվում ստորև ներկայացվող քննությամբ: Զպետք է մոռանալ նաև, որ այն խիստ համառոտ և ընդհանրական տեղեկություններ է հաղորդում ուղևորության մասին, ուստի կարող էր զերծ մնալ դրա դրվագները հանգամանորեն ներկայացնելուց:

## Կիրակոս Գանձակեցու հաղորդումը

Կիրակոս Գանձակեցու աշխատությունը, ընդգրկված լինելով Վկայասերի՝ Հռոմ գնացած լինելը փաստող սկզբնաղբյուրների շարքում, ուղևորության բոլորովին այլ երթուղի է արձանագրել, քան այդ խմբի մյուս երկերը: Ի տարբերություն Ուռհայեցու՝ նրան հետևող Սմբատ Սպարապետի ու «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորիսեանցն և Պետրոսեանցն» հայսմավուրքյան վարքի նշած երթուղու՝ Կոստանդնուպոլիս-Հռոմ-Եգիպտոս-Դարույնք բերդ, Կիրակոս Գանձակեցին հիշում է ուղևորության միայն երկու հանգրվան՝ Հռոմ-Եգիպտոս: Հայտնի է, որ Գանձակեցին ծանոթ է եղել Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությանը», սակայն նրա շարադրանքից ակնհայտ է, որ կաթողիկոսի ուղեգնացությունը ներկայացնելիս պատմիչն օգտվել է մեկ այլ աղբյուրից, ըստ որի՝ Վկայասերը Եգիպտոսում հայտնվել է նավաբեկության հետևանքով[58]: Այս երկերի համապատասխան հատվածների համեմատությունից պարզվում է, որ հայրապետական իշխանությունից Վկայասերի հրաժարվելն ուխտագնացությամբ պայմանավորելու մասին տեղեկությունը Գանձակեցին քաղել է Ուռհայեցու երկից: Հիշենք, որ հայոց ազատանուն կաթողիկոսը հավաստիացրել էր, թե նպատակ ունի այցելել Հռոմի և Եգիպտոսի քրիստոնեական սրբատեղիներ: Սակայն,

---

[58] Ուղևորությանը տեղյակ որոշ սկզբնաղբյուրների համաձայն՝ նավաբեկության է ենթարկվել է ոչ թե Վկայասերի, այլ նրա քրոջ որդի Գրիգորի նավը: Այս խնդրի առավել մանրամասն կանդրադառնանք կաթողիկոսի՝ Եգիպտոս գնալու հարցը քննելիս:

*ի տարբերություն իր աղբյուրի, Գանձակեցին այդ հանգրվաններից արձանագրել է միայն Հռոմը: Խնդրի պարզաբանումը կապված է նավաբեկության փաստին Ուռհայեցու անտեղյակ լինելու հետ: Դատելով հրաժարականի իր ավանդած դրվագից՝ Ուռհայեցին տեղյակ էր ինչպես կաթողիկոսի՝ Հռոմ և Եգիպտոս այցելելու մտադրությանը, այնպես էլ նրա՝ Կոստանդնուպոլսում եղած լինելուն: Այսինքն՝ նա նախապես իրազեկ էր ուղևորության կայանների մասին (ըստ Ուռհայեցու՝ Կոստանդնուպոլիս-Հռոմ-Եգիպտոս), սակայն անտեղյակ՝ նավաբեկությանը, ուստի և համոզված գրում է, որ կաթողիկոսն անպայմանորեն գնացել է Հռոմ, ապա՝ Եգիպտոս: Բ. խմբի միակ աղբյուրը, որտեղ արձանագրված է թե՛ կաթողիկոսի այցելությունը Հռոմ ու Եգիպտոս, թե՛ նավաբեկությունը, Կիրակոս Գանձակեցու երկն է: Վերջինս, համոզված լինելով, որ Վկայասերը Եգիպտոսում հայտնվել է նավաբեկության հետևանքով, կաթողիկոսի հրաժարականի դրվագը ներկայացնելիս չի նշել այնտեղ այցելելու նրա ցանկությունը[59]:*

*Կիրակոս Գանձակեցին, ի տարբերություն նավաբեկությանը տեղյակ մյուս հեղինակների, այդ մասին հիշում է ոչ թե Վկայասերի՝ Կոստանդնուպոլսից Հռոմ գնալը նշելիս, այլ հակառակը՝ այդպիսով արձանագրելով, որ կաթողիկոսը չի հասել Բյուզանդիայի մայրաքաղաք, քանզի հետագա շարադրանքում այդ մասին որևէ տեղեկություն չի հայտնում: Գանձակեցու այս փաստարկումը չի հաստատվում որևէ սկզբնաղբյուրով, իսկ Բյուզանդիայի մայրաքաղաքում Վկայասերի եղած լինելն աներկբա իրողություն է:*

*Ուղևորության վերաբերյալ Կիրակոս Գանձակեցու վկայությունը պարունակում է մի տեղեկություն, որին հանդիպում ենք նաև Ա. խմբի սկզբնաղբյուրներից Վարդան Արևելցու «Ներբող»-ում: Երկու պատմիչների հաղորդմամբ՝ Եգիպտոսում, որտեղ երկար ժամանակ*

---

[59] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն*, էջ 95:

*երաշտ էր, Վկայասերի աղոթքի (այս դեպքում՝ այցի) ազդեցությամբ անձրև է տեղացել: Այս համընկնումը հիմք է տալիս պնդելու, որ աշակերտակից պատմիչներն օգտվել են նույն աղբյուրից (բացառելի չէ, որ դա եղել է Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու ուսուցիչ Վանական վարդապետի ցարդ անհայտ երկը): Սակայն ի տարբերություն Գանձակեցու երկի, Վարդան Արևելցու «Ներբող»-ում նշված է Վկայասերի ուղևորության միանգամայն այլ երթուղի՝ Կոստանդնուպոլիս-Եգիպտոս-Երուսաղեմ-Կարմիր վանք և, որ ամենակարևորն է՝ արձանագրված չէ հայրապետի այցը Հռոմ: Իհարկե, կարելի է ենթադրել, որ կա՛մ նրանց օգտագործած աղբյուրում տեղեկություններ չեն եղել ուղևորության հանգրվանների մասին, կա՛մ Գանձակեցին կամայականորեն փոխել, կա՛մ էլ շփոթել է կաթողիկոսի ճանապարհորդության առաջին կայանը: ԺԲ. դարով թվագրվող հիշատակարանային մի վկայություն, որտեղ արձանագրված է Վկայասերի այցելության ժամանակ Եգիպտոսում տեղացած անձրևի մասին, պարտադրում է կարծել, որ առավել հավանական է սույն վարկածի երկրորդ հատվածը, այն է՝ Կիրակոս Գանձակեցին շփոթել է Վկայասերի ուղևորության առաջին հանգրվանը. «... Տէր Գրիգորիս Վկայասէրն, որ զՆերբողեանն թարգմանեաց ի Կոստանդնուպալիս եւ որով նաւեալ յԱղեքսանդրիա էած անձրեւ մեծահրաշ»[60], — կարդում ենք սույն հիշատակարանում: Նկատենք, որ այս քաղվածքում Կոստանդնուպոլսում թարգմանություններ կատարելն ու այնտեղից Ալեքսանդրիա մեկնելը վերագրված են Գրիգոր Գ. Պահլավունուն Փոքր Վկայասերին, սակայն, պարզ է, որ տեղեկության հեղինակը նրան շփոթել է Գրիգոր Բ. Վկայասերի հետ, քանզի հայտնի է, որ Գրիգոր Գ.-ը չի այցելել Կոստանդնուպոլիս և Եգիպտոս: Քննվող խնդրի տեսանկյունից կարևոր է այն, որ այս վկայության մեջ արձանագրված է ոչ միայն Վկայասերի՝ Եգիպտո-*

---

[60] **Տաշեան**, *Ցուցակ*, էջ 751. **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 306:

*սում եղած ժամանակ անձրև տեղալը, այլ նաև կաթողիկոսի՝ ոչ թե Հռոմից (ինչպես նշում է Կիրակոս Գանձակեցին), այլ Կոստանդնուպոլսից Ալեքսանդրիա մեկնելը: Այսինքն՝ Գանձակեցու և Վարդան Արևելցու օգտագործած աղբյուրում որպես Եգիպտոսին նախորդած հանգրվան, ամենայն հավանականությամբ, նշված է եղել Կոստանդնուպոլիսը: Նույն փաստարկմամբ նշելի է նաև ԺԳ. դարի Անանուն հեղինակի՝ վերը քաղվածաբար ներկայացված հաղորդումը, որտեղ ևս արձանագրված է ինչպես Վկայասերի այցելության ժամանակ Եգիպտոսում անձրև տեղալը, այնպես էլ կաթողիկոսի՝ Կոստանդնուպոլսից այդ երկիր գնալը[61]:*

*Գանձակեցու հաղորդումներից հստակ երևում է, որ ուղևորության վերաբերյալ նրա տեղեկությունները խիստ մակերեսային են: Բացի այն, որ նա այդպես էլ չի հիշատակում Կոստանդնուպոլիս Վկայասերի գնալու մասին, այլև արձանագրում է, որ կաթողիկոսը մինչև կյանքի վերջը մնացել է Եգիպտոսում՝ այնտեղ կնքելով իր մահկանացուն. «Եւ յայնմ օրէ եղև աթոռն Աղէքսանդրիոյ հնազանդ աթոռոյ սրբոյն Գրիգորի. և անդ եկաց և վախճանեցաւ սուրբն ի փառս աստուծոյ գովութեամբ»[62]: Գանձակեցին տեղյակ է, որ Վկայասերն ուղևորությունը ձեռնարկելիս ունեցել է թարգմանություններ կատարելու համար Կոստանդնուպոլիս գնալու նպատակ. Հռոմում իր ուխտը կատարելուց հետո Վկայասերը «էլ ի նաւ գալ ի Կոստանդնուպօլիս թարգմանութեան աղագաւ» [63],- գրում է պատմիչը: Այսինքն՝ նա ևս գիտեր, որ Վկայասերի այցը Կոստանդնուպոլիս պետք է կայանար այդ նույն ուղևորության շրջանակներում: Գանձակեցին Ուռհայեցու երկից տեղյակ էր Վկայասերի՝ Հռոմ ուխտագնացություն կատարելու ցանկության մասին, սակայն նա, ի տարբերություն իր աղբյուրի հեղինակի, նաև իրազեկ է, որ ուղևորու-*

---

[61] Տե՛ս **Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները եւ հայերը*, հ. Բ, էջ 511:
[62] **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն*, էջ 98:
[63] Նույն տեղում, էջ 96:

*թյան առաջին հանգրվանից հետո կաթողիկոսի նավը ենթարկվել է բեկման, ինչի հետևանքով էլ հայտնվել է Եգիպտոսում:*

*Ուղեգնացության գլխավոր շարժառիթն ուխտագնացությունը համարելով՝ Գանձակեցին, որպես դրա առաջին հանգրվան՝ ընտրել է Հռոմը, որից հետո, արձանագրելով նավաբեկության փաստը, ստիպված նշել, որ կաթողիկոսն այդպես էլ չի հասել Կոստանդնուպոլիս: Ուշագրավն այն է, որ նավաբեկությանն իրազեկ աղբյուրները միաբերան հաստատում են, որ Վկայասերի (կամ՝ նրա քրոջ որդու) նավը ճանապարհից շեղվել է ոչ թե Հռոմից, այլ Կոստանդնուպոլսից դուրս գալուց հետո: Եթե Գանձակեցին որևէ ակնարկ աներ Բյուզանդիայի մայրաքաղաք կաթողիկոսի գնալու երկրորդ փորձի մասին և նրա կյանքն ավարտված չհամարեր Եգիպտոսում, գուցե կարելի կլիներ հակադրվել մնացյալ աղբյուրների վկայություններին և պնդել, որ բացառելի չէ Վկայասերի՝ երկիցս տևական ուղևորություն կատարելը: Նկատենք, որ պատմիչը չի հիշատակում նաև Վկայասերի քրոջ որդի Գրիգորի՝ Եգիպտոսի հայոց հոգևոր առաջնորդ կարգվելու մասին: Վերոգրյալի հաշվառմամբ՝ մնում է կարծել, որ Կիրակոս Գանձակեցին, տուրք տալով հրաժարականի ժամանակ Վկայասերի ներկայացրած պատճառաբանությանը, այն է՝ ուխտագնացություն կատարել Հռոմ և Եգիպտոս, ուղևորության առաջին հանգրվանը Կոստանդնուպոլսի փոխարեն համարել է Հռոմը: Մատթեոս Ուռհայեցին, որից էլ Գանձակեցին քաղել է Վկայասերի՝ Հռոմ գնալու մասին տեղեկությունը, կաթողիկոսի ուղևորությունը պայմանավորել է ոչ թե Կոստանդնուպոլսում թարգմանություններ կատարելու նպատակադրումով, այլ քրիստոնեական սրբատեղիներ այցելելու ցանկությամբ[64]: Սակայն հետաքրքրական է, որ նա, որպես ուղևորության առաջին հանգրվան, նշել է ոչ թե Հռոմը, այլ Կոստանդնուպոլիսը, ինչը նշանակում է, որ դրա գլխա-*

---

[64] Թեև, դատելով ճայրապետի մաճվաճ մասիճ Ուռճայեցու վկայությունից, ճա տեղյակ էր Վկայասերի կատարած թարգմանություններին:

*վոր շարժառիթը եղել է թարգմանություններ կատարելու և եկեղեցական մատյաններ ընդօրինակելու նպատակով Բյուզանդիայի մայրաքաղաք այցելելը։*

*Ինչպես դիպուկ նկատել է ֆրանսիացի հայագետ Ժոզեֆ Լորանը, աղբյուրները տեղյակ չեն Վկայասերի՝ Հռոմ կատարած այցի որևէ մանրամասնության։ Դիտելի է, որ կաթողիկոսին Եգիպտոսում ցույց տրված պատշաճ հյուրընկալությունն Ուռհայեցին համեմատում է բյուզանդական կայսրից ստացած ընդունելության հետ՝ դարձյալ որևէ տեղեկություն չհայտնելով Հռոմում Վկայասերին ցուցաբերած վերաբերմունքի մասին, մինչդեռ, եթե հավատալու լինենք Կիրակոս Գանձակեցուն, այնտեղ Հայոց եկեղեցու առաջնորդին «մեծապէս պատուեցին... ազգն ֆռանկաց»։*

*Նկատենք նաև, որ Գանձակեցու նշած երթուղին՝ Հռոմ-Կոստանդնուպոլիս-Եգիպտոս (ըստ պատմիչի՝ Վկայասերի նավը երթուղու վերջին հանգրվան հասել է նավաբեկության հետևանքով) տրամաբանական չէ թեկուզ այն պատճառով, որ Վկայասերը դժվար թե շրջանցեր իր ճանապարհին (թե՛ ցամաքային և թե՛ ծովային) ընկած առաջին կայանը (Կոստանդնուպոլիսը)։ Երթուղին արդյունավետ օգտագործելու տեսանկյունից անտրամաբանական է նախ գնալ Հռոմ, ապա նույն ճանապարհով վերադառնալ Կոստանդնուպոլիս։ Վերն արված քննությունը հիմք է տալիս Գանձակեցու տեղեկությունները օգտագործել խիստ վերապահումով։*

## Կոստանդնուպոլսին հաջորդած հանգրվանը

*Ինչպես Հռոմ, այնպես էլ Եգիպտոս Վկայասերի այցի վերաբերյալ թե՛ սկզբնաղբյուրներում և թե՛ մասնագիտական գրականության մեջ տարամետ կարծիքներ կան։ Այդ մասին պատմող աղբյուրները բաժանվում են երեք խմբի։ Այսպես՝ Ուռհայեցու և Սմբատ Սպարապետի երկերում, ինչպես նաև «Յիշատակ սուրբ հայրապետացն Գրիգորեսեանցն և Պետրոսի» հայսմավուրքյան վարքի մեջ,*

*առանց որևէ մանրամասնության (նկատի ունենք նաև նավաբեկության դրվագը) արձանագրված է կաթողիկոսի՝ Կոստանդնուպոլսից Հռոմ, այնտեղից էլ՝ Եգիպտոս գնալը։ Այս խմբում կարելի է ընդգրկել նաև Շնորհալու «Վիպասանութիւն»-ը, որտեղ ևս չի խոսվում Վկայասերի՝ նավաբեկության հետևանքով Եգիպտոս հասնելու մասին։ Շնորհալին այդ երկիրը հիշում է որպես ուղևորության հերթական կայան*[65]*։*

*Նավաբեկությանը տեղյակ մատենագիրներն իրենց հերթին տարակարծիք են Կոստանդնուպոլսին հաջորդած հանգրվանի հարցում։ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին համոզված են, որ փոթորկից բեկվել է Վկայասերի, իսկ մյուսների հաղորդմամբ՝ նրա քրոջ որդի Գրիգորի նավը։ Շնորհալու վարքագրի հաղորդմամբ՝ մտավախություն ունենալով, որ բյուզանդական իշխանությունները չեն թույլատրի Կոստանդնուպոլսից դուրս բերել այնտեղ ընդօրինակված մատյաններն ու կատարված թարգմանությունները, Վկայասերն իր քրոջ որդուն հանձնարարում է իրենից մի քանի օր առաջ դրանք Բյուզանդիայի մայրաքաղաքից փոխադրել Կիլիկիա։ Նույն աղբյուրի հաղորդմամբ՝ Կոստանդնուպոլսից դուրս եկած Գրիգորի նավը, ենթարկվելով բեկման, հայտնվում է Եգիպտոսում։ Վկայասերը, քրոջ որդու մեկնումից մի քանի օր անց հրաժեշտ տալով կայսրին ու պատրիարքին, վերադառնում է Կիլիկիա, որտեղ, սակայն, չի գտնում Գրիգորին։ Այնուհետև վերջինս նամակ է ուղարկում Վկայասերին՝ խնդրելով շտապ հասնել Եգիպտոս։ Կաթողիկոսը, իհարկե, չափազանց մտահոգ թարգմանությունների ճակատագրով, ճանապարհ է ընկնում դեպի այդ երկիր։ Շնորհալու վարքագրի տեղեկություններն առ այն, որ նախապես Եգիպտոս է գնացել Վկայասերի քրոջ որդին, հաստատվում են իրարից անկախ և տարբեր մանրամասներ պարունակող այլ աղբյուրներով։ Այսպես՝ Պահ-*

---

[65] Տե՛ս **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 118։

*լավոնի կաթողիկոսների հայսմավուրքյան վարքի (խմբ. Կիրակոս Արևելցի) համաձայն՝ թարգմանությունները փոխադրող նավն ուժգին փոթորկի հետևանքով Կոստանդնուպոլսից Եգիպտոս է հասցրել Վկայասերի քրոջ որդուն. «... և իբրև կատարեաց զգործն, յոր երթեալն էր եա զգիրսն թարգմանեալսն յազգականն իւր և ի հոմանունն Գրիգոր յառաջ, քան զնա երթալ յաշխարհն Գերմանիկոյ՝ առ իշխանն Վասիլ: Եւ նաւարկեալ նորա գալ ուժգնակի հողմոյ հնչել տարաւ զնոսա յԵգիպտոս և ելեալ ի ցամաք՝ խալիփայն Տաճկացն, յԵգիպտոս մեծարանաւք պատուեաց զեպիսկոպոսն Գրիգոր և ոչ ետ նմա դառնալ ի տուն իւր առ կաթողիկոսն: Եւ եկեալ կաթողիկոսին ի տեղի իւր // և լուեալ, թէ յԵգիպտոս է եպիսկոպոսն Գրիգոր գնաց յԵրուսաղէմ և անտի էջ յԵգիպտոս, և ձեռնադրեաց զնա անդ կաթողիկոս, և նա բազմացոյց զքրիստոնեայսն, որ անդ հովուելով զնոսա՝ ըստ կամաց Աստուծոյ:*

*Եւ տէրն Գրիգորիս, առեալ զթարգմանեալ գիրսն, եկն ի տեղի իւր՝ ի Քեսոն և ի Կարմիր վանքն»*[66]*: Այս աղբյուրը ևս հավաստում է, որ Վկայասերն իր քրոջ որդու՝ Եգիպտոսում հայտնվելու մասին տեղեկացել է Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո: Այն, որ ոչ թե Վկայասերը, այլ նրա քրոջ որդին է նախապես գնացել Եգիպտոս, հաստատվում է նաև Ալեքսանդրիայի պատրիարքության տարեգրության տեղեկություններով, որոնք, շարադրված լինելով ժամանակակցի և ականատեսի լավատեղյակությամբ, չափազանց կարևոր են սույն խնդրի քննության տեսանկյունից*[67]*: Ինչպես վերը նշվել է, այդ աղբյուրի հաղորդմամբ՝ 1087 թ. Եգիպտոս է ժամանում մի նավ, որում գտնվող ոմն Գրիգոր տեղացիներին հայտնում է, թե ինքը հայրապետական իշխանությունից հրաժարված Հայոց կաթողիկոսի քրոջ որդին է: Աներկբա է, որ խոսքը Վկայասերի քրոջ որդի Գրիգո-*

---

[66] *Համաբարբառ Յայսմաւուրք*, Ը, Աւգոստոս, էջ 147. **Տաշեան**, *Ցուցակ*, էջ 25:

[67] Տե՛ս *History of the Patriarchs of the Egyptian Church*, էջ 345-346:

րի մասին է։ Մեզ զբաղեցնող խնդրի տեսանկյունից առավել հետաքրքրական է այս աղբյուրի մեկ այլ տեղեկություն այն մասին, որ Հայոց կաթողիկոսի քրոջ որդին և նրան ուղեկցողներն Ալեքսանդրիա էին եկել Կոստանդնուպոլսից[68], ինչն ավելորդ անգամ հաստատում է, որ պատրիարքության տարեգրության և Շնորհալու «Վարք»-ի տեղեկությունները վերաբերում են Վկայասերի մեկնումից մի քանի օր առաջ Կոստանդնուպոլսից ճանապարհ ընկած նրա զարմիկին, որը նավաբեկության հետևանքով հայտնվել էր Եգիպտոսում։ Աղբյուրների աներկբա պնդումները պարտադրում են կասկածի չենթարկել այն փաստը, որ Վկայասերի քրոջ որդին և նրան ուղեկցողները Եգիպտոս էին հասել պատահականության հետևանքով։ Սակայն ինչպես Շնորհալու «Վարք»-ում, այնպես էլ Ալեքսանդրիայի պատրիարքության տարեգրքում նշված է, որ Գրիգորիսը տեղի իշխանություններին հավաստիացրել է, որ իրենց այցելությունը եղել է նախապես ծրագրված։ Դա, անտարակույս, արվել է անվտանգության նկատառումներից ելնելով, քանզի այդպիսով առավել դյուրին կլիներ արժանանալ տեղի մուսուլմանական իշխանությունների բարեհաճ վերաբերմունքին։ Այս դրվագի վերաբերյալ, սակայն, նշյալ երկու աղբյուրներում կա մեկ տարբերություն։ Ըստ «Վարք»-ի՝ Գրիգորը եգիպտական իշխանություններին հայտնում է, որ ինքն ու իրեն ուղեկցողները Եգիպտոս են եկել Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ ու նաև այն, որ վերջինս ևս ուղևորվում է այդ երկիր. «Յայնժամ իշխանն յարուցեալ գայր առ նոսա (Գրիգորի և նրա ուղեկիցների մոտ — Վ. Թ.) յողջոյն պատուով և հնազանդութեամբ և հարցանէր հեզութեամբ, թէ Ո՞ ոք իցեն. և տուեալ պատասխանի, եթէ Ազգականք և սպասաւորք կաթողիկոսին Հայոց եմք, և առաքեաց զմեզ յառաջագոյն, զի և ինքն եկեսցէ, որպէս զի տեսցուք զսուրբ լեառնն Սինա, և զմիայնարանս նախնի սրբոցն որ աստ, և

68 Տե՛ս նույն տեղում, էջ 344։

երկիրպագեալ դարձցուք յաշխարհն մեր»[69]: Նույն աղբյուրի հաղորդմամբ՝ եգիպտացիների վրա տպավորություն գործելու և այդպիսով իրենց և, իհարկե, մատյանների անվտանգությունն ապահովելու նպատակով Գրիգորն ու նրա ուղեկիցները տեղի իշխանավորներին ներկայանում են Վկայասերին Բյուզանդիայի կայսեր նվիրած ճոխ հանդերձանքով. «Եւ քանզի աշխարհն եգիւպտացւոց ընդ իշխանութեամբ Արաբացոց էր, **երկեան երկեւղ մեծ, և ակն ունէին վարիլ յաւար և ի գերութիւն**: Յայնժամ խորհուրդ իմաստութեան զմտաւ ածէր տէրն Գրիգորիոս, և զգենոյր զեկեղեցական զգեստն իւր և զգեցուցանէր զարսն եկեղեցականս իւրեանց զգեստուք. զարդարեցան և աշխարհայինք ինքեանց ոսկիակուռ պատմուճանօք զորս ընկալեալ էին պարգեւ ի Թագաւորէն Յունաց, և ամենեքեան պաճուճեալք նստան, մեծամեծքն ըստ իւրաքանչիւր աստիճանի, և փոքունքն կանգնեցան ի սպասու առաջի»[70]: Հնարավոր սպառնալիքի մասին աղբյուրների վկայություններն ավելորդ անգամ հաստատում են, որ Եգիպտոսն ընդգրկված չի եղել ուղևորության կայանների շարքում: Վկայասերի քրոջ որդուն և նրա ուղեկիցներին փոխադրող նավում էին գտնվում Կոստանդնուպոլսում կատարված բոլոր թարգմանությունների ու ընդօրինակված ձեռագրերը, որոնց համար է, որ ձեռնարկվել էր այդ տևական ուղևորությունը: Մի՞թե կաթողիկոսը կարող էր այդ հույժ անհրաժեշտ գրականությունը նավով ուղարկել Եգիպտոս՝ վտանգելով դրա ճակատագիրը, իհարկե՝ ոչ:

Շնորհալու վարքագրի հաղորդմամբ՝ Գրիգորը Եգիպտոսում ներկայացել է լոկ որպես Հայոց կաթողիկոսի քրոջ որդի, մինչդեռ ըստ Ալեքսանդրիայի պատրիարքության տարեգրության՝ որպես Հայոց կաթողիկոս՝ միաժամանակ հայտնելով, որ այդ իշխանությունը ստացել էր հայրապետական Աթոռից հրաժարված իր քեռուց

---

[69] *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 24-25:

[70] Նույն տեղում, էջ 23-24:

*ու նաև այն, որ ինքը Սենեքերիմ թագավորի որդիներից է*[71]*: Քաջ հայտնի է, որ Վկայասերի քրոջ որդին ոչ թե Սենեքերիմ թագավորի (նկատի է ունեցել Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմ Արծրունուն), այլ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի որդի Ապլչահապի և Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի դստեր զավակն էր*[72]*: Իհարկե, տարեգրության տեղեկությունները, չարտացոլելով իրականությունը, թվում են ոչ ստույգ, մտացածին, սակայն արդյո՞ք այդ աղբյուրի հեղինակը կարող էր կամ կարիք ուներ ճշտելու Գրիգորի հավաստիացումների իսկությունը: Հարկավ՝ ոչ: Տարեգրության շարադրանքից հստակ երևում է, որ դրա հեղինակը տեսակցել և անգամ հաղորդակցվել է Վկայասերի զարմիկի հետ, ինչը նշանակում է, որ նրա վկայությունները խիստ հավաստի են, առավել ևս, որ դրանք կեղծելու որևէ շարժառիթ տարեգիրը դժվար թե ունենար: Գրիգորի՝ իր անձին վերաբերող անստույգ տեղեկությունների հաղորդումը թույլ է տալիս մտածել, որ նա ամեն կերպ ձգտել է ներկայանալ որպես հատուկ առաքելությամբ եկած բարձրատոհմիկ անձ, ինչն այլ կերպ, քան անվտանգության նկատառումով, հնարավոր չէ պատճառաբանել: Դա աներկբա հաստատվում է «Մերձափնյա իրավունքի» պարագան հաշվի առնելիս: Բանն այն է, որ միջազգային ծովագնացության, հատկապես առևտրի համակարգում կիրառվող այս դրույթն իրավունք էր տալիս առափնյա իշխանություններին բռնագրավել բեկման ենթարկված նավերի գույքը: «Մերձափնյա իրավունքը» գործում էր ինչպես սևծովյան, այնպես էլ միջերկրածովյան երկրներում, որոնցից էր նաև Եգիպտոսը: Այսինքն՝ Վկայասերի քրոջ որդուն և նրա ուղեկիցներին իրական վտանգ էր սպառնում, որից ազատվել հնարավոր էր միայն Եգիպտոսում նրանց հայտնվելուն նախապես ծրագրված, ասել է թե՝ պաշտոնական բնույթ հաղորդե-*

[71] Տե՛ս *History of the Patriarchs of the Egyptian Church*, էջ 345:
[72] Տե՛ս **Մաթևոսյան**, *Գրիգոր Ապիրատ*, էջ 137:

*լով[73]։ Եգիպտական իշխանություններին Գրիգորի տված հավաստիացումները, որոնք արձանագրված են թե՛ Ներսես Շնորհալու «Վարք»-ում և թե՛ պատրիարքության տարեգրության մեջ, մեծ մասամբ հնարովի են։ Դրանցից իրապատում է միայն Գրիգորի՝ Վկայասերի քրոջ որդի լինելը, իսկ մյուսները՝ թե իբրև իրեն Հայոց կաթողիկոսն է ուղարկել այդ երկիր, և որ նա էլ ուղևորվում է Եգիպտոս ու նաև այն, որ իրենք եկել են տեղի քրիստոնեական սրբավայրերն այցելելու, մտացածին են։*

*Շարունակելով մեզ զբաղեցնող իրադարձությունների վերաբերյալ այս երկու աղբյուրների տարընթերցումների քննությունը՝ նշենք, որ պատրիարքության տարեգրության հեղինակը որևէ տեղեկություն չի հայտնում այդ երկիր Վկայասերի կատարած այցելության մասին[74]։ Նկատենք, սակայն, որ դա անհերքելի իրողություն է, քանզի հաստատվում է կաթողիկոսի ուղևորությանը տեղյակ մյուս բոլոր սկզբնաղբյուրներով։ Ալեքսանդրիայի պատրիարքության տարեգրության այդ մասը ժամանակագրորեն ընդգրկում է 1046-1102 թթ.։ Դրա հեղինակը, անդրադառնալով Վկայասերի քրոջ որդու՝ Եգիպ-*

---

73 «Մերձափնյա իրավունքի» մասին մանրամասն տե՛ս **Барсегов**, *Отказ армян от «Берегового права»*, էջ 95-110: Մխիթար Գոշը «Դատաստանագրքում» դատապարտել է իրավունքի այս տեսակը, իսկ Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Ա.-ը Վենետիկի և Ջենովայի հանրապետություններին 1201 թ. տրված արտոնագրերով հրաժարվել է դրա կիրառումից (տե՛ս **Գևորգյան**, *Կիլիկիայի հայկական պետությունը*, էջ 39-40): «Մերձափնյա իրավունքին» տեղյակ Կիրակոս Գանձակեցին որոշակի նշում է, որ Եգիպտոսում հայտնվածներին սպառնում էր լրջագույն վտանգ, քանզի *«սովորութիւն էր բնակչաց աշխարհին զալեկոծեալ նաւսն կողոպտել և սպանանել»* (**Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն*, էջ 96): Զարմանալի է, որ մերձափնյա իրավունքին ծանոթ պատմիչը գրում է, թե նավաբեկության ենթարկվածները *«զամենայն իրսն ապացին ստուգութեամբ»*, այն է՝ պատմեցին իրենց պատուհասած արհավիրքի մասին, ինչն, իհարկե, խիստ անհավանական է: Մյուս կողմից՝ հասկանալի է, որ պատմիչը չէր կարող կեղծ տեղեկատվություն վերագրել կաթողիկոսին:

74 Տե՛ս *History of the Patriarchs of the Egyptian Church*, էջ 345-346:

*տոսում անցկացրած ժամանակահատվածին, նշել է, որ նա «մինչև այժմ այստեղ է»[75]: Այսինքն՝ Գրիգորը, 1087 թ. հայտնվելով Եգիպտոսում, տևական ժամանակ մնացել է այնտեղ: Այդ դեպքում հարց է ծագում. ե՞րբ են Կոստանդնուպոլսում ընդօրինակված ու թարգմանված մատյանները Եգիպտոսից տեղափոխվել Կիլիկիա: Դա պարզել օգնում են ինչպես Վկայասերի իրականացրած, այնպես էլ նրա պատվերով կատարված թարգմանությունների ու գրչագրումների թվականները, որոնք հետազոտողների ուշադրությանը չեն արժանացել՝ ինչպես կաթողիկոսի ուղևորությունը թվագրելիս, այնպես էլ դրա հանգրվանները ճշտելիս: Այսպես՝ 1100 և հաջորդ մի քանի տարիների ընթացքում Վկայասերի նախաձեռնությամբ թարգմանվում են նկատելի թվով օտարագիր աշխատություններ, այդ թվում՝ Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Խուրի Ասորու և այլոց բազմաթիվ երկասիրություններ. քաղվածաբար հղենք դրանցից մի քանիսի թվակիր հիշատակարանները. «Վկայաբանութիւն սրբոյն Ստեփանոսի Հռովմայ հայրապետի և որոց ընդ նմա: Յամին հինգ հարիւրերորդի քառասներորդի իններորդի (1100) թուականութեանս Հայոց թարգմանեցաւ պատմութիւնս հանդերձ ա՛յլ բազում ներբողական և վկայական ճառիւք ի յունականէն ի մերս, ի ձեռն սուրբ քահանայապետին Աստուծոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի»[76], «Պատմութիւն վարուց երանելւոյն Եփրեմի Ասորոյ վարդապետի, որ թարգմանեցաւ յասորոց ի մերս, հրամանաւ Գրիգորիսի Վկայասէր Հայոց կաթողիկոսի, ի հինգհարիւրորդի, [յիս]ներորդի (1101) թուականութեանս մերում», «Թարգմանեցաւ Պատմութիւն սրբոյ և փառաւորեալ հայրապետին Գրիգորի Աստուածաբանի ի հինգ հարիւրորդի յիսներորդի (1101) թուականութեան մերում, հրամանաւ նախասացեալ սուրբ վկայասէր կաթողիկոսին Գրիգո-*

[75] Նույն տեղում, էջ 345:

[76] **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 281-282:

րիսի», «Յամի հինգհարիւրորդի յիսներորդի երկրորդի (1103) թուականիս Հայոց, թարգմանեցաւ վկայութիւն սրբոցս այսոցիկ ի յունականէն ի մերս, ի ձեռն Գրիգորիսի Վկայասիրի սրբազան կաթողիկոսի Հայոց Մեծաց»[77]: Գրիգոր Վկայասերի և նրա հանձնարարությամբ կատարված և 1100-1103-ով թվագրվող թարգմանությունները գերազանցում են մեկ տասնյակը[78]: Տարակույս չի կարող լինել, որ դրանք Կոստանդնուպոլսում գրչագրված մատյաններն են, որոնց՝ 1100-1103-ով թվագրվող թարգմանությունների առատությունը հուշում է, որ դրանք Վկայասերին հասու են դարձել միայն ԺԱ. դարի վերջին կամ հաջորդ դարասկզբին: Այսինքն՝ Վկայասերի այցը Եգիպտոս պետք է թվագրել հենց այդ ժամանակամիջոցով: Ըստ Պահլավունի կաթողիկոսներին նվիրված վարքի անթվակիր հիշատակության՝ Վկայասերը Երուսաղեմ այցելել է Եգիպտոս գնալիս: Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ՝ խաչակրաց զորքերի կողմից Երուսաղեմի պաշարման ժամանակ՝ 1099 թ. (ամռանը), Վկայասերը գտնվել է այնտեղ: Այսինքն՝ բացառելի չէ, որ Ուռհայեցու տեղեկությունը վերաբերում է Վկայասերի՝ Եգիպտոս ուղևորվելիս Երուսաղեմ կատարած այցելությանը, որի ճշգրիտ թվագրումը, կարծես, այսպիսով կատարվում է: Բանն այն է, որ ըստ Շնորհալու Վիպասանության, որի համապատասխան տեղեկությունը մուծվել է նաև նրա «Վարք»՝ Երուսաղեմը եղել է ճանապարհորդության առաջին հանգրվանը[79], մինչդեռ ըստ Վարդան Արևելցու՝ Պահլավունի կաթողիկոսներին նվիրած ներբողի՝ Վկայասերը Երուսաղեմ է այցելել

---

[77] **Պօղարեան**, *Ցուցակ*, հ. Առաջին, էջ 256, 268-269, հ. Երրորդ, էջ 238. **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 281-282. **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 134-138. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Զ., սյուն. 521:

[78] Տե՛ս **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 134-140. **Յովսէփեան**, *Յիշատակարանք*, սյուն. 270-288:

[79] Տե՛ս **Ներսէս Շնորհալի**, *Վիպասանութիւն*, էջ 117. *Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց*, էջ 20:

*Եգիպտոսից վերադառնալիս*[80]*: Ի դեպ, իր հիշատակարանում կաթողիկոսը հայտնում է, որ Եգիպտոս է հասել «մեծաւ տաժանմամբ»: Ուռհայեցու վկայությամբ՝ Երուսաղեմում գտնվելու ժամանակ Վկայասերը հարձակման է ենթարկվել քաղաքի մուսուլմանների կողմից, որոնք ցանկացել են սպանել նրան: Նույն աղբյուրի հաղորդմամբ՝ Վկայասերին հաջողվել է դժվարությամբ խույս տալ իրեն հետապնդողներից: Եթե ստույգ է, որ կաթողիկոսը Երուսաղեմ այցելել է Եգիպտոս ճանապարհվելիս, ապա բացառելի չէ, որ «մեծաւ տաժանմամբ» ասելով՝ նա նկատի է ունեցել Երուսաղեմում իրեն պատուհասած մահվան սպառնալիքը:*

*Ներսես Շնորհալին Վկայասերի ուղևորությունը դիտում է որպես ուխտագնացություն՝ այն չպայմանավորելով Կոստանդնուպոլսում թարգմանություններ կատարելու շարժառիթով, ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու է նա Երուսաղեմը հիշում որպես ուխտագնացության առաջին հանգրվան: Սակայն, ինչպես պարզեցինք, աղբյուրների զգալի մասի, այդ թվում՝ Վկայասերի հիշատակարանի համաձայն՝ կաթողիկոսի ուղևորության գլխավոր նպատակը Կոստանդնուպոլսում թարգմանություններ կատարելն էր, և նրա ուղևորության առաջին հանգրվանը եղել է հենց այդ քաղաքը:*

*Վարդան Արևելցու հաղորդմամբ՝ Վկայասերը Երուսաղեմ պետք է այցելեր Կոստանդնուպոլսից հետո, սակայն ենթարկվելով նավաբեկության՝ հայտնվել էր Եգիպտոսում: Սակայն, ինչպես վերը պարզեցինք, նավաբեկության հետևանքով Եգիպտոսում հայտնվել էր ոչ թե Վկայասերը, այլ նրա քրոջ որդին: Դա նշանակում է, որ Վարդան Արևելցու տեղեկությունն առ այն, որ կաթողիկոսը Երուսաղեմ այցելել է Եգիպտոսից հետո, դառնում է քիչ հավաստի: Այսպիսով՝ առավել իրապատում պետք է համարել Պահլավունի կաթողիկոսների*

[80] Տե՛ս **Վարդան Արևելցի**, *ճառք*, էջ 367-368:

հայսմավուրքյան վարքի այն տեղեկությունը, որ Վկայասերը Երուսաղեմ այցելել է Կիլիկիայից Եգիպտոս ուղևորվելիս:

Կաթողիկոսը երկար չի մնացել Եգիպտոսում: 1102 թ. Ծռազատկի պատճառով Ուռհայի հույների ու հայերի միջև վիճաբանություն է բռնկվում, և վերջիններս օգնության նպատակով նամակով դիմում են Վկայասերին, որն այդ ժամանակ բնակվում էր Սև լեռներում գտնվող Արեգի անապատում[81]: Վարդան վարդապետը Պահլավունի կաթողիկոսներին ձոնված ներբողում նշում է, որ Վկայասերը Եգիպտոսում մնացել է երկու տարի: Կաթողիկոսը Հովհան Ոսկեբերանի Պատմության՝ իր կատարած հայերեն թարգմանության հիշատակարանում արձանագրել է քննվող խնդրի վերաբերյալ խիստ ուշագրավ տեղեկություններ. նա հայտնում է ոչ միայն Սև լեռներ վերադառնալու թվականը՝ 1101, այլև այն, որ այնտեղ հասել է հեթանոս ազգերից ու քաղկեդոնականներից կրած բազում նեղություններից հետո, ինչը հուշում է, որ հիշատակարանում Վկայասերն արձանագրել է երկարաձիգ ուղեգնացությունից հետո Ամանոսյան լեռների հայոց հոգևոր կենտրոններ իր վերադարձը. «Յամին հազարերորդի հարիւրերորդի երկրորդի (1102) Աստուծոյ մերոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի գալստեանն և ի հինգ հարիւրերորդի յիսներորդի (1101) մերում թուականութեանս... ես (Գրի)գոր՝ որդի Գրիգորի Մագիստրոսի ի հայկազունւոյ ըստ աշխարհի Պարթեւ, ըստ ժառանգութեան Պահլաւիկ... ողորմութեամբն Աստուծոյ կոչեցա ի դիտապետութիւն Ասքանազեանս և բնիկ աթոռ հայրապետութեան նախնեացն իմոց, **եւ բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց հեթանոսաց և ի յե(ր)կաբնակաց: Եւ ապա ի յառաջասացեալ ամդ հասաք ի սուրբ լեառնն, զոր Սեաւն կոչեն,** ի մեր սեփհական պարգեւական եկեղեցիքն յուխտն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ Պաղլահոյ կոչի, որ թարգմանի «Դրախտ Աստուծոյ». եւ անդ յերե-

[81] Տե՛ս **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, էջ 287:

*սուն և ի վեց ամի մերոյ աթոռակալութեանս՝ թարգմանեցի զվարս ճգնութեան մեծ և աքանչելի առնն Աստուծոյ Յովհաննու Ոսկեբե-րանի Կոստանդնուպաւլսի հայրապետի»*[82]*:*

*Վերն ասվածի հիմքով փորձենք վերհանել Ալեքսանդրիայի պատրիարքության տարեգրության մեջ Վկայասերի՝ Եգիպտոս կատարած այցելության արձանագրված չլինելու հնարավոր պատճառները: Ինչպես այդ աղբյուրում նշված է, կաթողիկոսի քրոջ որդի Գրիգորը տեղի իշխանություններին ներկայացել էր որպես Հայոց կաթողիկոս: Նա իր քեռուն (Վկայասերին), որից էլ իբրև թե ստացել էր հայրապետական իշխանությունը, կոչում է «նախկին»*[83]*: Այս դեպքում հարց է ծագում, թե արդյոք Եգիպտոսում Գրիգորի հայտնվելուց ավելի քան մեկ տասնամյակ անց այնտեղ գնացած Վկայասերը կարող էր տեղի իշխանությունների առջև բացահայտել իրականությունը, ի՞նչ արդյունքով, իհարկե՝ ոչ: Անտարակույս է, որ այդպիսով նա կվտանգեր ինչպես իրենց, այնպես էլ Կոստանդնուպոլսում կատարված թարգմանությունների ու ընդօրինակված մատյանների ճակատագիրը: Այսինքն՝ մնում է ենթադրել, որ Վկայասերը Եգիպտոսում ներկայացել է ոչ որպես Հայոց կաթողիկոս: Կարելի է հաստատապես պնդել, որ նա բացասաբար չի արձագանքել քրոջ որդու այդ քայլին: Ինչպես հայտնի է, նրանք սերտորեն գործակցել են Հայսմավուրքի խմբագրման գործում, ինչի համար էլ իր հեղինակած հիշատակարանում Վկայասերը խնդրում է առ Աստված հղվող աղոթքներում անպայման հիշել «**զԳրիգորիս համանուն իմ եւ համազգի, որ եւ գրիչ եւ յաւրինիչ գրոցս**»*[84]*: Տվյալ պարագայում ինչպե՞ս բացատրել Վկայասերի եգիպտոսյան այցի վերաբերյալ Ալեքսանդրիայի պատ-*

---

[82] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 135-136. Յովսէփեան, Յիշատակարանք, սյուն. 285. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Ձ., սյուն., 521:

[83] *History of the Patriarchs of the Egyptian Church*, էջ 345:

[84] **Մաթևոսյան,** *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 139:

րիարքության տարեգրության և հայկական աղբյուրների (Ներսես Շնորհալու և Պահլավունի կաթողիկոսների վարքերի) միջև առկա տարբերությունը: Վերջիններիս հեղինակներին հայտնի էր, որ նավաբեկության հետևանքով Եգիպտոսում հայտնվել էր կաթողիկոսի քրոջ որդին: Նրանք գիտեին նաև, որ Վկայասերը Կոստանդնուպոլսում ընդօրինակված մատյանների՝ Եգիպտոսում հայտնվելու մասին տեղեկացել էր քրոջ որդու ուղարկած նամակի միջոցով և դրանք վերադարձնելու նպատակով էր գնացել այդ երկիր: Հայտնի էր նաև, որ Վկայասերը քրոջ որդուն մինչ Կոստանդնուպոլիս մեկնելը կամ հենց այնտեղ (նկատի ունենք մինչ Եգիպտոսում Գրիգորի հայտնվելը) չէր արժանացրել եպիսկոպոսական ձեռնադրության: Հակառակը՝ հայկական աղբյուրները միաբերան պնդում են, որ Վկայասերը Գրիգորին եգիպտահայերի հոգևոր առաջնորդ է ձեռնադրել այդ երկրում, ինչն առավել տրամաբանական է: Ինչպես Շնորհալու, այնպես էլ Պահլավունի կաթողիկոսների վարքի շարադրանքը միանգամայն համահունչ է այս տեղեկությունների բովանդակությանը: Արձանագրենք, որ վերջիններիս հավաստիությունը կասկածի ենթակա չէ և որևէ կերպ չի հերքվում Ալեքսանդրիայի պատրիարքության տարեգրության վկայություններով: Այս դեպքում մնում է կարծել, որ վարքերի հեղինակները պարզապես տեղյակ չեն եղել Գրիգորի՝ Եգիպտոսում հայտնած «կեղծիքին»: Դրա հանրայնացմանը, իհարկե, կարող էր նպաստել այդ հիմքով Վկայասերի և Գրիգորի միջև թյուրըմբռնման առաջացումը, սակայն այդպիսի բան չի եղել:

Ներսես Շնորհալու և Պահլավունյաց կաթողիկոսների վարքի համաձայն՝ Վկայասերը Եգիպտոսում իր քրոջ որդու հայտնվելու մասին տեղեկացել է Կիլիկիայում՝ նրանից ստացած նամակի միջոցով: Այսինքն՝ Գրիգորը տեղյակ էր, որ Վկայասերը Կոստանդնուպոլսից վերադառնալու էր Կիլիկիա, այլ ոչ թե գնալու Հռոմ: Փաստորեն Վկայասերի ուղևորության՝ Կոստանդնուպոլսին հաջորդած հանգրվանը ոչ թե Եգիպտոսն է կամ Հռոմը, այլ Կիլիկիան:

Ալեքսանդրիայի պատրիարքության տարեգրությունը հնարավորություն է տալիս պարզելու նաև Կոստանդնուպոլսում Վկայասերի ու նրա ուղեկիցների անցկացրած ժամանակահատվածը: Այսպես՝ քննությամբ պարզեցինք, որ Հայոց կաթողիկոսի գլխավորած խումբը Կոստանդնուպոլիս է մեկնել 1075/76 թ.: Գիտենք նաև, որ Վկայասերը Բյուզանդիայի մայրաքաղաքից դուրս է եկել քրոջ որդու մեկնումից մի քանի օր հետո, այսինքն՝ գրեթե միաժամանակ: Ըստ Ալեքսանդրիայի պատրիարքության տարեգրության՝ Հայոց կաթողիկոսի քրոջ որդին և նրա ուղեկիցներն Ալեքսանդրիա են ժամանել 1087 թ.: Փաստորեն, Վկայասերը Բյուզանդիայի մայրաքաղաքում մնացել է շուրջ մեկ տասնամյակ: Այս ժամանակահատվածն առաջին հայացքից, անշուշտ, չափազանց երկարատև է, սակայն՝ միանգամայն իրական, եթե հաշվի առնենք նրանց առաքելության նպատակը, այն է՝ ձեռագրերի արտագրություն և թարգմանություն: Չմոռանանք, որ բյուզանդական իշխանությունները Վկայասերին ու նրա ուղեկիցներին թույլատրել էին միայն օգտվել համապատասխան մատյաններից և ոչ թե երկրից դուրս բերել իրենց անհրաժեշտ օրինակները: Ձեռագրերի արտագրությունը երկարատև գործընթաց էր, եթե հաշվի առնենք, որ մեկ մատյանի գրչագրումը հաճախ տևել է նույնիսկ մի քանի տարի: Վկայասերի՝ Կոստանդնուպոլսում երկար ժամանակ մնալը վկայում է նաև Շնորհալու վարքագիրը. «... դադարեալ անդ **բազումս ժամանակս** և առեալ թարգմանէր զվարս սուրբ հարց և զպատմութիւնս վկայից, և զմատեանս ուղղափառ վարդապետաց...»[85]: Կաթողիկոսի՝ տևական ժամանակ Կոստանդնուպոլսում մնալն անուղղակիորեն հաստատվում է նաև Բարսեղ Անեցու 1081 թ. կաթողիկոսական ձեռնադրության վերաբերյալ Կիրակոս Գանձակեցու հետևյալ հաղորդմամբ. պատմիչը հայտնում է, որ Տաշիր-Ձորագետի թագավոր Կյուրիկեն, տեսնելով, որ Վկայասերը

[85] Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց, էջ 22:

*«եԹող… զաԹոռն իւր և գնաց ի Հռոմ, կոչեաց առ ինքն զտէր Յով-սէփ, զկաԹողիկոսն Աղուանից, և եա ձեռնադրել զտէր Բարսեղ կաԹողիկոս Հայոց»*[86]*: Գանձակեցին, իհարկե, համոզված է, որ Վկայասերը գնացել է ոչ Թե Կոստանդնուպոլիս, այլ Հռոմ, սակայն քննուԹյան առարկա խնդրի տեսանկյունից կարևորն այն է, որ կա-Թողիկոսը 1081 Թ. դեռևս չէր վերադարձել Կիլիկյան Հայաստան:*

## Հռոմի Գրիգոր է. պապի նամակը Գրիգոր Բ. Վկայասերին

*Գրիգոր Վկայասերի գործունեուԹյան, մասնավորապես նրա ուղևորուԹյան ուսումնասիրման համար նկատելի կարևորուԹյուն է ներկայացնում Հռոմի Գրիգոր է. պապի հետ նրա նամակագրու-Թյունը: Մասնագիտական գրականուԹյան մեջ որոշ տարակարծու-Թյուն կա Հռոմի պապի նամակի հասցեատիրոջ ինքնուԹյան վերա-բերյալ: Բանն այն է, որ նամակի սկզբնամասում որպես հասցեատեր նշված է Սիմանդայի արքեպիսկոպոսը, և գրված է միայն նրա անվան սկզբնատառը՝ «Գ»: Հետազոտողների մեծ մասը Սիմանդան նույնացնում է կաԹողիկոսանիստ Ծամնդավի հետ՝ կարծելով, որ նամակի հասցեատեր «Գ»-ն այլ ոք չէ, քան ժամանակի կաԹողիկոսի Գրիգոր Վկայասերը: Հակադարձելով Սիմանդա-Ծամընդավ նույ-նացմանը՝ Մաղաքիա Օրմանյանը կարծում է, որ պապի նամակում նշված է Փռուգիայի մետրոպոլիտուԹյան կենտրոն Այուննդան, որի Թեմական աԹոռակալ «Գ»-ն չի կարող Գրիգոր Վկայասերը լինել*[87]*: Նամակի բովանդակուԹյունը հուշում է, որ հասցեատերը Հայոց եկե-ղեցու առաջնորդն է: Այսպես՝ Սիմանդայի արքեպիսկոպոս «Գ»-ին դիմելով որպես «**իր եղբայր**»՝ Գրիգոր է. պապը գրում է. «Այս պատ-*

---

[86] **Կիրակոս Գանձակեցի**, *ՊատմուԹյուն*, էջ 98:

[87] **Օրմանեան**, *Ազգապատում*, սյուն. 1525-1526: Հռոմի պապի այս ժամանա-կաշրջանի որոշ նամակներում նշված է միայն հասցեատիրոջ անվան սկզբնա-տառը (տե՛ս **Ջեֆիյան**, *14-րդ դարի կրոնական վեճերը*, էջ 118):

*ճառով* ***քու եղբայրութիւնդ*** *գիտնայ եւ հաւատայ՝ թէ քու* ***խնամքիդ յանձնուած Եկեղեցին*** *պէտք է ընդունի եւ բաւարար համարի ինչ որ կաթողիկէ Եկեղեցին»*[88]*։ Այս ամենը հաշվի առնելով և հետևելով մասնագիտական գրականության մեջ առավել տարածում գտած տեսակետին՝ Հռոմի պապի նամակի հասցեատեր ենք համարում Գրիգոր Վկայասերին։*

*Խնդրո առարկա նամակագրությունը հիմք ընդունելով՝ կարծիք է հայտնվել, թե Վկայասերը եղել է Հայոց և Հռոմի կաթոլիկ եկեղեցիների միության ջերմեռանդ նախաձեռնող. «Այս հռչակաւոր Հայրապետը միութեան սուրբ նպատակին անարգել հասնելու համար՝ մինչեւ Կոստանդինուպոլիս երթալ յանձն առաւ, բայց աւելի յաջողութիւն գտաւ, թղթով ու պատգամաւորութեամբ Գրիգոր Է. Հռոմայ Ս. Քահանայապետին դիմելով, որմէ կը խնդրէր սուրբ Աթոռոյն եւ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ՝ միութեան ստէպ ստէպ քակուած կապը՝ նորէն անխզելի կապել ու հաստատել. աղաչելով միանգամայն զՔահանայապետը, որ շնորհէ իրեն Պալիոն որ է Եմիփորոն, նշան միաբանութեան եւ հաղորդութեան Երանելւոյն Պետրոսի Աթոռոյն հետ»*[89]*, - գրում է Ալեքսանդր Պալճյանը։ Իրավացիորեն առարկելով այս եզրահանգմանը՝ Պողոս Անանյանը գրում է. «Աւելի զարմանալի ենթադրութիւն մը կընէ Պալճեան, որ թէեւ կանտեսէ կամ*

---

[88] Պապի նամակը մեջբերվում է Պողոս Անանյանի թարգմանությամբ (**Անանեան**, *Գրիգորիս Վկայասէր*, էջ 23): Վկայասերը, կարելի է ասել, չուներ մշտական ու հաստատուն աթոռանիստ և պարբերաբար փոխում էր իր կեցավայրը: Ինչպես վերը պարզեցինք, նամակի գրչության ժամանակ՝ 1080 թ., նա Կոստանդնուպոլսում էր: Սա, իհարկե, կարող է ինչ-որ կերպ կասկածի տակ դնել կաթողիկոսի՝ այդ թվականին Բյուզանդիայի մայրաքաղաքում լինելը, սակայն, չմոռանանք, որ նամակատարը ոչ թե Վկայասերն էր, այլ Հովհաննես վարդապետը, ուստի պետք չէ ամենևին անկարելի համարել վերջինիս՝ կաթողիկոսին Կոստանդնուպոլսում տեսակցելն ու նրանից Հռոմի պապին ուղղված նամակ ստանալը:

[89] **Պալճեան**, *Պատմութիւն*, էջ 26-27:

նոյնիսկ կը մերժէ Վկայասէրին Հռոմ երթալու պարագան, բայց կը կարծէ թէ ան Գրիգոր Է. Պապէն պալիում խնդրած ըլլայ եւ Պապը իրեն ղրկած գայն: Ինչ որ յայտնի նշան է երկու Եկեղեցիներու միջեւ միութեան եւ հաղորդակցութեան: Սակայն ոչ մեկ պատմական վկայութիւն ունինք այսպիսի խնդրանքին եւ համապատասխան շնորհումի, եւ ոչ ալ հեղինակը որեւէ վկայութիւն կամ փաստ կը բերէ»[90]: Սակայն նա էլ հարում է մեկ այլ ծայրահեղության՝ պնդելով, որ եկեղեցիների միություն նախաձեռնելու կարիք չկար, քանզի այն «խաղաղ կերպով ենթադրուած եւ ընդունուած էր»[91]: Հռոմի պապին Վկայասերի ուղղած նամակը որպես Հայոց և լատին եկեղեցիների միության փորձ է որակում նաև Գրիգոր Պետրովիչը: Նա գրում է. «Գրիգոր Վկայասէր... կը գրէր 1080ին Գրիգոր Է. քահանայապետին՝ հերքելով Յոյներու ինչ ինչ ամբաստանութիւնները Հայ Եկեղեցւոյ դէմ եւ **յայտնելով անոր փարումը Հռոմի Աթոռին հանդէպ**»[92]:

Այժմ փորձենք պարզել, արդյո՞ք այս նամակագրությունը բավարար հիմք է Վկայասերին եկեղեցիների միության նախաձեռնող համարելու, ինչպես նաև նրա՝ Հռոմ այցելած լինելը հաստատելու համար: Մինչ նամակի բովանդակությանն անցնելը նշենք, որ այն Վկայասերին ուղղված պատասխան է: Ցավոք, Հռոմի պապին Հայոց կաթողիկոսի հղած նամակը չի պահպանվել, ուստի դրա բովանդակության վերաբերյալ մեր տեղեկությունները խիստ սահմանափակ են, և դրանք ինչ-որ չափով վերհանել օգնում են ինչպես Գրիգոր Է.-ի պատասխանը, այնպես էլ նրա՝ Բենեվենետոյի եպիսկոպոսին գրած թուղթը: Վերջինից պարզվում է, որ Մակար անունով ոմն հայ (հավանաբար՝ եկեղեցական), աղանդավորությանը հարելու պատճառով վտարվելով Հայաստանից, հաստատվում է Իտա-

---

[90] **Անանեան**, *Գրիգորիս Վկայասէր*, էջ 20:

[91] Նույն տեղում, էջ 21:

[92] **Պետրովիչ**, *Միաբանող եղբայրները*, սյուն. 359:

*լիայում։ Նրա վնասաբեր գործունեությանը վերջ տալու նպատակով Հայոց կաթողիկոսը Հովհաննես վարդապետի միջոցով նամակով դիմում է Հռոմի պապին՝ խնդրելով հայտնաբերել այդ հերձվածողին ու պատժել*[93]*։ Ահա սա է Վկայասերի՝ Գրիգոր Է. պապին դիմելու շարժառիթը։ Սակայն Հռոմի պապը, օգտվելով պատեհությունից, Վկայասերին հղած պատասխան նամակում անդրադառնում է Հայոց և լատինադավան եկեղեցիների միջև առկա ծիսադավանական բնույթի որոշ տարբերությունների, մասնավորապես, հայերի՝ պատարագի ժամանակ անապակ (ոչ ջրախառն) գինի օգտագործելուն, Քաղկեդոնի ժողովի որոշումները մերժելուն և այլ հարցերի*[94]*։ Այսպես՝ իրեն հայտնի է դարձել, որ «Հայոց եկեղեցին շեղած է հաւատքի ուղիղ գիծէն, զոր ընդհանրական եկեղեցին առաքեալներու եւ սուրբ Հայրերու աւանդութենէն ընդունած է, եւ ինկած է ան ինչ ինչ մոլար կարծիքներու մէջ»։ Զննայած այս խնդիրների առնչությամբ Հովհաննես վարդապետից ստացած բացատրություններին՝ Հռոմի պապը ցանկանում է տեղեկանալ նաև Վկայասերի պարզաբանումներին, ուստի նրան խնդրում է նույն կամ մեկ այլ պատվիրակի միջոցով պատասխանել իրեն։ Առաջ անցնելով՝ նշենք, որ Հռոմի պապի նամակի բովանդակությունից ելնելով՝ եկեղեցիների միության նախաձեռնությունը պետք է վերագրել ոչ թե Վկայասերին, այլ հենց նրան։*

*Գրականության մեջ խնդրո առարկա նամակը համարվել է որպես Վկայասերի՝ Հռոմ եղած լինելու աներկբա կռվան։ Սակայն Հայոց կաթողիկոսին գրած պատասխանում Հռոմի պապը որևէ ակնարկ չի անում Վկայասերի այցի մասին*[95]*։ Այս հանգամանքը նկատած Պողոս Անանյանը խնդիրը փորձում է լուծել Վկայասերի այցը*

---

[93] Տե՛ս **Անանեան**, *Գրիգորիս Վկայասէր*, էջ 24:
[94] Տե՛ս **Halfter**, *Das Papsttum*, էջ 115-116:
[95] Հմմտ. նույն տեղում, էջ 121:

*Գրիգոր Է. պապի ընտրությունից (1073 թ.) առաջ նշանակելով, այն է՝ 1072 թ., կամ մինչ 1073 ապրիլի 22-ը*[96]*: Նա համոզված է, որ նամակում Հայոց կաթողիկոսի այցելությունը Գրիգոր Է.-ը չի նշել, քանի որ այն տեղի էր ունեցել իր նախորդի՝ Ալեքսանդր Բ.-ի (1061-1073) աթոռակալման ժամանակ: Նկատենք, սակայն, որ Պողոս Անանյանը քանիցս վկայակոչում է կաթողիկոսի ուղևորության՝ Ուռհայեցու արձանագրած թվականը (1074)՝ որպես Հռոմ այցելելու տարեթիվ: Ջփորձելով առավել հիմնավոր փաստերով հաստատել իր առաջարկած թվագրումը՝ նա գրում է. «Ուռհայեցիի տուած թուականը ՇԻԳ (1074) ճամփորդութեան կատարման թուական առ-* **նելու ենք***»*[97]*: Ընդգծված հատվածից կարելի է մակաբերել, որ հեղինակը նկատի է ունեցել Ուռհայեցու ավանդած թվականի փաստարկված վերանայումը, ինչը, սակայն, իրականացված չէ:*

*Ինչպես վերն ասվել է, Ժերար Դեդեյանը, որպես Վկայասերի՝ Հռոմ կատարած այցելությունը հաստատող փաստ, մատնացույց է անում Գրիգոր Է. պապի՝ նրանից* ad limina *չպահանջելը, ինչն, ըստ հետազոտողի՝ նշանակում է, որ հայրապետն արդեն իսկ 1074 այցելել էր Հռոմ: Նախապես նշենք, որ Հայոց կաթողիկոսության՝ Վկայասերին նախընթաց ժամանակաշրջանի պատմությունը բացառում է Հայոց հայրապետների համար* ad limina*-ի պարտադիր լինելը, քանզի մինչ այդ արձանագրված չէ վերջիններիս՝ Հռոմ այցելելու կամ պապին հաշվետու լինելու որևէ հիշատակություն: Դա այլ բան չէ, քան Հայոց կաթողիկոսությունը Հռոմի պապի ենթականության տակ ներառելու փորձ, ինչը զուրկ է որևէ հիմքից: Նկատենք, որ Հռոմի պապերը Հայոց հայրապետներին հասցեագրած նամակներում հաճախ հանդես էին գալիս որպես եկեղեցու գերագահ առաջնորդ և ներկայացնում այդ դիրքից բխող պահանջներ: Վկայասերին*

[96] **Անանեան**, *Գրիգորիս Վկայասէր*, էջ 20:
[97] Նույն տեղում:

*Գրիգոր Է.-ի հղած նամակն այդ առումով բացառություն չէ և պարունակում է ad limina-ի տրամաբանությունից բխող պահանջ: Այսպես՝ անդրադառնալով Հայոց և կաթոլիկ եկեղեցիների ծիսադավանական տարբերություններին և այդ առնչությամբ Վկայասերի պատվիրակ Հովհաննեսից ստացած բացատրություններին՝ Գրիգոր Է. հայոց հայրապետին խնդրում է այսուհետև «**սիրոյդ նամակները աւելի յաճախ**» ուղարկել Հռոմ[98]: Իհարկե, բացառելով Հայոց կաթողիկոսների համար ad limina-ի պարտադիր լինելը, նշենք, որ թեմական առաջնորդների այցը Հռոմ նույնպես պարտադիր չէր, և վերջիններս, կանոնական իրավունքի համաձայն, կարող էին հաշվետու նամակներն ուղարկել իրենց փոխանորդների կամ այլ ներկայացուցիչների միջոցով[99]: Ուշագրավ է, որ Գրիգոր Է. Պապը Վկայասերից պահանջում է պատասխանն ուղարկել Հովհաննես վարդապետի կամ այլ պատվիրակի միջոցով: Մեզ համար առավել հետաքրքրական է Հռոմի պապի պահանջի այն հատվածը, որն անուղղակի փաստում է նրա և Վկայասերի միջև նախընթաց հարաբերությունների բացակայությունը: Դիմելով Վկայասերին՝ Գրիգոր Է. գրում է. «**Եւ ասկէ յետոյ** քու սիրոյդ նամակները աւելի յաճախ ղրկես Ս. Աթոռին»: Ընդգծված հատվածը հուշում է, որ Հովհաննեսի միջոցով Հռոմ ուղարկված նամակը Հռոմի պապին Վկայասերի գրած առաջին թուղթն էր: Կաթողիկոսի պատասխանը ցայժմ հայտնի չէ: Սակայն նրա նամակատարի՝ Հովհաննեսի ինքնության հավանական բացահայտումը հնարավորություն է տալիս որոշ չափով պարզելու Հայոց հայրապետի պատասխանի բովանդակությունը: Հռոմի պապը, ինչպես նշված է նամակում, Վկայասերից պահանջում է նույն պատվիրակի կամ մեկ ուրիշի միջոցով իրեն ուղարկել Հայոց եկեղեցու դավանագիրը. «... կուզենք, որ նոյն այս Յովհաննէս վար-*

---

98 Տե՛ս նույն տեղում, էջ 22:

99 Տե՛ս **Tauton**, *The Law of the Church*. էջ, 399:

*դապետին հետ ղրկես պատասխանը, կնքելով քու կնիքովդ, նշելով թէ ինչ կը մտածես յիշեալ հարցերու (Հայոց և լատինադավան եկեղեցիների միջև առկա ծիսադավանական տարբերությունների, մասնավորապես, Քաղկեդոնի ժողովի որոշումների վերաբերյալ հայոց դիրքորոշման մասին – Վ. Թ.) մասին ու դեռ ուրիշներու՝ եթէ տարակոյս մը ունիս», նույն պահանջը կրկնվում է նամակի մեկ այլ հատվածում. «Դարձեալ քու սիրելութեանդ յանձնարարելով կը հրահանգենք, որ հաւատքի վերաբերեալ յիշեալ հարցերու մասին մեզի գրես նամակով՝ թէ ի՛նչ կարծիք ունիս, եւ ղրկես վերոյիշեալ վարդապետին հետ կամ այլ ուրիշ յարմարագոյն պատուիրակի մը հետ»*[100]*: ԺԱ. դարի հայ հոգևոր-եկեղեցական նշանավոր գործիչ Հովհաննես Իմաստասերի կենսագրության մեջ առկա մի եզակի վկայություն Աշոտ Աբրահամյանին թույլ է տվել ենթադրելու, որ Վկայասերի պատվիրակը կարող էր նա լինել*[101]*: Այսպես. «Սա (Հովհաննես Իմաստասերը – Վ. Թ.)* ***գրեաց գիր հաւատոյ ի Հռոմ և սանձեաց զբերանս հերձուածողացն»***[102]*: Այդ հավատո գիրը, անկասկած, Հայոց եկեղեցու դավանագիրն է, որը Հռոմի պապը պահանջել էր Վկայասերից: Փոքր-ինչ խրթին է «հերձուածողների» ինքնության խնդիրը: Անշուշտ, կարելի է ենթադրել, որ այն վերաբերում էր աղանդավորությանը հարելու պատճառով Հայաստանից արտաքսված և Իտալիայում հաստատված Մակարին, որն այնտեղ ամբաստանել էր Հայոց եկեղեցուն: Սակայն դավանագրի մասին ցուցումն աներկբա փաստում է, որ կենսագրության մեջ նշված «հաւատոյ գիրը» Հովհաննես Սարկավագը (եթե իսկապես նա է եղել Վկայասերի նամակատարը) գրել է Հռոմից վերադառնալուց հետո: Այդ դեպքում արդեն Մակարի գործունեության և հատկապես*

---

[100] **Անանեան**, *Գրիգորիս Վկայասէր*, էջ 22-23:

[101] Տե՛ս **Աբրահամյան**, *Հովհաննես Իմաստասեր*, էջ 27-28:

[102] Նույն տեղում, էջ 123:

*նրա ամբաստանությունների վերաբերյալ գրավոր հերքում տալու անհրաժեշտություն չկար, քանզի Իմաստասերն այն անձամբ էր ներկայացրել Գրիգոր Է.-ին Վկայասերի նամակը փոխանցելիս. Բենեվենետոյի եպիսկոպոսին Հռոմի պապի հղած թղթում կարդում ենք. «Եղբայրութեանդ կը ծանուցանենք, որ թղթաբերը, Յովհաննէս վարդապետ, ուղղափառ անձ մըն է, ինչպես իմացանք իր դավանութենէն: Ան Հայոց Սիմանդայի Արքեպիսկոպոսին կողմէն գանգատ յայտնեց մեզի անբարեհաւաճ մէկու մը մասին, որուն յայտնի հերետիկոս ըլլալուն համոզուեցանք* ***դատելով իր ըսածներէն:*** *Իմացանք թէ ան վտարուած է Հայաստանէն իր հերետիկոսութեան համար, այժմ Լատին առաքելական եւ կաթողիկէ Եկեղեցւոյ նկատմամբ միեւնոյն հերետիկոսութեան կասկածը, մանաւանդ թէ համոզումը կը ծնի»*[103]*:*

*Հայոց կաթողիկոսին հղած պատասխանում Հռոմի պապը հայտնում է, որ իրեն հասած տեղեկությունների համաձայն՝ Հայոց եկեղեցին իբր «***շեղած է հաւատքի ուղիղ գիծէն****, զոր ընդհանրական եկեղեցին առաքեալներու եւ սուրբ Հայրերու աւանդութենէ ընդունած է, եւ* ***ինկած է ան ինչ ինչ մոլար կարծիքներու մէջ****, որուն համար շարժած հայրական գութէ չափազանց ցաւեցանք»*[104]*:* ***Բանն*** *այն է, որ Հռոմի պապը չէր սահմանափակվել Քաղկեդոնի ժողովի վերաբերյալ Հայոց եկեղեցու դիրքորոշմանը տեղեկանալու ցանկությամբ՝ պահանջելով, որ Վկայասերի «խնամքին յանձնուած Եկեղեցին* ***պէտք է ընդունի եւ բաւարար համարի ինչ որ կաթողիկէ Եկեղեցին»***[105]*: Ընդգծված հատվածները Հայոց եկեղեցուն ուղղված մեղադրանքներ են, քաղկեդոնադավանությունն ընդունելու պարտադրանք, որոնք կաթողիկոսը չէր կարող անպատասխան թողնել:*

---

[103] **Անանեան**, *Գրիգոր Վկայասէր*, էջ 24:
[104] Նոյն տեղում, էջ 21:
[105] Նոյն տեղում, էջ 23:

